Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
փետրվարի 27-ի N 224 - Ա որոշման

Զ Ե Կ Ո Ւ Յ Ց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ (2021-2026 ԹԹ.) 2024 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԲԱՆ

2024 թվականի արդյունքներով Հայաստանի Հանրապետության համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) նախորդ տարվա համեմատ իրական արտահայտությամբ աճել է 5,9%-ով: 2021 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքներով ձևավորված Կառավարության 2021-2026 թվականներին տարեկան տնտեսական աճերի միջին 7% սահմանված առանցքային թիրախը պահպանվել է՝ 2021-2024 թվականների արդյունքներով կազմելով միջինում 8,15%: 2023 թվականի արդյունքներով Հայաստանում արձանագրվել էր 8,3%, 2022 թվականին՝ 12,6%, 2021 թվականին՝ 5,8% տնտեսական աճ:

2024 թվականի միջին տարեկան արդյունքներով Հայաստանում աշխատողների թվաքանակը կազմել է 760 555 մարդ: Այս ցուցանիշը 2018 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելի է 203 878 մարդով կամ 36,6 %-ով, իսկ 2023 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 37 882-ով կամ 5,2 %-ով:

2024 թվականի արդյունքներով տարեկան միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 287 172 ՀՀ դրամ՝ 2018 թվականի համեմատ աճելով 114 445 ՀՀ դրամով կամ 66,3 %-ով, իսկ 2023 թվականի համեմատ՝ 17 178 ՀՀ դրամով կամ 6,4%-ով: 2024 թվականի արդյունքներով տարեվերջի գնաճը կազմել է 1,5%, իսկ 2018-2024 թվականների կուտակային գնաճը կազմել է 25,3%: Այսպիսով, 2018-2024 թվականների աշխատավարձերի իրական աճը կազմել է շուրջ 40%:

Այսպիսով, Հայաստանը շարունակում է գտնվել կայուն տնտեսական զարգացման ուղեծրի վրա: 2018-2024 թվականների ՀՆԱ կուտակային աճը իրական արտահայտությամբ կազմել է 43,5%, այսինքն, 2024 թվականի արդյունքներով ՀՀ տնտեսությունը 43,5%-ով ավելի մեծ է, քան 2018 թվականի սկզբին:

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Կառավարության վարած արտաքին քաղաքականության նպատակը Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ կամ Հայաստան) անկախությունը, ինքնիշխանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը պահպանելն ու ամրապնդելն է, Հայաստանի տնտեսական զարգացման համար արտաքին նախադրյալներ ստեղծելը, ինչը կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ առաջնահերթություն է:

Այս նպատակի իրագործման համար Կառավարությունը որդեգրել է բալանսավորված և բալանսավորման արտաքին քաղաքականություն, որն արտահայտվում է նաև տարածաշրջանային քաղաքականության ոլորտում՝ խնդիր ունենալով ախտորոշել Հայաստանի նկատմամբ տարածաշրջանում առկա բացասական և ագրեսիվ դրսևորումները, կառավարել ապա և տարածաշրջանային մտածված քաղաքականության շնորհիվ նվազեցնել և երկարաժամկետ հեռանկարում զրոյացնել դրանք: Այս խնդրի իրագործման համար, ինչպես նախկինում, շարունակում է առանցքային մնալ վարվող քաղաքականությունների լեգիտիմությունը միջազգային իրավունքի և կարգի տեսանկյունից:

Որդեգրված ռազմավարությունը ցույց է տալիս իր արդյունավետությունը. 2024 թվականը վերջին 20 տարվա ամենախաղաղ և կայուն տարին է եղել մեր արտաքին սահմանների համար, որը պայմանավորված է տարածաշրջանային և միջազգային ակտիվ քաղաքականությամբ:

Ադրբեջան - Արտաքին քաղաքականության և անվտանգային ոլորտի 2024 թվականի առանցքային իրադարձությունը Հայաստան-Ադրբեջան պետական սահմանի սահմանազատման գործընթացի մեկնարկն էր, ինչը երկու երկրների անկախության պատմության մեջ տեղի էր ունենում առաջին անգամ: Ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանի Տավուշի մարզի և Ադրբեջանի Ղազախի շրջանի Բերքաբեր-Ղըզըլ Հաջիլի, Կիրանց-Խեյրեմլի, Ոսկեպար-Ասկիպարա, Բաղանիս-Բաղանիս Այրըմ հատվածում իրականացվեցին պետական սահմանի շուրջ 12,7 կմ հատվածի սահմանազատում և սահմանագծում: Օգոստոսին ստորագրեցին և երկու երկրները ներպետական ընթացակարգերով հաստատեցին «Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման և սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի ու Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի համատեղ գործունեության մասին» կանոնակարգը, ինչը երկու երկրների միջև սահմանազատման գործընթացը դնում է ինստիտուցիոնալ հենքի վրա:

Հայաստանը և Ադրբեջանը շարունակել են աշխատանքը երկու երկրների միջև խաղաղության և միջպետական հարաբերությունների հաստատման մասին համաձայնագրի նախագծի վրա: Նախագծի 17 հոդվածներից համաձայնեցված է 15-ը: Չհամաձայնեցված երկու հոդվածների վերաբերյալ Կառավարությունը հանդես է եկել լուծման առաջարկներով և սպասում է Ադրբեջանի արձագանքին:

«Խաղաղության խաչմերուկ» նախագծի շրջանակներում Կառավարությունը Ադրբեջանին լուծումներ է առաջարկել՝ համաձայն որոնց կստեղծվի երկաթուղային բեռնային կապ Ադրբեջանի Հանրապետության արևմտյան շրջանների և Նախիջևանի Ինքնավար Հանրապետության միջև ՀՀ տարածքով, ինչպես նաև Նախիջևանի Ինքնավար Հանրապետության տարածքով՝ ՀՀ Երասխից մինչև Մեղրի: Ըստ առաջարկի, երկու երկրները միմյանց տարածքով հնարավորություն կունենան իրականացնելու նաև միջազգային բեռնափոխադրումներ:

Ադրբեջանի հետ շարունակում են քննարկումները հումանիտար հարցերի լուծման ուղղությամբ:

2024 թվականին տեղի է ունեցել ՀՀ վարչապետի և Ադրբեջանի նախագահի 2, Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման և սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի ու Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովների 5, Արտաքին գործերի նախարարների 5 հանդիպում:

Իրանի Իսլամական Հանրապետություն - ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը մասնակցել է ողբերգական ավիավթարի հետևանքով զոհված Իրանի Իսլամական Հանրապետության (այսուհետ՝ ԻԻՀ) նախագահ Էբրահիմ Ռայիսիի և ԱԳ նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանի հրաժեշտի արարողությանը: Վարչապետը մասնակցել է նաև ԻԻՀ նորընտիր նախագահ Մասուդ Փեզեշքիանի երդմնակալության արարողությանը: Այդ ընթացքում ՀՀ վարչապետը երկու հանդիպում է ունեցել Իսլամական հեղափոխության գերագույն առաջնորդ Սեյեդ Ալի Խամենեիի հետ: 2024 թվականին տեղի են ունեցել ՀՀ վարչապետ Փաշինյանի և նախագահ Փեզեշքիանի երկու հանդիպում և 1 հեռախոսազրույց:

Փոխվարչապետ Մ. Գրիգորյանի և ԻԻՀ նախագահի տեղակալ, Ծրագրավորման և բյուջետային կազմակերպության ղեկավար Դ. Մանզուրի համանախագահությամբ Թեհրանում կայացել է Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջկառավարական համատեղ հանձնաժողովի 18-րդ նիստը: Պաշտպանության նախարար Ս. Պապիկյանը պաշտոնական այց է ունեցել Իրան: ԱԳ նախարարներ Ա. Միրզոյանը և Ս. Արաղչին երկու հանդիպում

են ունեցել: Եվրասիական միջկառավարական խորհրդի հերթական նիստի շրջանակներում ՀՀ վարչապետ Փաշինյանի հրավերով Հայաստան է այցելել ԻԻՀ առաջին փոխնախագահ Մ. Արեֆի գլխավորած պատվիրակությունը:

2024 թվականի արդյունքներով Հայաստանի և Իրանի միջև առևտրաշրջանառությունը կազմել է շուրջ 737,4 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար՝ 2023 թվականի համեմատ աճելով 6,5%-ով:

Վրաստան - Հունվարի 26-ին Թբիլիսիում Հայաստանի և Վրաստանի միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 13-րդ նիստի շրջանակներում երկու երկրների վարչապետերը ստորագրել են «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև ռազմավարական գործընկերություն հաստատելու մասին» համատեղ հռչակագիրը: Երկու երկրների վարչապետերը փոխադարձ պաշտոնական այցեր են ունեցել: Տեղի են ունեցել ԱԳ նախարարի, Առողջապահության նախարար Ա. Ավանեսյանի, Պաշտպանության նախարարի այցերը Վրաստան: Ստորագրվել է Հայաստանի և Վրաստանի պաշտպանության նախարարությունների միջև 2024 թվականի համագործակցության պլանը: Հայաստան են այցելել նաև Վրաստանի Պաշտպանության, Կրթության և գիտության, Արդարադատության նախարարները: Տեղի է ունեցել Երևանի պետական համալսարանում Վրացագիտության կենտրոնի պաշտոնական բացումը, Երևանում կայացել է Հայ-վրացական իրավական համագործակցության 5-րդ ֆորումը, իսկ Թբիլիսիում՝ քաղաքական խորհրդակցություններ Հայաստանի և Վրաստանի արտաքին գործերի նախարարությունների միջև:

Հունիսի 4-ին ՄԱԿ ԳԱ լիագումար նիստում Հայաստանն առաջին անգամ կողմ է քվեարկել Վրաստանից տեղահանվածների և փախստականների կարգավիճակի և վերադարձի վերաբերյալ բանաձևին:

2024 թվականի արդյունքներով Հայաստանի և Վրաստանի միջև առևտրաշրջանառությունը կազմել է շուրջ 333,6 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար՝ 2023 թվականի համեմատ աճելով 27,1%-ով:

Թուրքիա - ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Թուրքիայի Հանրապետության նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի միջև տեղի է ունեցել 1 պաշտոնական հանդիպում: Երկու երկրների ԱԳ նախարարները հանդիպել են երկու անգամ և ունեցել են 2 հեռախոսազրույց: Տեղի է ունեցել նաև ՏԿԵ նախարար Գ. Սանոսյանի և ԹՀ տրանսպորտի և ենթակառուցվածքների նախարարի, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժ. Անդրեասյանի և ԹՀ Մշակույթի և զբոսաշրջության նախարարի մեկական հանդիպում: Հայաստան-Թուրքիա ցամաքային սահմանի Մարգարա-Ալիջան անցակետում տեղի է ունեցել ՀՀ և ԹՀ

հատուկ ներկայացուցիչների հինգերորդ հանդիպումը: ԱԳ նախարարը մասնակցել է նաև Անթալիայի դիվանագիտական ֆորումին և «3+3» ձևաչափի Ստամբուլում կայացած նախարարական հանդիպմանը: Հայաստանի և Թուրքիայի միջև հաստատվել է ակտիվ երկխոսություն:

Ռուսաստանի Դաշնություն - 2024 թվականի ընթացքում շարունակվել է Ռուսաստանի Դաշնության (այսուհետ՝ ՌԴ) հետ բարձրագույն և բարձր մակարդակներով երկխոսությունը: Տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի 2 հանդիպում և 2 հեռախոսազրույց: Տեղի է ունեցել նաև ՀՀ վարչապետի և ՌԴ կառավարության նախագահի 1 հանդիպում: Դեկտեմբերի 20-ին ՀՀ փոխվարչապետ Մ. Գրիգորյանի և ՌԴ փոխվարչապետ Ա. Օվերչուկի համանախագահությամբ Մոսկվայում կայացել է ՀՀ-ՌԴ տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի հերթական՝ 23-րդ նիստը: ՀՀ վարչապետ Փաշինյանը Կազանում մասնակցել է ԲՐԻԿՍ անդամ պետությունների ղեկավարների «АУТРИЧ»/«БРИКС ПЛЮС» ընդլայնված ձևաչափով հանդիպմանը: Հայաստանը և Ռուսաստանը ակտիվ գործակցել են ԵԱՏՄ և ԱՊՀ շրջանակներում: 2024 թվականի արդյունքներով ՀՀ-ի և ՌԴ-ի միջև առևտրաշրջանառությունը կազմել է շուրջ 12,4 մլրդ ԱՄՆ դոլարին համարժեք գումար՝ 2023 թվականի համեմատ աճելով 56,5%-ով:

Ամերիկայի Միացյալ Նահանգներ - 2024 թվականի ընթացքում շարունակվել են Ամերիկայի Միացյալ Նահանգների (այսուհետ՝ ԱՄՆ) հետ ռազմավարական երկխոսության ու գործընկերության ամրապնդումն ու ընդլայնումը: Տեղի է ունեցել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և ԱՄՆ նորընտիր նախագահ Դոնալդ Թրամփի հեռախոսազրույցը և ոչ պաշտոնական հանդիպում: Կայացել է ՀՀ վարչապետ Փաշինյանի և ԱՄՆ պետքարտուղար Բլինքենի 2 հանդիպում և 2 հեռախոսազրույց: Ապրիլի 5-ին Բրյուսելում կայացել է Հայաստան-ԵՄ-ԱՄՆ բարձր մակարդակի համատեղ հանդիպումը: Մարտի 8-ին Վաշինգտոնում կայացել է ՀՀ և ԱՄՆ միջև Առևտրի և ներդրումների հարցերով աշխատանքային խմբի (TIFA) հերթական նիստը: Երևանում անցկացվել է ՀՀ-ԱՄՆ Ռազմավարական երկխոսության Ամփոփիչ նիստը: Հունիսի 16-20-ը կայացել է ԱՄՆ քաղաքապետերի և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների պատվիրակության առաջին պաշտոնական այցը Հայաստան: Կայացել է ԱՄՆ ՄԶԳ քարտուղար Ս. Փաուերի այցը Հայաստան: ԱԳ նախարարը երկու աշխատանքային այց է ունեցել ԱՄՆ: ԱՄՆ աշխատանքային այցեր են ունեցել նաև Պաշտպանության նախարարը, Էկոնոմիկայի նախարար Գ. Պապոյանը, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Մ. Հայրապետյանը:

2024 թվականի արդյունքներով Հայաստանի և ԱՄՆ-ի միջև առևտրաշրջանառությունը կազմել է շուրջ 410,6 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար՝ 2023 թվականի համեմատ նվազելով 38,7%-ով:

Ֆրանսիա – Հայաստան-Ֆրանսիա հարաբերությունները 2024 թվականի ընթացքում շարունակել են ընդլայնվել և խորանալ տարբեր ոլորտներում: Հաշվետու տարվա ընթացքում Ֆրանսիան տարբեր առիթներով հստակ և սկզբունքային դիրքորոշումներով է արձագանքել Հայաստանի առջև ծառացած աշխարհաքաղաքական և հումանիտար խնդիրներին: 2024 թվականի ընթացքում կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի երեք այց Ֆրանսիա, ևս երեք անգամ հանդիպում է տեղի ունեցել բազմակողմ հարթակներում: Տեղի է ունեցել ՀՀ և Ֆրանսիայի ԱԳ նախարարների երեք հանդիպում: Տեղի է ունեցել Ֆրանսիայի պաշտպանության նախարարի այցը Հայաստան և ՀՀ պաշտպանության նախարարի այցը Ֆրանսիա: 2024 թվականի արդյունքներով Հայաստանի և Ֆրանսիայի միջև առևտրաշրջանառությունը կազմել է շուրջ 158 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար՝ 2023 թվականի համեմատ նվազելով 10,7%-ով:

Հնդկաստան - 2024 թվականի հունիսի 6-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Հնդկաստանի վարչապետ Նարենդրա Մոդիի միջև կայացել է հեռախոսազրույց, իսկ սեպտեմբերի 24-ին ՄԱԿ-ում Ապագայի գագաթնաժողովի շրջանակում՝ ոչ ֆորմալ հանդիպում:

Հանդիպում է տեղի ունեցել ՀՀ ԱԳ նախարարի և Հնդկաստանի ԱԳ նախարար Ս. Ջայշանկարի միջև: ՀՀ էկոնոմիկայի նախարարի գլխավորած պատվիրակությունը Հնդկաստանի Գուջարաթ նահանգում մասնակցել է «Կենսունակ Գուջարաթ» 10-րդ համաշխարհային գագաթնաժողովին: Կայացել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ն. Մկրտչյանի աշխատանքային այցը Հնդկաստան՝ «Ռաիսինա երկխոսություն» միջազգային համաժողովին մասնակցելու նպատակով:

«Երևանյան երկխոսություն» համաժողովին մասնակցելու նպատակով Հայաստան է այցելել Հնդկաստանի ԱԳ պետնախարար Կ. Սինգհը: Հայաստանը դարձել է Հնդկաստանի և Ֆրանսիայի կողմից համատեղ նախաձեռնած Միջազգային արևային դաշինքի լիիրավ անդամ: Նյու Դելիում կայացել են Հայաստանի, Հնդկաստանի և Իրանի արտաքին գործերի նախարարությունների միջև եռակողմ ձևաչափով երկրորդ քաղաքական խորհրդակցությունները: 2024 թվականի արդյունքներով Հայաստանի և Հնդկաստանի միջև առևտրաշրջանառությունը կազմել է շուրջ 270 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար՝ 2023 թվականի համեմատ նվազելով 29,8%-ով:

Եվրոպական միություն - Ապրիլի 5-ին Բրյուսելում կայացել է ՀՀ-ԵՄ-ԱՄՆ բարձրաստիճան հանդիպումը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենի, ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի մասնակցությամբ: Հանդիպման արդյունքում ԵՄ-ն Հայաստանին է ներկայացրել 2024-2027 թվականների համար նախատեսված «Դիմակայունություն և աճ» ծրագիրը՝ միտված Հայաստանի տնտեսական, էներգետիկ դիմակայունության ամրապնդմանը, ռազմավարական նշանակության ենթակառուցվածքների զարգացմանը, ներդրումային հոսքերի խթանմանը: Ծրագրի իրականացման նպատակով կազմվել է համապատասխան ճանապարհային քարտեզ: 2024 թվականի հուլիսին ԵՄ խորհուրդը ընդունել է որոշումներ Հայաստանին «Խաղաղության եվրոպական գործիք»-ի ներքո աջակցություն տրամադրելու և մուտքի արտոնագրերի ազատականացման շուրջ երկխոսության վերաբերյալ: Ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Հայաստանի Հանրապետության քրեական վարույթներով իրավական համագործակցության ոլորտում իրավասու մարմինների և Եվրոպական միության քրեական արդարադատության ոլորտում համագործակցության գործակալության (Եվրաջասթ) միջև համագործակցության մասին» համաձայնագիրը: Հոկտեմբերի 24-25-ը Բրյուսելում տեղի է ունեցել Հայաստան-ԵՄ Առևտրի հարցերով Գործընկերության կոմիտեի հերթական՝ 6-րդ նիստը: Նոյեմբերի 11-15-ը տեղի է ունեցել ԵՄ անվտանգության ոլորտի կառավարման մեխանիզմի շրջանակներում գնահատման այց Հայաստան՝ ուսումնասիրելու Հայաստանի անվտանգային ոլորտի կառավարման կարիքները՝ ԵՄ և անդամ երկրների հետ ոլորտային համագործակցության հետագա ընդլայնման համատեքստում: Հայաստան-Ադրբեջան սահմանի երկայնքով շարունակում է գործել ԵՄ քաղաքացիական դիտորդական առաքելությունը:

2024 թվականի արդյունքներով Հայաստանի և ԵՄ երկրների միջև առևտրաշրջա-նառությունը կազմել է շուրջ 2,3 մլրդ ԱՄՆ դոլարին համարժեք գումար՝ 2023 թվականի համեմատ նվազելով 11,7%-ով:

Չինաստան - Կազանում «ԲՐԻԿՍ+» գագաթնաժողովի շրջանակներում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը կարճատև զրույց է ունեցել Չինաստանի նախագահ Սի Ծինփինի հետ: Բրյուսելում անցկացված Միջուկային գագաթնաժողովի շրջանակներում կայացել է ՀՀ վարչապետ Փաշինյանի հանդիպումը Չինաստանի փոխվարչապետ Ճան Գոցինի հետ: Սեպտեմբերի 12-14-ը կայացել է ՀՀ պաշտպանության նախարարի գլխավորած պատվիրակության այցը Չինաստան: Ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան

քաղաքի համայնքապետարանի և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Հեյլունծիյան նահանգի Հարբին քաղաքի Ժողովրդական կառավարության միջև փոխըմբռնման և համագործակցության մասին» հուշագիր: Երևանում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի կառավարության միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելն ու շրջանցելը կանխելու մասին» համաձայնագիրը: Սեպտեմբերից «China Southern Airways» ավիաընկերությունը սկսել է Երևանից դեպի Չինաստանի Ուրումչի քաղաք (Սինծիան շրջան) ուղիղ չվերթներ իրականացնել՝ շաբաթական 2 անգամ: Տեղի է ունեցել ՀՀ վարչապետի տիկին Աննա Հակոբյանի այցը Չինաստան՝ Շանհայի համագործակցության կազմակերպության կանանց համաժողովին մասնակցության նպատակով: 2024 թվականի արդյունքներով Հայաստանի և Չինաստանի միջև առևտրաշրջանառությունը կազմել է շուրջ 2,8 մլրդ ԱՄՆ դոլարին համարժեք գումար՝ 2023 թվականի համեմատ աճելով 34,4%-ով:

Եվրոպական երկրներ - Բարձրագույն և բարձր մակարդակում ակտիվ շփումներ են եղել Հայաստանի և Գերմանիայի, Միացյալ Թագավորության, Ֆինլանդիայի, Հունաստանի, Լեհաստանի, Դանիայի, Շվեդիայի, Բելգիայի, Նիդերլանդների, Լիտվայի, Լատվիայի, Էստոնիայի, Սլովակիայի, Ռումինիայի, Լյուքսեմբուրգի, Անդորայի, Խորվաթիայի, Կիպրոսի, Չեխիայի, Հունգարիայի, Ավստրիայի, Մալթայի, Ուկրաինայի, Մոլդովայի միջև: Հայաստանը մասնակցել է Եվրոպական քաղաքական համայնքի՝ 2024 թվականին տեղի ունեցած երկու գագաթնաժողովի:

Միջին Արևելքի երկրներ – Հայաստանը ճանաչել է Պաղեստինի անկախությունը: Սեպտեմբերի 27-ին Նյու Յորքում ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարարը հանդիպում է ունեցել Պաղեստինի վարչապետ, ԱԳ և սփյուռքի նախարար Մ. Մուստաֆայի հետ, որի ընթացքում ստորագրել է «Հայաստանի Հանրապետության և Պաղեստինի Պետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին» համատեղ կոմյունիկե: Հայաստանը մարդասիրական օգնություն է ուղարկել Գազայի բնակչությանը: Տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Փաշինյանի այցը Եգիպտոս: Բարձրագույն և բարձր մակարդակում երկկողմ շփումներ են տեղի ունեցել ԱՄԷ-ի, Իրաքի, Սաուդյան Արաբիայի, Կատարի պետության, Լիբանանի, Ալժիրի, Մավրիտանիայի, Բահրեյնի ներկայացուցիչների հետ:

Համագործակցությունը գործընկեր այլ պետությունների հետ - Կայացել է ՀՀ վարչապետ Փաշինյանի պաշտոնական այցը Սուրբ Աթոռ: Կայացել է ՂՀ նախագահ Կ. Տոկաևի պաշտոնական այցը ՀՀ: Մարտի 21-26-ը ՀՀ ԱԳ նախարարը պաշտոնական այցեր է ունեցել Ուրուգվայի Արևելյան

Հանրապետություն և Արգենտինայի Հանրապետություն: 2024 թվականի մարտի 21-ին Ուրուգվայի մայրաքաղաք Մոնտեվիդեոյում պաշտոնապես բացվել է ՀՀ ռեզիդենտ դեսպանություն: ԱԳ նախարարը հանդիպումներ է ունեցել Տոգոյի, Մոզամբիկի, Ուգանդայի և Սիերա Լեոնի իր պաշտոնակիցների հետ: Տրվել է աֆրիկյան երկրների հետ քաղաքական խորհրդակցություններ անցկացնելու մեկնարկը, որի շրջանակում Երևանում կայացել են ՀՀ և Տոգոյի ԱԳ նախարարությունների միջև առաջին քաղաքական խորհրդակցությունները: Մարտի 28-ին Կառավարությունը որոշում է կայացրել 300 000 ԱՄՆ դոլարի չափով օգնություն տրամադրել Ճապոնիայի Նոտո թերակղզում 2024 թվականի հունվարի 1-ին տեղի ունեցած երկրաշարժից տուժածներին:

Եվրասիական տնտեսական միություն -2024 թվականի հունվարի 1-ին Հայաստանն ստանձնել է նախագահությունը Եվրասիական տնտեսական միության կանոնադրական մարմիններում:

2024 թվականի ընթացքում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի նախագահությամբ անցկացվել է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2 նիստ, Միջկառավարական խորհրդի 3 նիստ, փոխվարչապետ Մ. Գրիգորյանի նախագահությամբ Եվրասիական հանձնաժողովի խորհրդի 13 նիստ, սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 1-ը Երևանում կայացել է Երրորդ եվրասիական տնտեսական ֆորումը:

ԱՊՀ - 2024 թվականի ընթացքում Հայաստանը մասնակցել է ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի 1, կառավարությունների ղեկավարների խորհրդի 2, արտաքին գործերի նախարարների 2, Տնտեսական խորհրդի 4 նիստի, որոնց օրակարգերում ընդգրկված է եղել և քննարկվել շուրջ 140 փաստաթուղթ: Այս աշխատանքների շրջանակներում, Հայաստանը միացել է մի շարք հայտարարությունների, որոնցում արտացոլվել են հայաստանյան կողմի առաջարկություններն ու նկատառումները: ԱՊՀ շրջանակներում հաշվետու տարվա ընթացքում Հայաստանի մասնակցությամբ կնքվել է 3 իրավապայմանագրային փաստաթուղթ:

ՄԱԿ - Սեպտեմբերի 22-27-ը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 79-րդ նստաշրջանի բարձրաստիճան հատվածին, այդ թվում՝ Ապագայի գագաթնաժողովին: ՀՀ վարչապետը հանդիպում է ունեցել ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի հետ, ելույթներով է հանդես եկել Ապագայի գագաթնաժողովին և ՄԱԿ ԳԱ բարձրաստիճան հատվածի ընդհանուր քննարկումներին: Ակտիվ արշավի շնորհիվ Հայաստանն ընտրվել է որպես 2026 թվականին անցկացվելիք COP17-ը

հյուրընկալող երկիր: 2024 թվականի ընթացքում Հայաստանն ընտրվել է ՄԱԿ Տնտեսական և սոցիալական խորհրդի անդամ՝ 2025-2027 թվականների ժամանակահատվածի համար: Հայաստանն ընտրվել է նաև Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի ներքո ստեղծված Կորստի և վնասի հիմնադրամի խորհրդի անդամ՝ միաձայն աջակցություն ստանալով Արևելաեվրոպական տարածաշրջանային խմբում:

Հաշվի առնելով 1954 թվականի Հաագայի կոնվենցիայի առաջնային կարևորությունը մշակութային ժառանգության պաշտպանության միջազգային իրավական շրջանակների ապահովման տեսանկյունից՝ Հայաստանն ակտիվորեն ներգրավվել է կոնվենցիայի 70-ամյա հոբելյանի միջոցառումներում, որոնց շրջանակներում հոկտեմբերի 28-ից 29-ը Երևանում ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ սերտ համագործակցությամբ կազմակերպվել է ոլորտի շուրջ 40 առաջատար միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների ու փորձագետների մասնակցությամբ միջազգային համաժողով՝ նվիրված ժառանգության պաշտպանության հարցում նոր տեխնոլոգիաների դերակատարությանը: Հայաստանը, ելնելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի Զինված հակամարտությունների դեպքում մշակութային ժառանգության պաշտպանության կոմիտեին իր լիիրավ անդամի կարգավիճակից, նաև ակտիվ ներգրավում է ունեցել կոմիտեի՝ 2024 թվականի ընթացիկ աշխատանքներում՝ բարձրաձայնելով հետաքրքրություն ներկայացնող հարցեր: Մշակութային ժառանգության պաշտպանության և խաղաղության մշակույթի ու միջմշակութային երկխոսության օրակարգերի առաջմղման քաղաքականության ներքո Հայաստանը 2024 թվականին ստանձնել է Հնագույն քաղաքակրթությունների ֆորումի նախագահությունը և դեկտեմբերի 18-ին հյուրընկալել այս հարթակի 8-րդ նախարարական հանդիպումը, որի ընթացքում ընդունվել է Երևանի հռչակագիրը, որը ներառել է Հայաստանի արտաքին քաղաքական առաջնահերթություններից բխող մի շարք դրույթներ:

Ֆրանկոֆոնիա- 2024 թվականի փետրվարին Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունը հավանություն է տվել Ֆրանկոֆոնիայի 10-րդ միջազգային խաղերը 2027 թվականին Հայաստանում հյուրընկալելու հայտին: Հոկտեմբերի 4-5-ը Փարիզում կայացած Ֆրանկոֆոնիայի 19-րդ գագաթնաժողովի շրջանակներում ընդունվել է «Ֆրանկոֆոն տարածքում ճգնաժամային իրավիճակների, ճգնաժամից դուրս գալու և խաղաղության ամրապնդման վերաբերյալ» բանաձև, որտեղ Հայաստանի նախաձեռնությամբ տեղ են գտել Հայաստանի անվտանգային մարտահրավերներն արտացոլող դրույթներ:

ԵԱՀԿ - Դեկտեմբերի 4-5-ը ՀՀ ԱԳ նախարարն աշխատանքային այցով գտնվել է Մալթայում՝ մասնակցելու ԵԱՀԿ տարեկան նախարարական համաժողովին,

որտեղ հանդես է եկել ելույթով: Շվեդիայի նախագահության ներքո առաջին անգամ տեղի է ունեցել նաև ՀՀ ԱԳ նախարարի հանդիպումը նորդիկ-բալթյան (NB8) երկրների ԱԳ նախարարների և ներկայացուցիչների հետ, որի արդյունքներով հրապարակվել է համատեղ մամուլի հաղորդագրություն:

Եվրոպայի խորհուրդ - Սեպտեմբերի 24-ին ՄԱԿ ԳԱ շրջանակում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում է ունեցել Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի պաշտոնը ստանձնած Ալեն Բերսեի հետ: Եվրոպայի խորհրդի (ԵԽ) հետ Հայաստանի համագործակցության շրջանակներում 2024 թվականի ապրիլի 8-ին տեղի է ունեցել ԵԽ գլխավոր քարտուղար Մարիա Պեյչինովիչ Բուրիչի այցը Հայաստան, որի ընթացքում հանդիպումներ են կայացել ՀՀ վարչապետի, ԱԺ նախագահի և ԱԳ նախարարի հետ: Ապրիլի 10-ին Երևանում տեղի են ունեցել Հայաստան-Եվրոպայի խորհուրդ և Գործընկերություն հանուն լավ կառավարման (Partnership for Good Governance) ԵԽ-ԵՄ Հայաստանի Գործողությունների ծրագրերի միջգերատեսչական նիստերը, որոնց ընթացքում արձանագրվել է Գործողությունների ծրագրերի արդյունավետ կատարողականը: Մայիսի 16-17-ին ՀՀ ԱԳ նախարարը մասնակցել է ԵԽ նախարարական 133-րդ համաժողովին, հանդես է եկել ելույթով: Նախարարականի որոշումներում առաջին անգամ արձանագրվել է ԵԽ անդամ երկրների կառավարությունների լիակատար աջակցությունը խաղաղության գործընթացի հիմնարար սկզբունքներին, սահմա-նազատման համատեքստում վկայակոչվել է նաև Ալմա-Աթայի հռչակագիրը:

ՆԱՏՕ - ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգը տարածաշրջանային այցի շրջանակներում ժամանել է Երևան և հանդիպում է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ: Հուլիսի 9-11-ը ՀՀ ԱԳ նախարարը Վաշինգտոնում մասնակցել է ՆԱՏՕ-ի գագաթնաժողովի գործընկերների ձևաչափով միջոցառմանը և կազմակերպության 75-ամյակին նվիրված հարակից միջոցառումներին:

Կազմակերպված միջոցառումներ - Մայիսի 14-16-ը Երևանում կազմակերպվել է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի տարեկան հանդիպումն ու գործարար համաժողովը, որը ֆինանսական ոլորտի աննախադեպ միջազգային միջոցառում էր՝ տարբեր պետությունների, միջազգային կազմակերպությունների և մասնավոր հատվածի ավելի քան 3000 մասնակցով:

Ձևավորվել է դիվանագիտական ֆորումի նոր հարթակ՝ «Երևանյան երկխոսություն»: 2024 թվականի սեպտեմբերի 9-11-ը Հայաստանում տեղի է ունեցել «Երևանյան երկխոսություն» միջազգային համաժողովը՝ միջազգային հանրության շրջանում մեծ հետաքրքրություն ներկայացնող մի շարք ակտուալ հիմնախնդիրներ ներառող օրակարգով: Իր նախադեպը չունեցող այս միջոցառումն առաջին անգամ էր կազմակերպվում Հայաստանում:

Դեկտեմբերի 12-13-ին Երևանում անցկացվել է «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» 5-րդ Գլոբալ ֆորումը՝ «Ցեղասպանության և այլ զանգվածային ոճրագործությունների վաղ ազդարարման և վաղ արձագանքման միջազգային մեխանիզմների արդյունավետության ամրապնդումը» թեմայով:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ զինված ուժերում արմատական համակարգային բարեփոխումների իրականացման հիմնական ուղենիշների սահմանման նպատակով 2024 թվականի ընթացքում մշակվել, հավանության է արժանացել և հրապարակվել «Բանակի կերպափոխման հայեցակարգը»: Կառավարությունը հաստատել է ՀՀ զինված ուժերի նոր կառուցվածքը:

Ռազմատեխնիկական համագործակցության ուղղությունների բազմազանեցման արդյունքում սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացման և նոր նմուշների ձեռքբերման նպատակով կնքվել են ՍՈՏ միջոցների մատակարարման պայմանագրեր մի շարք ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ընկերությունների հետ: Լայն ծավալով շարունակվել են ինժեներական-ամրաշինական աշխատանքները, իրականացվել են ՄՏՎ-ների կառուցման, վերանորոգման աշխատանքներ:

Զինծառայողների ատեստավորմանը մասնակցել է շուրջ 13 500 զինծառայող: Ատեստավորմանը մասնակցած զինծառայողների 57%-ը ստացել է դրական գնահատական: Ատեստավորման արդյունքներով զինծառայողների ընդհանուր դրամական բավարարումն ավելացվել է 205 հազարից 470 հազար դրամով:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում կատարված լրացումներով ամրագրվել է երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ ստացող և պայմանագրային զինվորական ծառայության անցնելու ցանկություն հայտնած քաղաքացիների զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքի պահպանումը՝ ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով սահմանված զորամասերում պայմանագրային զինվորական ծառայության ընդունվելու և ոչ ավելի, քան «փոխգնդապետ» կոչումային դասակարգմամբ զինվորական պաշտոնի նշանակելու դեպքում:

Արհեստավարժ սերժանտների ինստիտուտի կայացման նպատակով նախաձեռնվել է օրենսդրական անհրաժեշտ փոփոխությունների փաթեթի

մշակում: Մեկնարկել են կորպուսի սերժանտների 8-ամսյա ծրագիրը և բրիգադների սերժանտների պատրաստման 6-ամսյա դասընթացը:

Զինված ուժերում մարտական պատրաստության գործընթացների վերանայման շրջանակներում աշխատանքներ են տարվել հրահանգիչների ինստիտուտի կայացման ուղղությամբ, իրականացվել է կրակային և մարտավարական պատրաստության շուրջ 100 հրահանգիչների պատրաստում:

Շարունակվել է ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից պայմանագրային զինվորական ծառայության ներգրավելու «Պաշտպան հայրենյաց» ծրագիրը, որի շահառուները 5 տարի ժամկետով պայմանագրային զինվորական ծառայության ընթացքում կստանան բարձր դրամական բավարարում, իսկ ծառայության ավարտին՝ 5 մլն ՀՀ դրամ պարգևավճար: 2024 թվականին ծրագրի շահառու դառնալու համար հրամանագրվել է շուրջ 1 600 զինծառայող:

Պահեստազորային պատրաստության համակարգի կատարելագործման համատեքստում ընդլայնվել է վարժական հավաքների անցկացման շրջանակը՝ ընդգրկելով մի քանի անգամ ավելի պահեստազորայինների: Կազմավորվել է Տարածքային պաշտպանության զորքերի հրամանատարությունը և հաստատվել է դրա կանոնադրությունը, գործողության մեջ են դրվել տարածքային պաշտպանության ստորաբաժանումների հաստիքացուցակները և հաստիքային հաշվեցուցակները:

Զինված ուժերում կանանց ներգրավվածության մակարդակի բարձրացման նպատակով կատարված բարեփոխումների արդյունքում որպես առանձին ստորաբաժանում կազմավորված կանանց գումարտակում ներկայումս համալրված է սպայական կազմի հաստիքների 77%-ը, ենթասպայական՝ 13%-ը, պայմանագրային շարքային՝ 20%-ը և պարտադիր ժամկետային կազմի հաստիքների 40%-ը:

Եվրոպայում ԱՄՆ ցամաքային զորքերի հրամանատարության հետ համատեղ ՀՀ-ում պլանավորվել և անցկացվել է «Արծիվ գործընկեր» զորավարժությունը:

Շարունակվել է գործընկերային պաշտպանական համագործակցությունը Հունաստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Վրաստանի, Հնդկաստանի, Ղազախստանի և այլ երկրների հետ՝ ամենամյա երկկողմ պլանների շրջանակներում:

Կազմակերպվել է ՀՀ ԶՈՒ մասնագետների և ստորաբաժանումների մասնակցությունը Կոսովոյում և Լիբանանում միջազգային առաքելություններին: Այլ պետությունների

և կազմակերպությունների հետ ՀՀ ԶՈՒ փոխգործունակության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ ՀՀ ԶՈՒ ստորաբաժանումները և խմբերը մասնակցել են 7 զորավարժությունների և վարժանքների:

2024 թվականի նոյեմբերի 29-ից կասեցվել է ՀՀ հումանիտար առաքելության աշխատանքը Սիրիայում, և առաքելության անդամները վերադարձել են Հայաստան:

Ռազմական կրթության և գիտության զարգացման շրջանակներում արդիականացվել է ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի բովանդակությունը, ավելացել են ոչ ռազմական առարկաների ժամաքանակները: Ռազմական ակադեմիայի հրամանատարաշտաբային ինստիտուտում 2024 թվականից անցկացվում են «Միավորումների, զորամասերի կառավարում» 3-ամսյա և Հետախուզական ծառայության սպաների վերապատրաստման 12-շաբաթյա դասընթացները:

ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիան ընդգրկվել է ՌՈՒՀ-երի միջազգային ասոցիացիայի կազմում: Ռազմական ակադեմիայի 1-ին կուրս ընդունվածների թիվը 2023 թվականի համեմատ աճել է 22-ով:

ՆԱՏՕ-ի DEEP ծրագրի փորձագետների հետ համագործակցելով՝ աշխատանքներ են իրականացվել ՀՀ ԶՈՒ-ում ՊՆ սպայական կադրերի որակավորման բարձրացման և մասնագիտական ուսուցման համակարգում հեռավար կրթության ներդրման ուղղությամբ:

Տեղեկատվական անվտանգության և կիբեռանվտանգության ոլորտի բարեփոխումների իրականացման և ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի կատարելագործման շրջանակներում ՊՆ զորամասերում պարբերաբար անցկացվել են «Տեղեկատվական անվտանգություն», «Գաղտնի տեղեկատվության արտահոսքի կանխարգելում» և «Ապատեղեկատվության դեմ պայքարը» թեմաներով մեթոդագործնական և «Մեդիագրագիտություն» թեմայով հրահանգչամեթոդական պարապմունքներ:

«Մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի շրջանակներում հիփոթեքային վարկավորման միջոցով բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու նպատակով 2024 թվականի ծրագրում առաջնահերթությամբ ընդգրկվել է 172 զինծառայող, ևս 328-ը ընդգրկվել է վիճակահանության արդյունքներով: Բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու նպատակով 309 զինծառայողի հատկացվել է կանխավճար, որոնցից արդեն վարկային պայմանագիր են կնքել

233-ը: Իրականացվել է նախորդ տարիների 1219 և ընթացիկ տարվա ծրագրի 206 շահառուի հիփոթեքային վարկերի տոկոսների սուբսիդավորման գործընթաց: Լրացուցիչ երաշխիքների գծով 45 շահառուի հատկացվել է պետական աջակցություն: Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի միջոցների հաշվին ՊՆ կենտրոնական բնակարանային հանձնաժողովի կողմից 68 զինծառայողի տրամադրվել է բնակարանի գնման վկայագիր, 53 զինծառայող արդեն ձեռք է բերել բնակարան:

Զինված ուժերում բարոյահոգեբանական պատրաստության մակարդակի բարձրացման ուղղությամբ իրականացված աշխատանքների արդյունքում 2023 թվականի համեմատ 2024 թվականին շուրջ 31%-ով նվազել են մահվան ելքով դեպքերը և շուրջ 17%-ով նվազել են ոչ կանոնագրքային փոխհարաբերությունները:

Զորամասերում լրակահավորվել և անհրաժեշտ տեխնիկական միջոցներով ու գույքով են ապահովվել ստացիոնար հոգեբանական օգնության կետեր:

Հաշվետու տարվա ընթացքում ՀՀ ռազմական ոստիկանության կողմից իրականացվել է պրոֆիլակտիկ և կանխարգելիչ բնույթի շուրջ 6 000 միջոցառում, բացահայտվել է շուրջ 500 դեպք, որոնցով նախաձեռնվել են քրեական վարույթներ:

2024 թվականի ընթացքում ՀՀ ԶՈՒ-ում մարտական պայմաններում զոհվել է 4 ԵԿՄ անդամ, իսկ ոչ մարտական պայմաններում 36 զինծառայող (ծառայության հետ կապված հանգամանքներում՝ 23, իսկ ծառայության հետ չկապված հանգամանքներում՝ 13):

Ազգային անվտանգության ծառայություն

2024 թվականի ընթացքում շարունակվել են աշխատանքները ՀՀ ազգային անվտանգության ծառայության նյութատեխնիկական վերազինման, կադրերի համալրման, պատրաստման, վերապատրաստման, որակավորման բարձրացման, մասնագիտական կարողությունների զարգացման, ՀՀ պետական սահմանի ինժեներական կահավորման և այլ ուղղություններով:

Հայաստանի և Ադրբեջանի միջև պետական սահմանի վերարտադրման ուղղությամբ իրականացված աշխատանքների արդյունքում ԱԱԾ սահմանապահ զորքերը ՀՀ պաշտպանության նախարարության ստորաբաժանումներից ընդունել են պետական սահմանի Բերքաբեր-Կիրանց-Բաղանիս (12,7կմ) և Կիրանց-Ոսկեպար (7,6կմ) հատվածների պահպանությունը: Այս համատեքստում

պետական սահմանի պահպանության խնդիրն արդյունավետ կատարելու նպատակով կառուցվածքային փոփոխություններ են իրականացվել ԱԱԾ սահմանապահ զորքերում, ստեղծվել են նոր կառուցվածքային միավորներ:

2024 թվականի օգոստոսի 1-ից ԱԱԾ սահմանապահ զորքերն ամբողջությամբ ստանձնել են ՀՀ պետական սահմանի «Զվարթնոց» անցման կետում սահմանային հսկողության գործառույթի իրականացումը, որին մինչև այդ մասնակցում էին նաև ՀՀ տարածքում գտնվող Ռուսաստանի Դաշնության անվտանգության դաշնային ծառայության սահմանապահ զորքերի զինծառայողները: Հայաստան-Իրան և Հայաստան-Թուրքիա պետական սահմանի պահպանությունը առաջին անգամ իրականացվում է Հայաստանի և Ռուսաստանի սահմանապահ զորքերի համատեղ ծառայության միջոցով: Դեկտեմբերի 31-ից Հայաստան-Իրան սահմանային «Ագարակ» անցման կետում սահմանային հսկողությունն ամբողջությամբ իրականացվում է ՀՀ սահմանապահ զորքերի ուժերով: ՀՀ ԱԱԾ ՍԶ-ն ծառայություն է իրականացնում նաև Նռնաձոր-Կարճևան սահմանային շերտում: ՀՀ ԱԱԾ ՍԶ-ն մասնակցում է նաև Հայաստան-Թուրքիա սահմանի Վրաստանի սահմանին հարակից հատվածի պահպանությանը:

ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերում ծառայող կանանց թիվը 2023 թվականի համեմատ աճել է շուրջ 24%-ով, իսկ 2022 թվականի համեմատ՝ շուրջ 45%-ով:

2024 թվականին ՀՀ ԱԱԾ-ում շարունակվել է ատեստավորման գործընթացը: 2023 թվականից մեկնարկած ատեստավորմանը մասնակցել և դրական արդյունք է գրանցել ծառայողների շուրջ 35%-ը: Ատեստավորված անձնակազմի աշխատավարձն ավելացել է միջինը շուրջ 57%-ով: Նվազել է սեփական նախաձեռնությամբ ՀՀ ԱԱԾ-ից արձակվողների թիվը, դրան զուգահեռ՝ ավելացել է ԱԱԾ մարմիններում ծառայության ընդունված անձանց թիվը:

2024 թվականին շարունակվել են տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում իրականացվող աշխատանքները. կանխվել է շուրջ 3 մլն կիբեռհարձակում, ՀՀ պետական մարմինների տեղեկատվական համակարգերում հայտնաբերվել է ավելի քան 35 կիբեռպատահար, միջոցառումներ են իրականացվել դրանց ուսումնասիրման, հակազդման և կանխարգելման ուղղությամբ:

ՀՀ ԱԱԾ տնօրենի նախագահությամբ գործող Գերիների, պատանդների և անհայտ կորած անձանց հարցերով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողովը 2024 թվականի ընթացքում հրավիրել է 2 նիստ: Պարբերաբար գերիների, անհայտ կորած անձանց ընտանիքի անդամների և հարազատների հետ անցկացվել են անհատական և խմբային հանդիպումներ: Բռնի անհետացման գործերով

օժանդակություն է ցուցաբերվել ծնողներին՝ հայկական կողմի փաստարկները միջազգային ատյաններում առավել հիմնավորված ներկայացնելու համար:

ՀՀ ԱԱԾ-ի կողմից գաղտնիության ռեժիմի ապահովման նկատմամբ միջգերատեսչական վերահսկողությունն առավել արդյունավետ իրականացնելու, համապատասխան մարմինների և կազմակերպությունների կողմից գաղտնիության ռեժիմը պատշաճ ապահովելու նպատակով լրացումներ են կատարվել համապատասխան իրավական ակտերում, ընդունվել են նոր իրավական ակտեր:

Ազգային անվտանգության մարմիններում առաջխաղացման ձևով պաշտոնի նշանակման գործընթացն առավել օբյեկտիվ և գիտելիքահեն սկզբունքով կազմակերպելու, ծառայողների մասնագիտական և գործնական հմտությունները պարբերաբար վերլուծելու, նրանց վերապատրաստումներն առավել թիրախային և արդյունավետ իրականացնելու նպատակով սահմանվել է ազգային անվտանգության մարմիններում ծառայողների մասնագիտական պատրաստության և վերա-պատրաստումների՝ սկզբունքորեն վերանայված կառուցակարգ:

2024 թվականի ընթացքում ՀՀ ԱԱԾ-ն ակտիվ մասնակցություն է ունեցել միջազգային կազմակերպությունների, մասնագիտացված հակաահաբեկչական կառույցների հետ փոխգործակցության շրջանակներում իրականացվող աշխատանքներին:

ՀՀ ներքին գործերի նախարարության բարեփոխումներ

2024 թվականի տարեվերջի դրությամբ ՀՀ ներքին գործերի նախարարությունն ամբողջական ֆունկցիոնալով և կառուցվածքով ձևավորվել և գործում է:

Ոստիկանության կառուցվածքային վերափոխման շրջանակներում ծառայությունը զարգանում է որպես մասնագիտական կառույց 4 հենասյունային ուղղություններով՝ Պարեկային ծառայություն, Քրեական ոստիկանություն, Համայնքային ոստիկանություն և Ոստիկանական գվարդիա:

Պարեկային ծառայության ամբողջական ձևավորումից հետո՝ 2024 թվականի նոյեմբերի 1-ին, ձևավորվել են չորս հենասյունային ուղղություններից ևս երկուսը՝ Քրեական ոստիկանությունն ու Համայնքային ոստիկանությունը:

Քրեական ոստիկանության գլխավոր վարչության անմիջական ենթակայությամբ մայրաքաղաքում և մարզերում գործում են տարածքային ստորաբաժանումներ: Ծառայության ձևավորմամբ լուծարվել են Ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչությունները: Քրեական ոստիկանությունն իր նոր կառուցվածքով իրականացնելու է ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների

բացահայտման, օպերատիվ կանխարգելման և հետախուզվողների հայտնաբերման օպերատիվ-հետախուզական գործունեություն: Տարածքային ստորաբաժանումներում ստեղծվել են ոլորտային կամ ճյուղային առանձին ենթաստորաբաժանումներ՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության, թրաֆիքինգի, կիբեռհանցավորության դեմ պայքարի և այլ ուղղություններով: Քրեական ոստիկանության կազմը համալրելու նպատակով 5-ամսյա վերապատրաստումը հաջողությամբ հաղթահարել է 561 դիմորդ, որոնցից 33-ը հանդիսացել է քաղաքացիական անձ:

Համայնքային ոստիկանության գլխավոր վարչության անմիջական ենթակայությամբ համայնքային մակարդակում ձևավորվել են տարածքային ստորաբաժանումներ: Ծառայությունը բոլոր ուղղություններով իրականացնելու է հանցագործությունների կանխարգելում, այդ թվում՝ ընտանեկան բռնության դեպքերին հակազդելու, անչափահասներին հանցավորությունից զերծ պահելու գործառույթներ: Ծառայությանը վերապահված է նաև ոչ մեծ ու միջին ծանրության հանցագործությունների դեպքերով օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման գործառույթ:

Ոստիկանության գվարդիայի ձևավորման օրենսդրական փաթեթն ընդունվել է: Ծառայության գործարկումը, որը նախատեսված է 2025 թվականին, թույլ կտա նոր մոտեցմամբ երաշխավորել հավաքների ազատության իրավունքի արդյունավետ իրացումը, ինչպես նաև հասարակական կարգի և հասարակական անվտանգության ապահովումը: Ոստիկանության գվարդիան հանրությանը կներկայանա նոր սպառազինությամբ և հատուկ տեխնիկայով, ինչպես նաև համաչափ ուժի կիրառման ստանդարտների հաշվառմամբ հատուկ պատրաստություն անցած անձնակազմով:

Պարեկային ծառայությունում կին պարեկների ներգրավման խթանման նպատակով հայտարարված ընդունելության արդյունքներով, որտեղ գերակշիռ տեղերը հատկացվել էին կին դիմորդներին, 140 կին մասնակցել է ծառայության շարքերը համալրելու նպատակով անցկացված քննություններին, որոնցից 46-ը հաղթահարել է քննությունները և մասնակցել 5-ամսյա վերապատրաստումների գործընթացին, և 33-ը հաջողությամբ այն հաղթահարել է: Պարեկային ծառայությունը կին ծառայողներով համալրելու նպատակով 2024 թվականի դեկտեմբեր ամսին կրկին հայտարարվել է թիրախային ընդունելություն՝ տեղերի 80%-ը հատկացնելով կին դիմորդներին:

Ոստիկանությունում ծառայության ընդունվելիս թեկնածուին ներկայացվող ֆիզիկական պատրաստականության և առողջական վիճակի հետ կապված

պահանջները, այդ թվում՝ նաև կանանց կարիքների հաշվառմամբ, հիմնովին վերանայվել են: Վերացվել են կադրային համալրման աշխատանքներին խոչընդոտող չարդարացված սահմանափակումները՝ պահպանելով միայն այնպիսիք, որոնք բխում են ծառայության պատշաճ իրականացման տրամաբանությունից:

Ոստիկանության և Փրկարար ծառայության կադրերի պատրաստման և շարունակական կրթությունը ժամանակակից պահանջներին համապատասխան կազմակերպելու նպատակով ընդունվել է ՆԳՆ միասնական կրթահամալիրի ձևավորման օրենսդրական նախաձեռնությունը:

Ոստիկանության ոլորտի բարեփոխումների երկրորդ շրջափուլը կանոնակարգելու նպատակով ընդունվել է ոստիկանության բարեփոխումների իրականացման ռազմավարությունն ու դրա 2024-2026թթ. գործողությունների ծրագիրը, որը մշակվել է քաղաքացիական հասարակության, երիտասարդների հետ ֆոկուս խմբային քննարկումների, միջազգային գործընկերների հետ լայն կոնսենսուսի հիման վրա:

Ոստիկանության ոլորտի բարեփոխումները հանգեցրել են Ոստիկանության նկատմամբ հանրային վստահության մակարդակի աճին: Մասնավորապես, ԵՄ ֆինանսավորմամբ ԵԱՀԿ կողմից պատվիրակված «Ոստիկանության և Ոստիկանության բարեփոխումների հանրային ընկալումը» հարցման արդյունքներով հարցվողների 45%-ը լիովին կամ գրեթե լիովին վստահում է ոստիկանությանը, 27%-ը վստահության մակարդակը գնահատել է միջին: Ոստիկանությանը չի վստահել հարցվողների 22%-ը: Ըստ այդմ, կարելի է եզրակացնել, որ հարցվողների 72%-ը վստահում է ոստիկանությանը կամ ունի չեզոք դիրքորոշում:

Բացի դրանից, համաձայն Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) կողմից 2024 թվականին կատարված «Հանրային կարծիքի ուսումնասիրություն. Հայաստանի առկա բնակչություն» հետազոտության արդյունքների, ՀՀ պետական կառույցների աշխատանքի նկատմամբ գոհունակության ցուցանիշով Ոստիկանությունը կրկին իրավապահ համակարգի մարմինների շարքում առաջատարն է: Կատարված հարցման արդյունքներով՝ 2024 թվականի սեպտեմբերի դրությամբ մասնակցած անձանց 62%-ը եղել է լիովին գոհ կամ հիմնականում գոհ Ոստիկանության աշխատանքից: Հարցմանը մասնակցել է 18 տարին լրացած 1 503 ՀՀ քաղաքացի:

Ոստիկանությունում և Փրկարար ծառայությունում շարունակվել է ատեստավորման գործընթացը:

2023 թվականին մեկնարկած կամավոր ատեստավորման գործընթացի մեկնարկից մինչ 2024 թվականի ավարտը ատեստացիա անցնելու համար դիմել է Ոստիկանության 4 063 ծառայող, որոնցից 1 031-ը հաղթահարել է ատեստավորումը, նրանցից 534-ը ստացել է գերազանց, 326-ը՝ լավ, 171-ը՝ բավարար: Այսօր համակարգում ատեստացիայի շնորհիվ, օրինակ, քրեական ոստիկանը, ով նախկինում ստացել է 285 203 ՀՀ դրամ դրամական բավարարում, ատեստացիան գերազանցությամբ հանձնելով՝ ստանում է 585 203 ՀՀ դրամ:

Փրկարար ծառայությունից ատեստացիա անցնելու նպատակով մինչ օրս դիմել է 1 805 ծառայող, որոնցից 49-ը ստացել է գերազանց, 295-ը՝ լավ, 152-ը ՝ բավարար: Համակարգում գերազանց ատեստավորված փրկարարն այսօր ստանում է 557 541 ՀՀ դրամ դրամական ապահովում՝ նախկին 297 541 ՀՀ դրամի փոխարեն:

Ձեռք է բերվել ծերբակալված և կալանավորված անձանց տեղափոխման համար նախատեսված, միջազգային չափանիշներին համապատասխանող 34 տրանսպորտային միջոց, այդ թվում՝ հատուկ կարիքներ և հաշմանդամություն ունեցող անձանց համար, որոնցից 22-ն արդեն շահագործվում է, իսկ 12-ը գտնվում է կահավորման փուլում:

Արգելանքի վերցված անձանց իրավունքների պատշաճ ապահովման համա-տեքստում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում ծերբակալվածների պահման 33 վայրից 9-ի գործունեությունը դադարեցվել է, մնացյալում նախատեսվում են հիմնանորոգման և արդիականացման աշխատանքներ՝ ապահովելու համար դրանց լիարժեք համապատասխանելիությունը սահմանված ստանդարտներին և միջազգային չափանիշներին: Սահմանվել է ՆԳՆ ծերբակալվածներին պահելու վայրերի նկատմամբ, ինչպես նաև ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում հասարակական վերահսկողության իրականացման կարգը, հասարակական դիտորդների խմբի կազմը և իրավասությունը՝ նպատակ ունենալով ապահովել այդ վայրերում մարդու իրավունքների պաշտպանության նկատմամբ ավելի արդյունավետ հանրային վերահսկողություն:

2024 թվականի ամփոփ վիճակագրությամբ Հայաստանում գրանցված հանցագործությունների թիվը 2023 թվականի համեմատությամբ նվազել է 1, 1%-ով:

2024 թվականը ՀՀ ՆԳՆ կողմից ևս հայտարարվել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի տարի: Այս համատեքստում իրականացված մեծածավալ օպերատիվ-կանխարգելիչ միջոցառումների արդյունքում հաշվետու տարում հայտնաբերվել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության 3 047 դեպք, որից շուրջ 1 910-ը թմրամիջոցների իրացման դեպքեր են: Հաշվետու

ժամանակահատվածում արձանագրվել է համացանցի միջոցով իրականացվող թմրամիջոցների անօրինական շրջանառության 321 դեպք, որից 96-ը՝ իրացման դեպքեր են, իսկ 225-ը՝ ձեռքբերման: Հայտնաբերվել են թմրամիջոցների վաճառքով զբաղվող համացանցային 500 «խանութ» և համացանցային էջ:

Կիբեռհանցավորության դեմ պայքարում Ոստիկանության համար առավել արդյունավետ գործիքակազմի նախատեսման նպատակով Քրեական օրենսգրքում սահմանվել է կիբեռհանցագործությունների ցանկը, Քրեական դատավարության օրենսգրքում նախատեսվել է համացանցային հաղորդակարգի հասցեն (Internet Protocol Address) ստանալ դատական վերահսկողության շրջանակներում, սահմանվել է կրիպտոակտիվների անկանխիկ շրջանառության պահանջ:

Մայիսի 1-ից ուժի մեջ է մտել էլեկտրոնային ծանուցումը նախընտրելու դեպքում 20% նվազ տուգանք վճարելու բոնուսային համակարգի բաղադրիչը: Այն հնարավորություն է տալիս տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով արձանագրված խախտումներով կայացված որոշումներն էլեկտրոնային ծանուցման եղանակով ստանալու դեպքում վճարման ենթակա տուգանքի գումարը նվազեցնել 20%-ով: 2025 թվականի փետրվարի դրությամբ շուրջ 87 000 քաղաքացի Roadpolice.am կայքում ակտիվացրել է էլեկտրոնային հասցեով ծանուցման համակարգը և օգտվում է 20 տոկոս բոնուսային բաղադրիչից:

Ներդրված բոնուսային երկրորդ բաղադրիչից 15 օրվա ընթացքում տուգանքը վճարելու դեպքում 30% նվազ տուգանք վճարելու հնարավորությունից մինչև օրս օգտվել է 337 744 քաղաքացի, 907 936 տուգանքի որոշում վճարվել է ծանուցվելուց հետո 15 օրվա ընթացքում:

2024 թվականի մայիսի 3-ից ուժի մեջ են մտել ՀՀ ՆԳՆ-ի և Եվրոպոլի միջև ստորագրված համաձայնագրերը, որոնք իրավական հիմք են հանդիսանում տեղեկատվության անվտանգ տեղափոխման, ինչպես նաև նախարարության կողմից Եվրոպոլի գրասենյակում կապի սպայի տեղակայման համար, ինչն էլ ավելի կխորացնի համագործակցությունը հանցավորության դեմ պայքարում ինչպես Եվրոպոլի, այնպես էլ ԵՄ անդամ պետությունների հետ՝ հանցավորության դեմ պայքարում:

Հայաստանում կենսաչափական անձը հաստատող փաստաթղթերի ներդրման նպատակով հայտարարվել է պետություն-մասնավոր գործընկերություն ձևաչափով մրցույթ, որի շրջանակներում որակավորվել է միջազգային բարձր հեղինակություն ունեցող 3 ընկերություն:

«World Population Review» հեղինակավոր կազմակերպության վերլուծության համաձայն՝ Հայաստանը հանցավորության ցածր մակարդակ ունեցող 137 երկրի շարքում զբաղեցնում է 9-րդ հորիզոնականը, իսկ տարածաշրջանային երկրների շարքում՝ 1-ին հորիզոնականը:

Աղետներին դիմակայունության բարձրացում

Հաշվետու տարում ՆԳՆ-ի կողմից մեծածավալ աշխատանքներ են իրականացվել աղետների ռիսկի նվազեցման, արտակարգ իրավիճակներին արձագանքման և հետաղետային վերականգնման ինստիտուցիոնալ կարողությունների շարունակական զարգացման, ինչպես նաև աղետներին դիմակայուն հասարակություն և պետություն ձևավորելու ուղղությամբ:

Աշխատանքներ են տարվել «Հայաստանի Հանրապետությունում առաջին արձագանքման կամավորական ծառայության ինստիտուցիոնալիզացում» (VOLFIRE) ծրագրի իրականացման ուղղությամբ, որի հիմքում ընկած է Հայաստանում գործող 9 կամավորական հրշեջ-փրկարարական հենակետերի վերանորոգումն ու կարողությունների զարգացումը, ինչպես նաև 5 նոր հենակետի ստեղծումը:

Փրկարարների և փրկարարական կազմավորումների մասնագիտական կարողությունների զարգացման նպատակով Կոտայքի մարզի Բալահովիտ բնակավայրում կառուցվել է բազմաֆունկցիոնալ վարժահամալիր:

«Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ում ներդրվել և գործարկվել է աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության հարցերով 3 նոր կրթական ծրագիր՝ ուղղված որոնողափրկարարական և հետազոտական-փորձարարական աշխատանքներում հեռակառավարվող սարքեր շահագործող օպերատորների ուսուցմանն ու պատրաստմանը:

ՀՀ համայնքների սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով իրականացվել են 13 համայնքի հատակագծերի AutoCAD ձևաչափի փոփոխում և տեղափոխում աշխարհատեղեկատվական համակարգեր (GIS), ինչպես նաև քարտեզների թվայնացում, տվյալների բազայի լրացում և վերանայում: ArcGIS համակարգի միջոցով ստեղծված տվյալների բազան համապատասխանեցվել է ELER ծրագրի ձևաչափին, ստացված բազայով ELER ծրագրային փաթեթի օգնությամբ կատարվել է 10 համայնքի սեյսմիկ ռիսկի նախնական հաշվարկ:

Լոռու և Տավուշի մարզերում հեղեղումների հետևանքների հասցեագրմանն ուղղված միջոցառումներ

Մայիսի 25-ին, մեկ օրվա ընթացքում, Լոռու և Տավուշի մարզերում տեղումների արձանագրված քանակը գերազանցել է ամսական նորման, ինչի հետևանքով Դեբետ և Աղստև գետերը մի շարք տեղերում դուրս են եկել հունից՝ հեղեղելով զգալի տարածքներ: Հեղեղումների հետևանքով զոհվել է 4 քաղաքացի, տուժել է 39 բնակավայր: Ամբողջությամբ ավերվել կամ մասնակի վնասվել է 205 բնակարան և բնակելի տուն, 144 տնամերձ հողամաս, շուրջ 109 հա ցանքատարածություն և հատապտղի տարածություն, ոչնչացվել և վնասվել են շուրջ 7 500 պտղատու ծառ և տնկանյութ, անկել կամ կորսվել են 884 անասնագլխաքանակ, 1870 թռչուն և 485 մեղվաընտանիք: Վնասվել են նաև բազմաթիվ շարժական և անշարժ գույքեր:

Հեղեղումները մեծ վնաս են պատճառել նաև հաղորդուղիներին. մասամբ կամ ամբողջությամբ փլուզվել են Մ-6 Վանաձոր-Ալավերդի - ՀՀ սահման (Բագրատաշեն) միջպետական նշանակության ավտոճանապարհի 7 կմ ընդհանուր երկարությամբ 30 հատված, ինչպես նաև դրան հարակից մի շարք ավտոճանապարհներ, կամուրջներ: Աղստև գետի վարարումից մասամբ փլուզվել է Մ-4 Երևան-Սևան-Իջևան-ՀՀ սահման միջպետական նշանակության ճանապարհը. Դիլիջանից մինչև Հ-30 ճանապարհի հետ հատման հատվածում արձանագրվել է 11 տեղամասի մասնակի փլուզում:

Հեղեղումների մեկնարկից ի վեր Փրկարար ծառայության կողմից իրականացվել է առաջացած արտակարգ իրավիճակին կազմակերպված օպերատիվ արձագանքումը: Իրականացվել են իրադրությունից բխող անհրաժեշտ միջոցառումներ: Վարչապետի որոշմամբ արտակարգ իրավիճակի կառավարման նպատակով ձևավորվել է օպերատիվ շտաբ ՏԿԵ նախարարի գլխավորությամբ: Ավտոճանապարհների ամբողջական փլուզված տեղամասերի փոխարեն կազմակերպվել է շրջանցիկ երթևեկությունը: Փլուզված հատվածներով երթևեկությունը վերականգնվել է ժամանակավոր լուծումներով: Կիսափլուզված հատվածներում նույնպես տրվել են անհրաժեշտ ժամանակավոր լուծումներ:

Երթևեկությունը վերականգնելու և ապահովելու նպատակով վնասված 6 կամրջի տեղում՝ Լոռու մարզի Հոբարձի, Քարկոփ, Ախթալա, Սանահին կայարանի և Տավուշի մարզի Այրում և Խաշթառակ բնակավայրերի համար տեղադրվել են ժամանակավոր մետաղական կամուրջներ: Ալավերդի քաղաքի Էնգելս թաղամասի, Տաշիր համայնքի Սարատովկա բնակավայրի և Նոյեմբերյան համայնքի Այրում բնակավայրի հետիոտնային 3 կամուրջ ամբողջությամբ վերականգնելու համար պատվիրվել են նախագծեր: Որոշում է կայացվել նշված բոլոր տեղերում երթևեկելի և հետիոտնային նոր կամուրջներ կառուցել՝ ճարտարապետական և շինարարական ժամանակակից լուծումներով:

Մ-4 ճանապարհի վնասված հատվածներից 10-ի նախագծման աշխատանքները գտնվում են ավարտական փուլում, իսկ 1 տեղամասում ընթանում են փլուզված հենապատի և հարակից տարածքի վերականգնման աշխատանքներ:

Մ-6 ճանապարհի հատվածների ամբողջական վերականգնման և անվտանգության ապահովման նպատակով մեկնարկել է (ավարտը 2025 թվականի հունիս) Դեբետ գետի հետազոտությունը՝ ներառյալ ջրաբանական ռեժիմի ուսումնասիրությունը, հոսքի մոդելավորումը և կլիմայական փոփոխություններով պայմանավորված վտանգների գնահատումը: Կառավարությունը 2024 թվականին տրամադրել է 220 մլն ՀՀ դրամ՝ Դեբետ և Աղստև գետերի հուների մաքրման աշխատանքների նպատակով:

Ալավերդի-Այրում երկաթգծի փլուզված մոտ 2 կմ ընդհանուր երկարությամբ 8 հատվածում իրականացվել են վերականգնողական աշխատանքներ, ինչի արդյունքում 2024 թվականի հունիսի 14-ի դրությամբ երկաթգիծն ամբողջությամբ վերականգնվել է: Վնասված երկաթուղու վերականգնման աշխատանքների ընդհանուր արժեքը կազմել է շուրջ 743 մլն ՀՀ դրամ, որն իրականացվել է «Հարավկովկասյան երկաթուղիներ» ՓԲԸ-ի կողմից՝ ՌԴ կառավարության աջակցությամբ:

Վերականգնման աշխատանքներին աջակցելու նպատակով համապատասխան տեխնիկա և մարդկային ռեսուրսներ են տրամադրվել նաև Վրաստանի կողմից:

Հեղեղումների հետևանքով Վրաստանից դեպի Հայաստան երկաթուղային բեռնափոխադրումների դադարեցման ընթացքում Այրում կայարանի տարածքում կազմավորվել է նավթամթերքի ժամանակավոր բեռնաթափման կետ, որով ապահովվում էր Հայաստանի վառելիքի նվազագույն պահանջարկը:

Արտակարգ իրավիճակի հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովը լայնածավալ աշխատանքներ է իրականացրել՝ ապահովելով աղետից տուժած անձանց փոխհատուցման գործընթացի արդյունավետ իրականացումը:

Հեղեղումներից տուժած ֆիզիկական և իրավաբանական անձանց աջակցություն տրամադրելու նպատակով ընդունված ծրագրերի շրջանակներում 2024 թվականի ընթացքում պետական բյուջեից փաստացի հատկացվել է շուրջ 1,3 մլրդ ՀՀ դրամ, որից 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ փաստացի հատկացվել է՝

- ֆիզիկական անձանց բազմաբնակարան շենքի կամ անհատական բնակելի տան վնասի փոխհատուցման նպատակով ավելի քան 200 շահառուի՝ շուրջ 440 մլն ՀՀ դրամ,
- կենցաղային առաջնային գույքի վնասի փոխհատուցման նպատակով ավելի քան 170 շահառուի՝ շուրջ 160 մլն ՀՀ դրամ,
- տրանսպորտային միջոցին պատճառված վնասի փոխհատուցման նպատակով ավելի քան 190 շահառուի՝ շուրջ 134 մլն ՀՀ դրամ,
- գյուղատնտեսության ոլորտում պատճառված վնասի փոխհատուցման նպատակով ընդհանուր շուրջ 159 մլն ՀՀ դրամ,
- տնտեսավարողներին աջակցության նպատակով 155 շահառուի՝ շուրջ 180 մլն ՀՀ դրամ:

Ծրագրերի շրջանակներում փոխհատուցման գործընթացը շարունակվելու է նաև 2025 թվականին:

Սոցիալական աջակցություն է տրամադրվել Լոռու և Տավուշի մարզերում հեղեղումների պատճառով տուժած 578 ընտանիքի (1 425 անձ):

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

2024 թվականին Հայաստանում արձանագրվել է բարձր տնտեսական աճ և ցածր գնաճ: ՀՆԱ-ի բարձր աճը պայմանավորված է եղել աշխատանքի արտադրողականության, ներդրումների, զբաղվածության և արտաքին առևտրի զգալի աճով: 2024 թվականի ընթացքում գրանցված բարձր աճը վկայում է ՀՆԱ-ի պոտենցիալի աճի արագացման մասին:

ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով կազմել է 3 338 443 ՀՀ դրամ կամ 8 501 ԱՄՆ դոլար, որը դոլարային արտահայտությամբ նախորդ տարվա համեմատ աճել է 4,7 %-ով, իսկ 2017 թվականի համեմատ՝ 2,2 անգամ:

Արտաքին առևտրաշրջանառությունը 2024 թվականի հունվար–դեկտեմբերին նախորդ տարվա նկատմամբ աճել է 41,5%-ով՝ կազմելով 30,2 մլրդ ԱՄՆ դոլար: Ներմուծումն աճել է 33,8%-ով, իսկ արտահանումը 53,1%-ով՝ կազմելով համապատասխանաբար 17,1 մլրդ ԱՄՆ դոլար և 13,1 մլրդ ԱՄՆ դոլար:

Հայաստան այցելած զբոսաշրջիկների թվաքանակը 2024 թվականին կազմել է 2 208 179՝ 2023 թվականի համեմատ նվազելով շուրջ 4,7%-ով, իսկ 2019 թվականի համեմատ աճելով 16,6%-ով:

Ներքին զբոսաշրջային այցելությունների թիվը 2024 թվականի հունվար-սեպտեմբերին կազմել է 2 046 508՝ նախորդ տարվա 1 971 808 այցելության ցուցանիշի նկատմամբ ապահովելով 3,8% աճ:

Աշխատուժի արտադրողականությունը հասել է մեկ աշխատաժամի դիմաց 10,3 ԱՄՆ դոլարի՝ 2023 թվականի 9,6 ԱՄՆ դոլարի, 2022 թվականի 8,2 ԱՄՆ դոլարի և 2021 թվականի 6,2 ԱՄՆ դոլարի համեմատ:

2024 թվականի դրությամբ.

- մինչև 150 000 ՀՀ դրամ վարձատրությամբ աշխատատեղերի թվաքանակը կազմել է ընդհանուր աշխատատեղերի 40,6%-ը՝ 2023 թվականի 43,3%-ի, 2022 թվականի 48,1%-ի և 2018 թվականի 60,4%-ի համեմատ,
- 150,001-500,000 ՀՀ դրամ վարձատրությամբ աշխատատեղերի թվաքանակը կազմել է ընդհանուր աշխատատեղերի 41,6%-ը՝ 2023 թվականի 40,6%-ի, 2022 թվականի 37%-ի և 2018 թվականի 31,2%-ի համեմատ,
- 500,001 և ավելի ՀՀ դրամ վարձատրությամբ աշխատատեղերի թվաքանակը կազմել է ընդհանուր աշխատատեղերի 17,8%-ը՝ 2023 թվականի 16,1%-ի, 2022 թվականի 14,9%-ի և 2018 թվականի 8,4%-ի համեմատ,
- ընդհանուր հարկման բազան (աշխատավարձի ֆոնդ) կազմել է շուրջ 295 մլրդ ՀՀ դրամ, ինչը 2023 թվականի նույն ցուցանիշից ավելի է շուրջ 30,8 մլրդ ՀՀ դրամով, 2022 թվականի նույն ցուցանիշից շուրջ 61,9 մլրդ ՀՀ դրամով, իսկ 2018 թվականի նույն ցուցանիշից շուրջ 163,9 մլրդ ՀՀ դրամով կամ 125%-ով:

Միջին ամսական աշխատավարձի ֆոնդը (հարկման բազա) կազմել է շուրջ 231,5 մլրդ ՀՀ դրամ, ինչը 2023 թվականի նույն ցուցանիշից ավելի է շուրջ 24,9 մլրդ ՀՀ դրամով, 2022 թվականի նույն ցուցանիշից շուրջ 61 մլրդ ՀՀ դրամով, իսկ 2018 թվականի նույն ցուցանիշից շուրջ 130,5 մլրդ ՀՀ դրամով կամ 129,3%-ով,

2024 թվականի դեկտեմբերին՝ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ արձանագրվել է 1,5 % գնաճ:

Գործազրկության մակարդակը 2024 թվականի 3-րդ եռամսյակի տվյալներով կազմել է 13,3%՝ 2023 թվականի նույն եռամսյակի 12%-ի և 2018 թվականի 17,6%-ի համեմատ:

Հիմնական միջոցներում ներդրումների իրական աճը 2024 թվականին կազմել է շուրջ 11,1%՝ գերազանցելով ՀՆԱ-ի աճը: Ներդրումների՝ ՀՆԱ-ի նկատմամբ առաջանցիկ աճը վկայում է տնտեսության կառուցվածքային փոփոխության մասին, ըստ որի անցում է կատարվում էժան ռեսուրսի վրա հիմնված մոդելից դեպի արտադրողականության վրա հիմնված մոդելի:

Հիմնական միջոցներում ներդրումների կշիռը ՀՆԱ-ում վերջին տարիներին շարունակաբար աճել է՝ 2018 թվականի 16,7%-ից 2021 թվականին հասնելով 21,2%-ի, ինչը 2022 թվականին մի փոքր նվազել է՝ կազմելով ՀՆԱ-ի 21,1%-ը, իսկ 2023 թվականին հասել է 20,9%-ի: 2024 թվականին նշված ցուցանիշը կազմել է 21,7% նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելանալով 0,8 տոկոսային կետով, իսկ 2018 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 5 տոկոսային կետով:

Արձանագրվել է ներդրումների ներհոսքի զգալի դիվերսիֆիկացում:

2024 թվականի արդյունքներով բանկային համակարգի ամփոփ ցուցանիշները հետևյալն են՝

- ակտիվները՝ շուրջ 11 տրլն ՀՀ դրամ,
- սեփական կապիտալը՝ շուրջ 1,7 տրլն ՀՀ դրամ,
- վարկային պորտֆելը՝ շուրջ 6,4 տրլն ՀՀ դրամ,
- ավանդները (ցպահանջ և ժամկետային)՝ շուրջ 6,5 տրլն ՀՀ դրամ:

Ըստ այդմ, նախորդ տարվա համեմատ՝

- ակտիվներն ավելացել են շուրջ 1,9 տրլն ՀՀ դրամով կամ 20,2%-ով, իսկ 2018 թվականի համեմատ՝ շուրջ 6 տրլն ՀՀ դրամով կամ 121,3%-ով,
- վարկային պորտֆելն աճել է շուրջ 1,2 տրլն ՀՀ դրամով կամ 24,2%-ով, իսկ 2018 թվականի համեմատ՝ շուրջ 3,3 տրլն ՀՀ դրամով կամ 104,4%-ով,
- ավանդները (ցպահանջ և ժամկետային) աճել են շուրջ 787 մլրդ ՀՀ դրամով կամ 13,9%-ով, իսկ 2018 թվականի համեմատ՝ շուրջ 3,5 տրլն ՀՀ դրամով կամ 118,6%-ով,
- կապիտալն ավելացել է շուրջ 338 մլրդ ՀՀ դրամով կամ 24,8%-ով, իսկ 2018 թվականի համեմատ շուրջ 952 մլրդ ՀՀ դրամով կամ 127,1%-ով,
- ՀՀ կենտրոնական բանկի միջազգային պահուստները 2018 թվականի համեմատ ավելացել են շուրջ 1,4 մլրդ ԱՄՆ դոլարով կամ 62,4%-ով:

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքը 2024 թվականի վերջի դրությամբ կազմել է շուրջ 1,1 տրլն ՀՀ դրամ՝ 2023 թվականի

նույն ցուցանիշից ավելի 274,7 մլրդ ՀՀ դրամով կամ 34,4%-ով, իսկ 2017 թվականի ցուցանիշից՝ 968,2 մլրդ ՀՀ դրամով կամ 915,7%-ով: Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների թիվը 2024 թվականի վերջի դրությամբ կազմել է 903 755 մարդ՝ 2023 թվականի նույն ցուցանիշից 91 662-ով կամ 11,3%-ով ավելի, իսկ 2017 թվականի նույն ցուցանիշից 577 626-ով կամ 177,1%-ով ավելի: 2024 թվականին պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի եկամտաբերությունը կազմել է 10,7%:

Ֆիզիկական անձանց հիփոթեքային վարկի տոկոսների գծով վերադարձվել է շուրջ 68,6 մլրդ ՀՀ դրամ եկամտային հարկ՝ 2023 թվականի նույն ցուցանիշը գերազանցելով շուրջ 16,6 մլրդ ՀՀ դրամով, 2022 թվականինը՝ շուրջ 32,1 մլրդ ՀՀ դրամով, 2021 թվականինը՝ շուրջ 45,8 մլրդ ՀՀ դրամով, 2020 թվականինը՝ շուրջ 55,2 մլրդ ՀՀ դրամով, իսկ 2018 թվականինը՝ շուրջ 63,9 մլրդ ՀՀ դրամով կամ 1364%-ով: Ծրագրի շահառուների թիվը 2024 թվականի վերջի դրությամբ կազմել է 49 973 անձ՝ 2023 թվականի ցուցանիշը գերազանցելով 11 062 անձով կամ 28,4%-ով, իսկ 2018 թվականի ցուցանիշը՝ 45 952 անձով կամ 1 142,8%-ով: 2024 թվականի արդյունքներով հիփոթեքային վարկի տոկոսների վերադարձի ծրագրի շահառուների կողմից 2018 թվականից հետո ձեռք է բերվել 36 569 բնակարան, և կառուցվել է 3 537 անհատական բնակելի տուն:

2023 թվականի համեմատ 2024 թվականին 16%-ով ավելացել է անկանխիկ (տերմինալներով) գործարքների քանակը՝ կազմելով շուրջ 407 մլն հատ գործարք: 2024 թվականի ընթացքում առևտրի և ծառայությունների ոլորտում բանկային քարտերով կատարված անկանխիկ վճարումների (տերմինալներով) ծավալները գերազանցել են կանխիկ վճարումները: Ընդ որում, ինտերնետով անկանխիկ վճարումների ծավալները ամենամեծն են եղել: Անկանխիկ վճարումների ընդհանուր ծավալը կազմել է շուրջ 2,7 տրլն ՀՀ դրամ, որից շուրջ 1,3 տրլն ՀՀ դրամը իրականացվել է ինտերնետ տերմինալների միջոցով: Կանխիկ վճարումների ընդհանուր ծավալը նվազել է 0,7%-ով և կազմել շուրջ 2 տրլն ՀՀ դրամ:

Առաջատար երեք միջազգային վարկանիշային գործակալությունները վերահաստատել են Հայաստանի սուվերեն վարկանիշները: Մասնավորապես, «Ֆիթչ» և «Ստանդարտ ընդ Փուր'զ» գործակալությունները վերահաստատել են երկրի սուվերեն վարկանիշը՝ սահմանելով «BB-»՝ «կայուն» հեռանկարով, իսկ «Մուդի'զ» գործակալությունը վերահաստատել է Հայաստանի գործող «Ba3» սուվերեն վարկանիշը՝ «կայուն» հեռանկարով:

ՄԱԿ-ի Արդյունաբերության զարգացման հիմնադրամի CIP (Competitive Industrial Performance) Index-ի 2024 թվականի վերագնահատման արդյունքների համաձայն Հայաստանը ինդեքսի ամենամեծ առաջընթաց գրանցած երկիրն է, որը 2022

թվականին զբաղեցրել է 89-րդ հորիզոնականը 2021 թվականի համեմատ դիրքը բարելավելով 6 հորիզոնականով, 2018 թվականի համեմատ՝ 13, իսկ 2011 թվականի համեմատ 29 հորիզոնականով: Ինդեքսը գնահատում է երկրների ապրանքներ արտադրելու և արտահանելու ունակությունը ոչ միայն կոնկրետ տարում, այլև երկարաժամկետ հատվածում:

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության 2024 թվականի «Գլոբալ ինովացիոն ցուցիչ»-ում, որն ուսումնասիրել է 2023 թվականի տվյալները, 133 երկրից Հայաստանը զբաղեցնում է 63-րդ տեղը՝ 2023 թվականի զեկույցի 132 երկրից 72-րդ տեղի համեմատ: Հայաստանը միջինից բարձր եկամուտ ունեցող 34 տնտեսություններից 15-րդն է:

2024 թվականին «The Heritage Foundation» վերլուծական կենտրոնի կողմից հրապարակված Տնտեսական ազատության ցուցիչում 184 երկրների շարքում Հայաստանը զբաղեցնում է 47-րդ տեղը՝ 2023 թվականին հրապարակված զեկույցի՝ 176 երկրների շարքում 50-րդ տեղի համեմատ:

Տնտեսական ակտիվության և արդյունաբերության խթանման նպատակով իրականացվել են նաև հետևյալ աշխատանքները.

Տնտեսության արտադրողականության խթանման նպատակային ծրագրի շրջանակում 2022 թվականի մարտից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում ձևավորվել է վարկային/լիզինգային ընդհանուր պորտֆել՝ շուրջ 365 մլրդ ՀՀ դրամ հանրագումարով, կնքվել է 7 087 վարկային/լիզինգային պայմանագիր: Պետական բյուջեից իրականացվել է 16,1 մլրդ ՀՀ դրամի սուբսիդավորում: Ըստ 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվառված տվյալների՝

- ծրագրի մեկնարկից (2022 թվականի մարտի 1-ից) մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ձեռք է բերվել 12 955 մեքենասարքավորում, որից արդեն Հայաստան է ներկրվել 6 638-ը,
- 2024 թվականի ընթացքում ձեռք է բերվել 6 524 մեքենասարքավորում, որից արդեն Հայաստան է ներկրվել 2 825-ը:

2024 թվականին հաշվառվել է նոր գնված շինարարական շուրջ 1340 տեխնիկա, որոնցից շուրջ 410-ը՝ լիզինգի մեխանիզմով գնված: Հաշվառված տեխնիկայի ընդհանուր թիվը 2023 թվականի համեմատ աճել է շուրջ 19%-ով:

Մասնավորապես, հաշվառվել է 736 էքսկավատոր (2018 թվականի 189-ի համեմատ), 58 բուլդոզեր/տրակտոր (2018 թվականի 31-ի համեմատ), 250

ամբարձիչ/բեռնիչ (2018 թվականի 59-ի համեմատ), 32 գրեյդեր (2018 թվականի 19-ի համեմատ), 100 գլդոն (2018 թվականի 34-ի համեմատ) և 52 կռունկ (2018 թվականի 0-ի համեմատ):

Բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման միջոցառման շրջանակում 2023-2024 թվականներին փոխհատուցում է ստացել 58 կազմակերպություն՝ 617 մասնագետի համար: Բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման միջոցառման շրջանակում 2024 թվականի ընթացքում աջակցության գումարը կազմել է մոտ 2,48 մլրդ ՀՀ դրամ:

«Ենթակառուցվածքներ ներդրումների դիմաց» օժանդակության ծրագրի շրջանակներում 2024 թվականի ընթացքում Կառավարության կողմից կնքվել է 9 պայմանագիր՝ համաձայն որոնց ընդհանուր 30,4 մլրդ ՀՀ դրամ ներդրումների դիմաց ենթակառուցվածքների կառուցման և ապահովման համար իրականացվելու է 2,3 մլրդ ՀՀ դրամի՝ ենթակառուցվածքների զարգացման գծով ծախս: «Ենթակառուցվածքներ ներդրումների դիմաց» օժանդակության ծրագրի շրջանակներում 2024 թվականի ընթացքում փաստացի իրականացվել է փոխհատուցում 1 ընկերությանը՝ 300 մլն ՀՀ դրամի չափով:

2024 թվականի ընթացքում Կառավարության կողմից մաքսատուրքից ազատման արտոնություն է տրամադրվել 67 ներդրումային ծրագրի մասով: Ծրագրերի շրջանակներում նախատեսվում է իրականացնել շուրջ 395 մլրդ ՀՀ դրամի ներդրում և ստեղծել շուրջ 2 400 նոր աշխատատեղ:

Մի շարք ապրանքների (որոշ սև մետաղների, գունավոր մետաղի թափոնների, ջարդոնի և այլն) արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու արդյունքում կատարվել է շուրջ 270 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ներդրում, ստեղծվել է շուրջ 1000 աշխատատեղ:

Ոչ սակագնային կարգավորումների միջոցներով ստեղծվել են խթանիչ պայմաններ ոլորտի ձեռնարկությունների կողմից մետաղի մշակումը ավելի խորացնելու և առավել բարձր ավելացված արժեքի ապրանքներ արտադրելու և արտահանելու համար արտադրանքի առավել երկար արժեշղթա կառուցելու միջոցով, որի արդյունքում ներմուծվող ապրանքները կփոխարինվեն տեղականով:

Ընդունվել է Դեղերի գրանցումների և վերագրանցումների փորձաքննությունների վճարների (տուրքերի) և ծախսերի փոխհատուցման ծրագիրը, որով նախատեսվում է դեղերի արտադրության ոլորտում գործունեություն իրականացնող ռեզիդենտ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի

կողմից Հայաստանում արտադրվող դեղերի մի շարք բաղադրիչով գրանցումների և վերագրանցումների փորձաքննությունների ծախսերի 50%-ի փոխհատուցում:

Դեղերի գրանցումների և վերագրանցումների փորձաքննությունների ծախսերի սուբսիդավորման ծրագրով 2024 թվականի ընթացքում տրվել է փոխհատուցում 4 ընկերության՝ 15,4 մլն ՀՀ դրամի չափով:

Կառավարության որոշմամբ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ բնակավայրում ազատ տնտեսական գոտի է ստեղծվել:

Արտադրողականության խթանման նպատակային ծրագրի շրջանակներում 2022 թվականի մարտից մինչև 2025 թվականի հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածում ձևավորվել է վարկային/լիզինգային ընդհանուր պորտֆել՝ շուրջ 365 մլրդ ՀՀ դրամ հանրագումարով, կնքվել է 7087 վարկային/լիզինգային պայմանագիր:

Զբոսաշրջության զարգացման ուղղությամբ 2024 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

2024 թվականի սեպտեմբերի 11-13-ը Զբոսաշրջության կոմիտեն ՄԱԿ Զբոսաշրջության հետ համատեղ Հայաստանում կազմակերպել է ՄԱԿ Զբոսաշրջության Գինու զբոսաշրջության 8-րդ համաշխարհային համաժողովը՝ «Ժառանգություն յուրաքանչյուր շշում. գինու զբոսաշրջության իրական փորձառության ստեղծում» խորագրով՝ ապահովելով 300-ից ավելի ոլորտի մասնագետների մասնակցություն:

Միջազգային հեղինակավոր «National Geographic», «Wanderlust Travel Magazine», «La Repubblica», «Khaleej Times», «The National» և այլ մեծ լսարան ունեցող պարբերականներում տպագրվել է Հայաստանի մասին ավելի քան 300 հոդված:

Հայաստանի տեսանելիությունը բարձրացնելու նպատակով իրականացվել է BBC-ի «Արևածագը Հայաստանում» ծրագիրը:

Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում ՀՀ տարբեր մարզերում զբոսաշրջության հետ կապված ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված աշխատանքների ուղղությամբ 2024 թվականին իրականացվել է 5,9 մլրդ ՀՀ դրամի ֆինանսավորում, որի շրջանակներում իրականացվել են աշխատանքներ՝ ուղղված զբոսաշրջային վայրերի մերձակա տարածքի բարեկարգմանը և ենթակառուցվածքների հիմնանորոգմանը, կառուցմանը և վերակառուցմանը:

Որակի ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ 2024 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ուժի ճնշման և ուժի մոմենտի, էլեկտրական մեծությունների (ներառյալ ժամանակի և հաճախականության), քիմիական մեծությունների, գծային (անկյունագծային) տրամաչափարկման լաբորատորիաներ են հիմնվել:

Վերազինվել է «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ փորձարկման լաբորատորիան՝ 3-ից բարձր տարիքային խմբի համար նախատեսված խաղալիքների՝ ամբողջ ծավալով փորձարկումների իրականացման նպատակով:

Իրականացվել է ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17043 «Համապատասխանության գնահատում. Որակավորման ստուգման ընդհանուր պահանջներ» ստանդարտի պահանջներին համապատասխան «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության հավատարմագրում՝ որպես միջլաբորատոր համեմատությունների պրովայդեր:

2024 թվականի պետական ստանդարտացման ծրագրի և ստանդարտացման աշխատանքների շրջանակներում մշակվել է 30 ստանդարտ: Հավատարմագրվել է 31 համապատասխանության գնահատման մարմին: Պետական բյուջեից այս ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել է 14,7 մլն ՀՀ դրամ:

Մտավոր սեփականության պահպանության ոլորտում 2024 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ազգային ընթացակարգով Մտավոր սեփականության գրասենյակն ստացել է ապրանքային նշանների 3 636 հայտ՝ 2023 թվականի 3 282 հայտի համեմատ: Միջազգային ընթացակարգով Հայաստանի նշմամբ ստացվել է ապրանքային նշանի 2 981 ծանուցում՝ 2023 թվականի 2 943-ի համեմատ: Հայաստանից ներկայացվել է միջազգային գրանցման 62 ապրանքային նշանի հայտ՝ 2023 թվականի 32 հայտի համեմատ:

Մտավոր սեփականության գրասենյակ է ներկայացվել 96 արտոնագիր ստանալու հայտ (19 գյուտի արտոնագիր և 77 գյուտի կարճաժամկետ արտոնագիր)՝ 2023 թվականի 112 հայտի համեմատ:

Մտավոր սեփականության գրասենյակը 5 հայտ է ներկայացրել Եվրասիական արտոնագրային գերատեսչություն:

Ազգային ընթացակարգով Մտավոր սեփականության գրասենյակ ներկայացվել է արդյունաբերական դիզայնի 26 հայտ: Արդյունաբերական դիզայների

միջազգային գրանցման մասին Հաագայի Համաձայնագրի ՖգԺնևյան ակտի շրջանակներում Հայաստանի նշմամբ ստացվել է արդյունաբերական դիզայների միջազգային գրանցման մասին 120 ծանուցում:

Բարձր տեխնոլոգիաներ, հեռահաղորդակցություն և կապ

ՏՏ ոլորտում (ներառված են նաև՝ Էլեկտրոնային բաղադրամասերի արտադրություն, համակարգիչների և ծայրամասային սարքվածքների արտադրություն, կապի սարքավորանքի արտադրություն, օդանավերի, տիեզերանավերի և այլ թռչող սարքերի արտադրություն, ինտեգրալային սխեմաների նախագծում և թեստավորում ուղղությունները), ըստ ՀՀ ՊԵԿ-ի տվյալների, 2024 թվականի դեկտեմբերի դրությամբ Հայաստանում գործունեություն է իրականացրել 8 396 գործող ընկերություն՝ 2023 թվականի դեկտեմբերի 7 825 գործող ընկերության համեմատ, իսկ ոլորտի գործող ընկերություններում աշխատակիցների թիվը կազմել է 41 541 մարդ՝ 2023 թվականի դեկտեմբերի 41 386 մարդու համեմատ:

Ըստ ՀՀ ՊԵԿ-ի տվյալների՝ նշված ոլորտի շրջանառությունը 2024 թվականի ընթացքում կազմել է շուրջ 915,8 մլրդ ՀՀ դրամ՝ 2023 թվականի շուրջ 785 մլրդ ՀՀ դրամի համեմատ:

Նշված ոլորտի ընկերությունների արտահանումների ընդհանուր ծավալը 2024 թվականին կազմել է 702,1 մլրդ ՀՀ դրամ՝ 2023 թվականի շուրջ 640 մլրդ ՀՀ դրամի համեմատ (26,2%-ով ավելի 2023 թվականի նույն ցուցանիշից):

2024 թվականի ընթացքում բարձր տեխնոլոգիաների, հեռահաղորդակցության և կապի ոլորտներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

«Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված աջակցության շրջանակում 2024 թվականին ՏՏ ոլորտում գործունեություն իրականացնող և մինչև 30 աշխատակից ունեցող 274 սկսնակ առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի տրամադրվել է հարկային արտոնություն:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին պետական աջակցության ծրագրի շրջանակներում շուրջ 6,1 մլրդ ՀՀ դրամի չափով պետական աջակցություն է տրամադրվել թվով 39 կազմակերպության:

Բացի դրանից, 2024 թվականի դեկտեմբերի 4-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» և «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրինագծերի փաթեթը, որը նպատակ ունի վերանայել բարձր տեխնոլոգիական ոլորտի, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքների համար պետական աջակցության գործիքակազմը և հարկային արտոնությունների շրջանակը՝ նշյալ ոլորտներում առաջանցիկ զարգացում ապահովելու համար բարենպաստ պայմաններ ստեղծելու միտումով:

2024 թվականին «Մասնագետների պատրաստման բարձրագույն ուսումնական հաստատություններ-մասնավոր հատված համագործակցություն» ծրագրում կատարվել են փոփոխություններ: Այն կազմակերպվել է հետևյալ բաղադրիչներով՝

- «Մասսայական ուսուցում» բաղադրիչ, որի շրջանակում տեխնոլոգիական ոլորտի դասընթացներ են կազմակերպվել ՀՀ Գեղարքունիքի, ՀՀ Վայոց ձորի և ՀՀ Սյունիքի մարզերի 9 համայնքի 400 մասնակցի համար,
- «Կարողությունների զարգացում» բաղադրիչ, որի շրջանակում ստեղծվել է «վաուչերային ֆոնդ», որից դրամաշնորհներ են տրամադրվել ոլորտային կազմակերպություններին իրենց կադրերին վերապատրաստելու նպատակով: Ծրագրի շրջանակում 23 կազմակերպության շուրջ 275 աշխատակից անցել են վերապատրաստման դասընթացներ 5 ուսումնական կենտրոնում,
- «Գործնական հմտությունների կատարելագործում» բաղադրիչ, որի շրջանակներում 2024 թվականի դեկտեմբերին Ծաղկաձորում կազմակերպվել է հաքաթոն, որին ներգրավվել է Հայաստանի 11 բուհի 110 ուսանող, որոնք տեխնոլոգիական լավագույն լուծումներ են առաջարկել տրված խնդիրներին,
- «Հայ-հնդկական ՏՀՏ ուսումնական կենտրոնի գործունեության ապահովման, ՏՏ դասընթացների կազմակերպում» ծրագրով վերապատրաստվել է բարձր տեխնոլոգիաների ոլորտի 873 մասնագետ,
- 2023 թվականի նոյեմբերի 23-ին կնքված պայմանագրերով 2024 թվականի ընթացքում իրականացվել են վերապատրաստման դասընթացներ 3 ուսումնական կենտրոնի կողմից, որոնց մասնակցել է շուրջ 849 անձ, որոնցից 529-ը անցել է նոր աշխատանքի կամ ունեցել է աշխատանքային առաջընթաց:

«Ինժեներական քաղաք» ծրագրի իրականացման համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է շուրջ 1,9 մլրդ ՀՀ դրամ՝ ուղղված Ինժեներական բիզնես աքսելերատորի շենքի կառուցման, կահավորման աշխատանքներին և ընդհանուր

ենթակառուցվածքների համակարգման, պահպանման, սպասարկման աշխատանքներին:

2024 թվականի մայիսի 31-ից Ինժեներական քաղաքում գործում է Հայաստանի ազգային գերհամակարգչային կենտրոնը: Գերհամակարգիչը կօգտագործվի արհեստական բանականության, տվյալագիտության, թվային գիտության, ամպային, մեքենայական ուսուցման, քվանտային ֆիզիկայի, աստղաֆիզիկայի, կենսաինֆորմատիկայի և բազմաթիվ այլ ոլորտներում:

2024 թվականին Երևանում կայացել է Նորարարության և տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովը (WCIT 2024):

Նոյեմբեր ամսից «Արմսաթ 1» արբանյակի կառավարման գործառույթներն անցել են «Գեոկոսմոս» ՓԲԸ-ի կառավարման կենտրոնի օպերատորներին: «Գեոկոսմոս» ՓԲԸ-ի ճարտարագետները և մասնագետները կատարել են հետազոտություններ և մշակել ՀՀ տիեզերական ռազմավարության նախագիծը, որի նպատակն է ապահովել հետագա 5 տարվա ընթացքում Հայաստանի տիեզերական կարողությունների արագընթաց զարգացումն ու երկրի ընդգրկումը միջազգային տիեզերական շուկայում:

Հանրապետության 725 (72,4%) բնակավայրում հասանելի են ամրակցված կապի լայնաշերտ ինտերնետի լարային տեխնոլոգիաների ծառայությունները, այդ թվում՝ 692 բնակավայրում (69,1%)՝ օպտիկամանրաթելային ցանցերը (բաժանորդներին առաջարկվող լայնաշերտ ինտերնետի 20-100Մբիթ/վ և ավելի արագությամբ), որոնք ընդգրկում են երկրի բնակչության ավելի քան 97%-ը, իսկ 996 (99,5%) բնակավայրում՝ ամրակցված հեռախոսակապի և առնվազն 2 Մբիթ/վ արագությամբ լայնաշերտ ինտերնետի անլար տեխնոլոգիաների ծառայությունները:

Հանրապետությունում ընդհանուր լայնաշերտ ինտերնետի բաժանորդների թվաքանակը կազմել է 3,86 մլն, այդ թվում՝ ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդների քանակը կազմել է շուրջ 604 000, 2023 թվականի տարեվերջի համեմատ աճելով 10,6%-ով (գերակշռել են օպտիկամանրաթելային տեխնոլոգիայից օգտվող բաժանորդները՝ 520 000, որոնց տեսակարար կշիռը կազմել է շուրջ 86%՝ աճելով շուրջ 14,2%-ով): Հանրապետության բոլոր բնակավայրերում հասանելի են հանրային շարժական կապի, այդ թվում՝ 4G+ (LTE Advanced) տեխնոլոգիայի ծառայությունները, ընդ որում, բնակավայրերի 91,4%-ում (915 բնակավայր) հասանելի է առնվազն 2 օպերատորի, իսկ շուրջ 22%-ում, որը բնակչության ներգրավվածության առումով կազմում է հանրապետության բնակչության ավելի քան 76%-ը՝ 3 օպերատորի փոխադարձ ներթափանցելի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթը:

Հանրապետության շուրջ 30 քաղաքում՝ ներառյալ Երևանում, Գյումրիում և Վանաձորում, մասամբ հասանելի է նաև 5G տեխնոլոգիայի ցանցը: ՀՀ-ում Ռադիոհաճախականությունների կառավարման համակարգող հանձնաժողովի կողմից ՀՀ տարածքում շարժական կապի լայնաշերտ 5G տեխնոլոգիայի ցանցերի ներդրման և զարգացման համար նախատեսված՝ 2300-2400 ՄՀց և 3600-3800 ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթները ազատականացվել և տրամադրվել են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ մրցութային գործընթացները կազմակերպելու համար, որի մեկնարկը տրված է 2024 թվականի տարեվերջից:

2024 թվականի վերջի դրությամբ Հայաստանի տարածքում ներդրված բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի՝ 1 գլխավոր և 5 սպասարկվող ստացիոնար, 20 չսպասարկվող ստացիոնար և 5 շարժական կայանի միջոցով իրականացվում է ռադիոեթերի մշտադիտարկում՝ 24/7 (ժամ/օր) ռեժիմով, որն ապահովվում է եթերի մինչև 100% մաքրություն:

2024 թվականի վերջի դրությամբ Հայաստանի բոլոր բնակավայրերում հեռուստահեռարձակման ծածկույթը կազմել է 100%:

«Հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության հետ համատեղ մշակվել է Երևան և Գյումրի քաղաքներում, ինչպես նաև Երևան-Արեգ-Գյումրի ճանապարհների թվային ռադիոհեռարձակման պիլոտային ծրագիրը:

2024 թվականին 53 կազմակերպություն, որից 7-ը՝ նոր, իրականացրել են փոստային կապի գործունեություն. արդյունքում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 156,3 մլն ՀՀ դրամ:

Մասնակցություն միջազգային ցուցահանդեսներին

Արտահանմանն ուղղված միջոցառումների համար տրամադրված շուրջ 560 մլն ՀՀ դրամ ֆինանսավորման շրջանակներում ապահովվել է 139 հայկական ընկերության՝ միասնական ազգային տաղավարներով մասնակցությունը 14 միջազգային ցուցահանդեսի (Հայաստանում, Գերմանիայում, Արաբական Միացյալ Էմիրություններում, Չինաստանում, Լատվիայում, Սաուդյան Արաբիայում, Հնդկաստանում, Ֆրանսիայում, Ռուսաստանում, Իրաքում, Եգիպտոսում), որոնց շրջանակներում տեղի է ունեցել 300-ից ավելի B2B ձևաչափով հանդիպում:

Կազմակերպվել է 6 գործարար համաժողով (հայ-իրանական, հայ-ղազախական, հայ-հնդկական, հայ-լիտվական, հայ-էմիրաթական և հայ-իրաքյան), որոնց մասնակցել է ավելի քան 400 գործարար:

2024 թվականին «ՀԱՅԱՍՏԱՆ» միասնական տաղավարով մասնակցություն է ապահովվել 5 միջազգային տեխնոլոգիական ցուցահանդեսի (այդ թվում՝ 4 ցուցահանդես՝ արտերկրում և 1 ցուցահանդես՝ Հայաստանում), որտեղ ներկայացված են եղել 41 մասնակից և 13 այցելու հայկական կազմակերպություն:

Մասնակցություն է ապահովվել հետևյալ տեխնոլոգիական ցուցահանդեսներում՝

- «Քոնվերջենս Ինդիա 2024» (Convergence India 2024) միջազգային ցուցահանդես, Հնդկաստան, Նյու Դելի,
- «Համաշխարհային բջջային կոնգրես 2024» (Mobile World Congress Barcelona 2024)- միջազգային ցուցահանդես, Իսպանիա, Բարսելոնա,
- «Վիվա Թեքնոլոջի 2024» (Viva Technology 2024) միջազգային ցուցահանդես, Ֆրանսիա, Փարիզ,
- «Տիեզերագնացության միջազգային 75-րդ համաժողով 2024»-ի (75th international astronautical congress 2024) շրջանակում անցկացվող միջազգային ցուցահանդես, Իտալիա, Միլան,
- «ԴԻՋԻԹԵՔ 2024» (DIGITEC 2024) միջազգային ցուցահանդես, Հայաստան, Երևան:

Արտերկրում տեղի ունեցած միջազգային տեխնոլոգիական ցուցահանդեսներին մասնակցության արդյունքում մասնակից և այցելու հայկական կազմակերպությունների կողմից 2024 թվականին կնքվել են՝

- 22 պայմանագիր (2 պայմանագիր կնքվել է 2023 թվականին կայացած IDEX 2023 և EDEX 2023 միջոցառումների արդյունքում),
- 20 հուշագիր և փոխադարձ գաղտնիության համաձայնագիր (1 համաձայնագիր կնքվել է 2023 թվականին կայացած EDEX 2023 միջոցառման արդյունքում),
- 39 համագործակցության այլ ձև (մտադրությունների մասին նամակ, կորպորատիվ բաժանորդագրություն, գործընկերային ծրագիր և այլն):

Մեկ միասնական տաղավարով հայաստանյան տուրոպերատորների պատվիրակության հետ միասին ապահովվել է մասնակցություն 4 միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսին՝

- ITB Berlin,
- ITB Asia,
- ATM Dubai,
- WTM London:

Գյուղատնտեսություն

2024 թվականին գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է շուրջ 958,8 մլրդ ՀՀ դրամ (նախորդ տարվա նկատմամբ աճել է 1,6%-ով), որից՝

- բուսաբուծությունը շուրջ 455,6 մլրդ ՀՀ դրամ (նախորդ տարվա նկատմամբ աճը՝ 0,9%),
- անասնաբուծությունը շուրջ 503,2 մլրդ ՀՀ դրամ (նախորդ տարվա նկատմամբ աճը՝ 2,2%):

2024 թվականի ընթացքում գյուղատնտեսության ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ինտենսիվ այգեգործության ծրագրերի շրջանակում հաստատվել է շուրջ 1350 հա այգեհիմնման և շուրջ 1660 հա (ներառյալ այգեհիմնումը) ոռոգման արդիական տեխնոլոգիաների ներդրման հայտ: Ծրագրերի մեկնարկից հետո փաստացի հիմնվել է շուրջ 3270 հա այգի: Ծրագրերի շրջանակում 2024 թվականի պետական բյուջեից 19,3 մլրդ ՀՀ դրամի աջակցություն է տրամադրվել: Կառավարության ծրագրով թիրախ է սահմանված տարեկան 1 000 հա այգեհիմնում, որն ապահովվել է:

Տնամերձ հողամասերում այգիների հիմնման և ոռոգման արդիական համակարգերի ներդրման Կառավարության աջակցության ծրագրի շրջանակներում 2024 թվականի ընթացքում Բերքաբեր և Խաշթառակ բնակավայրերի 87 տնտեսության ընդհանուր 5,8 հա տնամերձ այգիներում իրականացվել են այգեհիմնման և կաթիլային ոռոգման համակարգի ներդրման աշխատանքներ, որոնց 95%-ը ֆինանսավորվել են պետական, 5%-ը՝ համայնքային բյուջեից: Աշխատանքներն իրականացվել են կապալառու կազմակերպության միջոցով: Ծրագրի նպատակը բնակավայրերում այգեգործական կլաստերների ստեղծումն է:

Գյուղատնտեսության ապահովագրության ոլորտում 2023 թվականին արձանագրված բարձր վնասաբերության հետևանքով վերաապահովագրող ընկերությունը 2024 թվականին դուրս եկավ ռիսկերի կառավարման ձևաչափից, և այդ գործառույթը ստանձնեց Կառավարությունը՝ համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով: 2025 թվականի ընթացքում կմշակվեն և կտրվեն լուծումներ, որոնց արդյունքում համակարգը կշարունակի գործել որպես դասական և կենսունակ ապահովագրական համակարգ:

Գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի ծրագրի շրջանակում ձեռք է բերվել 920 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 242 միավոր տրակտոր, որոնց գծով լիզինգի գործարքների հանրագումարը կազմել է շուրջ 3,1 մլրդ ՀՀ դրամ:

Ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի ծրագրի շրջանակում ձեռք է բերվել 429 միավոր սարքավորում, որոնց գծով լիզինգի գործարքների հանրագումարը կազմել է շուրջ 5,0 մլրդ ՀՀ դրամ:

Ջերմատնային տնտեսությունների զարգացման նպատակով պետության կողմից իրականացվող ծրագրերի շրջանակում շուրջ 20 հա ջերմատնային տնտեսության հիմնման պայմանագրեր են կնքվել:

Հաստատվել և մեկնարկել է սպանդանոցային ծառայություն մատուցող տնտեսավարողների աջակցության ծրագիրը, որի համաձայն՝ մինչև 2027 թվականի ավարտը սպանդանոցային տնտեսությունների կողմից ֆերմերային տնտեսություններից գնված ԽԵԿ-ի սպանդից ստացված մսեղիքի իրացման համար հաշվարկված ԱԱՀ-ի 75 %-ի չափով աջակցություն կտրամադրվի:

Հաստատվել և իրականացվել է բուսաբուծության աջակցության ծրագիրը, որի շրջանակում փաստացի իրականացվել է շուրջ 19 197 հա հացահատիկային, հատիկաընդեղեն մշակաբույսերի և բազմամյա խոտաբույսերի ցանք:

Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) ծրագրով հաստատվել է 214 հայտ՝ շուրջ 16,9 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, որի արդյունքում կնքվել է 8037 բերքի գնման պայմանագիր:

Մթերվել է շուրջ 67 400 տոննա պտուղ-բանջարեղեն և շուրջ 165 000 տոննա խաղող: Խաղողի մթերումների գործընթացը կազմակերպելու նպատակով ծրագրի շրջանակներում 4 ընկերության տրամադրվել է շուրջ 3,1 մլրդ ՀՀ դրամի բյուջետային երաշխիք:

Կոնյակի սպիրտի արտահանման աջակցության ծրագրի շրջանակներում 3 շահառուի տրամադրվել է շուրջ 751,5 մլն ՀՀ դրամ ծավալով աջակցություն, որի արդյունքում արտահանվել է շուրջ 7,5 մլն լիտր կոնյակի սպիրտ:

Անասնաբուծության ճյուղում խոշոր ներդրումային ծրագրերին աջակցության նպատակով տրամադրվել է կապիտալ ծախսերի շուրջ 2,3 մլրդ ՀՀ դրամ ծավալով փոխհատուցում՝ շուրջ 12,4 մլրդ ՀՀ դրամ ծավալով փաստացի ներդրում կատարելու դիմաց:

«ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալում և հաշվառում» ծրագրի շրջանակում իրականացվել է 195 400 խոշոր եղջերավոր կենդանու համարակալում: Ծրագիրը շարունակական է. էլեկտրոնային տեղեկատվական համակարգում ներբեռնված է 533 961 գլուխ համարակալված խոշոր եղջերավոր կենդանի:

Արդյունաբերական խեցգետնաբուծության զարգացման ծրագրի շրջանակում 1 տնտեսավարողի հետ կնքվել է պայմանագիր՝ 18 տոննա արտադրական հզորությամբ խեցգետնաբուծական համալիր հիմնելու նպատակով՝ շուրջ 184 մլն ՀՀ դրամ ներդրմամբ:

Հաստատվել և մեկնարկել է գյուղատնտեսական նշանակության հողերի կոնսոլիդացիայի նոր ծրագիր՝ կադաստրային արժեքի 30%-ի փոխհատուցման պայմանով: Ծրագրի շրջանակում կնքվել է 12 պայմանագիր:

Քաղաքաշինություն

2024 թվականի տարեսկզբի դրությամբ Հայաստանում շինարարության ընթացքում է գտնվել շուրջ 87 000 բնակելի միավոր (բնակարան և բնակելի տուն), որոնցից շուրջ 15 000-ը տարվա ընթացքում ավարտական ակտ են ստացել: 2024 թվականի վերջի դրությամբ կառուցման տարբեր փուլերում է գտնվել շուրջ 90 000 բնակելի միավոր:

ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից գրանցվել է 45 543 նոր անշարժ գույք, որից 14 993-ը բնակելի: 2024 թվականին գրանցված նոր բնակելի գույքերի թիվը 2018 թվականի համեմատ ավելի է 1,9 անգամ: 2018-2024 թվականների ընթացքում նոր գրանցված բնակելի գույքերի 20,7%-ը գրանցվել է 2024 թվականին: 2018-2024 թվականների ընթացքում ՀՀ-ում նոր կառուցված և ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից գրանցված գույքերի թիվը կազմել է 137 551, որից 107 658-ը՝ բնակելի:

2024 թվականին քաղաքաշինության ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

«Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակում» ծրագրի շրջանակներում 2024 թվականի վերջի դրությամբ մշակվել է 971 բնակավայրի ընդգրկմամբ 88 փաստաթուղթ, հաստատվել է 946 բնակավայրը, իսկ 25–ը՝ հաստատման փուլում են:

Մեկնարկած պիլոտային ծրագրի շրջանակներում 2024 թվականի օգոստոսի 1-ից ՀՀ Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Լոռու մարզերում թույլտվությունները

տրամադրվել են առցանց՝ urban.e-gov.am թվային հարթակի միջոցով: 2024 թվականի ընթացքում նշված մարզերում ընդհանուր ստացվել է 12 178 դիմում, ծանուցում և այլն, որից 6 507-ը քաղաքաշինական գործունեություն իրականացնելու թույլտվություն ստանալու համար: Դիմումներից 4 962-ը, այսինքն շուրջ 76,2%-ը ստացել են դրական ընթացք: Համակարգի ներդրումից ի վեր խիստ նույնականացում է անցել շուրջ 6 310 օգտատեր:

Քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվությունները 2025 թվականի հունվարի 1-ից ամբողջ հանրապետությունում իրականացվում են բացառապես էլեկտրոնային համակարգով՝ urban.e-gov.am թվային հարթակի միջոցով:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար մի շարք կարևորագույն նշանակության օբյեկտների շահագործման մատչելիությունն ապահովելու նպատակով հետազննվել և անձնագրավորվել է 25 օբյեկտի շենքեր և շինություններ:

Աղետի գոտու բնակավայրերի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը երկրաշարժից հետո տեղադրված կամ կառուցված ոչ հիմնական շինություններից ազատելու կարգի համաձայն՝ շարունակվել է չօգտագործվող կամ չբնակեցված տնակների ապամոնտաժման գործընթացը, զուգահեռաբար աշխատանքներ են տարվում բնակության նպատակով օգտագործվող տնակների մասով գործընթացը մեկնարկելու համար:

2022 թվականին մեկնարկած ինքնակամ կառուցած շինությունների հաշվառման գործընթացի շրջանակներում 2024 թվականի դրությամբ հաշվառվել է շուրջ 70 000 ինքնակամ կառույց, որոնք ամբողջությամբ մուտքագրվել են անշարժ գույքի տեղեկատվական համակարգ: Արդյունքում այդ գույքերի համար գանձվող անշարժ գույքի հարկը կազմել է շուրջ 337 մլն ՀՀ դրամ:

Ազգային ժողովի կողմից ընդունվել են «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքները, որոնցով սահմանվել են բազմաբնակարան շենքի կառավարման բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի, մարզպետների աշխատակազմերի և ՏԻՄ-երի իրավասությունները, նոր կառուցվող կամ կառուցված շենքերի դեպքում՝ նաև կառուցապատողի պարտականությունները:

Իրականացվել են Ստեփանավան քաղաքի Աշոտաբերդ թաղամասի վթարային փայտյա 24 շենքի փոխարեն նոր թաղամասի նախագծման աշխատանքները և 2024 թվականին մեկնարկել են նոր թաղամասի (բազմաբնակարան 15 շենք) շինարարական աշխատանքները (ծրագրի արժեքը՝ շուրջ 9,7 մլրդ ՀՀ դրամ): Շահագործման է հանձնվել Սյունիքի մարզի Գորիս համայնքի Շուռնուխ բնակավայրում կառուցված նոր բնակելի թաղամասը:

2024 թվականի տարեվերջի դրությամբ տրամադրվել է քաղաքաշինության բնագավառի 2527 լիցենզիա, 4 323 ներդիր, 3163 հավաստագիր: Խախտում կատարելու հիմքով կասեցվել է 12 լիցենզիա և 38 ներդիր:

Բնական ռեսուրսների կառավարում

2024 թվականին հանքարդյունաբերության ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ընդերքօգտագործողների կողմից պետական բյուջե վճարված ռոյալթիներից ազդակիր համայնքներին մասհանումների մասին կարգավորումների համաձայն՝ 2024 թվականին 6 համայնքում իրականացվել են ռոյալթիներից ստացվող համայնքային մասհանումների ծրագրեր, որոնց ֆինանսավորման չափը կազմել է ավելի քան 1 մլրդ ՀՀ դրամ:

2024 թվականի արդյունքներով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի ակնկալվող զուտ շահույթը կազմելու է շուրջ 137,5 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար՝ 2023 թվականի 215 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումարի, 2022 թվականի շուրջ 221 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումարի, 2021 թվականի շուրջ 188 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումարի, 2020 թվականի շուրջ 2 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումարի, 2019 թվականի շուրջ 30 մլն ԱՄՆ դոլարին համարժեք վնասի և 2018 թվականի շուրջ 32 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումարի համեմատ:

2024 թվականի արդյունքներով ընկերության կողմից վճարված հարկերի և տուրքերի հանրագումարը կազմել է շուրջ 259,5 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար՝ 2023 թվականի շուրջ 181 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումարի, 2022 թվականի շուրջ 336 մլն ԱՄՆ դոլարին համարժեք (որից պետական տուրքի գումար՝ շուրջ 80 մլն ԱՄՆ դոլարին համարժեք և նախորդ տարիների ընթացքում պակաս վճարված հարկերի գումար՝ շուրջ 35 մլն ԱՄՆ դոլարին համարժեք) գումարի, 2021 թվականի շուրջ 123 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումարի, 2020 թվականի շուրջ 88 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումարի, 2019 թվականի շուրջ

107 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումարի և 2018 թվականի շուրջ 104 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումարի համեմատ:

Բաշխվել է 2022 և 2023 թվականների շահաբաժինը շուրջ 386 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար, որից Կառավարության մասնաբաժինը կազմել է 84,2 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար:

Ընդերքօգտագործման պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով դադարեցվել է 9 ընդերքօգտագործման իրավունք:

Հաշվետու տարվա ընթացքում տրամադրվել է 57 ընդերքօգտագործման իրավունք, որից 32-ը՝ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով, 25-ը (որից 1-ը՝ մետաղական)՝ երկրաբանական ուսումնասիրությունների նպատակով:

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Տրանսպորտ

Ավտոմոբիլային տրանսպորտ

Ավտոմոբիլային տրանսպորտի ոլորտում 2024 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Երևան քաղաքի երթուղային ցանցի արդիականացման նպատակով ներկրվել է 186 նոր տրանսպորտային միջոց, այդ թվում՝ 171 ավտոբուս և 15 տրոլեյբուս, գործարկվել է միասնական էլեկտրոնային տոմսային համակարգ: Գյումրի և Վանաձոր համայնքների երթուղիները համալրվել են 5-ական նոր էլեկտրական շարժիչով աշխատող ավտոբուսներով՝ «Դաշինք հանուն կայուն և կանաչ կառավարման»՝ ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրի շրջանակներում:

Լիցենզավորվել է 18 տեխնիկական զննության և 12 գազաբալոնային սարքավորումների տեղադրման և պարբերական վկայագրման կայան:

Արմավիրի մարզի Վաղարշապատի տարածաշրջանի միասնական երթուղային ցանցը համալրվել է 28 նոր տրանսպորտային միջոցով: Կոտայքի մարզի միասնական երթուղային ցանցը սպասարկող օպերատորը ներկրել է 32 նոր տրանսպորտային միջոց:

2024 թվականին կայացել են Արագածոտնի մարզի և Գեղարքունիքի մարզի՝ Սևանի, Գավառի և Ճամբարակի տարածաշրջանների միասնական երթուղային

ցանցերը սպասարկող օպերատորների ընտրության մրցույթները, որոնց արդյունքում ընտրվել են հաղթող կազմակերպությունները: Արագածոտնի մարզի միասնական երթուղիների սպասարկման համար կներգրավվի 72 նոր տրանսպորտային միջոց, իսկ Սևանի, Գավառի և Ճամբարակի տարածաշրջանների միասնական երթուղային ցանցի համար ձեռք կբերվի 69 նոր տրանսպորտային միջոց:

Ամբողջովին կանոնակարգվել են Որակի խարտիայով նախատեսված փոխադրումների գործունեությամբ զբաղվող կազմակերպություններին ներկայացվող պահանջները, դրանց՝ փոխադրումների մենեջերների և միջպետական փոխադրումներ իրականացնող վարորդների մասնագիտական վերապատրաստումներին և որակավորմանը, վերապատրաստում իրականացնող ուսումնական կենտրոններին ներկայացվող պահանջները:

Մշակվել է ծանրաքաշ, չմասնատվող և (կամ) մեծ եզրաչափեր ունեցող բեռների փոխադրման համար թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային հարթակ (https://transport.e-gov.am), որը կգործարկվի 2025 թվականի ընթացքում:

Կանոնակարգվել է էլեկտրոնային հարթակների միջոցով ուղևորների փոխադրման պատվերներ ստացող և փոխանցող կազմակերպությունների գործունեությունը: Էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրումների իրականացման համար սահմանվել է պետական տուրքի պահանջ՝ յուրաքանչյուր փոխադրման համար, ինչպես նաև պատվերի վճարման էլեկտրոնային անդորրագրի տրամադրման պահանջ: 2024 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից պետական բյուջե է փոխանցվել ավելի քան 654,5 մլն ՀՀ դրամ: Էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայության մատուցման իրավունք ձեռք բերելու համար ՏԿԵ նախարարությանը դիմել է 9 կազմակերպություն, որի համար ՀՀ պետական բյուջե մուտքագրվել է 9 մլն ՀՀ դրամ:

Երրորդ երկրներից 2024 թվականին ՀՀ ներկրվել է 3 939 բեռնատար և 31 848 մարդատար տրանսպորտային միջոց, այդ թվում՝ 9 525 էլեկտրամոբիլ: 2023 թվականի համեմատ 2024 թվականին ներկրված բեռնատար տրանսպորտային միջոցների թիվն աճել է 30,7%-ով, մարդատար տրանսպորտային միջոցներինը նվազել՝ 63,1%-ով, այդ թվում՝ էլեկտրամոբիլներինը աճել է՝ 50%-ով:

Էլեկտրամոբիլների համար նախատեսված լիցքավորման կետերի թիվը ՀՀ-ում գերազանցել է ավելի քան 300-ը:

Օդային տրանսպորտ

ՀՀ օդանավակայանների կողմից 2024 թվականի ընթացքում սպասարկվել է 5 354 222 ուղևոր, որը մոտ 1,3%-ով պակաս է 2023 թվականի ցուցանիշից (5 425 076): Նշված ուղևորահոսքից 2024 թվականին 1 311 366 ուղևոր օգտվել է հայկական ավիաընկերություններից, ինչը կազմում է ընդհանուր ուղևորահոսքի մոտ 24,7%-ը և մոտ 27,8%-ով պակաս է 2023 թվականի ցուցանիշից: 2018 թվականի ցուցանիշի (76 600 ուղևոր) նկատմամբ ուղևորահոսքն աճել է շուրջ 1 612%-ով:

Օդային ճանապարհով փոխադրվել է 42 234 տոննա բեռ, որը շուրջ 24,8%-ով ավելի է 2023 թվականի ցուցանիշից (33 786 տոննա) և շուրջ 133%-ով ավելի է 2018 թվականի ցուցանիշից (18 100 տոննա):

Իրականացվել են կանոնավոր չվերթեր 53 ուղղություններով՝ 48 ավիաընկերության կողմից, 22 ուղղություններով թռիչքներ են իրականացվել հայկական 5 ավիաընկերությունների կողմից:

Հայաստանյան շուկա մուտք է գործել 5 նոր ավիաընկերություն՝ Իրաքի Էյրվեյզ, Սալամ Էյր, Չայնա Սաութերն Էյրլայնզ, Սքայ Էքսպրես Էյրլայնզ, Յազդ Էյրվեյզ:

Կապանի «Սյունիք» օդանավակայանի Երևան-Կապան-Երևան ուղղությամբ իրականացվել է 76 չվերթ (շաբաթական 2 չվերթ հաճախականությամբ, իսկ նոյեմբեր ամսից՝ շաբաթական 3 չվերթ) և տեղափոխվել 1346 ուղևոր:

Օտարերկրյա օդանավ շահագործողներին տրամադրվել է ընդհանուր առմամբ կանոնավոր և ոչ կանոնավոր փոխադրումների 2907 թույլտվություն, ինչը պակաս է 13,7%-ով 2023 թվականի նույն ցուցանիշից:

2024 թվականին մշակվել և գործարկվել է օդային ճանապարհով ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների իրականացման համար թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային հարթակ՝ https://aviation.e-gov.am/ հղումով:

Թռիչքային և ավիացիոն անվտանգության մակարդակի բարձրացման նպատակով վերանայվել և կատարվել են փոփոխություններ մի շարք իրավական ակտերում՝ ապահովելով դրանց համապատասխանությունը միջազգային պահանջներին:

Մշակվել է մեխանիզմ և սահմանվել, որ 2025 թվականի հունվարի 1-ից Քաղաքացիական ավիացիայի բնագավառում մատուցված տարբեր ծառայությունների համար գանձվելու է պետական տուրք:

Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ICAO) կողմից իրականացվել է Հայաստանում ավիացիոն ոլորտի միջազգային ստանդարտներին և պահանջներին համապատասխանության աուդիտ, որի շրջանակներում ավիացիոն

պատահարների քննության ոլորտում արձանագրված մի շարք թերությունների վերացմանը նպատակաուղղված ուղղիչ գործողությունների պլան է (CAP) մշակվել:

Հիմք ընդունելով ԻԿԱՕ-ի կողմից արձանագրված թերությունները՝ լրամշակվել է Հայաստանում ավիացիոն պատահարների և միջադեպերի մասնագիտական քննության անցկացման, դասակարգման և հաշվառման կարգը:

ԵՄ թռիչքների անվտանգության ցուցակից դուրս գալու կապակցությամբ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն, 2022 թվականից սկսած վերացնելով Եվրոպական հանձնաժողովի կողմից 2020 թվականին հայտնաբերված հիմնական թերությունները, ինչպես նաև ԻԿԱՕ-ի կողմից 2024 թվականին Հայաստանում անցկացված համընդհանուր աուդիտի արդյունքում արձանագրված թռիչքային անվտանգության վերաբերյալ մտահոգությունները, 2024 թվականին դիմել է Եվրոպական հանձնաժողովի Շարժունակության և տրանսպորտի հարցերով գլխավոր տնօրինությանը (EU DG MOVE)՝ նախաձեռնելով «սև ցուցակից» հայկական ավիաընկերությունների դուրս գալու մեկնարկի գործընթացը: 2024 թվականի նոյեմբերին տրվել է գործընթացի մեկնարկը, շտկվել է ուղղիչ գործողությունների պլանը: Կատարված ուղղիչ գործողությունները և դրանց իրականացումը հավաստող փաստաթղթերը 2024 թվականի դեկտեմբերին պաշտոնապես ներկայացվել է EU DG MOVE-ին:

Երկաթուղային տրանսպորտ

Երկաթուղային տրանսպորտի ոլորտում 2024 թվականի ընթացքում ներդրումային ծախսերը կազմել են շուրջ 1,7 մլրդ ՀՀ դրամ, որից ենթակառուցվածքում՝ շուրջ 1,54 մլրդ ՀՀ դրամ, իսկ շարժակազմում՝ շուրջ 170 մլն ՀՀ դրամ:

Իրականացվել է 7 կմ երկաթուղային գծի նորոգում, վերանորոգվել է 4 միավոր լոկոմոտիվ՝ 32 միավոր գծային սարքավորումների փոխարինմամբ, հիմնանորոգվել է 2 կմ հպակային ցանց, փոխարինվել՝ 255 հենասյուն, հիմնանորոգվել՝ ուղևորների նստեցման 2 հարթակ:

2024 թվականին գրանցվել է ուղևորափոխադրումների (ուղևորների քանակի) 4,7% աճ, իսկ ուղևորաշրջանառությունը (ուղևորափոխադրման տարածությունը) նվազել է 4,8%-ով:

2024 թվականի ընթացքում տեղափոխվել է 1 442,5 հազար տոննա բեռ, ինչը նվազել է նախորդ տարվա նկատմամբ 31,4 %-ով, իսկ կոնտեյներներով առաքվող բեռների գծով գրանցվել է 1,1% աճ:

Ամբողջությամբ վերականգնվել է 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևների արդյունքում Դեբետ և Աղստև գետերի վարարման հետևանքով Ալավերդի-Այրում երկաթուղային հատվածում առաջացած փլուզումները 8 հատվածում՝ մոտ 2 կմ ընդհանուր երկարությամբ:

Ճանապարհաշինություն

2024 թվականին ճանապարհաշինարարական ծրագրերով ընդհանուր առմամբ հիմնանորոգվել, միջին նորոգվել, վերակառուցվել, կառուցվել և սալարկվել են շուրջ 754 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածներ, որից, մասնավորապես, 503 կմ կատարված աշխատանքների շրջանակներում իրակա-նացվել են՝

- 333 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածների հիմնանորոգման աշխատանքներ,
- 123 կմ ընդհանուր երկարությամբ միջպետական և հանրապետական նշա-նակության ավտոմոբիլային ճանապարհների միջին նորոգման աշխատանքներ,
- 38 կմ վերակառուցման աշխատանքներ՝ Հյուսիս–հարավ ծրագրի շրջանակներում,
- 9 կմ ճանապարհ նորոգվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից:

ՀՀ համայնքներում սուբվենցիոն ծրագրի շրջանակներում ասֆալտապատվել է շուրջ 215 կմ և սալարկվել շուրջ 36 կմ ներհամայնքային ճանապարհ:

Հիմնանորոգված և վերակառուցված ճանապարհներից առանձնահատուկ կարևորություն և ռազմավարական նշանակություն ունեն հատկապես՝

- Մ-2, Երևան-Երասխ-Նորավան-Տաթև-Կապան-Մեղրի-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի Վերին Խոտանանը շրջանցող 11 կմ երկարությամբ ճանապարհահատվածի կառուցումը,
- Մ-6 և Հ-35 ավտոճանապարհների փոխհատման հատվածում (Օձունի խաչմերուկ) վերականգնումը և բարելավումը,
- Կիրանց գյուղի հատվածում Հ-58 հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի շրջանցիկ 0,71 կմ հատվածի կառուցումը,
- S-10-30, /Հ-58/-Աճարկուտ-Կիրանց պատմական հուշարձան մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհի 3,5 կմ երկարությամբ հատվածի վերակառուցումը:

Տրանսպորտային օբյեկտների վերականգնման շրջանակներում հիմնանորոգվել և կառուցվել է 7 կամուրջ, 1 տրանսպորտային հանգույց, որոնցից հատկապես կարևոր նշանակություն ունեն՝

- Հ-13, /Մ-3/ (Վաղարշապատ)-Մասիս-/Մ-2/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 9+800-ում գտնվող կամուրջի հիմնանորոգումը,
- Հ-22, /Մ-6/-Դսեղ-/Հ-70/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի առաջին կիլոմետրում գտնվող կամրջի հիմնանորոգումը,
- Հ-53, /Մ-4/-Սեմյոնովկա-/Մ-4/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+100 հատվածի կամրջի հիմնանորոգումը,
- Տ-2-15, /Տ-2-13/-(Գեղանիստ)-Գետափնյա-Ղուկասավան-Դարակերտ (Տ-2-3) մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհի կմ0+400 հատվածում Հրազդան գետի վրա գտնվող կամրջի հիմնանորոգումը,
- Սանահին կայարանում քանդված կամրջի փոխարեն ժամանակավոր կամրջի կառուցումը:

Ճանապարհների հիմնանորոգման և վերակառուցման աշխատանքների շրջանակներում վերականգնվել է նաև 44 կամրջային անցում:

Ճանապարհների հիմնանորոգման, վերակառուցման աշխատանքների շրջանակներում տեղադրվել են շուրջ 9 433 ճանապարհային նշան և 121 294 գծմ մետաղական արգելափակոց:

Ճանապարհների անվտանգության տարրերի վերականգնման ուղղությամբ՝ ճանապարհների սպասարկման շրջանակներում, միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին վերականգնվել և տեղադրվել են 2 275 հատ ճանապարհային նշան և 27 192 գծմ մետաղական արգելափակոց, ինչպես նաև շուրջ 80 զբոսաշրջային օբյեկտ ցույց տվող նշաններ:

Կատարվել են միջպետական և հանրապետական ճանապարհների 552 404 քառ. մ գծանշման աշխատանքներ: Ավարտվել են ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների՝ 2 800 քառ. մ ջերմաթաղանթով հետիոտնային անցումների, 5 470 քառ. մ ջերմաթաղանթով հորիզոնական գծանշումների, 3 015 քառ. մ ջերմաթաղանթի ֆրեզավորման, 610 հատ համապատասխան ճանապարհային նշանի և 2 016 քառ. մ աղմկոտ գոտիների կահավորման աշխատանքների իրականացումը:

Մշակվել է ճանապարհատրանսպորտային պատահարների վերլուծության նոր էլեկտրոնային համակարգ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են համակարգի փորձարկման (պիլոտավորման) աշխատանքներ, այդ թվում՝

ճանապարհի մի շարք վթարավտանգ հատվածների՝ կուտակման կետերի («սև կետեր») բացահայտման և համապատասխան քարտեզագրման փորձարկումը, որի արդյունքում Մ-1, Երևան–Գյումրի-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի կմ 14+700 («Հոմլենդ» գործարանի դիմաց) և կմ 17+800 («Տեսլա» խանութի դիմաց) ճանապարհահատվածներում իրականացվել են երթևեկության անվտանգության բարելավման միջոցառումներ:

2024 թվականի արդյունքներով արձանագրվել է՝

- ՃՏՊ-ների ընդհանուր թվի նվազում 299-ով,
- զոհերի թվի նվազում 45-ով,
- վիրավորների թվի նվազում 420-ով:

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի շրջանակներում Աշտարակ–Թալին ճանապարհահատվածի 8 կմ հատվածի մասով ավարտվել են հանույթի և լիցքի աշխատանքները: Կառուցվել են բոլոր 31 արհեստական կառուցվածքները: 2-րդ շերտով ասֆալտապատվել է շուրջ 7,2 կմ հատված: Ընթացքի մեջ են գտնվում արգելափակոցների տեղադրման և շեպերի մաքրման աշխատանքները: Ծրագրի ֆիզիկական առաջընթացը կազմում է շուրջ 90%: Մնացած 34 կմ ճանապարհահատվածի կառուցման աշխատանքներն իրականացված են 55%-ով: Ավարտվել են հիմնական ճանապարհի 34 կմ ձախ երթևեկելի գոտու երկշերտ ասֆալտապատման աշխատանքներն ամբողջությամբ: Արդյունքում՝ 2024 թվականի դեկտեմբերից երթևեկությունը տեղափոխվել է նորակառույց ճանապարհի ձախ երթևեկելի գոտի՝ հնարավորություն տալով մի շարք հատվածներում խուսափել գործող Մ-1 ճանապարհի ոլորաններից և զգալիորեն բարձրացնել երթևեկության անվտանգությունը:

Լանջիկ-Գյումրի ճանապարհահատվածի ասֆալտապատման աշխատանքներն ավարտված են: Ընթանում են անվտանգության տարրերի տեղադրման աշխատանքները:

Տրանշ 4, Քաջարան-Ագարակ (Իրանի սահման) 32 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածի վերակառուցման ծրագրի շրջանակներում իրանական համատեղ ձեռնարկության հետ ստորագրվել է 214,4 մլն ԱՄՆ դոլարի կապալի պայմանագիր: 2024 թվականի ընթացքում կապալառուն փաստացի իրականացրել է՝

- շուրջ 1,1 մլն մ^3 հողային աշխատանքներ,
- 390 մ երկարությամբ առաջին թունելի մոտ 30 մ փորման աշխատանքներ,

- Մեղրու տրանսպորտային հանգույցի հողային աշխատանքները: Սկսվել են նաև տրանսպորտային հանգույցի էստակադայի կառուցման աշխատանքներ,
- շուրջ 95 մ ընդհանուր երկարությամբ հենապատերի կառուցման աշխատանքներ,
- 67 մ ընդհանուր երկարությամբ կամրջի հիմքերի կառուցման աշխատանքներ:

Աշխատանքներում ընդգրկված են շուրջ 240 աշխատակից և 142 միավոր տեխնիկա: Ծրագրի՝ 2024 թվականի ֆինանսական կատարողականը կազմել է նախատեսվածի շուրջ 97%-ը:

Տրանշ 4, Սիսիան-Քաջարան 60 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածի կառուցման ծրագրի իրականացման շրջանակներում 2024 թվականի մայիսին ՎԶԵԲ-ի, իսկ 2024 թվականի նոյեմբերին՝ ԵՆԲ-ի հետ կնքվել են վարկային համաձայնագրեր՝ յուրաքանչյուրը 236 մլն եվրո:

Տրանշ 4, Քաջարանի թունելի կառուցման նպատակով 2024 թվականին Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի հետ ստորագրվել է 200 մլն ԱՄՆ դոլարի վարկային համաձայնագիր:

Տրանշ 5, Գյումրու շրջանցիկ ճանապարհի նախագծանախահաշվային փաթեթի վերանայման նպատակով տեխնիկական աջակցության համաձայնագիր է կնքվել ԵՆԲ-ի հետ:

Ճանապարհների պահպանման աշխատանքների հսկողություն իրականացնելու նպատակով ճանապարհային ցանցի կառավարման համակարգում ներդրված բջջային հավելվածի գործարկման արդյունքում արձանագրվել է 3814 խախտում, իսկ ժամանակին չվերացված շուրջ 1141 թերության համար կիրառված տույժերը կազմել են 70 մլն ՀՀ դրամ՝ նախորդ երեք տարիների համար կիրառված համապատասխանաբար՝ 2023 թվականի՝ 194, 2022 թվականի՝ 27,9 և 2021 թվականի՝ 19,5 մլն ՀՀ դրամի չափով տույժերի համեմատ:

Ջրային տնտեսություն

Ջրային ոլորտում 2024 թվականի ընթացքում խմելու ջրի կորուստները կազմել են 61%՝ 2023 թվականի 63,1%-ի, 2022 թվականի 65,3%-ի և 2021 թվականի 73,7%-ի համեմատ:

Մատակարարված ոռոգման ջրի կորուստները կազմել են 45,5%՝ 2023 թվականի 44,9%-ի, 2022 թվականի՝ 46,4%-ի և 2021 թվականի՝ 46,2%-ի համեմատ:

Իրականացվել են ընդհանուր շուրջ 72,9 կմ ջրատարի և բաշխիչ ցանցի կառուցման և վերակառուցման, շուրջ 6,5 կմ կոյուղու ցանցի վերակառուցման աշխատանքներ:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպասարկման տարածքում ջրամատակարարման շարունակականությունը կազմել է՝ Երևան քաղաքում՝ 23 ժամ/օր, այլ քաղաքային բնակավայրերում՝ 20.5 ժամ/օր, իսկ գյուղական բնակավայրերում՝ 20,2 ժամ/օր: Ջրի որակը կազմել է 98,5%՝ 2023 թվականի 98,6% համեմատ:

Շարունակվել է ՀՀ Սյունիքի, Արարատի և Գեղարքունիքի մարզերի 26 բնակավայրի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման և վերականգնման նպատակով 2022 թվականին մեկնարկած «Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հիմնանորոգում» եռամյա ծրագրի իրականացումը, որի ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 5,9 մլրդ ՀՀ դրամ: 2024 թվականին իրականացվել են 38,6 կմ ջրատար ճյուղերի և 1 650 տնային միացումների հանգույցների կառուցման, ինչպես նաև շարունակվել են 2022 թվականին մեկնարկած Մեղրի քաղաքի ջրամաքրման կայանի կառուցման աշխատանքները: 5 համայնքում շահագործման են հանձնվել ջրամատակարարման վերակառուցված համակարգերը:

Շարունակվել են ՎԶԵԲ-ի, ԵՆԲ-ի և ԵՄ-ի ֆինանսավորմամբ իրականացվող՝ 6 մարզի 11 քաղաքում և 45 գյուղական բնակավայրում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման աշխատանքները:

Շիրակի, Լոռու, Արմավիրի, Գեղարքունիքի, Սյունիքի և Վայոց ձորի մարզերում իրականացվել են նաև հետևյալ աշխատանքները՝

- ջրատարի կառուցում՝ 9,1 կմ,
- բաշխիչ ցանցի վերակառուցում՝ 55,4 կմ,
- տնային մուտքագիծ՝ 81,8 կմ,
- անհատական ջրաչափական հորերի տեղադրում՝ 10 035 հատ,
- կոյուղու ցանցի վերակառուցում՝ 5,8 կմ:

Այս մասով ներդրումների ընդհանուր ծավալը կազմել է 3,4 մլրդ ՀՀ դրամ:

ՎԶԵԲ-ի, ԵՆԲ-ի և ԵՄ-ի ֆինանսավորմամբ Երևան քաղաքի ջրամատակարարման համակարգերում կառուցվել է՝

- բաշխիչ ցանց՝ 88,4 կմ,
- անհատական տնային մուտքագծեր՝ 35,3 կմ,
- անհատական ջրաչափական հորեր՝ 5510 հատ:

Այս մասով ներդրումների ընդհանուր ծավալը կազմել է 2,6 մլրդ ՀՀ դրամ:

Շարունակվել են Վեդու ջրամբարի պատվարի և օժանդակ կառուցվածքների կառուցման աշխատանքները, մասնավորապես, ավարտվել են Վեդի ջրամբարի 85 մ բարձրությամբ հիմնական և 17 մ բարձրությամբ փոքր պատվարների կառուցման աշխատանքները, շարունակվել է ջրամբարի հիդրոմեխանիկական սարքավորում-ների տեղադրման գործընթացը (տարեվերջի դրությամբ կատարվել է ջրամբարի կառուցման աշխատանքների 98,5%-ը): Ավարտվել են Վեդի ջրամբարի և Վեդի գետի իշխման տակ գտնվող փորձնական հողատարածքներում (շուրջ 580 հա) ոռոգման ներտնտեսային ցանցի կառուցման աշխատանքները: Այս մասով ներդրումների ընդհանուր ծավալը կազմել է 1,5 մլրդ ՀՀ դրամ:
Շարունակվել են Կապսի ջրամբարի և օժանդակ կառուցվածքների կառուցման աշխատանքները, մասնավորապես, իրականացվում են մոբիլիզացիոն և գետի ջրի հեռացման համակարգի կառուցման աշխատանքները: Այս մասով ներդրումների ընդհանուր ծավալը կազմել է 1,3 մլրդ ՀՀ դրամ:

Նախագծված 5 ջրամբարից (Աստղաձորի, Ելփինի, Քասախի, Լիճքի և Արթիկի) 2-ի (Ելփինի և Քասախի) տեխնիկական և բնապահպանական փորձաքննական գործընթացներն ավարտվել են դրական եզրակացությամբ և ներկայացվել համալիր փորձաքննության: Մյուս 3-ի (Աստղաձորի, Լիճքի և Արթիկի) բնապահպանական փորձաքննական գործընթացն ավարտվել է, որոնցից Աստղաձորի և Լիճքի համար մեկնարկել է տեխնիկական փորձաքննական գործընթացը:

Գետիկի, Գառնահովիտի և Կարմիր գյուղի ջրամբարների համար մեկնարկել է իրագործելիության ուսումնասիրության խորհրդատվական ծառայության ձեռքբերման մրցույթը:

Օրվա կարգավորման 28 ջրավազանից 14-ի համար, որոնք ունեն հողի սեփականության վկայականներ, նախագծանախահաշվային փաստաթղթերը ներկայացվել են համալիր փորձաքննության:

Ոռոգման համակարգերի վերականգնմանն ուղղված միջոցառման շրջանակներում ՀՀ բոլոր մարզերում հրատապ լուծում պահանջող 28 միջոցառումից 26-ի համար ավարտվել են նախագծանախահաշվային աշխատանքները դրական տեխնիկական փորձաքննական եզրակացությամբ, որոնցից 8-ի, ինչպես նաև մինչև 2024 թվականը ձեռք բերված 1 նախագծի մասով ավարտվել են նաև շինարարական և տեխնիկական հսկողության ձեռքբերման մրցույթները, որոնց

արդյունքում կնքվել են համապատասխան պայմանագրեր, մեկնարկել են շինարարական աշխատանքները:

Ավարտվել են 2022 թվականի սեպտեմբերից մեկնարկած երկրորդ կարգի 27 ջրանցքի շուրջ 62,1 կմ ընդհանուր երկարությամբ վթարային հատվածների և շուրջ 16,8 կմ ընդհանուր երկարությամբ ներտնտեսային ոռոգման 4 համակարգի վերականգնման աշխատանքները, մինչև տարեվերջ վերականգնվել են երկրորդ կարգի ջրանցքների շուրջ 10,4 կմ ընդհանուր երկարությամբ հատվածներ և 0,14 կմ ներտնտեսային ոռոգման ցանց: Այս մասով 2024 թվականի ընթացքում ներդրումների ընդհանուր ծավալը կազմել է 1,4 մլրդ ՀՀ դրամ:

«Կոլեկտորադրենաժային ցանցերի պահպանում և շահագործում» ծրագրի շրջանակներում իրականացվել են շուրջ 218,6 կմ ընդհանուր երկարությամբ հատվածների մաքրման և նորոգման աշխատանքներ, ինչպես նաև Արարատյան դաշտում տեղադրված 455 դիտողական հորատանցքում գրունտային ջրերի մշտադիտարկումներ:

2022 թվականից մեկնարկած 10 հակահեղեղային առաջնահերթ միջոցառումից 9-ի գծով աշխատանքներն ավարտվել են:

Մեկնարկել է Արփա-Սևան թիվ 2 թունելի առավել վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքների ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է հիմնանորոգել 244,7 մ ընդհանուր երկարությամբ երեսարկներ:

«Որոտան-Արփա-Սևան» ջրային համակարգի շահագործում և պահպանում» ծրագրի շրջանակներում 2024 թվականի ընթացքում Սևանա լիճ է տեղափոխվել շուրջ 188 մլն մ^3 ջուր:

Էներգետիկա

2024 թվականին արտադրվել է շուրջ 9,38 մլրդ կՎտժ էլեկտրաէներգիա (ներառյալ ինքնավար էներգաարտադրողների), այդ թվում՝

- ՀԱԷԿ՝ շուրջ 2,8 մլրդ կՎտժ կամ 30,2%,
- ՋԷԿ-եր՝ շուրջ 3,5 մլրդ կՎտժ կամ 37,4%,
- ՀԷԿ-եր՝ շուրջ 2,1 մլրդ կՎտժ կամ 22%,
- արևային կայաններ (ներառյալ ինքնավար էներգաարտադրության)՝ շուրջ 0,97 մլրդ կՎտժ կամ 10,3%,
- այլ աղբյուրներ՝ շուրջ 0,007 մլրդ կՎտժ կամ 0,1%:

Հայաստանում գործել է 31249 ինքնավար էներգաարտադրող՝ ընդհանուր 420,5 ՄՎտ հզորությամբ, որը 2019 թվականի հունվարի 1-ի համեմատ քանակային առումով աճել է շուրջ 40 անգամ և հզորության առումով՝ շուրջ 46 անգամ: Տեխնիկական պայմաններ է ստացել ևս 209 ինքնավար կայան՝ 12,8 ՄՎտ հզորությամբ:

Հայաստանում գործում է 76 արդյունաբերական արևային կայան՝ 340 ՄՎտ գումարային հզորությամբ, որից ոչ երաշխիքով 11 արևային կայան՝ 73,6 ՄՎտ հզորությամբ:

Արտահանվել է շուրջ 1,5 մլրդ կՎտժ, ներմուծվել՝ շուրջ 144,8 մլն կՎտժ:

Նախորդ տարվա համեմատ արտադրությունը (ներառյալ ինքնավար էներգաարտադրության) աճել է շուրջ 578,9 մլն կՎտժ-ով (6,5%-ով), արտահանումը՝ շուրջ 297,6 մլն կՎտժ-ով (24%-ով), ներմուծումը՝ 47,25 մլն կՎտժ–ով (48,4%-ով):

Արդյունաբերական (առանց՝ ինքնավար էներգաարտադրության) արևային կայանների արտադրությունը ևս աճել է 104,7 մլն կՎտժ-ով (27,4%-ով):

Սպառվել է շուրջ 6,8 մլրդ կՎտժ էլեկտրաէներգիա, որը նախորդ տարվա ցուցանիշից ավելի է 316,5 մլն կՎտժ-ով (4,8 %-ով):

Ընդհանուր սպառվող էլեկտրաէներգիայի շուրջ 28%-ը վաճառվել է ազատա-կանացված շուկայում՝ չկարգավորվող մրցակցային գներով (2023 թվականի համեմատ 8% աճ):

Ազատ առևտրի մասնակիցների թիվը կազմել է 275 (2023 թվականի համեմատ աճը կազմել է 60,8%), այդ թվում՝ մատակարարները՝ 9, մեծածախ առևտրի լիցենզիա ունեցողները՝ 2, որակավորված սպառողները՝ 16 և մանրածախ սպառողները՝ 248, իսկ կնքված գործարքները՝ 20 880 (2023 թվականի համեմատ աճը կազմել է 202%):

Ավարտվել են Մասրիկ-1 55 ՄՎտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրական կայանի կառուցման աշխատանքները: Կայանը միացված է ցանցին՝ փորձնական-կարգաբերման աշխատանքներ իրականացնելու նպատակով:

Բնակելի տների և բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետ վերանորոգման պետական աջակցության ծրագրի շահառուների թիվը կազմել է 23254՝ նախորդ տարվա համեմատ աճելով 204,5%-ով: Ծրագրով տրամադրված վարկերի հանրագումարը կազմել է շուրջ 53 մլրդ ՀՀ դրամ՝ աճը կազմել է 231%: Սուբսիդավորման գծով ծախսը կազմել է 3,3 մլրդ ՀՀ դրամ՝ աճելով 282,4%-ով:

Շարունակվում են Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման ժամկետի կրկնակի 2026-2036 երկարաձգման ծրագրով (ՇԺԵ-2) նախանշված աշխատանքները: ՇԺԵ-2-ով նախատեսվում են շուրջ 160 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ներդրումներ:

Ընթացիկ ժամանակահատվածում ՀԱԷԿ-ում իրականացված աշխատանքների արդյունքում՝ ՀՀ ՄԱԿԿ-ն թույլատրել է էներգաբլոկը շահագործել ռեակտորի 100% ջերմային հզորության ռեժիմում:

Շարունակվել են Իրան - Հայաստան 400 կՎ լարման երկշղթա էլեկտրահաղորդման օդային գծի և 400 կՎ լարման «Նորավան» ենթակայանի կառուցման աշխատանքները:

Ավարտման փուլում են «Զովունի», «Արարատ-2» և «Շինուհայր» 220 կՎ լարման բարձրավոլտ ենթակայանների ամբողջական վերակառուցման աշխատանքները: Ենթակայանների վերակառուցված էլեկտրատեղակայանքները սահմանված կարգով դրվել են լարման տակ և շահագործվում են:

«ՀԷՑ» ՓԲԸ-ի մասով շարունակվել է խթանիչ սակագնային քաղաքականության իրականացումը, որի վերջնական արդյունքում՝ 2028 թվականին բաշխիչ ցանցում կորուստները կկազմեն 6,4% (31.12.2024 թվականի դրությամբ փաստացի արդեն իսկ կազմել է շուրջ 6,6%), աշխատողների թվաքանակը կօպտիմալացվի 1 660-ով, նորոգման և նյութական ծախսերը կկրճատվեն շուրջ 50%-ով, այլ ծախսերը՝ շուրջ 20%-ով:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի մասով ևս շարունակվել է խթանիչ սակագնային քաղաքականության իրականացումը, որի վերջնական արդյունքում՝ 2030 թվականին համակարգի կորուստները կկազմեն 3,4% (2024 թվականի վերջի դրությամբ փաստացի կազմել է շուրջ 5%), աշխատողների թվաքանակը կօպտիմալացվի 500-ով, շահագործման ու պահպանման ծախսերը՝ շուրջ 20%-ով:

Մեկնարկել է Երևան քաղաքը գազամատակարարման լրացուցիչ նոր հզորություններով ապահովելու ծրագիրը: Անհրաժեշտ գումարը՝ շուրջ 20 մլրդ ՀՀ դրամ, սպառողների համար գործող սակագների պահպանմամբ՝ նախատեսվել է գազամատակարարման համակարգի կարգավորվող սակագների հաշվարկներում, ինչը հնարավորություն է տվել իրականացնելու նշված ծրագիրը՝ բավարարելով խոշորամասշտաբ կառուցապատմամբ պայմանավորված աճող սպառման ծավալները և տնտեսապես արդյունավետ կերպով կազմակերպել նոր գազամատակարարման համակարգերի կառուցումը: Ծրագրի ամբողջական իրականացման արդյունքում Երևան քաղաքի գազամատակարարման ցանցի

հզորությունը կավելանա շուրջ 244 000 խմ/ժ-ով: Ներկայումս ամբողջությամբ ավարտված են ծրագրի 1-ին (Երևան քաղաքի Հյուսիս-արևելյան հատված՝ 17,81 կմ) և 2-րդ (Երևան քաղաքի Հարավ-արևմտյան հատված՝ 23,33 կմ) փուլերով նախատեսված ուղղություններով գազատարների և գազի ճնշման կարգավորման հանգույցների կառուցման աշխատանքները:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ժողովրդագրություն

Ժողովրդագրական պատկերը նկարագրող 2024 թվականի ցուցանիշները հետևյալն են.

- **Մշտական բնակչություն.** սկսած 1992 թվականից բնակչության թվաքանակի միջին տարեկան ամենամեծ աճը գրանցվել է 2024 թվականին. 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ նախորդ տարվա նույն օրվա համեմատ բնակչության թվաքանակն աճել է 84 600-ով, որից՝ բնական հավելաճը 2024 թվականին կազմել է 8 072 մարդ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 12 277-ի համեմատ,
- 2014 թվականից սկսած՝ տարեցտարի նվազում էր ծնված երեխաների թիվը, սակայն 2020 թվականից տեղի է ունեցել ծնունդների թվի կայունացում, և մինչև 2023 թվականը ներառյալ տարեկան ծնված երեխաների թիվը շուրջ 36,500 է եղել: 2024 թվականին ծնված երեխաների թիվը կազմել է 33 648, ինչը նվազ է 2 942-ով կամ շուրջ 8%-ով՝ 2023 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ,
- 2024 թվականի օգոստոսին հրապարակվել է 2023 թվականի ծնելիության գումարային գործակցի ցուցանիշը, որը կազմել է 1,885, ինչը ամենաբարձրն է 1994 թվականից ի վեր,
- 2018 թվականի կենդանի ծնվածներից՝ ըստ ծննդի հերթականության, կանանց 3-րդ և հաջորդող թվակարգով ծնածների թիվը կազմել է 8 271 կամ ընդամենի՝ 22,6%, իսկ 2023 թվականին՝ 12 442 կամ ընդամենի՝ 34% (2018 թվականի համեմատ աճը կազմել է շուրջ 50%):
- **Մահացություն.** 2023 թվականին գրանցվել է մահացության ամենացածր գործակիցը 2005 թվականից ի վեր, և 1 000 բնակչի հաշվով մահացության ընդհանուր գործակիցը կազմել է 8,2 պրոմիլ: Սակայն 2024 թվականին մահացության ցուցանիշը կազմել է 8,4 պրոմիլ, ինչը բարձր է 0,2 պրոմիլային կետով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ,

- Ժողովրդագրության բարելավման նպատակով 2024 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Ընդունվել է Հայաստանի ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2024-2040 թվականների ռազմավարությունը, որի տեսլականն է ունենալ բնակչության հավասարակշռված և կայուն կառուցվածք՝ միտված բնակչության երկարաժամկետ մարդկային կապիտալի զարգացմանը,
- 2024 թվականին շարունակել է գործել 2023 թվականի հունվարի 1-ից ներդրված մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի նոր համակարգը, որի շրջանակում նպաստի իրավունք են ստացել նաև չաշխատող քաղաքաբնակ մայրերը: Նոր համակարգով խնամքի նպաստի չափերը տարբերակված են՝ կախված խնամքի տվյալ ամսում արձակուրդում գտնվելու (եթե վարձու աշխատող է) կամ չգտնելու հանգամանքից: Մասնավորապես, ծնողի՝ տվյալ ամսում խնամքի արձակուրդում գտնվելու դեպքում նպաստի չափը կազմում է 37 500 ՀՀ դրամ, չգտնվելու դեպքում՝ 31 600 ՀՀ դրամ, իսկ գյուղաբնակ հանդիսանալու և միաժամանակ խնամքի արձակուրդում գտնելու դեպքում՝ 69 100 ՀՀ դրամ: Ընդ որում, աշխատանքի վերադառնալու դեպքում նպաստը վճարվում է 31 600-ի չափով (նախկինում նպաստի վճարումը դադարեցվում էր): 2024 թվականի ընթացքում խնամքի նպաստ վճարվել է միջին ամսական 58 736 երեխայի խնամքի կապակցությամբ, ծախսը կազմել է շուրջ 26,3 մլրդ ՀՀ դրամ,
- Շարունակվել է Կառավարության հաստատած՝ երեխա ունեցող ընտանիքներին բնակարանային ապահովության պետական աջակցության 2020-2023 թվականների ծրագիրը. 2024 թվականին իրականացված փոփոխություններով ծրագրի իրականացման նոր ժամկետ է սահմանվել մինչև 2026 թվականը: Նշված ծրագրով 2024 թվականի դրությամբ աջակցություն է ստացել 3052 շահառու, որոնց վճարվել է շուրջ 2,3 մլրդ ՀՀ դրամ: 2020 թվականի հուլիսի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում աջակցություն է ստացել շուրջ 12 151 շահառու: Ընդհանուր առմամբ շահառուներին վճարվել է շուրջ 8,6 մլրդ ՀՀ դրամ,

- Ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան կապակցությամբ դրամական աջակցության ծրագրի շրջանակում միջին ամսական կտրվածքով աջակցություն է ցուցաբերվել 28 149 երեխայի: Այս աջակցության գծով ընդհանուր ծախսը կազմել է շուրջ 18 մլրդ ՀՀ դրամ:

ԼՂ-ից բռնի տեղահանվածներին աջակցություն

2024 թվականին Կառավարությունը շարունակել է ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց միջնաժամկետ և երկարաժամկետ կարիքների հասցեագրման նպատակով աջակցության ծրագրերի իրականացումը:

2023 թվականի հոկտեմբերի 12-ին Կառավարությունը հաստատել էր 40 000+10 000 ՀՀ դրամ կեցության ծախսերի աջակցության ծրագիրը՝ 40 000 ՀՀ դրամ վարձակալության, 10 000 ՀՀ դրամ՝ կոմունալ ծախսերի հատուցման նպատակով: Որոշումը հաստատվել էր մինչև 2024 թվականի մարտ ամիսը ներառող ժամանակահատվածի համար: 2024 թվականի մարտին Կառավարությունը որոշում կայացրեց նույն պայմաններով շարունակել աջակցության տրամադրումը՝ մինչև նույն տարվա դեկտեմբերի վերջ: Աջակցությունից օգտվելու հնարավորություն տրվեց նաև 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո տեղահանված անձանց:

Արդյունքում 2024 թվականին ամսական շուրջ 103 800 շահառու շարունակել է աջակցություն ստանալ այս ծրագրի շրջանակներում: Ծրագրի ֆինանսավորման նպատակով պետական բյուջեից 2023 թվականին բաշխվել է շուրջ 11,2 մլրդ ՀՀ դրամ, իսկ 2024 թվականին՝ շուրջ 58,3 մլրդ ՀՀ դրամ: Ծրագրի շրջանակներում ևս 5,9 մլրդ ՀՀ դրամի վճարումներ են իրականացվել գործընկեր դոնոր կազմակերպությունների միջոցների հաշվին, որից 1,4 մլրդը՝ 2023 և 4,5 մլրդը՝ 2024 թն:

2024 թվականին շարունակվել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց կենսաթոշակային ապահովության իրավունքի իրացումը: Հաշվետու տարվա ընթացքում ամենամսյա կենսաթոշակ է ստացել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 28 259 անձ:

Կառավարությունը շարունակել է ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց կրթական հասանելիության ապահովման միջոցառումները: 2023 թվականի հոկտեմբեր ամսից սկսած՝ իրենց նախընտրած բնակավայրերում շարունակում է հանրակրթական ծառայություններ ստանալ բռնի տեղահանված ավելի քան 16 500 երեխա:

Բռնի տեղահանված ուսանողների մասնագիտական և բարձրագույն կրթության շարունակականությունն ապահովելու նպատակով դեռևս 2023 թվականի հոկտեմբեր և դեկտեմբեր ամիսներին Կառավարությունը հաստատել էր ԲՈՒՀ-երում և միջին մասնագիտական կրթական հաստատություններում բռնի տեղահանված ուսանողների ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման կարգը:

2024 թվականի սեպտեմբերին կատարված փոփոխություններով սահմանվել է, որ բռնի տեղահանված ուսանողները կշարունակեն ուսման վարձի փոխհատուցման

նպատակով կրթաթոշակներ ստանալ մինչև տվյալ կրթական աստիճանով իրենց ուսումնառության ավարտը որոշմամբ սահմանված առաջադիմության շեմն ապահովելու պարագայում:

Ուսման վարձի փոխհատուցման աջակցություն սահմանվեց նաև 2024-2025 ուսումնական տարում պետական միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում առաջին կուրս ընդունված՝ բռնի տեղահանված ուսանողների համար: Հաշվետու տարում այս աջակցության ծրագրի շահառու են եղել նախնական և միջին մասնագիտական կրթական հաստատությունների 1 471 և բուհերի 1 774 ուսանողներ:

2024 թվականի պետական բյուջեից մասնագիտական կրթության սովորողների ուսման վարձավճարների փոխհատուցման համար հատկացվել է ավելի քան 1,4 մլրդ ՀՀ դրամ:

Շարունակվել է նաև 2023 թվականի հոկտեմբերից մեկնարկած՝ առողջության առաջնային պահպանման օղակում բռնի տեղահանվածների հաշվառման և սահմանված առողջապահական ծառայություններով ապահովման գործընթացը: 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հայաստանյան առողջության առաջնային պահպանման օղակում հաշվառված է շուրջ 77 000 բռնի տեղահանված, որոնց հասանելի են եղել նաև պետական պատվերի շրջանակում հիվանդանոցային ծառայությունները: Առաջնային բուժօգնության և հիվանդանոցային ծառայությունների գծով պետական բյուջեից 2024 թվականին հատկացված աջակցության գումարը կազմել է շուրջ 5,3 մլրդ ՀՀ դրամ:

2024 թվականին Կառավարությունը փոփոխություններ է կատարել 2023 թվականի՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանած ուսուցիչների օժանդակության ծրագրում՝ առկա թափուր հաստիքները համալրելու հնարավորություն տալով նաև 2020 թվականին Լեռնային Ղարաբաղից տեղահանված ուսուցիչներին: Այս ծրագրի շրջանակում մարզերի դպրոցներում աշխատանքի անցնելիս ԼՂ-ից բռնի տեղահանված ուսուցիչները 2 տարի շարունակ ստանալու են 30% հավելավճար, իսկ Սյունիքի, Վայոց ձորի հանրակրթական ուսումնական հաստատություններում, Գեղարքունիքի և Տավուշի մարզերի որոշ համայնքներում աշխատանքի անցնելու դեպքում՝ նաև 50 000 ՀՀ դրամ լրավճար: 2024 թվականին ՀՀ հանրակրթական դպրոցներում աշխատանքի է անցել բռնի տեղահանված շուրջ 600 ուսուցիչ, որոնցից 463-ը (կրկնակի ավելի, քան 2023 թվականին) ծրագրի շրջանակում գործուղվել են մարզային դպրոցներ: Այս ծրագրի իրականացման համար 2024 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 168,2 մլն ՀՀ դրամ լրավճար:

Բռնի տեղահանվածների զբաղվածությունը խթանելու նպատակով Կառավարությունը 2024 թվականի հունվար ամսից կազմակերպել է կարճաժամկետ ուսուցման և

աշխատանքային փորձ ձեռք բերելու ծրագիր, որում ընդգրկվել և աշխատանքով է ապահովվել շուրջ 1 800 անձ: 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ծրագրի ֆինանսավորման փաստացի բյուջեն կազմել է շուրջ 895,3 մլն ՀՀ դրամ:

Ընդհանուր առմամբ 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանում աշխատանքի է անցել ավելի քան 21 800 բռնի տեղահանված: Ավելի քան 4 600 բռնի տեղահանված ձեռք է բերել ինքնազբաղվածի, կազմակերպության հիմնադրի (կամ մասնակցի) կարգավիճակ:

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների համար Հայաստանում երկարաժամկետ բնակության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով 2024 թվականին Կառավարությունը հաստատեց բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագիրը:

Այս ծրագրի շրջանակներում աջակցությունը տրամադրվում է հետևյալ եղանակներից որևէ մեկով.

- բնակարանի (կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքի) կամ անհատական բնակելի տան ձեռքբերման հավաստագրի տրամադրում,
- անհատական բնակելի տան կառուցման հավաստագրի տրամադրում,
- գործող հիփոթեքային վարկի մարմանն ուղղված աջակցություն:

Հավաստագրերի արժեքը ընտանիքի մեկ անդամի հաշվով կազմում է 5 մլն ՀՀ դրամ՝ 242 քաղաքային և գյուղական բնակավայրերում իրացնելու դեպքում, 4 մլն ՀՀ դրամ՝ 148 քաղաքային և գյուղական բնակավայրերում իրացնելու դեպքում և 3 մլն ՀՀ դրամ՝ մնացած բոլոր բնակավայրերում իրացնելու պարագայում՝ բացառությամբ Երևանի 1-ին և 2-րդ գոտիների: Ծրագրի երրորդ՝ գործող հիփոթեքային վարկի մարմանն ուղղված աջակցության շրջանակներում ընտանիքի յուրաքանչյուր անդամի հաշվով տրամադրվում է 2 մլն ՀՀ դրամ աջակցություն: Ընդ որում, ընտանիքը համարվում է բնակարանային ապահովման ծրագրի շահառու, եթե ընտանիքի բոլոր անդամները, այդ թվում՝ անչափահասները, ունեն ՀՀ քաղաքացիություն:

Ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է գործընկեր բանկերի կողմից, իսկ ծրագրի իրականացման ընթացքում աջակցության գումարը և դրա տոկոսագումարները վճարում է Կառավարությունը:

2024 թվականի հունիսի 15-ից մեկնարկել է ծրագրի առաջին փուլը, որի շրջանակներում տարեվերջի դրությամբ հավաստագիր է տրամադրվել 344 ընտանիքի, որոնցից 13-ը նույն ժամանակահատվածի դրությամբ իրացրել են իրենց՝ տուն ձեռք բերելու իրավունքը:

Ընդհանուր առմամբ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց աջակցության ծրագրերի իրականացման նպատակով 2024 թվականին պետական բյուջեից փաստացի ծախսվել է շուրջ 66 մլրդ ՀՀ դրամ, իսկ աջակցության սկզբից ի վեր՝ ավելի քան 100 մլրդ ՀՀ դրամ:

Միգրացիա

ՀՀ պետական սահմանի անցակետերով 2024 թվականին սահմանային մուտքերի թիվը կազմել է 4 752 966 (այդ թվում՝ ՀՀ քաղաքացիները՝ 2 089 762), իսկ սահմանային ելքերինը՝ 4 757 178 (այդ թվում՝ ՀՀ քաղաքացիները՝ 2 104 694): 2023 թվականի նույն ժամանակահատվածում մուտքերի թիվը կազմել է 4 764 273 (այդ թվում՝ ՀՀ քաղաքացիները՝ 1 972 133), ելքերինը՝ 4 793 767 (այդ թվում՝ ՀՀ քաղաքացիները՝ 2 008 644): 2023 թվականի համեմատ 2024 թվականին ՀՀ սահմանային անցակետերով մուտքերի թիվը նվազել է 0,24%-ով, իսկ ելքերինը՝ 0,76%-ով, այդ թվում՝ ՀՀ քաղաքացիների մուտքերի թիվն աճել է 5,96%-ով, իսկ ելքերինը՝ 4,78%-ով:

2024 թվականի ընթացքում ստացվել է ՀՀ քաղաքացիության շնորհման վերաբերյալ 21 437 դիմում (2023 թվականի նույն թիվը կազմել է 19 185), քաղաքացիություն է շնորհվել 20 776 անձի (2023 թվականի նույն թիվը կազմել է 20 884): Ստացվել է ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ 4202 դիմում (2023 թվականի նույն թիվը կազմել է 3 687), դադարեցվել է 3 746 անձի քաղաքացիությունը (2023 թվականի նույն թիվը կազմել է 3 321):

2024 թվականի ընթացքում տրամադրվել է 485 402 անձնագիր և 160 958 նույնականացման քարտ:

1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնի տեղահանված և ժամանակավոր կացարաններում բնակվող ընտանիքներին բնակարանների գնման վկայագրերի տրամադրման ծրագրի շրջանակներում, որն ավարտին է հասցվել 2024 թվականին, ՀՀ ողջ տարածքում վկայագրեր են տրամադրվել 407 փախստական ընտանիքի (շուրջ 4,6 մլրդ ՀՀ դրամի չափով):

2024 թվականի ընթացքում ընդունվել է ռեադմիսիայի 475 հայց 790 անձանց վերաբերյալ, որոնցից հաստատվել է 690 անձանց քաղաքացիությունը:

Ապաստանի հայցեր է ստացվել 660 օտարերկրյա քաղաքացուց (2023 թվականին թիվը կազմել է 819):

Ավարտվել է Աբովյան քաղաքում տեղակայված՝ ապաստան հայցողների նոր կացարանի շինարարությունը:

ՀՀ-ում օրինական բնակության իրավունք է ստացել, այդ թվում՝ կացության տարբեր կարգավիճակներով, 20 517 օտարերկրյա քաղաքացի (2023 թվականին թիվը կազմել է 23 843):

Սփյուռքի հետ կապեր

Հաշվետու տարվա ընթացքում 13 երկրում՝ Ավստրիայում, ԱՄՆ-ում, Բուլղարիայում, Գերմանիայում, Դանիայում, Իտալիայում, Հունաստանում, Նիդերլանդներում, Շվեդիայում, Շվեյցարիայում, Սլովակիայում, Ֆինլանդիայում և Ֆրանսիայում, նշանակվել է սփյուռքի գործերի 16 հանձնակատար:

2024 թվականին կայացել են ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի այցերը 11 երկրի՝ Շվեյցարիայի, Ավստրալիայի, Նոր Զելանդիայի, Ֆրանսիայի, Լյուքսեմբուրգի, Իտալիայի, Ռուսաստանի, Արգենտինայի, Բրազիլիայի, Ուրուգվայի և ԱՄՆ-ի 26 տարբեր քաղաքի հայ համայնքներ: Այցերի շրջանակներում կայացել է ավելի քան 160 միջոցառում:

Սեպտեմբերի 17-20-ը կազմակերպվել է Համաշխարհային հայկական երկրորդ գագաթնաժողովը, որին մասնակցել է մոտ 1000 հյուր շուրջ 60 երկրից: Գագաթնաժողովի ընթացքում կազմակերպվել են 6 պանելային քննարկում, 22 համաժամանակյա նիստ, կլոր-սեղան քննարկումներ, 3 թեմատիկ ցուցահանդես և մշակութային միջոցառումներ: Գագաթնաժողովի աշխատանքներում ներգրավված է եղել 180 բանախոս և մոդերատոր 25 երկրից:

Երևանում շարունակել է գործել հայրենադարձության և ինտեգրման կենտրոնը: Կենտրոնի խորհրդատվական աջակցության ու ծրագրերին մասնակցության դիմումների թիվը կազմել 2 784:

«Քայլ դեպի տուն» միջոցառման շրջանակներում կազմակերպվել է 13-18 տարեկան սփյուռքահայ պատանիների համար նախատեսված ուսումնաճանաչողական ծրագիր, որը ներառել է 13-օրյա ճամբարային ծրագիր, հայոց լեզվի դասընթացներ, հայրենագիտության դասեր, մշակութային միջոցառումներ և այցեր: Ճամբարային ծրագիրն իրականացվել է Ծաղկաձորում, որին 6 փուլով մասնակցել է 600 երեխա՝ 20 երկրից:

«ԻԳործ» սփյուռքահայ մասնագետների ներգրավում ՀՀ պետական կառավարման համակարգում» միջոցառման շրջանակներում 2023-2024 թվականներին 50 սփյուռքահայ մասնագետ ներգրավվել է ՀՀ պետական կառավարման

համակարգի 18 կառույցում, իսկ 2024-2025 թվականներին՝ 40 մասնագետ 20 կառույցում:
2023-2024 թվականների մասնակիցների 80 %-ից ավելին որոշել են շարունակել աշխատել Հայաստանում:

«Սփյուռքի երիտասարդ դեսպան» ծրագրին 2024-2025 թվականներին մասնակցել է 28 սփյուռքահայ երիտասարդ՝ 18 երկրից:

Շարունակվել է բյուջեի ֆինանսավորմամբ օտարերկրյա համալսարաններում հայերենի և այլ հայագիտական առարկաների դասավանդման ծրագիրը, որը տարեվերջին ընդգրկում էր արտերկրի 12 պետության 15 հայագիտական կենտրոն, 19 դասավանդող և շուրջ 200 ուսանող: 2024 թվականին Մադրիդի Կոմպլուտենս համալսարանում կազմակերպվել է օտարերկրյա համալսարաններում գործող հայագիտական կենտրոնների անդրանիկ համաժողովը, որին մասնակցել են 12 հայագիտական կենտրոնի հայագետներ, ինչպես նաև Հայաստանի կրթա-գիտական կառույցների ներկայացուցիչներ:

2024 թվականին մեկնարկել է «Հայերենը ոչ հայախոսների համար. հայերենի ուսուցում, ստուգում և գնահատում» ծրագիրը, որի շրջանակներում մշակվում է հայերենի ուսուցման ու հավաստագրման միասնական համակարգ ապահովելու համար Հայաստանում և նրա սահմաններից դուրս միասնական չափորոշիչների վրա հիմնված կրթություն և լեզվի իմացության ստուգում: Միջազգային լավագույն փորձի ներդրմամբ մշակվել են հայերենի ուսուցման և հավաստագրման չափորոշիչները:

Մատենադարանի կողմից կազմակերպվել է Հայագիտական միջազգային կոնգրեսը, որին մասնակցել են 16 երկրի հեղինակավոր հայագետներ ու միջնադարագետներ, հոգևոր-ձեռագրական կենտրոնների, առաջատար համալսարանների ու գիտական կենտրոնների հայագիտական ամբիոնների ղեկավարներ և ներկայացուցիչներ:

Սփյուռքի շուրջ 24 երկրի 298 կրթօջախների տրամադրվել է շուրջ 31 000 կտոր գրականություն, որոնցից շուրջ 18 000-ը տրամադրվել է Վրաստանի՝ հայկական կրթությամբ հանրային դպրոցներին:

Շարունակվել են նաև սփյուռքի դպրոցների ուսումնական նյութերի էլեկտրոնային շտեմարանի նոր դասագրքերով և նյութերով համալրման աշխատանքները:

2024 թվականի ընթացքում կայացել են 14 երկրի 60 սփյուռքահայ ուսուցչի վերապատրաստման դասընթացներ:

Անցկացվել է Համահայկական կրթական խորհրդաժողովը 15 երկրում գործող հայկական կրթական կառույցների և Հայաստանի կրթության ոլորտի ավելի քան 100 ներկայացուցչի մասնակցությամբ:

Մանկապատանեկան և երիտասարդական կրթամշակութային ծրագրերի շրջանակում անցկացվել են «Շառլ Ազնավուր 100» և «Փարաջանով 100» խորագրերով Համահայկական նկարչական մրցույթ-փառատոները՝ սփյուռքի 334 կրթօջախի 707 աշակերտի մասնակցությամբ, և «Հայոց լեզու», «Գրականություն» ու «Հայոց պատմություն» առարկաներից Համահայկական հայագիտական օլիմպիադան՝ 13 կրթօջախի 65 աշակերտի մասնակցությամբ:

«Հայաստանի միգրանտ ընտանիքների դպրոցականների հայոց լեզվի իմացության բարելավում» ծրագրի շրջանակում 200 աշակերտ հնարավորություն է ստացել սովորելու հայոց լեզու:

Առաջին անգամ մեկնարկել է «Կրթամշակութային աջակցություն սփյուռքի համայնքներին» դրամաշնորհային ծրագիրը, որի շրջանակներում Իսպանիայի Ալիկանտե քաղաքի «Հայաստան» մշակութային կենտրոնին տրամադրվել են միջոցներ՝ երիտասարդական ֆորումի կազմակերպման համար:

Կրթություն

Հրապարակվել են Տավուշի մարզում հանրակրթության պետական չափորոշչի փորձարկման երկամյա արտաքին անկախ գնահատման արդյունքները, որի համաձայն՝ 2 տարվա ընթացքում սովորողների կրթական արդյունքն ավելացել է 6 ամսով, ինչը միջինը երկու անգամ գերազանցում է այլ երկրներում չափորոշչի փոփոխության արդյունավետությանը:

Բնագիտության և մաթեմատիկայի միջազգային գնահատման (TIMSS) արդյունքներով՝ Հայաստանի չորրորդ դասարանցիները բարելավել են մաթեմա-տիկայի իմացությունը՝ 2019 թվականին գրանցված 498-ի նկատմամբ գրանցելով 15 միավոր աճ: Այժմ Հայաստանը 513 միավոր արդյունքով հայտնվել է միջինից բարձր արդյունքներ ցուցաբերող երկրների խմբում: Միաժամանակ կրճատվել է բնագիտության բնագավառում նվազագույն շեմը չհաղթահարող սովորողների թվաքանակը. 82%-ը հաղթահարում է նվազագույն շեմը, 40%-ը՝ միջին շեմը:

Ամեն տարի ավելի քան 800 երեխայի շրջանում անցկացվող հետազոտությունը ցույց է տվել, որ գեղարվեստական և գիտահանրամատչելի տեքստերը լուռ ընթերցելու և ընթերցածը հասկանալու, վերլուծելու, եզրահանգումներ անելու

կարողությունները 10 տարեկանների շրջանում բարելավվել են. անբավարար արդյունք ունեցող երեխաների թիվը 2022 թվականի 47%-ից 2024 թվականին իջել է շուրջ 20%-ով՝ դառնալով 28%: Երեխաների կեսից ավելին ունեցել է 64,3%-ից բարձր արդյունք. այսինքն՝ ճիշտ է պատասխանել իր կարդացած տեքստերին վերաբերող 14 հարցից առնվազն 9-ին:

Կրեդիտային համակարգի ներդրման շրջանակներում 15 դպրոցում գործող արհեստական բանականության (ԱԲ) դասընթացը ներկայացվել է միջազգային հարթակներում և ճանաչվել հաջողված: ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համագործակցությամբ՝ այն համադրվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի ԱԲ ուղղությամբ աշակերտների և ուսուցիչների կարողունակությունների շրջանակի սկզբունքներին՝ Հայաստանը դարձնելով այս շրջանակը փորձարկող առաջին երկիրը:

Հանրակրթության պետական չափորոշիչը ներդրվել է ևս չորս դասարանում՝ գործելով 12 դասարանից 7-ում:

Հանրակրթության նոր չափորոշչի ներդրման շրջանակում ստեղծվել է 53 անուն և տպագրվել է 93 հեղինակի/հեղինակային խմբի դասագիրք, որոնք բաշխվել են դպրոցներին: Մրցակցային ընթացակարգերի արդյունքում մեկ դասագրքի արժեքը միջինը նվազել է 23-26%-ով:

Ուսուցիչների մասնագիտական զարգացման և վարձատրության խրախուսման համար գործել են ուսուցիչների հերթական և կամավոր ատեստավորման, տարակարգի, ԲՏՃՄ ոլորտի առարկաներ դասավանդող ուսուցիչների համար վարձատրության բարձրացված չափաքանակի և գյուղական բնակավայրերում մինչև 100 սովորող ունեցող դպրոցների ուսուցիչների լրավճարների ծրագրերը, որոնց ուղղվել է շուրջ 8,9 մլրդ ՀՀ դրամ:

Էապես ավելացել է նաև հանրակրթական դպրոցների ֆինանսավորումը՝ կազմելով շուրջ 113,9 մլրդ ՀՀ դրամ, որը 2023 թվականին հանրակրթության համար տրված ֆինանսավորումը գերազանցում է շուրջ 6,5%-ով, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ հանրակրթության պետական չափորոշչի ներդրման շրջանակներում ուսուցիչների աշխատաժամանակը վերանայվել է՝ շաբաթական 22 դասավանդվող ժամի փոխարեն դառնալով 18 դասավանդվող ժամ տարրական դասարաններում և 20 դասավանդվող ժամ՝ հիմնական և ավագ դասարաններում: Սա հանգեցրել է մեկ ժամի վարձատրության արժեքի մեծացման՝ համապատասխանաբար 20%-ով և 10%-ով, ինչպես նաև՝ ուսուցիչների համար ժամանակ ազատել դասերին պատրաստվելու համար:

Պետության համալիր քաղաքականության արդյունքում 2023-2024 ուսումնական տարում դպրոցներ է մուտք գործել շուրջ 3 300 նոր ուսուցիչ, որոնց 16%-ը տղամարդ է: Նոր ուսուցիչների շուրջ 56%-ն աշխատանքի է անցել գյուղական դպրոցներում: Նոր ուսուցիչների 32%-ը մինչև 30 տարեկան է, 39%-ը՝ 31-40 տարեկան:

2024 թվականին առաջին անգամ ուսուցիչների կամավոր ատեստավորման գործընթացը կազմակերպվել է էլեկտրոնային ձևաչափով: Մասնակցության համար գրանցվել է 6 260 ուսուցիչ, որից 572-ը՝ որպես դեռևս ուսուցիչ չաշխատող անձ: Ատեստավորմանը մասնակցել է դիմածների 80%-ը կամ 5 012 անձ, որոնցից 3841-ը գրանցել է դրական արդյունքներ և ունի դրույքաչափի բարձրացում, իսկ 2764 ուսուցիչ ստացել է նաև 30-50% հավելավճարի հնարավորություն: Վերջին 4 տարվա ընթացքում անցկացված կամավոր ատեստավորման արդյունքում 2024 թվականի տարեվերջի դրությամբ արդեն 6 321 ուսուցիչ կամ ուսուցիչների շուրջ 20%-ն ունի բարձրացված դրույքաչափով աշխատավարձ:

Կամավոր ատեստավորմանն առաջին անգամ մասնակցողների թիվը 2024 թվականին ընդհանուր հայտագրվողների նկատմամբ եղել է ամենաբարձրը՝ 56,7%: Բարձրագույն կրթություն չունեցող, հետևապես հանրակրթական դպրոցում աշխատելու իրավունք չունեցող ուսուցիչները հնարավորություն են ստացել մասնակցելու վերապատրաստումների և կամավոր ատեստավորմանը: 2023-2024 թվականների ընթացքում բարձրագույն կրթություն չունեցող 551 ուսուցիչ հաղթահարել է կամավոր ատեստավորման անցողիկ շեմը՝ հնարավորություն ստանալով շարունակել աշխատանքը, իսկ 49 ուսուցիչ պետական բյուջեի միջոցներով ստանում է բարձրագույն կրթություն, որի համար հատկացվել է շուրջ 10,7 մլն ՀՀ դրամ:

Տարակարգի և կամավոր ատեստավորման համակարգերի միաժամանակյա կիրառությունը հնարավորություն է տալիս ուսուցիչներին 300 000-ից մինչև 600 000 ՀՀ դրամ վարձատրություն ստանալ, մասնավորապես, ներկայումս 300 000 – 400 000 ՀՀ դրամ աշխատավարձ ստանում է 1 667 ուսուցիչ, 400 000 ՀՀ դրամ և ավելի աշխատավարձ է ստանում 563 ուսուցիչ (շուրջ 2,5 անգամ ավելի է նախորդ տարվա ցուցանիշից):

2024 թվականին փոփոխվել է ուսուցիչների հերթական ատեստավորման մեխանիզմը, որին ընդառաջ գնահատվել են ատեստավորման ենթակա 5 339 ուսուցչի մասնագիտական զարգացման կարիքները՝ դրանց համապատասխան վերապատրաստումները մեկնարկելու համար, որոնցից 3 տարվա շրջափուլով վերապատրաստման ենթակա է 4 649 ուսուցիչ, 5 տարվա շրջափուլով՝ 690 ուսուցիչ: Գնահատվել է ևս 607 ուսուցչի առարկայական գիտելիքի իմացության կարիք, որոնք վերապատրաստվել և մասնակցել են կամավոր ատեստավորման:

Շարունակվել է տարակարգի շնորհման ծրագիրը, որի շրջանակում 285 ուսուցիչ ստացել է տարակարգ (նախորդ տարվա ցուցանիշը աճել է 2,8 անգամ)՝ արդյունքում ունենալով 10-50% հավելավճար, նրանցից 59 ուսուցիչ արժանացել է 4-րդ աստիճանի տարակարգի և ստանում է 50% հավելավճար: Ներկայում տարակարգ ստանում է շուրջ 1 228 ուսուցիչ:

2024 թվականին շարունակվել են ԲՏՃՄ ոլորտի (բացառությամբ մաթեմատիկական առարկաների) դասավանդող ուսուցիչների և գյուղական մինչև 100 սովորող ունեցող դպրոցների ուսուցիչների խրախուսման ծրագրերը, որոնց շահառու է, համապատասխանաբար, շուրջ 8 200 և 3 183 ուսուցիչ, որոնք ստանում են լրավճար:

Դպրոցներում բովանդակային և վարչատնտեսական կառավարման գործառույթների տարանջատման շրջանակում նոր համակարգով 2024 թվականին նշանակվել է ևս 58 տնօրեն (ընդհանուր առմամբ՝ 138) և 147 վարչատնտեսական համակարգող (ընդհանուր առմամբ՝ 244 հոգի պետական դպրոցների 18%-ում): Հավակնորդների մոտ 71%-ը չի հաղթահարում նշանակման գործընթացը: Հաշվի առնելով կարողությունների բացը հավակնորդների շրջանում՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում կատարվել են փոփոխություններ՝ սահմանելով տնօրենի՝ փորձաշրջանով աշխատելու հնարավորություն, նախատեսվել է նաև տնօրենի գործուղման ընթացակարգ մրցույթը շարունակաբար չկայացող դպրոցների համար, ինչպես նաև մեկնարկել է տնօրենի հավակնորդների վերապատրաստման փորձնական ծրագիրը:

Վարչատնտեսական կառավարումը պատվիրակման միջոցով մասնագիտացված ծառայությամբ իրականացնելու շրջանակներում մշակվել է դպրոցների հաշվապահության և գնումների գործընթացի պատվիրակման մոդելը: Ընտրվել է երկու մարզ մոդելի փորձարկման համար: 2025 թվականի հունվարին հայտարարվել է հաշվապահության և գնումների գործընթացի իրականացման մրցույթ: Նախապատրաստվում են անվտանգության, սննդի և տնտեսավարման գործառույթների պատվիրակման աշխատանքները:

Խոշորացվել են դպրոցական խորհուրդները. ներկայումս գործում է 286 դպրոցական խորհուրդ՝ նախկինում գործող 904-ի փոխարեն:

Հաստատվել է 300 դպրոցի ծրագրում ընդգրկված դպրոցների ցանկը, որում ներառված է մարզերի և Երևանի 349 ուսումնական հաստատություն. ընդ որում՝ նոր կառուցվող շենքերի թիվը 259 է, վերակառուցվողներինը՝ 8, հիմնանորոգվողներինը՝ 10, հիմնանորոգվող/վերանորոգվողներինը՝ 72, որոնցից 11-ում նախատեսված է նաև մարզադահլիճի մասնաշենքի կառուցում, 1-ում՝

ուսումնական մասնաշենքերի կառուցում: Ընդհանուր առմամբ ծրագրի շահառուները 125 311 են կամ դպրոցահասակ երեխաների շուրջ 30%-ը:

2021-2024 թվականներին մեկնարկած դպրոցաշինության խոշոր ծրագրով իրականացման տարբեր փուլերում է գտնվում 220 հաստատություն, որոնցից 35-ը՝ շինարարության փուլում է, 136-ի համար կնքված են շինարարության պայմանագրեր, իսկ 14-ի գծով ծառայությունների գնման գործընթացներ են կազմակերպված: Միաժամանակ վերանորոգման է նախապատրաստվում 35 հաստատություն: 2021-2024 թվականներին շահագործման է հանձնվել 40 դպրոց (շուրջ 15 000 սովորողի համար) և 16 մարզադահլիճ (շուրջ 6 500 սովորողի համար): Գույքով ապահովվել է 37 դպրոց և 29 մարզադահլիճ:

Դպրոցներում իրականացվում են նաև ընթացիկ նորոգման աշխատանքներ: Ընդհանուր առմամբ ավելի քան 500 դպրոցում իրականացվել են շուրջ 800 մլն ՀՀ դրամի ընթացիկ նորոգման աշխատանքներ:

Ուսումնական 541 հաստատություն հագեցվել է կենսաբանության, աշխարհագրության, ֆիզիկայի, քիմիայի և տեղեկատվական տեխնոլոգիաների լաբորատորիաներով՝ նախորդ տարվա նկատմամբ գրանցելով հաստատությունների թվի կրկնակի աճ: 2021-2024 թվականներին լաբորատորիաներով հագեցված դպրոցների ընդհանուր թիվը 648 է: Ներկայումս հանրապետության դպրոցների շուրջ 48%-ն ունի ամբողջությամբ հագեցված լաբորատորիաներ, որոնց պահպանման ծախսերը ներառված են դպրոցների ֆինանսավորման կարգում: 38 մենթոր դպրոցում գործում են ֆաբլաբեր:

ՀՀ մարզերի 1-4-րդ դասարանների շուրջ 105 000 երեխայի առողջ սննդի տրամադրման ծրագիրն ամբողջությամբ իրականացվում է պետական ֆինանսավորմամբ: Հայաստանը միացել է Դպրոցական սննդի համաշխարհային կոալիցիային և տարբեր հարթակներում ներկայացրել է ծրագրի իրականացման իր փորձը՝ որպես հաջողված:

Շարունակվել և ընդլայնվել է արվեստի և սպորտի ոլորտներում արտադպրոցական հաստատությունների մանկավարժների կամավոր ատեստավորման գործընթացը: Կամավոր ատեստավորմանը մասնակցելու հնարավորություն են ստացել սպորտի ոլորտում նախորդ տարվա 4 մարզաձևի փոխարեն 12 մարզաձևի մարզիչ-մանկավարժներ, մշակույթի ոլորտում՝ նախորդ տարվա 2 ուղղության փոխարեն՝ 8 ուղղության մանկավարժներ:

2024 թվականին ատեստավորմանը մասնակցել է 465 մանկավարժ և մարզիչ, որը 2023 թվականի համեմատ մոտ 2 անգամ ավելի է, իսկ արդյունքում ատեստավորված

և բարձրացված աշխատավարձ ստացող արտադպրոցական մանկավարժների ընդհանուր թիվը 206 է, որը 5 անգամ աճել է նախորդ տարվա համեմատ:

2024 թվականին նախադպրոցական կրթության ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում և նախակրթարաններում նախադպրոցական կրթություն է ստացել 82 768 երեխա, որոնցից 3-5 տարեկան երեխաների ընդգրկվածությունը կազմում է 75%, ինչը շուրջ 5%-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: Այս երեխաներից 6 290-ը հաճախում է նախակրթարաններ, որոնք գործում են հանրակրթական դպրոցներին կից՝ հիմնականում կեսօրյա խմբերով: Այս ծառայության ֆինանսավորման (այդ թվում՝ սնունդը) ծավալը կազմել է շուրջ 829,3 մլն ՀՀ դրամ:

Աշխատանքներ են տարվել նախադպրոցական կրթության հասանելիության ապահովման նպատակով՝ 50-ից ավելի 3-5 տարեկան երեխա ունեցող բնակավայրերում նոր մանկապարտեզներ կառուցելու, 10-50 երեխա ունեցող բնակավայրերում՝ դպրոցներին կից նախակրթարաններ հիմնելու, մինչև 10 երեխա ունեցող բնակավայրերում՝ նախադպրոցական կրթության այլընտրանքային մոդելներ ներդնելու (նաև մասնավորի հետ համագործակցությամբ) ուղղություններով:

Շարունակվել է նախադպրոցական ուսումնական հաստատություններում համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացը:

Պետական բյուջեից անվճար նախադպրոցական կրթություն է ստացել 1 233 կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և զինծառայողի՝ 7 724 երեխա:

Նախադպրոցական կրթության պետական նոր չափորոշիչն արդեն իսկ ներդրվել է 532 հաստատությունում (հաստատությունների թիվը 2,8 անգամ ավելացել է):

Ստեղծվել է մենթոր մանկապարտեզների ցանց, որը աշխատանքներ է իրա-կանացրել շուրջ 2 500 մանկավարժական աշխատողի հետ՝ չափորոշչի ներդրման արդյունավետության բարձրացմանն ուղղված վերապատրաստումների և շարու-նակական մեթոդական աջակցության ձևաչափերով:

Իրականացվել է նախադպրոցական ոլորտի շուրջ 1 500 մանկավարժի վերապատրաստում:

Շարունակվել է մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման և վարձատրության բարձրացման փոխկապակցված համակարգի՝ տարակարգի տրամադրումը, որի շրջանակում 26 մանկավարժական աշխատող ստացել է

տարակարգ (ցուցանիշը կրկնապատկվել է): Արդյունքում վերջիններս ստանում են 30-50% հավելավճար:

Տնօրեններին ներկայացված հավաստագրման պահանջի շրջանակում 261 հավակնորդ հավաստագիր է ստացել (նախորդ տարում՝ 263-ը): Հավաստագրված տնօրեն ունեցող նախադպրոցական ուսումնական հաստատությունների մասնաբաժինը կազմում է շուրջ 80%:

Իրականացվել է նախադպրոցական ծառայություններ մատուցող կազմակերպությունների լիցենզավորման գործընթաց, որի շրջանակում լիցենզավորվել է 155 կազմակերպություն (շուրջ 56%-ը), որոնցից 87-ը՝ 2024 թվականին, ինչը նախադպրոցական կրթության որակի վերահսկողության երաշխիք է: Լիցենզավորված մասնավոր նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախում է շուրջ 8 200 նախադպրոցական:

Նախադպրոցահասակ 3-5 տարեկան երեխաների 85% ընդգրկվածության թիրախն ապահովելու նպատակով շարունակվում է 500 մանկապարտեզի կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման ծրագիրը: 195 հաստատությունում շինարարական աշխատանքներն ավարտվել են (119 մանկապարտեզ, 76 նախակրթարան), 136-ում ընթացքի մեջ են, իսկ 64-ում նախապատրաստական աշխատանքներ են իրականացվում: Նախադպրոցական հաստատություններից, որտեղ ավարտվել են արդեն աշխատանքները, 125-ը գտնվում է գյուղական, 70-ը՝ քաղաքային բնակավայրերում: Ծրագրի ավարտին բարեկարգ պայմաններում նախադպրոցական կրթություն ստանալու հնարավորություն կունենա 3-5 տարեկան շուրջ 33 200 երեխա:

Նախադպրոցական ծառայություններ կգործեն նաև Կառավարության որոշմամբ հաստատված և արդեն շինարարությունը մեկնարկած բոլոր 73 կրթահամալիրում, որոնք ընդգրկված են 500 մանկապարտեզ ծրագրում և կապահովեն շուրջ 3 700 նախադպրոցական երեխայի կրթություն:

Բոլոր նորակառույց և վերանորոգված մանկապարտեզները հագեցվում են ժամանակակից պահանջներին համապատասխանող նոր գույքով:

2024 թվականին արհեստագործական և միջին մասնագիտական կրթության ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ընդունվել է «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» ՀՀ նոր օրենքը, որը համակարգային փոփոխություններ է մտցնում ոլորտում՝ առանցքային դարձնելով աշխատանքի վրա հիմնված ուսուցումը, մասնավորի հետ համագործակցությունն ու տնտեսության հետ կապը:

2024 թվականին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) հաստատություններ է ընդունվել 15 058 ուսանող՝ 2023-ի նկատմամբ գրանցելով ընդունելության 11,4% աճ: Ներկայումս արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատություններում սովորում է ավելի քան 45 000 ուսանող:

Գերակա մասնագիտություններով ամսական 50 000 դրամ կրթաթոշակային ծրագիրը՝ գյուղատնտեսական, արդյունաբերական և շինարարական մասնագիտությունների ուղղությամբ, էական ազդեցություն է ունեցել ընդունելության արդյունքների բարելավման վրա: Գրանցվել է 2024-2025 ուսումնական տարում ընդունելության դրական արդյունք՝ 988 ուսանող՝ արհեստագործական (նախորդ տարվա համեմատ թիվն աճել է 123,5%-ով), 717՝ միջին մասնագիտական (նախորդ տարվա համեմատ թիվն աճել է 61%-ով) ծրագրերով: 2023-2024 ուսումնական տարում գերակա և առաջնահերթ սահմանված մասնագիտություններով ընդունված ուսանողների 41%-ը գերազանց և լավ առաջադիմության հիմքով շարունակում է ստանալ բարձր կրթաթոշակ:

Վերանայվել է ՄԿՈՒ ոլորտի մասնագիտությունների ցանկը՝ այն համապատասխանեցնելով ժամանակից տնտեսության և Հայաստանի աշխատաշուկայի պահանջներին:

Մշակվել է աշխատանքի վրա հիմնված (դուալ) ուսուցման 5 ծրագիր, և դրանք 2024-2025 ուսումնական տարվանից ներդրվել են ՄԿՈՒ 8 հաստատությունում: Ընդհանուր առմամբ, 2024 թվականի դրությամբ դուալ ուսուցմամբ կրթական ծրագրեր իրականացվել են 21 ՄԿՈՒ հաստատությունում՝ 27 մասնագիտությամբ: Արդյունքում այս մոդելով իրականացվող մասնագիտությունների մասնաբաժինը հասել է 17%-ի, իսկ ուսումնական հաստատություններինը՝ 23%-ի:

2024 թվականին առաջին անգամ կազմակերպվել է ՄԿՈՒ հաստատություններում դասավանդող մանկավարժների վերապատրաստման և ատեստավորման գործընթացը 4 ուղղությամբ՝ ոսկերչություն, գյուղատնտեսություն, SS, խոհարարություն, որոնցից վերապատրաստմանը մասնակցել է ՄԿՈՒ հաստատությունների 361 մանկավարժ, իսկ ատեստավորմանը՝ 310: Ատեստավորման արդյունքում 276 մանկավարժ կամ մասնակիցների 89%-ը հաղթահարել է նվազագույն շեմը և ունեցել դրույքաչափի բարձրացում 200 000 ՀՀ դրամի չափով, ինչը 2-ից 3 անգամ բարձր է գործող դրույքաչափից, որն ըստ էության հավասար էր նվազագույն աշխատավարձին, իսկ 70%-ից բարձր արդյունքներ գրանցած 224 մանկավարժ (նվազագույն շեմը հաղթահարածների 81%-ը) ստանում է նաև 30%, 40%, 50% հավելավճար: Արդյունքում վարձատրությունն ավելի քան կրկնապատկվել է ատեստավորված մանկավարժների համար:

ՄԿՈՒ հաստատություններում հանրակրթական առարկաներ դասավանդող 130 մանկավարժ մասնակցել է ուսուցիչների կամավոր ատեստավորմանը, որոնցից 88-ը հաղթահարել է նվազագույն շեմը, և նրանցից 16-ը կունենա դրույքաչափի փոփոխություն, իսկ 72-ը՝ նաև կստանա հավելավճար: Ուսուցիչների կամավոր ատեստավորմանը մասնակցած և դրական արդյունք ցուցաբերած ՄԿՈՒ մանկավարժների ընդհանուր թիվը սկսած 2023 թվականից կազմում է 152, ընդ որում՝ ընթացիկ տարվա ցուցանիշը 38%-ով ավելի է նախորդ տարվանից:

Մասնագիտական ուսումնական հաստատությունների օպտիմալացման ծրագրերի շրջանակում վերակազմակերպվել է 3 ուսումնական հաստատություն:

2024 թվականին շարունակել են իրականացվել մասնագիտական ուսումնական հաստատությունների ենթակառուցվածքների բարելավման ծրագրերը: Ներկայումս ընթացքի մեջ են 6 ուսումնական հաստատության շենքային պայմանների բարելավման՝ վերանորոգման և կառուցման աշխատանքները: 3 ուսումնական հաստատություն գտնվում է նախագծման փուլում: Ենթակառուցվածքների բարելավման ծրագրերն ուղղված են ոչ միայն շենքային պայմանների, այլև ուսումնալաբորատոր բազայի բարելավմանը:

2024 թվականին բարձրագույն կրթության ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

«Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակներում՝

- պատրաստ է գլխավոր հատակագծի հայեցակարգը, որի մշակման աշխատանքներն իրականացվել են գերմանական ՋիԷմՓի ինթերնեյշնլ ՋիԷմԲիԷյջ արքիթեքթս ընդ էնջինիերս (այսուհետ՝ ՋիԷմՓի) ճարտարապետական հեղինակավոր ընկերության կողմից,
- մեկնարկել է Ակադեմիական քաղաքի կառավարման շրջանակի, նորարարությունների կառավարման մոդելի, բուհերի և հետազոտական ինստիտուտների խոշորացման հայեցակարգի մշակումը Մյունխենի տեխնիկական համալսարանի հետ կնքված պայմանագրով, որի շրջանակներում մշակվելու է նաև «Ակադեմիական քաղաքի» տեխնոլոգիական կլաստերի կառավարման համակարգը,
- մեկնարկել է Ակադեմիական քաղաքի քաղաքաշինական զարգացման ռազմավարական շրջանակի մշակումը գերմանական RSUP ընկերության հետ կնքված պայմանագրով, որը ներառում է սոցիալ-տնտեսական, քաղաքաշինական զարգացման մոդելները, ինչպես նաև գույքերի կառավարման առաջարկները,

- մեկնարկել է Ակադեմիական քաղաքի տրանսպորտային շարժունակության նախագծի մշակումը իտալական Սիստեմատիկա ընկերության հետ կնքված պայմանագրի շրջանակում, որը ներառում է նաև Ակադեմիական քաղաքի տրանսպորտային ներքին ցանցի և արտաքին տրանսպորտային համակարգերի հետ կապակցվածության ուսումնասիրությունն ու հայեցակարգի ներկայացումը,
- Ակադեմիական քաղաքի համար մշակված լանդշաֆտային դիզայնի համաձայն ամբողջացվում է նաև Բուսաբանության ինստիտուտի կողմից անհրաժեշտ ջերմոցային տարածքների պատրաստման և նախանշված բուսատեսակների աճեցման աշխատանքների պայմանագիրը՝ Ակադեմիական քաղաքի կանաչապատման նպատակով,
- ամբողջացվում է նաև ՋիԷմՓի գերմանական կազմակերպության հետ գլխավոր հատակագծի վերջնականացման աշխատանքների համար պայմանագիրը: Այս աշխատանքները կներառեն նաև Ակադեմիական քաղաքի համար անհրաժեշտ կոմունիկացիոն նախագծերը, ինչպես նաև տարածքում առկա բարձրավոլտ էլեկտրասյուների տեղափոխումը:

Բուհերի խոշորացման և գիտահետազոտական կազմակերպությունների հետ միավորման գործընթացի շրջանակներում ձևավորվել են աշխատանքային խմբեր՝ տեխնոլոգիական, կրթական, արվեստի, սպայական, դասական, բժշկական ուղղություններով՝ յուրաքանչյուր ուղղությամբ հայեցակարգերի մշակման նպատակով: Առանձին աշխատանքային խումբ է ձևավորվել նաև մարզային բուհերի մասնակցությամբ:

Խոշորացման յուրաքանչյուր ուղղությամբ ներգրավվել է միջազգային հեղինակավոր գործընկեր բուհ, մասնավորապես՝

- արվեստների ուղղությամբ՝ Լոնդոնի արվեստների համալսարանը,
- կրթական ուղղությամբ՝ Լոնդոնի համալսարանական քոլեջի կրթական ինստիտուտը,
- տեխնոլոգիական ուղղությամբ՝ Մյունխենի տեխնիկական համալսարանը:

Կրթական միջավայրի բարելավման համատեքստում մեկնարկել է ՆԳՆ-ի ենթակայությամբ մեկ միասնական ուսումնական հաստատության ձևավորմանն ուղղված աշխատանքը, որը կենտրոնանալու է ոստիկանության հենասյունային ծառայությունների, Փրկարար ծառայության և ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի կադրային պահանջարկը բավարարելու վրա, շարունակական կրթության տրամաբանությամբ՝ սկսած առաջին անգամ ծառայության անցնելուց, մինչև ծառայողների վերապատրաստում և կարիերային առաջընթացի ապահովում:

Ընդ որում՝ նշված ծառայություններում աշխատանքի անցնելու համար պարտադիր մուտքային պահանջ է սահմանվելու կրթահամալիրում բազային կրթություն ստանալը: Համապատասխան օրենսդրական փաթեթն ամբողջությամբ ընդունվել է Ազգային ժողովի կողմից, իսկ նոր կրթահամալիրի կանոնադրությունը հաստատվել է Կառավարության կողմից:

Միասնական և ներբուհական ընդունելության կարգերով բուհեր է ընդունվել 10 720 ուսանող, ինչը կազմում է ավագ դպրոցի շրջանավարտների 52,3%-ը: Ընդ որում՝ պետության կողմից ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ 2024-2025 ուսումնական տարվա համար նախատեսված 2 096 տեղից բնագիտամաթեմատիկական (STEM) ոլորտին հատկացվել է 1 264-ը՝ ընդհանուր տեղերի թվի 61%-ը:

Շարունակվել է պետության կողմից ԲՏՃՄ ուղղություններով մասնագիտական մանկավարժության ծրագրով սովորողների խրախուսման ծրագիրը՝ ամսական 70 000 ՀՀ դրամ կրթաթոշակի միջոցով, որի շրջանակներում 2024-2025 ուսումնական տարում բուհեր է ընդունվել 304 ուսանող՝ նախորդ ուսումնական տարում ընդունվածներից շուրջ 20%-ով ավելի: Այս քաղաքականությունը 2024 թվականից տարածվել է նաև ագրարային ոլորտի մասնագիտությունների վրա: Ըստ 2024-2025 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների՝ ագրարային ոլորտի նշված մասնագիտություններով բուհ է ընդունվել 220 ուսանող:

ԲՏՃՄ ուղղություններով պետության համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով (7 բակալավրի և 14 մագիստրոսի կրթական ծրագրերով) համապատասխան բուհերում սովորող 135 ուսանողի տրամադրվել է պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում: Այս ուղղություններով պետական պատվերով ընդունելությունը նախորդ ուսումնական տարվա համեմատ աճել է 5%-ով:

Երևանի պետական համալսարանում նոր գերհամակարգչային կենտրոնի ստեղծման և գերհամակարգչի ձեռքբերման համար հատկացվել է 3,4 մլրդ ՀՀ դրամ:

2024-2025 ուսումնական տարում օտարերկրյա դիմորդների թվաքանակը ՀՀ ուսումնական հաստատություններ կազմել է 1 599: ՀՀ բուհերի օտարազգի դիմորդների թվաքանակը կազմել է 738՝ նախորդ տարվա 674-ի փոխարեն: 2024-2025 ուսումնական տարում ՀՀ բուհերում օտարերկրյա ուսանողների թվաքանակը կազմել է 7 684, որից 4 134-ը՝ սփյուռքահայ:

Միջպետական համաձայնագրերի շրջանակում իրականացվել են կրթաթոշակային ծրագրեր բակալավրիատում, մագիստրատուրայում և ասպիրանտուրայում

ուսանելու համար: Արդյունքում 2024-2025 ուստարում օտարերկրյա 74 քաղաքացի ընդունվել է ՀՀ բուհեր, իսկ ՀՀ 316 քաղաքացի՝ օտարերկրյա բուհեր:

Գիտություն

Հաշվետու տարում գիտության ոլորտի (ներառյալ ռազմարդյունաբերության) ֆինանսավորումը կազմել է շուրջ 40,2 մլրդ ՀՀ դրամ՝ 2023 թվականի համեմատ շուրջ 4,2 մլրդ ՀՀ դրամով ավելի: 2018 թվականի շուրջ 14,3 մլրդ ՀՀ դրամի համեմատ 2024 թվականին ոլորտի ֆինանսավորումը ավելի է եղել շուրջ 25,9 մլրդ ՀՀ դրամով:

Գիտության զարգացմանն ուղղված քայլերն արդյունքներ են արձանագրում նաև միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված պարբերական-ներում ՀՀ գիտնականների կողմից հրապարակումների թվի աճի տեսքով:

Մասնավորապես, գիտական հրապարակումների թիվը, ըստ «Վեբ օֆ սայնս» գիտատեղեկատվական շտեմարանի տվյալների, ազդեցության գործակից ունեցող պարբերականներում հրապարակումների 2024 թվականի տարեսկզբի համար կազմել է 1 205, ինչը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է շուրջ 40%-ով (854 հրապարակում) և պատմական գրանցված ամենաբարձր թիվն է (նախորդ ամենաբարձրը եղել է 2019 թվականին՝ 1021 հրապարակում):

«Սկոպուս» գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված պարբերականներում, ըստ «Սիմագո» վերլուծական կայքի, 2024 թվականի տարեսկզբի համար հրապարակումների թիվը կազմել է 2 019, ինչը 14,39 %-ով գերազանցում է նախորդ տարվա (1 765) հրապարակման ցուցանիշը:

Առաջին անգամ իրականացվել է միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Web of Science» կամ «Scimago Journal & Country Ranking») ներառված առաջատար ամսագրերում գիտական աշխատանքների հրատա-րակման ծախսերը փոխհատուցելու համար մրցույթ, որի արդյունքում 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ փոխհատուցում է տրվել 25 հայտի՝ ընդհանուր շուրջ 23,6 մլն ՀՀ դրամի չափով: Առաջին անգամ գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների արդյունքները պետության կարիքների բավարարմանն ուղղելու նպատակով 2024 թվականի ընթացքում ծավալուն աշխատանքներ են կատարվել պետական պատվերով գիտական հետազոտություններ իրականացնելու մեխանիզմ ձևավորելու ուղղությամբ: Ստեղծվել է գերատեսչությունների և գիտական համայնքի ներկայացուցիչներից կազմված ոլորտային 5 աշխատանքային խումբ, որոնք մշակել են գիտական

հետազոտությունների պահանջարկ ունեցող շուրջ 60 կոնկրետ թեմա և պետության պահանջարկի վրա հիմնված (demand driven) գիտահետազոտական նախագծերի մրցույթի հրավերի փաթեթը: Մրցույթը նախատեսվում է հայտարարել և անցկացնել 2025 թվականի տարեսկզբին:

Ոլորտում էլեկտրոնային համակարգի հիման վրա ներդրվել է մոնիթորինգի մեխանիզմ, որի միջոցով գնահատվել է կազմակերպությունների գիտական արդյունավետությունը, որի հիման վրա էլ վերանայվել են բազային ֆինանսավորման չափերը՝ կրճատելով ֆինանսավորումը քիչ արդյունավետ կազմակերպություններին:

Իրականացվել է երկակի նշանակության ծրագրերի աջակցության ամենամյա մրցույթը: Ֆինանսավորում տրամադրվել է 8 կարևոր ծրագիր՝ 320 մլն ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով (նախորդ տարի՝ 15 ծրագիր, 215 մլն ՀՀ դրամ):

Շարունակվել է հետազոտական կազմակերպությունները ժամանակակից գիտական սարքավորումներով համալրելու գործընթացը՝ պետական բյուջեից կապիտալ բնույթի միջոցների հատկացմամբ՝ շուրջ 4,2 մլրդ ՀՀ դրամի չափով:

Միաժամանակ երկրորդ տարին շարունակ իրականացվել է մրցունակ գիտական ստորաբաժանումների հագեցվածությանն ուղղված մրցութային ծրագիր, որի բյուջեն ամբողջությամբ ուղղվել է փոքր և ամենօրյա կիրառություն ունեցող գիտական սարքավորումների և նյութերի ձեռքբերմանը: Մրցույթի արդյունքում ստացված 107 սարքից ֆինանսավորվել է 59 հայտ՝ ընդհանուր շուրջ 986 մլն ՀՀ դրամ ծավալով, ի համեմատ 2023 թվականին ստացված 99 հայտից ֆինանսավորման երաշխավորված 60 հայտի՝ շուրջ 932 մլն ՀՀ դրամ արժողությամբ:

2024 թվականին շարունակվել է նաև գիտական և ճարտարագիտական աշխատողների աշխատավարձերի բարձրացման 2022 թվականից մեկնարկած գործընթացը, ինչի արդյունքում 2018-2021 թվականներին գիտական և ճարտարագիտական աշխատողների յուրաքանչյուր տարակարգի միջին աշխատավարձի նկատմամբ արդեն իսկ գրանցվել է աշխատավարձի ավելացում 78%-ից մինչև 267%: Մասնավորապես 2024 թվականին՝

- լաբորանտի կամ ճարտարագետի աշխատավարձը կազմել է 120 000 ՀՀ դրամ՝ 2023 թվականի նվազագույնը 110 000 ՀՀ դրամի և 2021 թվականի միջինը 67 000 ՀՀ դրամի համեմատ,

- ավագ լաբորանտի կամ ավագ ճարտարագետի աշխատավարձը կազմել է 156 000 ՀՀ դրամ՝ 2023 թվականի նվազագույնը 130 000 ՀՀ դրամի և 2021 թվականի միջինը 76 000 ՀՀ դրամի համեմատ,
- կրտսեր գիտաշխատողի աշխատավարձը կազմել է 180 000 ՀՀ դրամ՝ 2023 թվականի նվազագույնը 150 000 ՀՀ դրամի և 2021 թվականի միջինը 85 800 ՀՀ դրամի համեմատ,
- գիտաշխատողի աշխատավարձը կազմել է 230 000 ՀՀ դրամ՝ 2023 թվականի միջինը 200 000 ՀՀ դրամի և 2021 թվականի նվազագույնը 90 400 ՀՀ դրամի համեմատ,
- ավագ գիտաշխատողի աշխատավարձը կազմել է 300 000 ՀՀ դրամ՝ 2023 թվականի նվազագույնը 250 000 ՀՀ դրամի և 2021 թվականի միջինը 99 000 ՀՀ դրամի համեմատ,
- առաջատար գիտաշխատողի աշխատավարձը կազմել է 420 000 ՀՀ դրամ՝ 2023 թվականի նվազագույնը 350 000 ՀՀ դրամի և 2021 թվականի միջինը 114 300 ՀՀ դրամի համեմատ,
- գլխավոր գիտաշխատողի աշխատավարձը կազմել է 500 000 ՀՀ դրամ՝ 2023 թվականի նվազագույնը 450 000 ՀՀ դրամի և 2021 թվականի միջինը 138 100 ՀՀ դրամի համեմատ,
- գիտական խմբի ղեկավարի աշխատավարձը կազմել է 350 000 ՀՀ դրամ՝ 2023 թվականի միջինը 280 000 ՀՀ դրամի և 2021 թվականի նվազագույնը 129 100 ՀՀ դրամի համեմատ,
- գիտական ստորաբաժանման ղեկավարի աշխատավարձը կազմել է 450 000 ՀՀ դրամ՝ 2023 թվականի նվազագույնը 400 000 ՀՀ դրամի և 2021 թվականի միջինը 141 400 ՀՀ դրամի համեմատ:

Հեռավար լաբորատորիաների ստեղծման ծրագրի շրջանակում տարբեր երկրներից առաջատար հետազոտող հանդիսացող ղեկավարների ներգրավմամբ ֆինանսավորման է երաշխավորվել 18 նախագիծ, այդ թվում՝ 14 ԲՏՃՄ և 4 հասարակագիտական ու հումանիտար՝ շուրջ 2,2 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով (ֆինանսավորումն աճել է շուրջ 4 անգամ):

Երիտասարդ գիտնականներին խրախուսելու նպատակով ֆինանսավորման է երաշխավորվել ասպիրանտների և երիտասարդ հայցորդների 65 ծրագիր (նախորդ տարի՝ 42 ծրագիր)՝ շուրջ 573 մլն ՀՀ դրամ ընդհանուր չափով:

Կազմակերպվել է կին ղեկավարների առաջխաղացման մրցութային ծրագիրը, որի շահառու է դարձել 31 կին ղեկավար ունեցող հետազոտական խումբ, որոնց ներկայացրած ծրագրերից 27-ը ԲՏՃՄ մասնագիտություններով են:

Իրականացվել են «Հայկական համադպրոցական գիտության փառատոն-2024-ը» (30 դպրոց, 78 ծրագիր, 146 աշակերտի մասնակցությամբ) և «Գիտության շաբաթը», որի բացության միջոցառումներին մասնակցել է շուրջ 20 000 մասնակից, ներգրավվել՝ 38 կազմակերպություն:

Առաջին անգամ հայտարարվել և ամփոփվել է Վրաստանի Շոթա Ռուսթավելու անվան գիտության ազգային հիմնադրամի հետ իրականացվող հայ-վրացական համատեղ մրցույթը, որի շրջանակներում ձևավորվել է 3 համատեղ հետազոտական խումբ:

ԵՄ «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագրի շրջանակում 2024 թվականի տարեվերջի դրությամբ ՀՀ կողմից ներկայացվել է ընդհանուր 144 հայտ (կրկնակի ավելի նախորդ տարվա համեմատ), կնքվել է ֆինանսավորման ևս 7 պայմանագիր՝ պայմանագրերի ընդհանուր թիվը հասցնելով 17-ի՝ շուրջ 7,6 մլն եվրո ընդհանուր բյուջեով, որը գերազանցում է նախորդ տարվա բյուջեն 2,4 անգամ:

Երևանում կայացել է «Հայաստան-Գերմանիա գիտության օր» միջոցառումը՝ շուրջ 120 մասնակցի ընդգրկմամբ: Միջոցառման շրջանակում քննարկվել են ՀՀ և ԳԴՀ միջև գիտության և նորարարության ոլորտներում համագործակցության ձեռքբերումները, ներկայացվել են «Ակադեմիական քաղաք» ծրագիրը և վերջինիս շրջանակում ԳԴՀ, այդ թվում՝ Մյունխենի տեխնիկական համալսարանի հետ առկա համագործակցությունը:

Առողջապահություն

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակել է բարձրանալ բժշկական ծառայությունների հասանելիությունը և բարելավվել դրանց որակը: Արձանագրվել է մանկական մահացության ցուցանիշի նվազում: Բարելավվել է հիվանդությունների վաղ հայտնաբերման և կանխարգելման գործընթացը:

2024 թվականին.

- ավելացել են պետական պատվերի շրջանակներում հիվանդանոցային, դժվարամատչելի բժշկական օգնության և սպասարկման ծավալները. մատուցվել է 4 310 257 բժշկական ծառայություն (2023 թվականի ցուցանիշը կազմել է 3 710 394), որից 830 773 հիվանդանոցային դեպք (2023 թվականի ցուցանիշը կազմել է 751 076), 191 543 արտահիվանդանոցային

հատուկ և դժվարամատչելի հետազոտությունների գծով ծառայություն (2023 թվականի ցուցանիշը կազմել է 116 138):

Պետպատվերի շրջանակներում բնակչությանը մատուցվել են հետևյալ հիմնական ծառայությունները.

- չարորակ նորագոյացություններով բուժառուների վիրահատական և ոչ վիրահատական (քիմիաթերապևտիկ և ճառագայթային բուժման) բժշկական օգնության և սպասարկման շուրջ 66 252 ծառայություն (2023 թվականին՝ շուրջ 50 000),
- կոլոռեկտալ քաղցկեղի վաղ հայտնաբերման սքրինինգային փորձարարական ծրագրի շրջանակներում իրականացվել է 5 187 հետազոտություն (2023 թվականին՝ 2 149),
- կրծքագեղձի քաղցկեղի կանխարգելման նպատակով իրականացվել է 4 642 մամոգրաֆիկ անվճար սքրինինգային հետազոտություն (2023 թվականին՝ 9 681),
- մատուցվել է սիրտ-անոթային հիվանդությունների բժշկական օգնության և սպասարկման 15 305 վիրահատական ծառայություն (2023 թվականի 13 146-ի համեմատ), սրտի անհետաձգելի վիրահատական (Stent for Life) 2 682 ծառայություն (2023 թվականին՝ 2 530),
- գլխուղեղի կաթվածների ծրագրի շրջանակներում մատուցվել է 789 ծառայություն (2023 թվականին՝ 770), աորտայի շերտազատված անևրիզմայի վիրահատական բուժման ծրագրի շրջանակներում մատուցվել է 84 ծառայություն (2023 թվականին՝ 67),
- մատուցվել է օրգանների փոխպատվաստման 83 ծառայություն (երիկամի փոխպատվաստման՝ 22 վիրահատություն, լյարդի փոխպատվաստման՝ 4 վիրահատություն, ոսկրածուծի/ցողունային բջիջների աուտոփոխպատվաստման՝ 57 վիրահատություն. 2023 թվականին մատուցվել է 68 փոխպատվաստման ծառայություն),
- պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում արտագնա անհետաձգելի բժշկական օգնության արագ արձագանքման ծառայության կողմից կազմակերպվել է բուժառուներին ուղղաթիռով տեղափոխման 42 թռիչք (2023 թվականին՝ 65):

Հասանելի և որակյալ ծառայությունների ապահովման ուղղությամբ իրականացվել են նաև հետևյալ միջոցառումները.

- Ավարտվել են «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ ՀՀ Արարատի մարզային մասնաճյուղի շենքի վերակառուցման, «Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի կառուցման, ՀՀ ԱՆ «Յոլյան արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» ՓԲԸ-ի արյան բանկի կառուցման և ՀՀ Կոտայքի մարզի «Չարենցավանի ԲԿ» ՓԲԸ շենքի վերակառուցման շինարարական աշխատանքները:
- Շարունակվել են ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի նոր ինֆեկցիոն կենտրոնի (ծառայության) մասնաշենքի կառուցման, ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի բժշկական կենտրոնի շենքի կառուցման, ՀՀ Գեղարքունիքի մարզի «Լճափի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի նոր շենքի կառուցման շինարարական աշխատանքները:
- Շարունակվել են նաև 10 առողջապահական կազմակերպությունների շենքերի կապիտալ բնույթի շինարարական աշխատանքները (ՀՀ Արմավիրի մարզի «Էջմիածնի ԲԿ» ՓԲԸ-ի շենքի նոր նախագծի մշակում, ՀՀ Արագածոտնի մարզի «Թալինի ԲԿ» ՓԲԸ շենքի վերակառուցում, ՀՀ Արագածոտնի մարզի «Ծաղկահովիտի ԱԿ» ՓԲԸ շենքի կառուցում, ՀՀ Արագածոտնի մարզի «Աշտարակի ԲԿ» ՓԲԸ -ի նոր շենքի կառուցում, ՀՀ Արարատի մարզի «Մասիսի ԲԿ» ՓԲԸ շենքի կառուցում, ՀՀ Արարատի մարզի «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ պոլիկլինիկական մասնաշենքի վերակառուցում, ՀՀ Կատայքի մարզի «Նաիրի ԲԿ» ՓԲԸ շենքի կառուցում, ՀՀ Լոռու մարզի «Տաշիրի ԲԿ» ՓԲԸ շենքի կառուցում, «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի վերակառուցում):
- Շարունակվել են առողջության համապարփակ ապահովագրության ներդրման նպատակով մշակված «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» ՀՀ օրենքի և հարակից մի շարք օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի քննարկման և լրամշակման աշխատանքները, ինչպես նաև ենթաօրենսդրական իրավական ակտերի, հիմնադրամի գործառույթների հստակեցման և աշխատանքների կազմակերպման իրավական հիմքերի մշակումը:
- ԱԱՊ համակարգում հիվանդությունների կանխարգելման, վաղաժամ հայտնաբերման և հոսպիտալացման նվազեցման նպատակով ներդրված նոր բոնուսային համակարգով 2024 թվականին ԱԱՊ ընտանեկան բժիշկներին, թերապևտներին, մանկաբույժներին և բուժքույրերին վճարվել է շուրջ 1,4 մլրդ ՀՀ դրամ լրավճար:

- Բժշկական ծառայությունների որակի բարձրացման նպատակով շարունակվել են գործելակարգերի մշակման աշխատանքները. մշակվել է 385 գործելակարգ:
- Օրենսդրական հիմքեր են սահմանվել բուժաշխատողների անհատական լիցենզավորման համակարգի ներդրման համար:
- Դեղատնային գործունեության, բժշկական օգնության և սպասարկման իրականացման համար լիցենզիաների 5 տարի ժամկետով տրամադրմանը զուգահեռ ներդրվել է լիցենզիա ստանալու մասին հայտ ներկայացնելու և լիցենզիաները տրամադրելու էլեկտրոնային համակարգը: Էլեկտրոնային համակարգով հունիսի 14-ից մինչ դեկտեմբերի 31-ը տրամադրվել է 347 դեղատնային և 365 բժշկական օգնության և սպասարկման իրականացման էլեկտրոնային լիցենզիա:
- Երեք բժշկական կազմակերպությունում իրականացվել են բժշկական ծառայությունների որակի համակարգի ներդրմանն ուղղված փորձարարական ծրագրեր՝ Երևանի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնում, Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնում և Լոռու մարզի Սպիտակի բժշկական կենտրոնում, որի արդյունքներն ամփոփելուց հետո նախատեսվում է ներդնել բժշկական ծառայությունների որակի կառավարման և բարելավման համակարգերը ազգային մակարդակում:

Մոր և մանկան առողջության ոլորտի ցուցանիշներ.

- 2022- 2024 թվականներին արձանագրվել է մայրական մահվան 19 դեպք՝ 2019-2021 թվականների՝ 36 դեպքի համեմատ,
- մինչև 1 տարեկան երեխաների մահացության ցուցանիշը 2024 թվականին կազմել է 6,2 պրոմիլ (1000 կենդանի ծնվածի հաշվով), 2023 թվականին նույն ժամանակահատվածի ցուցանիշը կազմել էր 6,6 պրոմիլ,
- մինչև 5 տարեկան երեխաների մահացության ցուցանիշը 2024 թվականի ընթացքում կազմել է 7,4 պրոմիլ, 2023 թվականի նույն ժամանակահատվածում այն կազմել է 7,8 պրոմիլ,
- ընդլայնվել է վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից անվճար և արտոնյալ պայմաններով օգտվելու իրավունք ունեցող շահառուների ցանկը. 2024 թվականին կատարվել է 7 494 շահառուի ախտորոշում և բուժում (2023 թվականի նույն թիվը կազմել է 5 441), գրանցվել է 993 հղիություն, ծնվել է 539 երեխա, որոնցից 27-ը զոհված զինծառայողների ընտանիքներում,

- Շիրակի մարզում ստեղծվել է օժանդակ սերմնավորման ծառայություն/կենտրոն,
- Տավուշի մարզում ստեղծվել է հղիների պրենատալ ախտորոշման ծառայություն,
- ստեղծվել և գործարկվել է մանկական շարժական պալիատիվ ծառայությունը՝ Երևանում և մայրաքաղաքից 30կմ շառավղով գտնվող մարզերում բնակվող երեխաների համար,
- կեսարյան հատումների աճի նվազեցման ծրագրի շրջանակներում հաստատվել են գործելակարգեր և ուղեցույցներ, իրականացվել են հանրային իրազեկման միջոցառումներ, վերանայվել են ծննդօգնության ծառայության փոխհատուցման գները, էպիդուրալ անզգայացման ծառայությունը ներառվել է պետական պատվերի շրջանակներում: Արձանագրվել է կեսարյան հատումների քանակի նվազում սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում՝ 3,3%-ով՝ 2024 թվականին կազմելով 35,2% (2023 թվականի նույն ցուցանիշը կազմել է 38,5%),
- Երևանի ծննդօգնություն իրականացնող բժշկական կազմակերպություններում ներդրվել է ադրենոգենիտալ համախտանիշի նորածնային սկրինինգային ծրագիրը, որի շրջանակներում 6 ամսվա ընթացքում իրականացվել է 12 637 հետազոտություն,
- ընդլայնվել է հղիների նախածննդյան հսկողության պարտադիր հետազոտությունների ծավալը,
- կատարվել է երեխաների ականջի խխունջի պատվաստման 28 վիրահատություն (2023 թվականին՝ 28), փոխհատուցվել է 8 երեխայի խոսքային պրոցեսորի արժեքը:

Դեղերի հասանելիության ընդլայնման ուղղությամբ.

- 2024 թվականի պետական բյուջեի հաշվին կենտրոնացված կարգով ձեռք է բերվել 16 հիվանդության համար շուրջ 4,1 մլրդ ՀՀ դրամի 93 անվանում դեղ՝ 201 668 շահառուի համար (2023 թվականի ձեռք էր բերվել 12 հիվանդության համար շուրջ 3,7 մլրդ ՀՀ դրամ գումարի 74 անվանում դեղ՝ 189 029 շահառուի համար, իսկ 2022 թվականին՝ 12 հիվանդության համար շուրջ 3,7 մլրդ ՀՀ դրամի 65 անվանում դեղ՝ 170 786 շահառուի համար),
- ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության օղակում սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված շահառուների դեղապահովման ծրագրում ներառվել է 530 անվանում դեղ (2023 թվականի նույն ցուցանիշը կազմել է 435 դեղ),
- ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակումներ ունեցող կամ 3-րդ խմբի հաշմանդամի կարգավիճակ ունեցող անձանց առողջության առաջնային

պահպանման օղակի միջոցով դեղեր են տրամադրվել ամբողջությամբ անվճար (մինչ այդ գործել է միայն 50% զեղչի արտոնությունը),

- 2023 թվականին հաստատված 6 հիվանդության (ցրված սկլերոզ, պատանեկան իդիոպաթիկ արթրիտ, առաջնային իմունոդեֆիցիտ կավասակիի հիվանդություն, նյարդաբանական խնդիրներով պայմանավորված համախտանիշներ, անհաս նորածինների համար նախատեսված դեղեր) բուժման համար անհրաժեշտ դեղերը, անկախ սոցիալական կարգավիճակից, անվճար տրամադրվել են (8 անվանում, շուրջ 693 մլն ՀՀ դրամի վերջին սերնդի թանկարժեք դեղեր՝ 562 շահառուի համար),
- կենտրոնացված կարգով ձեռք բերվող դեղերի անվանացանկը համալրվել է վերջին սերնդի հոգեմետ և հակացնցումային դեղերով (շուրջ 81 մլն ՀՀ դրամ):

Վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- մեկ տարեկան երեխաների պատվաստումներում ամբողջական ընդգրկվածությունը կազմել է 92,9%՝ 2023 թվականի 92%-ի համեմատ,
- 2 տարեկան երեխաների պատվաստումներում ամբողջական ընդգրկվածությունը կազմել է 92,5%՝ 2023 թվականի 91%-ի համեմատ,
- 6 տարեկան երեխաների պատվաստումներում ընդգրկվածությունը կազմել է 93,1%՝ 2023 թվականի 93%-ի համեմատ,
- զորակոչի ենթակա անձանց պատվաստումներում ընդգրկվածությունը կազմել է 95%՝ մնալով նույնը 2023 թվականի համեմատ,
- գրանցվել է դիֆթերիայի և պոլիոմիելիտի տեղական դեպքերի զրոյական ցուցանիշ,
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ՄԻԱՎ-ի, հեպատիտ Ցե-ի, սիֆիլիսի հայտնաբերման նպատակով առողջության առաջնային պահպանման օղակի միջոցով միգրանտների և նրանց զուգընկերների շրջանում իրականացվել է ՄԻԱՎ-ի և սիֆիլիսի համակցված 25341 հետազոտություն (հայտնաբերվել է ՄԻԱՎ-ի դրական 120 դեպք, սիֆիլիսի՝ 137 դեպք): Բնակչության նույն խմբի շրջանում կատարվել է նաև հեպատիտ Ցե-ի 25 274 հետազոտություն, հայտնաբերվել է 290 դրական դեպք,
- տուբերկուլոզի դեմ պայքարի ոլորտում հիվանդության նոր դեպքերի նվազման միտումը շարունակվում է: Բարձրացել է տուբերկուլոզի դեպքերի բարեհաջող ելքով ավարտված բուժման տեսակարար կշիռը՝ դեղազգայուն տուբերկուլոզի դեպքում հասնելով 90%-ի՝ նախորդ տարվա 84%-ի դիմաց,

- 2020-2024 թվականներին դեղակայուն տուբերկուլոզով պացիենտների շուրջ 50%-ն ընդգրկվել է կարճաժամկետ սխեմաներով բուժման մեջ՝ բուժման 77-81% արդյունավետության ցուցանիշով:

Առողջ ապրելակերպի խթանման ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Հայաստանի 10 մարզում ընտանեկան ձևաչափով իրականացվել են առողջ կենսաձևի քարոզչության արշավներ,
- առողջ և ակտիվ ծերության գաղափարը խթանելու, մեծահասակ բնակչությանն առողջ ապրելակերպի մասին իրազեկելու և ֆիզիկական ակտիվությունը խրախուսելու նպատակով Երևան քաղաքում ստեղծվել է ֆիզիկական ակտիվության 10 խմբակ և կոգնիտիվ խթանման 4 փորձարարական ակումբ,
- բոլոր մարզային դպրոցների շրջանում կազմակերպվել է «Առողջ ապրելակերպի դեսպան» մրցութային արշավը, որի շուրջ դպրոցները մշակել և ներկայացրել են առողջ ապրելակերպի նախագծեր:

Էլեկտրոնային առողջապահության համակարգի զարգացման ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- էլեկտրոնային առողջապահության համակարգին միացել է բժշկական և դեղագործական գործունեություն իրականացնող 1 593 կազմակերպություն, ինչը 2 անգամ ավելի է 2023 թվականի ցուցանիշից,
- ներդրվել է էլեկտրոնային դեղատոմսի համակարգը,
- թվայնացվել է իմունիզացիայի գործընթացը,
- մշակվել են արյան և օրգանների ռեեստրները,
- մշակվել է թվային էպիկրիզը, որն ամբողջական ներդրումից հետո հասանելի է լինելու բուժառուին իր հավելվածի միջոցով և պոլիկլինիկայի բժշկին Արմեդ համակարգով իր իրավասության շրջանակում,
- թվայնացվել է ԱԱՊ-ի կողմից զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդությունների և վիճակների բացակայության մասին բժշկական եզրակացության տրամադրման գործընթացը,
- թվայնացվել է դատավորի պաշտոնում նշանակմանը, նշանակվելուց հետո պաշտոնավարմանը խոչընդոտող հիվանդությունների և վիճակների բացակայության մասին փաստաթուղթը,
- բջջային հավելվածում ավելացել է բժշկի էջը, որտեղ նա կարող է գրանցել բուժառուի այց և դուրս գրել դեղատոմս,

- բջջային հավելվածով քաղաքացին կարող է հերթագրվել, տեսնել իր այցերը և թվայնացված տեղեկանքները (դեղատոմս, ուղեգիր և այլն):

Առողջապահության ոլորտի մարդկային ներուժի պատրաստման, մարզերի բժշկական կազմակերպությունները մասնագետներով ապահովման ուղղությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 41 բուժաշխատող աշխատել է մարզերի բժշկական կազմակերպություններում ՀՀ ԱՆ ծրագրի շրջանակներում,
- 67 բժիշկ-մասնագետ ուղեգրվել է մարզային բժշկական կազմակերպություններ նպատակային կլինիկական օրդինատուրան ավարտելուց հետո, բժիշկների 15 հրատապ ուղեգրում է կազմակերպվել Սյունիքի, Տավուշի, Գեղարքունիքի, Լոռու, Արագածոտնի, Վայոց ձորի մարզեր,
- շուրջ 1 145 բուժաշխատողի համար պետական պատվերի շրջանակներում կազմակերպվել են ՇՄՋ դասընթացներ,
- մշակվել է բուժաշխատողների ռեգիստր՝ մարդկային ռեսուրսների կառավարման և պլանավորման արդյունավետության բարձրացման նպատակով:

Աշխատանք և սոցիալական պաշտպանություն

Կառավարության 2021-2026 թվականների ծրագրով կենսաթոշակային ոլորտում թիրախավորվել է կենսաթոշակի նվազագույն չափը մինչև 2026 թվականը համապատասխանեցնել պարենային զամբյուղին, իսկ միջին կենսաթոշակը՝ նվազագույն սպառողական զամբյուղին: Ինչպես 2023-ին, այնպես էլ 2024-ին գերազանցվել է պարենային զամբյուղի համար նախանշված թիրախը՝ 2024 թվականի 4-րդ եռամսյակի ցուցանիշով նվազագույն կենսաթոշակը գերազանցում է պարենային զամբյուղը շուրջ 9,26%-ով:

2024 թվականին գործել են կենսաթոշակի և նպաստի հետևյալ չափերը.

- նվազագույն կենսաթոշակը՝ 36 000 ՀՀ դրամ,
- զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա համար սահմանված չափը՝ 1,750 ՀՀ դրամ,
- պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի չափը՝
  - ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձի համար՝ 50 600 ՀՀ դրամ,
  - ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձի համար՝ 41 400 ՀՀ դրամ,

- ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձի համար՝ 38 000 ՀՀ դրամ,
- պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի մահացած (զոհված) զինծառայողի ընտանիքի անդամի կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի չափը՝ 38 000 ՀՀ դրամ, իսկ երկու ծնողին կորցրած՝ 18 տարին չլրացած երեխայի (կամ առկա ցերեկային ուսուցմամբ սովորող զավակի) դեպքում՝ 120 000 ՀՀ դրամ,
- ծերության նպաստի չափը՝ 36 000 ՀՀ դրամ,
- հաշմանդամության տարբեր խմբերի հաշմանդամության նպաստների չափերն են՝
  - ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակումով (1-ին խմբի հաշմանդամություն) հաշմանդամություն ունեցող անձի համար՝ 39 000 ՀՀ դրամ,
  - ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով (2-րդ խմբի հաշմանդամություն) հաշմանդամություն ունեցող անձի համար՝ 37 500 ՀՀ դրամ,
  - ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակումով (3-րդ խմբի հաշմանդամություն) հաշմանդամություն ունեցող անձի համար՝ 36 000 ՀՀ դրամ:

Կենսաթոշակներն անկանխիկ եղանակով վճարման համակարգի ներդրման շրջանակում հունվարի 1-ից կենսաթոշակների և նպաստների վճարման անկանխիկ եղանակը ներդրվել է նաև 1 000 և ավելի բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերում: Արդյունքում, բացի կենսաթոշակների և նպաստների վճարման գործընթացը լավարկելուց, նվազել են պետական բյուջեի միջոցների ծախսերը, քանի որ բանկերի միջոցով անկանխիկ վճարման դեպքում ծառայությունների մատուցման վճար չի պահանջվում:

2024 թվականին լավարկվել է անկանխիկ վճարումների դեպքում կենսաթոշակառուներին և նպաստառուներին հետվճար տրամադրելու միջոցառումը: Շահառուներին հնարավորություն է տրվել անկանխիկ վճարումներից ստանալու ավելի մեծ չափով հետվճար. նախկինում կիրառվող 10%-ի փոխարեն սահմանվել է 12%, իսկ հետվճարի առավելագույն չափը՝ 5 000 ՀՀ դրամից դարձել է 6 000 ՀՀ դրամ:

2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հետվճար է հաշվարկվել 289 813 շահառուի, իսկ մեկ շահառուի գծով ամսական միջին հետվճարի չափը կազմել է 3 596 դրամ, իսկ միայն դեկտեմբերին՝ 4 357 ՀՀ դրամ (2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հետվճար է հաշվարկվել 173 827 շահառուի համար,

իսկ մեկ շահառուի գծով 2023 թվականի միջին ամսական հետվճարի չափը կազմել է 3 295 ՀՀ դրամ, միայն դեկտեմբերին՝ 3 482 ՀՀ դրամ):

Միջոցառման մեկնարկից մինչև 2024 թվականի դեկտեմբերը ներառյալ ծրագրով անկանխիկ գործարքների ծավալը կազմել է շուրջ 184,4 մլրդ ՀՀ դրամ (2023 թվականին այն կազմել է շուրջ 69,7 մլրդ ՀՀ դրամ), իսկ շահառուներին վճարված ընդհանուր հետվճարի ծավալը կազմել է շուրջ 16,5 մլրդ ՀՀ դրամ (2023 թվականին այն կազմել է շուրջ 5 մլրդ ՀՀ դրամ):

Կենսաթոշակների և նպաստների վճարման և օգտագործման անկանխիկի խթանմանն ուղղված քաղաքականության արդյունքում բանկային քարտով ստացող կենսաթոշակառուների և նպաստառուների թիվը կազմել է ավելի քան 577 հազար՝ այն դեպքում, երբ հետվճար տրամադրելու միջոցառման մեկնարկի պահին նրանց թիվը կազմում էր շուրջ 390 հազար:

«ՀՀ սահմանամերձ բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման» պետական աջակցության ծրագրի շրջանակում բազմաթիվ ընտանիքներ կառուցել և շարունակում են կառուցել իրենց սեփական տունը 80 սահմանամերձ գյուղական բնակավայրում: 2024 թվականի վերջի դրությամբ հաստատված հայտերի թիվը կազմել է շուրջ 1 990: Հաշվի առնելով ծրագրի հանդեպ մեծ պահանջարկը՝ կարգով սահմանված շահառուների թիվն ավելացվել է 400-ով՝ դառնալով 2 400: Այս ծրագրին կարող են դիմել նաև Տավուշի մարզի Բաղանիս, Բերքաբեր, Կիրանց և Ոսկեպար, Վայոց ձորի մարզի Գոմք բնակավայրերում տուն կառուցելու ցանկություն ունեցող շահառուները, ինչպես նաև նրանք, որոնք 2024 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ ստացել են շինարարության թույլտվություն:

Շարունակել է գործել զոհվածների ծնողների վերարտադրողական առողջությանն աջակցելու նպատակով 2022 թվականից մեկնարկած դոնորական ձվաբջջի ձեռքբերման և փոխնակ մոր ծառայություններից օգտվելու համար ծախսերի մասնակի փոխհատուցման ծրագիրը: Ծրագրի մեկնարկից սկսած միջոցառումից օգտվել է 230 շահառու ծնող: Միայն 2024 թվականին դոնորական ձվաբջջի ձեռքբերման ծախսերի համար փոխհատուցում է հատկացվել 41 դեպքով, որից 2-ը՝ շահառու անձանց, իսկ 39-ը՝ համապատասխան բժշկական կազմակերպություն-ներին: 14 դեպքով վճարվել է արտամարմնային բեղմնավորման երկրորդ փորձի համար: Փոխնակ մոր ծառայություններից օգտվելու համար 2024 թվականին փոխհատուցում հատկացվել է 17 շահառու անձի, որից 8-ին վճարվել է ամբողջությամբ (երեխաները ծնվել են 2024 թվականի ընթացքում), իսկ 9-ին՝ մասնակի (փոխնակ մայրերի հղիության ժամանակահատվածի համար):

«Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի շրջանակներում 12 ամսվա ամփոփմամբ սուբսիդավորվել է 6781 վարկ՝ ընդհանուր շուրջ 2 մլրդ ՀՀ դրամ ծավալով: 2024 թվականին ծրագրի շահառուների թիվը համալրվել է 678 ընտանիքով, որոնք, օգտվելով պետական սուբսիդավորումից, ձեռք են բերել բնակարան/բնակելի տուն երկրորդային շուկայից՝ 530-ը մարզերում, 148-ը Երևանում:

Շարունակվել են ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման աշխատանքները: 2024 թվականին ավանդի դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք է տրվել նաև մինչև 1941 թվականի հունիսի 30-ը ծնված անձանց: 2024 թվականի վերջի դրությամբ ավանդի դիմաց փոխհատուցում է ստացել ավելի քան 4 300 անձ, որոնց վճարվել է շուրջ 830 մլն ՀՀ դրամ: Մեկ անձին հասանելիք փոխհատուցման միջին չափը կազմել է շուրջ 186 հազար ՀՀ դրամ:

Աղքատության մակարդակը շարունակել է նվազել՝ 2022 թվականի 24,8%-ից 2023 թվականին դառնալով 23,7%, իսկ ծայրահեղ աղքատությունը 1,2%–ից՝ 1,1% (2024 թվականի մասին թարմ տվյալները կհրապարակվեն 2025 թվականի զեկույցում):

Ծայրահեղ աղքատության վերացման նպատակով շարունակվել է ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների և դրան ուղեկցող ծառայությունների տրամադրումը, միաժամանակ իրականացվել են օրենսդրական փոփոխություններ, ինչը թույլ կտա հաջորդիվ ընտանեկան և սոցիալական նպաստների փոխարեն ներդնել առավել հասցեական և արդյունավետ նպաստի տեսակ՝ անապահովության նպաստը:

Ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստառու ընտանիքների թիվը 2024 թվականի վերջին կազմել է 60 752՝ 2023 թվականի տարեվերջի համեմատ նվազելով 7 271-ով:

Շարունակվել է սոցիալական շտապօգնության համակարգի ծրագրի իրականացումը, որի նպատակն է արագ արձագանքել արտակարգ՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, անհետաձգելի օգնության կարիք ունեցող անձանց՝ սոցիալական առաջնային կարիքների բավարարման դեպքում: Ծրագիրը ներառել է դեռևս 2023 թվականին թեստավորած մեխանիզմի՝ սննդային քարտերի (բանկային քարտերով) տրամադրման գործիքը: Տարեվերջի դրությամբ աջակցություն է տրամադրվել ավելի քան 900 ընտանիքի, որից 500–ը՝ սննդային քարտերով: Ծրագիրն իրականացվել է Երևան քաղաքում և ՀՀ 4 մարզում:

2024 թվականի ընթացքում շարունակվել են զբաղվածության հետևյալ ծրագրերը՝

- ռազմական գործողություններին մասնակցած, ինչպես նաև 2020 թվականից հետո ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված գործազուրկ անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման և զբաղվածության ապահովման ծրագիրը, որում ընդգրկվել է 321 անձ, որոնցից 11-ը ունի հաշմանդամություն,
- անհայտ բացակայող կամ մահացած զինծառայողների ծնողներին մինչև երեք տարեկան երեխայի խնամքի կազմակերպման համար պետական աջակցության տրամադրման ծրագիրը, որում ընդգրկվել է 134 շահառու՝ 143 երեխայի խնամքի հարցում աջակցություն տրամադրելու համար,
- սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման ծրագիրը, որում ընդգրկվել է 1 292 շահառու, որոնցից 183-ը՝ հաշմանդամություն ունեցող անձ:

Միասնական սոցիալական ծառայության ուղեգրումների և խորհրդատվության արդյունքում աշխատանքով է ապահովվել աշխատանք փնտրող 13 329 անձ:

ԱՍՀՆ ենթակայությամբ գործող երեխայի և ընտանիքի աջակցության 6 կենտրոնը 2023-2024 թվականներին շուրջ 600 երեխայի շարունակել է տրամադրել սոցիալ-հոգեբանական, սոցիալ-վերականգնողական, իրավաբանական և կարիքահեն այլ ծառայություններ: Բացի այդ, «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» միջոցառման շրջանակում պատվիրակված ծառայություններ իրականացնող հասարակական կազմակերպությունները 2023 թվականին դրամաշնորհային մրցույթի արդյունքում պետության կողմից հասարակական կազմակերպություններին պատվիրակման շրջանակում հանրապետության 24 խոշոր համայնքում շուրջ 3 500 երեխայի տրամադրել են ցերեկային խնամքի ծառայություններ, 2024 թվականին՝ 3 610 երեխայի 13 հասարակական կազմակերպությունների կողմից՝ 31 ցերեկային կենտրոնում:

Երեխաների իրավունքների պաշտպանության մեխանիզմների հզորացման նպատակով 2023 թվականին վերապատրաստման դասընթացներ են կազմակերպվել ԱՍՀՆ ենթակայության երեխաների շուրջօրյա և ցերեկային խնամք տրամադրող հաստատություններում՝ շուրջ 2 000 մասնագետի մասնակցությամբ, 2024 թվականին վերապատրաստվել է շուրջօրյա և ցերեկային խնամք տրամադրող հաստատությունների 512 մասնագետ:

2023 թվականին նախարարության ենթակայությամբ գործող երեխաների ցերեկային խնամքի հաստատությունների կողմից ծառայություն ստացող 100 տոկոս երեխաների ծնողներին տրամադրվել է խորհրդատվություն (խորհրդատվությունների

թիվը՝ 19 122), ծնողավարման, կենցաղավարման թեմաներով 237 դասընթաց է կազմակերպվել 2 119 ծնողի մասնակցությամբ, 2024 թվականին՝ խնամք ստացող երեխաների 811 ծնողի համար էլ կազմակերպվել են ծնողավարման, կենցաղավարման դասընթացներ՝ երեխաների ընտանիքներից բաժանման ռիսկը կանխարգելելու նպատակով:

2023 թվականի ընթացքում կենտրոնացված հաշվառման է վերցվել 69 խնամատար ծնող դառնալ ցանկացող անձ, որոնցից 62-ը անցել է վերապատրաստման դասընթաց, 12 խնամատար ծնող անցել է որակավորման դասընթաց, իսկ 10 խնամատար ծնող և խնամատար ծնող դառնալ ցանկացող անձ որակավորվել է որպես մասնագիտացված խնամատար ծնող: 2024 թվականի ընթացքում վերապատրաստվել է խնամատար ծնող դառնալ ցանկացող 35 անձ, ինչպես նաև՝ 61 որդեգրել ցանկացող անձ:

2024 թվականի ընթացքում 185 երեխա խնամք է ստացել 109 խնամատար ընտանիքում: 2024 թվականի ընթացքում 16 ընտանիքի հետ առաջին անգամ է կնքվել խնամատարության պայմանագիր՝ 35 հոգեզավակի խնամք կազմակերպելու համար, և խնամատար ընտանիքներում խնամք ու դաստիարակություն ստացող 4 երեխա որդեգրվել է:

2024 թվականին որդեգրվել է 23 երեխա (որից մեկը՝ միջազգային որդեգրում), 2023 թվականին որդեգրվել էր 20 երեխա (երկուսը՝ միջազգային որդեգրում), 2022 թվականի ընթացքում՝ 20 երեխա (չորսը՝ միջազգային որդեգրում), իսկ 2021 թվականի ընթացքում 23 երեխա (հինգը՝ միջազգային որդեգրում):

2023 թվականին պետական շուրջօրյա խնամքի հաստատություններից ընտանիքների հետ վերամիավորվել է 7 երեխա, ճգնաժամային կենտրոններից ընտանիքների հետ վերամիավորվել է 80 երեխա, ոչ պետական կազմակերպություններից ընտանիքների հետ վերամիավորվել է 6 երեխա:

Պետական շուրջօրյա խնամքի հաստատություններից ընտանիքների հետ 2024 թվականին վերամիավորվել է 3, իսկ ճգնաժամային կենտրոններից՝ 49 երեխա:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու և հաշմանդամության հիմքով խտրականությունը կյանքի բոլոր ոլորտներում բացառելու նպատակով իրականացվել են մի շարք օրենսդրական փոփոխություններ:

Ապաինստիտուցիոնալացման համատեքստում իրականացվող գործընթացների շրջանակում մեկնարկել են 10 համայնքային փոքր տների կառուցման, վերանորոգման և կահավորման գործընթացներ:

2024 թվականի հունվարի 1-ից ամբողջությամբ (թե առաջին անգամ, թե կրկնակի հաշմանդամության սահմանման նպատակով դիմող անձանց նկատմամբ) գործարկվել է անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգը: Տարեվերջի դրությամբ ֆունկցիոնալության գնահատման արդյունքում հաշմանդամություն է սահմանվել 39 351 անձի համար (միջին աստիճանի սահմանափակումով՝ 29 247, ծանր աստիճանի՝ 9 130, խորը աստիճանի՝ 974):

Ներդրվել է անձնական օգնականի ծառայությունը, որից օգտվում է շուրջ 100 անձ: Պետական բյուջեի միջոցներով տրամադրվող աջակցող միջոցների թիվը շարունակաբար աճել է.

- 2022 թվականին 8 674 անձի տրամադրվել է 21 265 հատ աջակցող միջոց,
- 2023 թվականին 10 219 անձի տրամադրվել է 25 960 հատ աջակցող միջոց,
- 2024 թվականին 13 492 անձի տրամադրվել է 30 350 հատ աջակցող միջոց:

Զինվորական պատճառական կապով հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև զույգ վերին վերջույթի անդամահատում ունեցող անձանց (անկախ պատճառական կապից) տրամադրվել են ֆունկցիոնալ պրոթեզներ, որոնց թիվը նույնպես աճել է.

- 2022 թվականին պետական բյուջեով նման պրոթեզներ չեն տրամադրվել,
- 2023 թվականին 70 անձի տրամադրվել է 76 հատ պրոթեզ,
- 2024 թվականին 119 անձի տրամադրվել է 123 պրոթեզ:

Իրականացվել է «disability extra cost» ուսումնասիրություն, որի նպատակն է եղել գույքագրել հաշմանդամություն ունեցող երեխաների՝ հասարակական կյանքում լիարժեք մասնակցությունն ապահովելու համար անհրաժեշտ ծառայությունները, մշակել համապատասխան ծառայությունների փաթեթներ՝ ըստ ֆունկցիոնալ դժվարությունների (հաշվարկելով դրանց արժեքը):

Շուրջօրյա խնամքի ծառայություն է տրամադրվում տարեց և հաշմանդամություն ունեցող 1 315 անձի (2023 թվականին փաստացի տրամադրվել է 1 202, 2024 թվականին՝ 1 237 անձի):

Տարեց անձանց համար նախատեսված ցերեկային կենտրոններում ծառայություն է ստացել շուրջ 600 շահառու (2023 թվականի փաստացի ծառայություն է ստացել 296, 2024 թվականինը՝ 367 անձ):

ՀՀ բոլոր մարզերում ընդլայնվել են տնային խնամքի ծառայությունները՝ ներառելով նաև ամենօրյա խնամքի ծառայություններ անկողնային խնամքի կարիք կամ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող տարեցների համար, ծառայություն է ստացել շուրջ 1 325 անձ (2023 թվականի փաստացի ծառայություն է ստացել 1 217, 2024 թվականինը՝ 1 232 անձ):

Ընդլայնվել են մարզերում և Երևանում գործող՝ ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների կողմից տրամադրվող աջակցության տեսակներն ու մատուցվող ծառայությունները՝ ներառելով կանանց տնտեսական հզորացմանն ուղղված ծառայություններ: Տնտեսական հզորացման ծրագրերն իրականացվել են ընդհանուր թվով 6 մարզում: Շահառուների ընդհանուր թիվը կազմել է 118 անձ: 2023 թվականին՝ ծրագրի մեկնարկի առաջին տարում, շահառուների ընդհանուր թիվը կազմել է 72 անձ:

25 անձ նույնականացվել է որպես մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհ և վերասոցիալականացման ծրագրի շրջանակում ստացել է աջակցություն: 9 երեխա և հոգեկան առողջական խնդիրներ ունեցող 1 անձ ճանաչվել են որպես հատուկ կատեգորիայի զոհ: Նույնականացված բոլոր անձինք սահմանված կարգով ստացել են աջակցություն: 2023 թվականին մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհ է ճանաչվել 25 անձ (9 անձ ճանաչվել է որպես հատուկ կատեգորիայի զոհ՝ 3 հոգեկան առողջության խնդիր ունեցող անձ և 6 երեխա): Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհ ճանաչված անձինք օրենքով սահմանված կարգով օգտվել են սոցիալ-հոգեբանական աջակցության ծառայություններից:

2024 թվականի Համաշխարհային տնտեսական ֆորումի «Գլոբալ գենդերային ճեղքվածք» զեկույցում 146 երկրի շարքում Հայաստանը զբաղեցնում է 64-րդ տեղը՝ ունենալով 0,72 միավոր 0-ից 1 բալային սանդղակում:

Համեմատության համար Հայաստանը՝

- 2023 թվականին 146 երկրի շարքում զբաղեցրել է 61-րդ տեղը,
- 2022 թվականին 146 երկրի շարքում զբաղեցրել է 89-րդ տեղը,
- 2021 թվականին 156 երկրի շարքում զբաղեցրել է 114-րդ տեղը:

Երիտասարդություն

2024 թվականին երիտասարդության ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Գործարկված 5 երիտասարդական կենտրոնում (Իջևան, Մեղրի, Վանաձոր, Ապարան և Դիլիջան) կազմակերպվել է 392 միջոցառում՝ շուրջ 8700 այցելուի մասնակցությամբ:

Դրամաշնորհներ են տրամադրվել ևս 4 բնակավայրում (Ախուրյան, Ծովագյուղ, Արարատ և Կապան) երիտասարդական կենտրոններ ձևավորելու նպատակով:

Տարվա երիտասարդական մայրաքաղաք Գավառում իրականացվել են երիտասարդների կարողությունների զարգացման, իրազեկման, ինտելեկտուալ ժամանցի կազմակերպման մի շարք միջոցառումներ, որոնց մասնակցել է ավելի քան 6 520 երիտասարդ՝ նախորդ տարվա համեմատ գրանցելով մասնակցության շուրջ 56% աճ: Գավառում՝ որպես երիտասարդական մայրաքաղաք, կազմակերպվել են նաև Քաղաքացու օրվան նվիրված տարաբնույթ միջոցառումներ, այդ թվում՝ ՀՀ վարչապետի բանախոսությունը:

Իրականացվել է երիտասարդների կարողությունների զարգացման 9 միջոցառում ավելի քան 1 000 երիտասարդի համար, ինչպես նաև իրազեկման 11 միջոցառումներ, որոնց մասնակցել է շուրջ 3 800 երիտասարդ՝ նախորդ տարվա համեմատ գրանցելով 52% աճ: Միջոցառումների շրջանակներում ստեղծված հաղորդաշարերի, ինչպես նաև իրազեկման կայքերի դիտելիությունը կազմում է ընդհանուր ավելի քան 314 000 դիտում, որը շուրջ 3 անգամ գերազանցում է նախորդ տարվա նույն ցուցանիշը:

Սպորտ

2024 թվականին Հայաստանի մարզիկները նվաճել են 384 մեդալ, որից՝ 123 ոսկե, 107 արծաթե և 154 բրոնզե. նվաճած մեդալների համամասնության մեջ հաշվետու տարում աճել է ոսկե մեդալների մասնաբաժինը՝ կազմելով 32% նախորդ տարվա 28%-ի համեմատությամբ: Մեդալներից 50-ը կամ 13,8%-ը նվաճել են կանայք՝ նախորդ տարվա 25 մեդալի կամ 5,6%-ի համեմատ, իսկ Հայաստանի հաշմանդամություն ունեցող մարզիկները միջազգային մրցաշարերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում նվաճել են 37 մեդալ՝ 18 ոսկե, 9 արծաթե և 10 բրոնզե:

Սպորտի ոլորտում շուրջ 7,3 մլրդ ՀՀ դրամի պետական ներդրումներ են իրականացվել, ինչը շուրջ 3,5 անգամ ավելի է 2018 թվականի նույն ցուցանիշից:

Կառավարությունը շարունակել է միջազգային մրցաշարեր հյուրընկալելու քաղաքականությունը. հաստատվել է Ֆրանկոֆոնիայի 10-րդ մարզամշակութային խաղերը 2027 թվականին Հայաստանում անցկացնելու հայտը: Ակնկալվում է, որ խաղերը կունենան շուրջ 4 000 մասնակից ավելի քան 50 երկրից:

Երևանում անցկացվել են մի շարք միջազգային մրցաշարեր, մասնավորապես՝

- բասկետբոլի աշխարհի առաջնության ընտրական փուլի Հայաստան-Ավստրիա խաղը, որին ներկա է եղել շուրջ 4 200 հանդիսատես,
- սպորտային պարերի աշխարհի երիտասարդների լատինաամերիկյան առաջնությունը, որին մասնակցել է 31 երկրի 120 ներկայացուցիչ (Հայաստանի հավաքականը նվաճել է 1 բրոնզե մեդալ), մրցմանը ներկա է եղել 400 հանդիսատես,
- զինվորականների ըմբշամարտի աշխարհի 37-րդ առաջնությունը, որին մասնակցել է 26 երկիր՝ 407 մասնակցով (Հայաստանի բանակայինների հավաքականը նվաճել է 3 ոսկե, 3 արծաթե և 8 բրոնզե մեդալ),
- ՈՒԵՖԱ-ի ֆուտզալի չեմպիոնների լիգայի եզրափակիչ մրցաշարը, որին ներկա է եղել 10 880 հանդիսատես:

Շարունակվել են բարձր նվաճումներ ունեցող մարզիկների խրախուսման ծրագրերը:

Տարվա ընթացքում 117 մարզիկ և մարզիչ ստացել է պատվովճարներ՝ ընդհանուր շուրջ 14,4 մլն ՀՀ դրամի չափով: 2023 թվականին ցուցաբերած մարզական արդյունքների համար 2024 թվականին անվանական թոշակ է հատկացվել (այդ թվում՝ նաև վարկանիշի ձեռքբերման համար) ընդհանուր առմամբ շուրջ 432 մարզիկների և մարզիչների:

Միանվագ տարեվերջյան պարգևատրում է ստացել 178 մարզիկ, մասնավորապես՝ 53 մարզիկ ստացել է մինչև 500 000 ՀՀ դրամ, 29 մարզիկ՝ մինչև 1 մլն ՀՀ դրամ և 96 մարզիկ՝ 1 մլն ՀՀ դրամից ավելի գումար՝ տարվա ընթացքում իրենց գրանցած հաղթանակների համար:

2024 թվականին վերափոխվել է տարվա լավագույն մարզիկների մրցույթը: Սահմանվել են անվանակարգեր լավագույն 3 մարզիկներ, լավագույն կին մարզիկ, հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ, լավագույն թիմ (խաղային մարզաձևեր և շախմատ), լավագույն երիտասարդ մարզիկ, վերադարձ մեծ սպորտ և/կամ հայտնություն, Հայաստանը լավագույնս հանրահռչակած մարզիկ, լավագույն մարզիչ: Սահմանվել է նաև հանդիսատեսի համակրանք անվանակարգը՝ առցանց քվեարկությամբ՝ նպատակ ունենալով նպաստել սպորտի մասսայականաց-մանը: Հաղթողները պարգևատրվել են 6 մլն 250 հազարական ՀՀ դրամով:

Ամառային օլիմպիական խաղերին ընդառաջ՝ մինչև Փարիզ-2024 օլիմպիական խաղերի ավարտը բարձր արդյունքներ ցուցաբերած 90 մարզիկների, մարզիչների, բժիշկների և մերսողների տրամադրվել է սպորտային նպաստ, իսկ հունիսի 1-ից

մինչև օգոստոսի 1-ը սպորտային նպաստ է ստացել արդեն իսկ վարկանիշ ձեռք բերած 12 մարզիկ, նրանց մարզիչները, բժիշկներն ու մերսողները (մարզիկներից յուրաքանչյուրը վերջին երկու ամսում ստացել է ամսական 1 մլն ՀՀ դրամ):

Իրականացվել է ՀՀ վարչապետի գավաթի 5 խոշոր մրցաշար, որոնց մասնակցել է 9 603 մարդ՝ 48%-ով ավելի, քան նախորդ տարի: ՀՀ վարչապետի հովանու ներքո իրականացվել են նաև ուժային կառույցների միջև բանակային խաղեր, որին մասնակցել է ուժային և իրավապահ կառույցների 346 աշխատակից՝ նախորդ տարվա մասնակցությունը գերազանցելով շուրջ 2 անգամ:

Ընդ որում, ՀՀ վարչապետի գավաթի ևս երկու մրցաշարեր՝ սեղանի թենիսը և հեծանվավազքը, վերափոխվել են դպրոցականների շրջանում անցկացվող մրցաշարերի, որոնց մասնակցության նվազագույն շեմ է սահմանվել յուրաքանչյուր մարզի և Երևանի դպրոցների առնվազն 30%-ի չափով: Հեծանվավազքի կազմակերպման համար ձեռք է բերվել և հանրապետության բոլոր դպրոցներին է տրամադրվել շուրջ 6 500 հեծանիվ: «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» խորագիրը կրող 3 մարզական մրցաշարերը՝ սիրողական սեղանի թենիս, դպրոցականների թիմային խճուղավազք և խճուղային հեծանվավազքի սիրողական մրցաշարեր, այսպիսով, անցկացվում են դպրոցահասակ երեխաների շրջանում ճամբարային ձևաչափով:

Անցկացվել է մարզական մասսայական 5 միջոցառում, որոնց մասնակիցների թիվը կազմել է 40 634: Ընդհանուր առմամբ, բոլոր մարզական մասսայական միջոցառումներին, այդ թվում՝ հովանավորչական միջոցներով, 2024 թվականի ընթացքում մասնակցել է 50 583 մարդ՝ ապահովելով շուրջ 27%-ով ավելի մասնակցություն նախորդ տարվա համեմատ:

Անցկացվել են նաև ուսանողական խաղեր 11 մարզաձևից՝ 15 բուհի շուրջ 1 000 ուսանողի մասնակցությամբ:

Ոլորտում շարունակվել են ենթակառուցվածքների զարգացման ծրագրերը, մասնավորապես՝ 98 մարզական կառույցի հատկացվել է 146 անվանում մարզական գույք:

Ավարտվել է Արմավիրի մարզի Ջրառատ համայնքի՝ Սիմոն Մարտիրոսյանի անվան ծանրամարտի մարզադահլիճի կառուցումը, կառույցն ապահովվել է մարզագույքով:

Շարունակվել են՝

- «Արթուր Ալեքսանյանի անվան հունահռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան դպրոց» նոր սպորտային համալիրի կառուցման աշխատանքները,
- Հեծանվային սպորտի և Հրանտ Շահինյանի անվան սպորտային, գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցների շենքերի կառուցման աշխատանքները,
- «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի մարզադահլիճների վերակառուցման աշխատանքները,
- Երևանում, Արտաշատում, Իջևանում և Մարտունիում ֆուտբոլային չորս դպրոցների կառուցման աշխատանքները:

Ընթացքում են Արթուր Աբրահամի, Վիկ Դարչինյանի, Ռոման և Մալխաս Ամոյանների անվան մարզադպրոցների կառուցման նախապատրաստական աշխատանքները, ամփոփվում է Զովունիում թեթև կոնստրուկցիաներով մարզադահլիճի հիմնման նախագծի փորձաքննությունը:

Միաժամանակ, մասնավոր ոլորտի գործընկերների հետ քննարկվել է մարզային բնակավայրերում տիպային մարզահամալիրների կառուցման և հետագա շահագործման հնարավորությունը, ինչի շրջանակներում կնքվել է հուշագիր ԿԳՄՍ նախարարության և մասնավոր սպորտային համալիրի միջև՝ Եղեգնաձորում, Մարտունիում և Արարատում նման կառույցներ ձևավորելու և շահագործելու ուղղությամբ:

Սպորտի ոլորտում մի շարք ուղղություններով մեկնարկել են բարեփոխումների գործընթացներ, մասնավորապես՝ ստեղծվել է «Սպորտի կառավարման կենտրոն» ՓԲԸ, որը հանդիսանում է սպորտային ենթակառուցվածքների գույքային կառավարիչը և ֆեդերացիաներին տրվող պետական ֆինանսավորման կառավարիչը՝ իրականացնելով անհրաժեշտ գնումների և հաշվապահական գործընթացները, ինչը կմեծացնի գործընթացի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը և կնպաստի արդյունավետության աճին:

Ֆեդերացիաներին պետական աջակցությունը տրամադրվում է ֆինանսավորման նոր կարգով, որով սահմանվել են հստակ չափորոշիչներ, ինչպես նաև հավելյալ գործակիցներ՝ կախված տվյալ մարզաձևում մարզիկների ցուցաբերած արդյունքներից:

Մեկնարկել է մասնավորի հետ համագործակցության նոր ծրագիր, որի շրջանակներում մարզերում տեղակայված լողավազաններին տրվում է ֆինանսավորում դպրոցահասակ երեխաների լողի պարապմունքների համար: Ծրագիրն արդեն իսկ իրականացվում է Ապարանում:

Կատարվել են փոփոխություններ «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքում, որով կկարգավորվի ֆիթնես կենտրոնների գործունեությունը, ինչպես նաև վերջիններիս մարզիչների համար կսահմանվի հավաստագրման կարգ (օրենսդրական նախաձեռնությունն առաջին ընթերցմամբ ընդունվել է ԱԺ կողմից):

Մշակույթ

2024-2025 ուսումնական տարին հայտարարվել է մշակութային կրթության տարի, որի շրջանակներում բոլոր մարզերում կազմակերպվել են մշակութային էքսպոներ, որոնց շրջանակներում դպրոցներն իրազեկվել են մշակութային հաստատությունների գործունեության վերաբերյալ: Էքսպոներին մասնակցել է 10 մարզի 65 մշակութային կազմակերպություն (թանգարաններ, թատրոններ, համերգային կազմակեր-պություններ), որոնք միացած են դպրոցական բաժանորդային համակարգին: Էքսպոներն ունեցել են ընդհանուր շուրջ 27 000 այցելու:

Մշակութային կրթության տարվա շրջանակներում էապես ավելացել են «Դպրոցական բաժանորդային համակարգ» ծրագրի շրջանակում այցելությունները թանգարաններ և թատրոններ՝ շուրջ 300 000 աշակերտ, ինչը 30,5%-ով գերազանցում է նախորդ տարվա նույն ցուցանիշը և ընդգրկում է հանրակրթական դպրոցներում սովորողների շուրջ 70%-ը:

Իրականացվել է 21 մանկապատանեկան կրթամշակութային ծրագիր (նախորդ տարվա 18-ի համեմատ), որոնցում ընդգրկվել է շուրջ 31 250 մասնակից՝ 49%-ով ավելի, քան նախորդ տարում:

Ներառականության ապահովման շրջանակներում իրականացվել է 10 թիրախային ծրագիր՝ 1 800 շահառուների մասնակցությամբ (շուրջ 30%-ով ավելի նախորդ տարվա համեմատ):

Առաջին անգամ կազմակերպվել է հեղինակային երգի մրցույթ-փառատոն դպրոցահասակ երեխաների և երիտասարդների շրջանում՝ համապատասխան դրամական պարգևներով (9 հաղթող մասնակիցները և 6 մանկավարժները՝ 362 500-ական ՀՀ դրամ, 5 ուսումնական հաստատությունները՝ 1,5-ական մլն ՀՀ դրամ), սահմանված է նաև 5 հատուկ մրցանակ՝ 250 000-ական ՀՀ դրամի չափով:

Գրադարաններում և թանգարաններում իրականացվել է ավելի քան 1800 կրթամշակութային ծրագիր, որին մասնակցել է շուրջ 38820 այցելու, ինչը մոտ 29%-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը:

Պետական և համայնքային թանգարաններ այցելության ընդհանուր թիվն աճել է՝ կազմելով շուրջ 1,245 մլն (նախորդ տարվա նույն թիվը կազմել է 1,228 մլն):

Արգելոց-թանգարանների այցելուների թիվը կազմել է ավելի քան 763 000 (նախորդ տարվա նույն թիվը կազմել է 750 400):

Թանգարանների սեփական եկամուտները գրեթե կրկնապատկվել են 2022 թվականի համեմատ՝ կազմելով շուրջ 1,4 մլրդ ՀՀ դրամ:

Թանգարանների միջազգային օր և «Թանգարանների գիշեր» համաեվրոպական միջոցառումներին միացել է Հայաստանի 118 թանգարան, որոնք սպասարկել են շուրջ 159 000 այցելու (շուրջ 40 000-ով գերազանցելով 2023 թվականի նույն ցուցանիշը):

Իրականացվել են 15 հուշարձանների վերականգնման աշխատանքներ՝ կրկնակի ավելի նախորդ տարվա համեմատ (34-ն ավարտված, 12-ը շարունակական), մշակվել կամ մշակման փուլում են ևս 9 հուշարձանի ամրակայման, նորոգման և վերականգնման գիտանախագծային փաստաթղթեր: Այս նպատակներով պետական բյուջեից ծախսվել են նախորդ տարվա համեմատ կրկնակի միջոցներ՝ շուրջ 884 մլն ՀՀ դրամ:

Ավարտվել են պետականության խորհրդանիշ հանդիսացող հուշարձանների՝ Բերդկունքի ամրոցի, Հորսի Չեսար Օրբելյանի պալատի, Օրբելյանների (Սելիմի) քարավանատան վերականգնման գիտանախագծային փաստաթղթերի կազմման աշխատանքները, ընթացքի մեջ են Աղձքի հայոց արքաների դամբարանի, Տափի բերդի, Բաղաբերդի, Սմբատաբերդի վերականգնման գիտանախագծային փաստաթղթերի կազմման աշխատանքները:

Շարունակել են հատուկ ուշադրության կենտրոնում մնալ որմնանկարների վերականգնման աշխատանքները, վերականգնվել են Վայոց ձորի մարզի Գնդեվազի Սուրբ Աստվածածին եկեղեցու որմնանկարները:

Ազգային փոքրամասնությունների հուշարձանների վերականգնման միջոցառումների ներքո մեկնարկել է Լոռու մարզի Ամրակիցի Սուրբ Նիկոլայ Հրաշագործ եկեղեցու վերականգնումը:

Հուշարձանների վերականգնման համատեքստում մի շարք նախագծերում ներառվել է քայլուղիների բարեկարգում՝ հուշարձանները զբոսաշրջիկներին առավել հասանելի դարձնելու համար (Ամբերդ ամրոց, Լոռի բերդ, Երերույք և այլն): Լոռի բերդում սկսվել է նաև տեղեկատվական մոդուլային կենտրոնի կառուցումը:

Ընթացել են Արտաշատ մայրաքաղաքի համալիր վերականգնման և զբոսաշրջային ակտիվ այցելավայրի վերածման աշխատանքները:

Մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ իրականացվել են ևս 6 հուշարձանի վերականգնման աշխատանքներ:

Պետության սեփականությունը չհանդիսացող հուշարձանների պատշաճ պահպանության նպատակով կնքվել են ավելի քան 240 պահպանագրեր սեփականատերերի հետ:

Կառավարության որոշումներով ստեղծվել են «Երերույք», «Հին Խնձորեսկ», «Բերդկունք ամրոց», «Նորատուսի խաչքարեր» և «Տափի բերդ» պատմամշակութային արգելոցները:

29 տարվա ընդմիջումից հետո ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության նախնական ցանկում Հայաստանից նոր հուշարձան է ընդգրկվել՝ «Տիրինկատարի վիշապաքարերը և մշակութային լանդշաֆտը»:

Գործարկվել է թանգարանների էլեկտրոնային տոմսային միասնական համակարգը, որին միացել է 26 թանգարան, գործարկվել է համակարգի բջջային հավելվածը և եռալեզու կայքը՝ museumsarmenia.am: Համակարգի միջոցով հասանելի է դարձել թանգարաններում վաճառված տոմսերի մասին մանրամասն տեղեկատվությունը, ինչը թափանցիկ և տեսանելի է դարձնում ոլորտի գործունեությունը: Համակարգը նաև նոր պայմաններ է ստեղծում տարբեր թանգարանների միասնական տոմսերի, զբոսաշրջային փաթեթների հետ համադրման, թանգարանային հուշանվերների առցանց վաճառքի և այլ ուղղություններով:

2024 թվականից վերականգնված թանգարանային հավաքածուների համալրման ծրագրով 3 թանգարան («Հայաստանի ազգային պատկերասրա» ՊՈԱԿ-ը, «Ե. Չարենցի տուն-թանգարան» ՊՈԱԿ-ը և Հ. Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարան» ՊՈԱԿ-ը) հնարավորություն է ստացել ձեռք բերել 8 նոր մշակութային արժեք:

«Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ-ում բացվել է «Մայր Աստվածություն. Անահիտից Մարիամ» միջազգային ցուցահանդեսը:

Առաջին անգամ Հայաստանում ցուցադրվել են Բրիտանական թանգարանում ցուցադրվող Անահիտ Աստվածուհու արձանի մասունքները՝ գլուխը և ձեռքը: Ցուցադրությունը երեք ամսվա ընթացքում ունեցել է ավելի քան 16 800 այցելու:

Ֆրանսիայի հնագիտության ազգային թանգարանի հետ համագործակցությամբ բացվել է «Երեկ և այսօր. Ժակ դը Մորգանի հետքերով» միջազգային ցուցահանդեսը, որը միայն տարեվերջի երկու շաբաթվա ընթացքում ունեցել է շուրջ 4 700 այցելու:

Թանգարանների վարչատնտեսական գործունեության միասնական կառավարման և մարքեթինգային միասնական քաղաքականության իրականացման նպատակով ձևավորվել է Մշակույթի զարգացման հիմնադրամը: Իրականացված նախապատրաստական աշխատանքների արդյունքում 2025 թվականից արդեն իսկ կմեկնարկի թանգարանների գնումների, հաշվապահության և այլ վարչատնտեսական գործառույթների իրականացումը հիմնադրամի կողմից՝ կենտրոնացված կարգով:

Շարունակվել է ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկերի համալրման գործընթացը: 51 տարրից կազմված ցանկը համալրվել է ևս 17-ով: Համալրվել է նաև ոչ նյութական մշակութային ժառանգության շտեմարանը, որում ներառվել է Հայաստանի համայնքներում կիրառվող ևս 150 ուտեստ (ներկայում ուտեստի շտեմարանը բաղկացած է 400 ուտեստից՝ նախորդ տարվա 250-ի համեմատ):

«Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ-ն իր հավաքածուով մասնակցել է Իտալիայի Հանրապետությունում՝ Վենետիկի Դոժերի պալատում, «Մարկո Պոլո» խորագրով ցուցադրությանը:

Ֆրանսիայի Հանրապետությունում Միսաք Մանուշյանին նվիրված պետական միջոցառումների շրջանակում «Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան» ՊՈԱԿ-ը կազմակերպել է Միսաք Մանուշյանին նվիրված ցուցադրություն:

Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահում «Ռուսական արվեստի թանգարան (պրոֆ. Ա. Աբրահամյանի հավաքածու)» ՊՈԱԿ-ը կազմակերպել է «Մոսկվա-Երևան-Մոսկվա. Ռուսական արվեստի թանգարանը (պրոֆ. Ա. Աբրահամյանի հավաքածու) թանգարանը Երևանում» խորագրով ցուցահանդես:

Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության՝ Հայաստանի նախագահության շրջանակում ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքում

կազմակերպվել է արհեստների միջազգային 3-րդ փառատոնը, որին մասնակցել են 5 անդամ պետություններ: Փառատոնն ունեցել է 1000-ից ավելի այցելու:

Շարունակվել է թատերահամերգային կազմակերպությունների ֆինանսավորման նոր մոդելի ներդրումը, որին, բացի Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնից, միացել է նաև Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնը: Նոր մոդելը հնարավորություն է տվել ծավալել ավելի ինտենսիվ մշակութային գործունեություն, մասնավորապես՝ օպերային թատրոնում կայացել է 250 ներկայացում և 5 առաջնախաղ՝ շուրջ 150 000 հանդիսատեսի ընդգրկմամբ, ապահովելով մինչև 20% տարեկան եկամուտների աճ և 37% աշխատավարձերի բարձրացում: Տիկնիկային թատրոնում անցկացվել է 745 ներկայացում և 7 առաջնախաղ՝ շուրջ 115 000 հանդիսատեսի ընդգրկմամբ, ապահովելով մինչև 35% տարեկան եկամուտների աճ և մինչև 50% աշխատավարձերի բարձրացում:

Մշակութային հաստատությունների պայմանների ու միջավայրի բարելավման շրջանակներում շարունակվել են նորոգման աշխատանքները 7 հաստատությունում, որոնց համար հատկացվել է ավելի քան 200 մլն ՀՀ դրամ՝ շենքային պայմանների բարելավման նպատակով և ավելի քան 200 մլն ՀՀ դրամ՝ գույքով ու երաժշտական գործիքներով համալրելու նպատակով:

Առաջին անգամ մեկնարկել է մշակույթի ոլորտի միջազգային հեղինակավոր փառատոների և մրցանակաբաշխությունների մասնակցած և մրցանակի արժանացած մշակույթի գործիչներին ամսական դրամական խրախուսում տրամադրելու ծրագիրը: Ամսական դրամական խրախուսումը կազմել է 130 000 – 800 000 ՀՀ դրամ: Ծրագրի շրջանակում 4 արվեստագետի և 4 կազմակերպության հատկացվել է շուրջ 53 մլն ՀՀ դրամ գումար:

Թատրոնի միջազգային օրվան ընդառաջ առաջին անգամ կազմակերպվել է թատերական շաբաթ, որին միացել են Երևանի և մարզերի բոլոր պետական թատրոնները: Շաբաթվա շրջանակներում թատրոններ է այցելել մոտ 5 000 հանդիսատես, դպրոցականների համար կազմակերպվել են վարպետության դասեր, շրջայցեր թատրոններ, հանդիպումներ անվանի և ճանաչված դերասանների ու ռեժիսորների հետ:

Անհատ ստեղծագործողներին և ինքնազբաղ արվեստագետներին օժանդակելու նպատակով Հայաստանում կազմակերպվել է 161 համերգ 137 անհատ կատարողի մասնակցությամբ:

22 խումբ և 24 անհատ կատարող մասնակցել են 15 երկրում միջազգային կարևոր փառատոների, մրցույթների, բիենալեների և վարպետության դասերի: Անհատ կատարողների և արվեստի գործիչների վերոնշյալ փառատոներին, մրցույթներին մասնակցելու նպատակով՝ պետական բյուջեից հատկացվել է շուրջ 22,5 մլն ՀՀ դրամ գումար, միայն 24 անհատ կատարողի համար հատկացումը կազմել է շուրջ 6,8 մլն ՀՀ դրամ**:**

Հայաստանը մասնակցել է Վենետիկի արվեստի 60-րդ միջազգային բիենալեին, որին ներկայացրել է պաշտոնական տաղավար՝ Նինա Խեմչյանի «Արձագանք» նախագիծը և ոչ պաշտոնական տաղավար՝ «Akneye» նախագիծը:

Մշակույթի ապակենտրոնացման, մարզերում մշակութային կյանքի ակտիվացման նպատակով իրականացվել է 9 երաժշտական փառատոն՝ ավելի քան 73 600 հանդիսատեսի և 3 թատերական փառատոն՝ շուրջ 14 000 հանդիսատեսի ընդգրկմամբ:

Տարվա ընթացքում նշվել է 18 հոբելյան: Հատկապես մեծ հանդիսավորությամբ Հայաստանում և արտերկրում նշվել են Շառլ Ազնավուրի և Սերգեյ Փարաջանովի ծննդյան 100-ամյակները (հոբելյաններն ընդգրկվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի հռչակավոր մարդկանց և կարևոր իրադարձությունների 2024-2025 թվականների օրացույցում), Երվանդ Քոչարի և Պարույր Սևակի հոբելյանները:

Սերգեյ Փարաջանովի ծննդյան 100-ամյակի շրջանակում կազմակերպվել է 21 միջոցառում, այդ թվում՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում:

Շառլ Ազնավուրի հոբելյանական ծրագրերի շրջանակներում կազմակերպվել է 16 միջոցառում, այդ թվում՝ Ջազ նվագախմբի Ազնավուրյան համերգային ծրագիրը 8 երկրում (10 համերգ) և Հայաստանի պետական կամերային նվագախմբի համերգները 5 երկրում (8 համերգ):

Հայաստանում և արտերկրում մեծ հանդիսավորությամբ նշվել է Երվանդ Քոչարի ծննդյան 125-ամյակը:

Նոյեմբերի 27-ին Փարիզի հեղինակավոր Պոմպիդու կենտրոնում կազմակերպվել է հոբելյանական միջոցառում՝ նվիրված երկու մեծանուն մտավորականներ Երվանդ Քոչարին և Սերգեյ Փարաջանովին:

Կինոյի ոլորտում ընթացել է ակտիվ օրենսդրական աշխատանք՝ ոլորտը կարգավորելու և համակարգային փոփոխություններ իրականացնելու նպատակով: Ստեղծվել և սկսել է նոր տրամաբանությամբ գործել Հայաստանի կինոյի հիմնադրամը:

Մշակվել է կինոյի ոլորտում ներդրումների մասնակի վերադարձի կարգավորման փաթեթը, որը կգործարկվի 2025 թվականից:

Պետական ֆինանսավորում ստացած ֆիլմերից 9-ը մասնակցել է 24 միջազգային կինոփառատոնի՝ շահելով 11 մրցանակ:

Զառա Ջյանի «Ես վրեժխնդիր կլինեմ աշխարհից սիրո միջոցով» վավերագրական ֆիլմն ընդգրկվել է Վենետիկի 81-րդ միջազգային կինոփառատոնի «Վենետիկի կլասիկներ» բաժնի մրցութային ծրագրում և Մար Դել Պլատայի միջազգային կինոփառատոնում Սերգեյ Փարաջանովի 100-ամյակին նվիրված հատուկ ցուցադրությունների ծրագրում (FIAPF- International Federation of Film Producers Associations- դասակարգման հեղինակավոր կինոփառատոներ):

Կազմակերպվել է Գրքի երևանյան միջազգային փառատոնը՝ շուրջ 50 հրատարակչությունների, գրավաճառների և մշակութային կազմակերպությունների մասնակցությամբ, որն ունեցել է շուրջ 30 000 այցելու՝ կրկնակի ավելի նախորդ տարվանից, վաճառվել է շուրջ 12 000 գիրք (շուրջ 20%-ով ավելի, քան նախորդ տարի):

Կազմակերպվել է 27 միջոցառում (5 անգամ ավելի է, քան նախորդ տարի)՝ 6 երկրից 250 գրողների, քննադատների և թարգմանիչների մասնակցությամբ: Աջակցություն է տրամադրվել 10 լեզվով 20 գրքի թարգմանությանը (նախորդ տարի աջակցություն է տրամադրվել 9 լեզվով 17 գրքի համար):

«Ստեղծագործ Եվրոպա»-ի շրջանակներում 2024 թվականին Հայաստանից հաստատվել է 5 համագործակցային հայտ, շուրջ 250 000 եվրո ընդհանուր բյուջեով՝ նախորդ տարվա 150 000 եվրոյի համեմատ:

Կազմակերպվել են Հայաստանի մշակույթի օրերը Ղազախստանում և Թուրքմենստանում:

Շրջակա միջավայր

Ընդունվել են «Էկոպարեկային ծառայության մասին» օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերը՝ ապահովելով օրենքով վերապահված լիազորությունների փուլային իրականացումն ըստ մարզերի: Մեկնարկել են Սյունիքի մարզային վարչության 3 տեղամասի վերանորոգման, կահավորման և տեխնիկական վերազինման աշխատանքները, ինչպես նաև թափուր պաշտոն-ների համալրման գործընթացը:

Ստեղծվել է ինստիտուցիոնալ համակարգ՝ կլիմայի փոփոխության վերաբերյալ երկրի ստացած ֆինանսների, մեղմման քաղաքականությունների և միջոցառումների, ինչպես նաև ջերմոցային գազերի արտանետումների վերաբերյալ շարունակական տեղեկատվության հավաքագրման նպատակով:

ՀՀ ջրային օրենսգրքում փոփոխությունների արդյունքում ամրագրվել է պահանջ, համաձայն որի հորից ջրօգտագործման դադարեցման դեպքում լուծարման կամ կոնսերվացման աշխատանքներն իրականացվելու են բացառապես շինարարության իրականացման (հիդրոտեխնիկական կառուցվածքների) լիցենզիա ունեցող անձինք՝ ջրօգտագործողի միջոցներով:

Արգելվել է լուծարված, իսկ առանց ջրօգտագործման թույլտվության նաև կոնսերվացված հորատանցքերի վերաբացումը: 2024 թվականի հուլիսի 1-ից մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսներից ապօրինի ջրօգտագործման դեպքերի համար սահմանվել են տարբերակված վարչական տույժեր: Սահմանվել է քրեական պատասխանատվություն լուծարված հորատանցքերը վերաբացելու կամ առանց ջրօգտագործման թույլտվության ստորերկրյա ջրային ռեսուրսներից ջրօգտագործում իրականացնելու կամ առանց ջրօգտագործման թույլտվության հորատելու կամ կոնսերվացված հորատանցքերը վերաբացելու համար՝ 500 հազար ՀՀ դրամից ավելի գույքային կամ այլ էական վնասի դեպքում:

Սահմանվել են Արարատյան դաշտի՝ Արարատի և Արմավիրի մարզերի այն համայնքները, որտեղ արգելվում է նոր հորատանցքերի միջոցով, իսկ ձկնաբուծական նպատակներով նաև գործող հորատանցքերի միջոցով, նոր ջրօգտագործման թույլտվությունների տրամադրումը:

Սահմանվել են հեղեղումների վտանգների և դրանց առաջացման ռիսկերի քարտեզներին ներկայացվող պահանջները և բովանդակությունը, որոնք հիմք կհանդիսանան ջրերի վնասակար ներգործության ռիսկերի կառավարման պլանների մշակման համար:

Իրականացվել է ջրային պետական կադաստրի թարմացում և վերազինում, որը հասանելի է http://swcadastre.env.am հղումով, ապահովվել է անվճար տեղեկատվության ստացման հնարավորությունը բոլոր շահագրգիռ կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց համար:

Գործարկվել է փաստացի ջրառի տվյալների առցանց փոխանցման միասնական հարթակը: 2024 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ 1 327 տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարք արդեն միացված է https://scada.env.am հարթակին:

Արձանագրվել է Սևանա լճի մակարդակի բարձրացում. 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Սևանա լճի մակարդակը կազմում է 1 900,39 մ, որը հունվարի 1-ի մակարդակի համեմատ բարձր է 22 սմ-ով:

Սևանա լճից բաց թողնված ջրի գումարային ծավալը կազմել է շուրջ 131 մլն մ^3, որը շուրջ 97,2 մլն մ^3-ով պակաս է 2023 թվականի ծավալից և վերջին 15 տարիների ամենացածր ցուցանիշն է:

Արփա-Սևան ջրատարով Սևանա լիճ տեղափոխված ջրի քանակը հաշվետու տարում կազմել է 185,1 մլն մ^3, որը շուրջ 70,7 մլն մ^3-ով ավելի է նախորդ տարվա շուրջ 114,5 մլն մ^3 ցուցանիշից:

Առաջին անգամ Սևանա լճի ջրի որակի մոնիթորինգային աշխատանքների իրականացման համար 2024 թվականից սկսած պետական բյուջեից հատկացվել է շուրջ 60 մլն դրամ:

Շարունակվել են պետական բյուջեից ֆինանսավորվող Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացմանն ուղղված գործընթացի շրջանակներում մանրաձկան բացթողնման աշխատանքները, ընդհանուր բաց է թողնվել շուրջ 390 000 հատ ամառային և գեղարքունի ենթատեսակների մանրաձուկ՝ նախորդ տարվա շուրջ 232 000 հատ գեղարքունի տեսակի դիմաց:

Աշխատանքներ են իրականացվել Սևանա լճում եզակի և էնդեմիկ համարվող Սևանի կողակ ձկնատեսակի պոպուլյացիայի վերականգնման ուղղությամբ, հավաքվել է ծնողական կազմի 2 000 առանձնյակ, որը հենք կհանդիսանա 2025 թվականից վերարտադրության իրականացման համար:

2024 թվականին սահմանվել է սիգի արդյունագործական որսի 679 տոննա չափաքանակ, որից փաստացի որսվել է շուրջ 652,6 տոննա: Վճարվել է շուրջ 44 մլն ՀՀ դրամ բնօգտագործման վճար, որը մոտ 19 մլն ՀՀ դրամով ավելի է նախորդ տարվա ցուցանիշից:

Ընդունվել է սիգի ապօրինի որսի և վաճառքի պատասխանատվությունը խստացնող օրենք, վարչական տուգանքի չափերը բարձրացվել և սահմանվել են 300-600 հազար ՀՀ դրամ, 150 հազար ՀՀ դրամից ավելի վնասի դեպքում սահմանվել է քրեական պատասխանատվություն:

2023 թվականի հունվարի 2-ից սահմանվել և մինչ այսօր գործում է սիգի ձկնկիթի արտահանման արգելքը:

Սևանա լճից դուրս է բերվել ապօրինի 2 699 խեցգետնորսիչ, 1 376 ձկնորսական ցանց, 69 լողամիջոց:

Իրականացվել են Բնապահպանական ազգային պորտալի թարմացման աշխատանքներ, ստեղծվել է «Սևանա լիճ» բաժինը, որտեղ զետեղվում է լճի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը:

Վայրի բնություն է բաց թողնվել բնության մեջ անհետացած համարվող ազնվացեղ եղջերուների 10 առանձնյակ:

Առաջին անգամ կանոնակարգվել է վայրի կենդանիների, անազատ և կիսաազատ պայմաններում պահման, առք ու վաճառքի, ինչպես նաև վայրի կենդանիների օգտագործման ոլորտը:

201 գույքագրման ենթակա հուշարձաններից գույքագրվել է 50 բնության հուշարձան՝ նախորդ տարվա 31-ի համեմատ:

Կանոնակարգվել են միասնական իրավական հարթությունում անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքների ռեկրեացիոն և տնտեսական գոտիների անտառներում հատատեղերի հատկացման և բնափայտի մթերման և անտառավերականգնման ու անտառապատման աշխատանքների իրականացման գործընթացները, ինչպես նաև հաստատվել են անտառների կայուն կառավարման չափորոշիչները և ցուցանիշները, որոնց միջոցով իրականացվելու է հետևողական մոտեցում անտառային ոլորտի կայուն կառավարման առաջընթացի գնահատման և առաջարկությունների ներկայացման համար:

Իրականացվել են 337,4 հա անտառվերականգնման ու անտառապատման աշխատանքներ: Աճեցվել է շուրջ 677 500 հատ փակ արմատային համակարգով տնկանյութ, հիմնադրվել 9 հա տնկարան:

Անտառամերձ բնակավայրերի 7 473 շահառուի տրամադրվել է ընդհանուր շուրջ 41 843 խմ պահեստային թափուկ վառելափայտ:

Կնքվել է պետական անտառների և անտառային հողերի 48 վարձակալության պայմանագիր, որոնցով սահմանված ներդրումային պարտավորության ընդհանուր չափը կազմել է շուրջ 6,4 մլրդ ՀՀ դրամ, իսկ տարեկան վարձավճարների հանրագումարը՝ շուրջ 20 մլն ՀՀ դրամ:

Ոլորտի կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեությունից մուտքերը 2023 թվականի համեմատ աճել են շուրջ 380 մլն ՀՀ դրամով կամ 15%-ով,

որից բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարումն իրականացնող կազմակերպությունների գծով դրանք աճել են շուրջ 99 մլն ՀՀ դրամով կամ 18,5 %-ով:

Մշակվել է բնության հատուկ պահպանվող տարածքների, պետական անտառների և անտառային հողերի օգտագործման տրամադրման մեկ միասնական ընթացակարգ, որով սահմանվել են ներդրումային ծրագրերի իրականացման պարտադիր միջոցառումներ, ծրագրերի գնահատման նոր հստակ չափորոշիչներ և մեթոդներ:

Կանոնակարգվել են սնդիկի ներմուծման և արտահանման ընթացակարգերը:

Ձեռք բերված 20 ավտոմատ օդերևութաբանական կայանները և 20 հավելյալ օդերևութաբանական տվիչները միացվել են տվյալների առցանց ստացման և վիզուալիզացման միասնական համակարգին:

Ընդլայնվել է ոլորտի ծառայությունների մատուցման թվայնացման շրջանակը, գործարկվել է https://nature.e-gov.am հարթակը, շարունակում է գործել www.trade.gov.am հարթակը, որոնց միջոցով հնարավոր է առցանց վճարում կատարելով էլեկտրոնային եղանակով ստանալ համապատասխան թույլատվական փաստաթուղթը: Ընդհանուր առմամբ ոլորտի 29 թույլատվական փաստաթղթերից էլեկտրոնային եղանակով տրամադրվում է 12-ը:

«Զվարթնոց», «Շիրակ» և «Սյունիք» օդանավակայաններում թռիչքների անվտանգության մակարդակը բարձրացնելու նպատակով շահագործման է հանձնվել գերժամանակակից ինովացիոն տեխնոլոգիաներով հագեցած 3 օդերևութաբանական կայան, ինչպես նաև «Շիրակ» միջազգային օդանավակայանի թռիչքադաշտում անցկացվել է շուրջ 1 600 մ օպտիկամանրաթելային կապուղի և համակցվել նախորդ տարի տեղադրված 3 000 մ-ին՝ օդերևութաբանական համակարգերն ապահովելով հուսալի ինֆորմացիոն կապուղիներով:

Հաստատվել են շուրջ 1 մլրդ ՀՀ դրամի շրջանակներում բնապահպանական սուբվենցիաներ՝ 2025 թվականին 15 ազդակիր համայնքում բնապահպանական և առողջապահական միջոցառումների իրականացման նպատակով: 2024 թվականին բնապահպանական սուբվենցիաները կազմել են շուրջ 323 մլն ՀՀ դրամ՝ 5 համայնքի համար:

Միջազգային բնապահպանական կազմակերպությունների ֆինանսավորմամբ ընդհանուր առմամբ իրականացվում է 5 տարածաշրջանային և 29 ազգային (մոտ 100 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր բյուջեով) դրամաշնորհային ծրագիր, որից 2024 թվականի ընթացքում հաստատվել և մեկնարկել է 12-ը՝ շուրջ 13 մլն ԱՄՆ դոլար բյուջեով:

«Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ծրագրի և համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի տրամադրման գործընթացի շրջանակներում համաֆինանսավորվել են 15 շենքի (5 բնակելի և 10 հասարակական) էնեգաարդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքները, շահառուների թիվը կազմել է շուրջ 50 000, ջերմոցային գազերի արտանետումների տարեկան կրճատումը գնահատվել է շուրջ 21 000 տ CO_2: Ընդհանուր առմամբ ծրագրի օժանդակությամբ և համաֆինանսավորմամբ ջերմաարդիականացվել է շուրջ 220 շենք, որից շուրջ 160-ը՝ բնակելի:

Գործնական փուլ է մտել Գերմանիայի վերականգնման վարկերի բանկի (KfW) 26 մլն եվրո բյուջեով դրամաշնորհային ծրագիրը, որն ուղղված է Լոռու, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Տավուշի և Սյունիքի մարզերում կենսաբազմազանության պահպանությանը, անտառների կառավարմանը և հարակից համայնքներում սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

Մեկնարկել է «Հայաստանի դիմակայուն լանդշաֆտներ» շուրջ 9,1 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր գումարի դրամաշնորհային ծրագիրը, որի շրջանակներում կիրականացվեն Կավարտի լքված հանքավայրի ռեկուլտիվացիայի համար տեխնիկատնտեսական հիմնավորման կազմման և Հյուսիսային Կապանի լցակույտի ու Տանձուտի բացահանքի ռեկուլտիվացիա, ջրաճահճային և անտառային տարածքների վերականգնման, համայնքային անտառտնտեսության կառավարման բարելավման, էկոտուրիզմի զարգացման աշխատանքները:

ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Ընտրական իրավունք և ինստիտուցիոնալ ժողովրդավարություն

«Gallup» ընկերության կողմից 2024 թվականին հրապարակված «Օրենք և կարգ» զեկույցում 140 երկրից/տարածքից Հայաստանի ցուցանիշը 2023 թվականի համար հնարավոր 100-ից 85% է, ինչը 1%-ով ավելի է 2023 թվականին հրապարակված զեկույցում արձանագրված ցուցանիշի համեմատ: Զեկույցը նպատակ ունի ցույց տալու, թե մարդիկ որքան անվտանգ են զգում իրենց տվյալ երկրում, և թե որքան է իրավապահ մարմինների նկատմամբ վստահության աստիճանը:

«Freedom House» հետազոտական կազմակերպության «Անցումային փուլում գտնվող պետություններ» 2024 թվականի զեկույցի համաձայն՝ Կոռուպցիա ենթահամաթիվը գնահատվել է 3 միավոր. 2023 թվականի համեմատությամբ փոփոխություն չի

արձանագրվել: «Freedom House» հետազոտական կազմակերպության «Ազատությունն աշխարհում» զեկույցում 2024 թվականին Հայաստանը գնահատվել է 35 միավոր (հնարավոր 100-ից): Նշված գնահատականն անփոփոխ է 2023 թվականի համեմատ: 2024 թվականին Հայաստանը շարունակել է մնալ համացանցային ազատության ցուցիչով «ազատ» երկրների ցանկում: Ըստ այդմ՝ 2024 թվականի զեկույցում Հայաստանը գնահատվել է 74 միավոր (հնարավոր 100-ից):

«Լրագրողներ առանց սահմանների» միջազգային իրավապաշտպան կազմակերպության մամուլի ազատության ցուցիչում Հայաստանը 180 երկրի շարքում զբաղեցնում է 43-րդ հորիզոնականը՝ 2023 թվականի զեկույցի համեմատ դիրքերը բարելավելով 6 հորիզոնականով: Այս ցուցանիշով Հայաստանն առաջատարն է հարավկովկասյան տարածաշրջանում:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության և դրանից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի շրջանակներում իրականացվել են իրազեկման աշխատանքներ, ոստիկանների, քննիչների, դատախազների, դատավորների, ինչպես նաև դատավորների թեկնածուների համար վերապատրաստումներ իրավահավասարության ապահովման, խտրականության արգելքի, ատելության խոսքի դեմ պայքարի թեմաներով: Իրավապահ մարմինների համար մշակվել են խտրականության, ատելության խոսքի և ատելության շարժառիթով կատարվող հանցագործությունների քննության ուղեցույցներ: ԵԽ փորձագիտական կարծիքի հաշվառմամբ լրամշակվել է «Իրավահավասարության ապահովման և խտրականությունից պաշտպանության մասին» օրենքի նախագիծը, Վենետիկի հանձնաժողովի և ԵԽ ժողովրդավարության և մարդկային արժանապատվության հարցերով տնօրինության (DGII) համատեղ կարծիքի հաշվառմամբ լրամշակվել է «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագիծը, օրենսդրական նախագծերով հասցեագրվել են ՄԻԵԴ-ի՝ Հայաստանի դեմ մի շարք վճիռներում արձանագրված խնդիրները:

Կառավարությունը շարունակել է իրականացնել ընտրական իրավունքի արդյունավետ իրացմանն ու ընտրական գործընթացի բարելավմանն ուղղված բարեփոխումները:

Ընդունվել է «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների փաթեթը, որն արտացոլում է նաև դրա առնչությամբ Վենետիկի հանձնաժողովի եզրակացությամբ ստացված առաջարկները: Փաթեթով համապարփակ կերպով կարգավորվել են ընտրությունների առնչությամբ տարիների ընթացքում բացահայտված և վեր հանված մի շարք խնդիրներ: Մասնավորապես, սահմանվել են կարգավորումներ, որոնք ուղղված են հաշմանդամություն ունեցող, տեղաշարժման

(հենաշարժական) դժվարություններ ունեցող անձանց ընտրական իրավունքի առավել արդյունավետ իրացմանը: Իր հերթին, հստակեցվել են քարոզչական պաստառների և այլ նյութերի, ինչպես նաև քվեարկության արդյունքների վերահաշվարկի վերաբերյալ կարգավորումները: Նախատեսվել են նաև նախընտրական հիմնադրամների արդյունավետ կառավարման, կուսակցությունների ֆինանսավորման և ֆինանսական վերահսկողության նոր կառուցակարգեր և ընտրական համակարգի ու ընտրությունների կազմակերպման արդյունավետության հետ կապված այլ դրույթներ:

«Հանրային խորհրդի մասին» օրենքում փոփոխությունների ընդունմամբ առաջին անգամ նախատեսվել են փաստահավաք գործառույթներ իրականացնող մարմնի՝ Փաստահավաք հանձնաժողովի ձևավորման կարգը, նպատակները, իրավասությունները, գործունեության կարգը և փաստահավաք գործունեության իրականացման համար անհրաժեշտ այլ կարգավորումները: Այս հանձնաժողովի գործունեության արդյունքում ՀՀ-ում 1991 թվականի սեպտեմբերի 21-ից մինչև 2023 թվականը ներառյալ ժամանակահատվածում որոշակի ոլորտներում մարդու իրավունքների հիմնարար և պարբերական խախտումների բացահայտման ուղղությամբ կիրականացվի փաստահավաք գործունեություն և դրանց վերաբերյալ կկազմվի փաստահավաք զեկույց: Փաստահավաք հանձնաժողովն իրականացնելու է տեղեկությունների հավաքագրում, նյութերի ուսումնասիրություններ, հարցազրույցներ և հանրային լսումների անցկացում, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ այցելությունները և այլն, ինչը կապահովի պատշաճ փաստահավաք զեկույցի կազմումը:

Դատաիրավական բարեփոխումներ

2024 թվականի փետրվարից պաշտոնապես գործարկվել է քաղաքացիական գործերով էլեկտրոնային դատարանի համակարգը: 2025 թվականի գարնանը նախատեսվում է գործարկել նաև վարչական դատավարության էլեկտրոնային համակարգը:

Էլեկտրոնային արդարադատության գործիքակազմի ապահովման նպատակով Քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում ներդրվել են դատավարության ընթացքում էլեկտրոնային ապացույցներ, փաստաթղթեր, տվյալներ և ծանուցումներ ներկայացնելու գործիքակազմերը: Իրականացված փոփոխություններն ապահովում են քաղաքացիական դատավարության շրջանակներում իրականացվող դատական գործառույթների մեծ մասի էլեկտրոնային եղանակով իրականացման օրենսդրական հնարավորությունը:

Նույն տրամաբանությամբ փոփոխություններ են կատարվել նաև Վարչական դատավարության օրենսգրքում, «Սնանկության մասին» օրենքում:

Նշվածի համատեքստում, ինչպես նաև ներդրված էլեկտրոնային արդարադատության քաղաքացիական գործերով մոդուլի գործարկումից հետո՝ 2024 թվականի փետրվարի 1-ից, ՀՀ դատարաններում նոր մուտքագրվող քաղաքացիական գործերն արդեն վարվում են էլեկտրոնային եղանակով՝ https://cabinet.armlex.am կայքի հասցեով գործարկված էլեկտրոնային համակարգի միջոցով: 2024 թվականի ընթացքում էլեկտրոնային եղանակով ներկայացվել է շուրջ 15 000 քաղաքացիական գործ:

Համակարգը, իր հերթին, հնարավորություն է տալիս, որ դատարան ներկայացվող բոլոր դատավարական փաստաթղթերը կազմվեն և ներկայացվեն նշված համակարգի միջոցով՝ համակարգի կողմից տրամադրվող գործիքակազմին և առաջադրվող պահանջներին համապատասխան: Համակարգի միջոցով ապահովվում են նաև դատավարական այլ կառուցակարգեր, ինչպիսիք են ծանուցումները, ապացույցներ ներկայացնելը, վճռի հրապարակումը և այլն:

Լուծումներ են տրվել վերջին տարիների ընթացքում քաղաքացիական դատավարության կիրառման արդյունքում առաջացած խնդիրների մեծ մասին, և բարձրացել է քաղաքացիական դատավարության գործընթացում ներգրավված անձանց համար արդարադատության հասանելիության և արդյունավետության մակարդակը: Ի թիվս այլնի՝ վերանայվել են դատական ծանուցումների իրականացման հետ կապված մի շարք կարգավորումներ, հստակեցվել են արագացված դատաքննության կիրառման հիմքերը, վերաքննիչ քաղաքացիական դատարանի բեռնաթափման նպատակով այն ազատվել է մինչև 200 000 ՀՀ դրամի բռնագանձման հայցապահանջներով գործերով կայացված դատական ակտերը վերանայելու պահանջից:

Դատարաններում կոռուպցիոն գործերի եռաստիճան մասնագիտացված քննության կառուցակարգերի ապահովմանը զուգահեռ ապահովվել է նաև այդ մասնագիտացմամբ դատավորների վերապատրաստումը: 2024 թվականի ընթացքում վերապատրաստվել են հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի 15 դատավորներից 14-ը, Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի բոլոր՝ 12 դատավորները և Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի բոլոր՝ 10 դատավորները:

Ընդունվել է «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» օրենքը, ինչը կխթանի իրավական օգնության բնագավառի օրենսդրության կատարելագործմանը՝ ամբողջությամբ կարգավորելով այնպիսի կարևոր ոլորտային իրավահարաբերություններ, ինչպիսիք են՝ Հայաստանի կողմից վավերացված միջազգային

պայմանագրերով նախատեսված, ինչպես նաև վավերացված միջազգային պայմանագրերի բացակայության դեպքում քրեական վարույթներով իրավական օգնության իրականացման ընթացակարգերը:

Քաղաքացիական և վարչական դատավարական օրենսգրքում փոփոխություններ նախատեսող օրենքների փաթեթի ընդունմամբ ներդրվել են իրավունքի չարաշահման դեմ պայքարի և գործերի ողջամիտ ժամկետներում քննությունն ապահովող նոր մեխանիզմներ: Մասնավորապես՝ քաղաքացիական դատավարությունում նախատեսվել է դատական կազմի կամ կազմում ներառված դատավորի փոփոխության դեպքում գործերի քննությունը շարունակելու հնարավորություն: Նշվածին զուգահեռ կատարելագործվել է նաև դատավորների ինքնաբացարկի կառուցակարգը՝ հնարավորություն տալով դատավորին կողմերին գրավոր պարզաբանել ինքնաբացարկի հիմքերը և լուծել դրանց հնարավոր անտեսման հարցը: Իր հերթին, վարչական և քաղաքացիական դատավարություններում լավարկվել է դատական սանկցիաների ինստիտուտը՝ սահմանելով իրավունքի չարաշահման դեմ պայքարի նոր մեխանիզմներ. օրինակ՝ դատական նիստից դուրս դատական տուգանք կիրառելու հնարավորությունը, ինչը կապահովի ոչ միայն դատական նիստերի, այլև գործի քննության ողջ ընթացքում դատավարության մասնակիցների պատշաճ վարքագիծը, իրավունքի իրականացման սահմանափակումը, որը չարաշահվող իրավունքների ժամանակային կամ քանակական պայմանների սահմանման կառուցակարգ է:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքում կատարվել են փոփոխություններ, որոնց արդյունքում հստակ սահմանվել են սնանկության դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը, ինչը հնարավորություն կտա պատկերացում կազմել պարտապանի գույքային և ֆինանսական դրության վերաբերյալ և հնարավորինս բացառել կեղծ կամ կանխամտածված սնանկության դիմումների ներկայացումը: Բացի այդ, հստակեցվել են պարտապանի սնանկ ճանաչելուց հետո ստացվող աշխատավարձի՝ սնանկության վարույթի շրջանակում հօգուտ պարտատերերի գանձմանն առնչվող կարգավորումները, աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգերը, ինչը հնարավորություն կտա էլեկտրոնային գործիքների ներդրման գործընթացին համահունչ աճուրդները դարձնել լրիվ առցանց:

Մշակվել է սնանկության օրենսդրության բարեփոխման հայեցակարգը, որի հիման վրա 2025 թվականի ընթացքում կիրականացվեն Սնանկության նոր օրենսգրքի նախագծի մշակման աշխատանքները:

Դեռևս 2023 թվականին կատարված բարեփոխումների արդյունքում 2 մլն ՀՀ դրամը չգերազանցող գումարի բռնագանձման որոշ գործեր վերապահվել են

նոտարներին: Այս բարեփոխումից հետո ակներև է ընդհանուր իրավասության դատարանների՝ քաղաքացիական գործերի քանակի կրճատումը: Ըստ 2023 թվականի վիճակագրական տվյալների՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում 2023 թվականին ստացվել է 159 829 գործ, մինչդեռ 2024 թվականի հաշվետվության համաձայն՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում 2024 թվականին ստացվել է շուրջ 6 անգամ ավելի քիչ՝ 26 710 գործ:

2024 թվականի հունվարի 1-ից առաջին ատյանի դատարանների դատավորների համար սահմանվել է հավելում 60%-ի չափով, իսկ Վերաքննիչ դատարանների դատավորների համար՝ 55%-ի չափով: Սրանով ամբողջացվել է դատավորների աշխատավարձերի բարձրացումը բոլոր ատյաններում:

Ներդրվել է հաշտարարության էլեկտրոնային համակարգը, հաշտարարների ռեեստրը գործում է:

Կատարված աշխատանքների արդյունքում հաշտարարների համայնքը համալրվել է 79 հաշտարարով, և 2025 թվականի մեկնարկին նրանց թիվը հասել է 124-ի:

Ընդունվել է «Կատարողական վարույթի մասին» ՀՀ նոր օրենքը:

Արդիականացվել է իրավական ակտերի նախագծերի հրապարակման «e-draft» միասնական կայքը:

Քննչական կոմիտեի հաստիքների առավելագույն քանակն ավելացվել է 47-ով: Կատարված փոփոխության շնորհիվ հնարավոր կլինի ապահովել քրեական վարույթների շրջանակներում նախաքննության պատշաճ իրականացումը՝ Քննչական կոմիտեի գործառույթների ավելացման պայմաններում:

Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնը 2024 թվականին արդեն գրանցել է իր առաջին հաջողությունները արբիտրաժային գործերի քննության և հաշտարարության ոլորտներում՝ ապահովելով ինչպես միջազգային, այնպես էլ տեղական արբիտրաժային և հաշտարարության գործերի վարումը: 2024 թվականի վերջի դրությամբ՝ Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնը շուրջ 2000 պայմանագրում արդեն նշվել է որպես վեճը լուծող մարմին: Միաժամանակ՝ 2024 թվականի ընթացքում Արբիտրաժի և հաշտարարության կենտրոնը վարել է շուրջ 6 արբիտրաժային գործ, որոնցից 2-ը միջազգային, 4-ը՝ ներպետական և 5 հաշտարարության գործ, որոնցից 1-ը միջազգային, 4-ը՝ ներպատական, որից 1-ով իրականացվել է համահաշտարարություն:

Հարկադիր կատարման վարույթի թվայնացված համակարգում 2024 թվականի ընթացքում գրանցվել է շուրջ 8 714 անձ, գրասենյակով կամ բջջային հավելվածով կատարվել է ի սկզբանե նույնականացված տարբերակով շուրջ 6,3 մլրդ ՀՀ դրամի 391 741 վճարում, արդյունքում նույն պահին ավտոմատ կարճվել է 367 858 վարույթ, վճարային տերմինալներով և բանկերով կատարվել է ընդհանուր շուրջ 16,4 մլրդ ՀՀ դրամի 426 570 վճարում, արդյունքում նույն պահին ավտոմատ կարճվել է 818 311 վարույթ:

Օրենսդրական բարեփոխումների արդյունքում ներդրվել է համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթը, նախատեսվել է կարգավորում վարույթային գործողությունը կամ դատական նիստին անձի մասնակցությունը խոչընդոտող հիվանդությունը հաստատող փաստաթղթի ձևը և տրամադրման կարգը հաստատելու վերաբերյալ, փոփոխվել է կոռուպցիոն հանցագործությունների ցանկը, հստակեցվել են պատիժ նշանակելու որոշ իրավակարգավորումներ, փոփոխության է ենթարկվել դատական ակտերն ի կատար ածելու հետ կապված, ինչպես նաև պատժի կատարման ընթացքում ի հայտ եկող հարցերի լուծման կարգը:

ՆԳՆ փորձաքրեագիտական վարչության հենքի վրա հիմնադրվել է «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի փորձաքրեագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

Քրեական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում սահմանվել են պետությանը և համայնքներին պատճառված վնասի վերականգնման միասնական մոտեցումներ:

Կառավարության որոշմամբ սահմանվել են՝

1) պետությանը և համայնքին պատճառված վնասի շրջանակներում քրեական վարույթներով վերականգնման ենթակա դրամական միջոցների գանձապետական միասնական հաշվին վճարման, գանձապետական համակարգի միջոցով դրանց կառավարման և ծախսերի կազմակերպման,

2) պետությանը և համայնքին պատճառված վնասի՝ քրեական վարույթներով վերականգնման նպատակով վճարված դրամական միջոցների վերաբերյալ տվյալների հրապարակման,

3) քրեական վարույթներով արգելադրված դրամական միջոցների վերաբերյալ տվյալների հրապարակման,

4) քրեական վարույթներով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի՝ քրեական վարույթներով հատուցման ենթակա գումարների գանձապետական համապատասխան հաշվին վճարման ընթացակարգերը:

Կատարված բարեփոխումների արդյունքում կյանքի է կոչվելու Քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթներով նախատեսված՝ մասնավոր մեղադրանքով վարույթի կիրառման առանձնահատուկ կարգը, որը հանցագործությունից տուժած անձանց հնարավորություն է տալու միանգամից դիմելու դատարան: Համապատասխան նախագծերի ընդունմամբ՝ ավելացել է ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների քրեական մասնագիտացման դատավորների թվակազմը:

Կոռուպցիայի դեմ պայքար

2024 թվականին Հայաստանում իրականացված հակակոռուպցիոն ոլորտի բարեփոխումներն արժանացել են միջազգային բարձր գնահատականի:

2024 թվականի նոյեմբերին Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) գնահատման շրջանակներում չորրորդ փուլի համապատասխանության զեկույցի (Լրացում) ընդունմամբ Հայաստանի համար ավարտվել է ԳՐԵԿՈ-ի չորրորդ փուլի մոնիթորինգի գործընթացը՝ 12 բավարար և 6 մասնակի կատարված հանձնարարականով՝ 2023 թվականի մարտ ամսվա դրությամբ առկա 9 բավարար և 9 մասնակի կատարված գնահատման փոխարեն: Նշված ժամանակահատվածում դրական են գնահատվել ԱԺ օրենսդրական գործընթացների թափանցիկությանը, պատգամավորների կողմից անհամատեղելիության պահանջների պահպանվածությանը, պատգամավորների, դատավորների և դատախազների նվերների ընդունման սահմանափակումների կարգավորումների վերաբերյալ հանձնարարականները:

«Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» միջազգային հեղինակավոր կազմակերպության հրապարակած՝ Կոռուպցիայի ընկալման համաթվի (ԿԸՀ) 2024 թվականի վարկանիշի համաձայն՝ Հայաստանի ԿԸՀ արժեքը նախորդ տարվա համեմատ մնացել է նույնը՝ 47 միավոր 0-ից (բացարձակապես կոռումպացված) 100 (բացարձակապես մաքուր) սանդղակի վրա: 180 երկիր ներառող ԿԸՀ դասակարգման աղյուսակում Հայաստանը Խորվաթիայի հետ կիսում է 63-64-րդ տեղերը (2023 թվականին Հայաստանը գրավում էր 62-րդ տեղը): Ինչպես և նախորդ չորս տարիներին, Հայաստանի ԿԸՀ արժեքը 2024 թվականին ավելի բարձր է ԿԸՀ համաշխարհային միջին արժեքից (այն պահպանվել է 43): Այն նաև գերազանցում է հարևան երկրների (բացի Վրաստանից) և ԵԱՏՄ անդամ մյուս երկրների 2024 թվականի ԿԸՀ արժեքները:

2024 թվականին կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Տնտեսական անվտանգության և կոռուպցիայի հակազդման ուղղությամբ կատարված աշխատանքների շրջանակներում Ազգային անվտանգության ծառայության կողմից բացահայտված հանցագործությունների դեպքերով քննչական մարմիններում նախաձեռնվել է ընդհանուր առմամբ 205 քրեական վարույթ, որից 80-ը՝ կոռուպցիոն բնույթի: Ազգային անվտանգության ծառայության կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներով քննչական մարմիններ է ներկայացվել առերևույթ հանցանքի մասին ընդհանուր առմամբ 800 հաղորդում: Բացի այդ, ուսումնասիրվել է 12 պաշտոնատար անձանց, ինչպես նաև նրանց մերձավոր ազգականների անվամբ հաշվառված անշարժ և շարժական գույքերի ձեռքբերման օրինականությունը, դրամական միջոցների շրջանառությունը, ինչպես նաև իրավաբանական կազմակերպություններում մասնակից հանդիսանալու հանգամանքը, որոնց արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը փոխանցվել է Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն՝ համապատասխան ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով:

Զինված ուժերի նյութատեխնիկական մատակարարման, սպառազինության և թիկունքային ապահովման գործընթացներում հնարավոր չարաշահումների, խախտումների, յուրացման ու վատնման դեպքերի, ինչպես նաև այլ կոռուպցիոն հանցագործությունների հայտնաբերման և բացահայտման նպատակով 2024 թվականի ընթացքում Ազգային անվտանգության ծառայության կողմից իրականացված միջոցառումների արդյունքներով քննչական մարմիններում նախաձեռնվել է 190 քրեական վարույթ, որոնց շրջանակներում, ըստ նախնական գնահատման, ՀՀ պետական բյուջեին պատճառվել է ավելի քան 7 մլրդ ՀՀ դրամ նյութական վնաս, որից մոտ 1,3 մլրդ ՀՀ դրամի չափով վնասը վերականգնվել է:

Նախաձեռնված վարույթներից 4-ը վերաբերում են պետական դավաճանության և լրտեսության դեպքերին, 40-ը զորակոչից և զորահավաքից ապօրինի ազատման դեպքերին, 66-ը կոռուպցիոն բնույթի հանցագործություններ են, մնացածը՝ զինվորական ծառայության ընթացքում կատարված այլ հանցատեսակներ:

Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը 2024 թվականին նախաձեռնել է 163 ուսումնասիրություն:

2024 թվականին Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը դատարան է ներկայացրել 44 հայցադիմում,

որոնցով պահանջում է հոգուտ ՀՀ-ի բռնագանձել ապօրինի ծագում ունեցող 346 անշարժ գույք, 71 շարժական գույք և 85 իրավաբանական անձում մասնակցություն: Բռնագանձման ենթակա գումարի չափը կազմում է շուրջ 96 մլրդ ՀՀ դրամ: 2024 թվականին ներկայացված հայցադիմումների ընդհանուր հայցագինը շուրջ 100 մլրդ ՀՀ դրամ է:

Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը 2024 թվականի կնքել է հաշտության 4 համաձայնություն:

2024 թվականին կնքված հաշտության համաձայնություններով ՀՀ-ին է փոխանցվել՝

- Մեկ անշարժ գույք, որը գտնվում է Երևան քաղաքի Աճառյան 39/6 հասցեում: Կառավարության որոշմամբ՝ գույքը ներկայացվել է դասական աճուրդի: Մեկնարկային արժեքը՝ 2 մլրդ 229 մլն 400 հազար դրամ, որը ենթակա չէ նվազեցման:
- Շուրջ 500 մլն ՀՀ դրամ:

Իր ձևավորման օրվանից առ այսօր Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունն ընդհանուր առմամբ նախաձեռնել է 614 ուսումնասիրություն, դատարան է ներկայացրել 136 հայցադիմում, որոնցով պահանջում է բռնագանձել 270 շարժական, 1381 անշարժ գույք, 359 իրավաբանական անձում մասնակցություն, դրամական պահանջը կազմում է ավելի քան 527 մլրդ ՀՀ դրամ, իսկ ընդհանուր հայցագինը՝ շուրջ 600 մլրդ ՀՀ դրամ է (այս թիվն ունի աճման միտում՝ պայմանավորված նրանով, որ ոչ բոլոր գույքերի շուկայական արժեքն է պարզված, պարզված չեն նաև իրավաբանական անձում մասնակցությունների արժեքները):

Իր ձևավորման օրվանից առ այսօր Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունն ընդհանուր առմամբ կնքել է 8 հաշտության համաձայնություն:

Գլխավոր դատախազության պետական և համայնքային շահերի պաշտպանության լիազորության շրջանակում ներկայացված հայցերով և կնքված հաշտության համաձայնություններով 2024 թվականին պետությանը կամ համայնքին են վերադարձվել հետևյալ գույքերը.

- Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Աղավնաձոր բնակավայրի Աղավնու աղբյուր թաղամասի թիվ 8 հասցեում գտնվող՝ հանգստի համար նախատեսված, «հատուկ պահպանվող տարածք» նպատակային

նշանակությամբ 2 հա մակերեսով հողամաս: Շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը՝ շուրջ 37,6 մլն ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Աղավնաձոր բնակավայրի Աղավնու աղբյուր թաղամասի թիվ 26 հասցեում գտնվող՝ հանգստի համար նախատեսված, «հատուկ պահպանվող տարածք» նպատակային նշանակությամբ 0,5 հա մակերեսով հողամաս: Շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը՝ շուրջ 9,4 մլն ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Աղավնաձոր բնակավայրի Աղավնու աղբյուր թաղամասի թիվ 27 և 28 հասցեներում գտնվող՝ հանգստի համար նախատեսված, «հատուկ պահպանվող տարածք» նպատակային նշանակությամբ 1 հա մակերեսով հողամաս: Շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը՝ շուրջ 18,7 մլն ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Աղավնաձոր բնակավայրի Աղավնու աղբյուր թաղամասի թիվ 29 հասցեում գտնվող՝ հանգստի համար նախատեսված, «հատուկ պահպանվող տարածք» նպատակային նշանակությամբ 0,5 հա մակերեսով և նույն թաղամասի թիվ 30 հասցեում գտնվող 0,5 հա մակերեսով հողամասեր: Շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը՝ շուրջ 18,7 մլն ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Ծաղկաձոր քաղաքի Մ. Մկրտչյան փողոցի 32/1 հասցեում գտնվող շուրջ 2,6 հա մակերեսով և նույն փողոցի 36/1 հասցեում գտնվող շուրջ 2,6 հա մակերեսով հողամասեր: Շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը՝ համապատասխանաբար շուրջ 432 մլն ՀՀ դրամ և շուրջ 427 մլն ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզի Նաիրի (Քասախ) համայնքի Ե. Չարենցի 4-րդ փողոցի 13 հասցեում գտնվող 0,08 հա մակերեսով հողամաս: Շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը՝ շուրջ 5,5 մլն ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Արզական բնակավայրի թիվ 22 հասցեում գտնվող՝ հանգստի համար նախատեսված, «հատուկ պահպանվող տարածք» նպատակային նշանակությամբ շուրջ 3 հա մակերեսով հողամաս: Շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը՝ շուրջ 87 մլն ՀՀ դրամ:
- Երևան քաղաքի Կողբացի փողոցի 36/3 հասցեում կառուցված համալիրի 1-ին և 2-րդ հարկերից շուրջ 240 քառ. մ մակերեսով տարածքներ և նշված մակերեսին համապատասխան հողամաս: Շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը՝ շուրջ 1 մլրդ ՀՀ դրամ:

- Երևան քաղաքի Ծիծեռնակաբերդի խճուղուն հարող տարածքում գտնվող՝ շուրջ 1,2 հա մակերեսով հողամաս: Շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը՝ շուրջ 730,5 մլն ՀՀ դրամ:

Պետական (համայնքային) շահերի պաշտպանության գծով Գլխավոր դատախազության կողմից իրականացված աշխատանքների արդյունքում պետությանը կամ համայնքին վերադարձվել է շուրջ 2,7 մլրդ ՀՀ դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով գույք:

Քննչական կոմիտեի կողմից քննվել է կոռուպցիոն բնույթի 1 259 քրեական վարույթ: Կոռուպցիոն բնույթի հանցագործություններով պետությանը պատճառված վնասի չափը կազմել է շուրջ 15 մլրդ ՀՀ դրամ, որից վերականգնվել է շուրջ 531 մլն ՀՀ դրամ: Համայնքներին պատճառված վնասը կազմել է 1,4 մլրդ ՀՀ դրամ, որից վերականգնվել է 27 մլն ՀՀ դրամ: Իրավաբանական անձանց պատճառվել է 123 մլն ՀՀ դրամի վնաս, որը վերականգնվել է:

Քննչական կոմիտեի կողմից քննվել է փողերի լվացման 137 քրեական վարույթ, որից 8-ն ուղարկվել է դատարան:

2024 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Քննչական կոմիտեում քննված վարույթներով պետությանը և համայնքներին պատճառված վնասից վերականգնվել է շուրջ 42 մլրդ ՀՀ դրամ, որից 37,6 մլրդ ՀՀ դրամը՝ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով:

2024 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Հակակոռուպցիոն կոմիտեում քննված վարույթներով պետությանը և համայնքներին պատճառված վնասից վերականգնվել է շուրջ 476 մլն ՀՀ դրամ:

Մասնավորապես, իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում ներդրվել են բարեվարքության ընթացիկ ստուգման կառուցակարգեր դատավորների, դատախազների և քննիչների համար: Բացի այդ, նախատեսվել է, որ քննչական բոլոր մարմիններում քննիչների թեկնածուները և առաջխաղացման ենթակա քննիչները պետք է անցնեն բարեվարքության ստուգում: 2024 թվականի ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ուսումնասիրել է քննիչների 14%-ի և դատախազների 14%-ի բարեվարքությունը:

Ամրագրվել է պաշտոնական պարտականությունների հետ կապված նվերներ ընդունելու արգելքը, սահմանվել է «նվեր» հասկացությունը, սահմանվել են պետական սեփականություն դարձող նվերների տնօրինման հետ կապված

կարգավորումները, ամբողջացվել են նաև նվերների ընդունման սահմանափակումների կառուցակարգերը՝ նվերների ընդունումից մինչև պետությանը փոխանցված նվերների տնօրինման գործընթացը: Հաշվառման ենթակա շուրջ 30 նվերների վերաբերյալ տեղեկատվություն արդեն իսկ հրապարակվել է ԿԿՀ կայքում:

Հստակեցվել են ավագանու անդամների անհամատեղելիության պահանջները՝ արգելվել է վերջիններիս զբաղեցնել այլ պաշտոններ (բացառությամբ ավագանու կարգավիճակից բխող պաշտոնների), ինչպես նաև հստակեցվել են վերջիններիս անհամատեղելիության պահանջները:

Հստակեցվել է ԿԿՀ-ի և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի լիազորությունների շրջանակը նախընտրական քարոզարշավի ֆինանսական հսկողության հարցում, որն իրականացվելու է ԿԸՀ-ի կողմից: Մշակվել են կուսակցությունների ֆինանսական թափանցիկության հսկողության, բարեվարքության հարցերով կազմակերպիչների կարգավիճակի բարելավման մեխանիզմներ:
Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից ներդրվել է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր լրացնելու համար լիազորագրերի ներկայացման էլեկտրոնային ծառայությունը՝ https://e-services.moj.am էլեկտրոնային հարթակը:
Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից հաշվետու ժամանակահատվածում հաստատված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրերի թիվը կազմում է 55 389:
Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից հարուցվել է մոտ 200 վարչական վարույթ՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից օրենքում սահմանված ժամկետում իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ չներկայացնելու հիմքով:
Իրականացվել է ազդարարման համակարգի (azdararir.am) վերաբերյալ համապետական իրազեկման մեծ արշավ: Արդյունքում՝ արշավը գրանցել է տեսանելի դրական ցուցանիշներ. արշավից առաջ ազդարարումների ամսական միջին քանակը եղել է 2-5, իսկ արդեն 2024 թվականի դեկտեմբերին գրանցվել է ազդարարումների ամսական ամենաբարձր ցուցանիշը երբևէ՝ 57 ազդարարում:

Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի բարեփոխումներ

2024 թվականին քրեակատարողական և պրոբացիայի ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Քրեակատարողական ծառայությունը պաշտոնապես անդամակցել է EuroPris-ին (Բանտերի և ուղղիչ հիմնարկների եվրոպական կազմակերպություն): Կառույցին անդամակցում են Եվրոպայի խորհրդի տարածաշրջանի 41 անդամ երկրների քրեակատարողական մարմիններ, որոնք ստեղծել են լավագույն փորձի փոխանակման լայն ցանց:

Միջին օրական հաշվարկով քրեակատարողական հիմնարկներում պահվել է 2607 անձ, որոնցից՝ 1 230-ը եղել է դատապարտյալ, իսկ 1 377-ը՝ կալանավորված: 2023 թվականի համեմատությամբ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց թիվն ավելացել է 154-ով:

Սահմանվել են բուժական քրեակատարողական հիմնարկում կալանավորվածներին և դատապարտյալներին պահելու առանձնահատկություններ:

Սահմանվել է, որ քրեակատարողական ծառայության հանրային ծառայողները ենթակա են պարտադիր հատուկ ուսուցման ոչ պակաս, քան երեք տարին մեկ անգամ: Հատուկ ուսուցում անցնելուց հետո ծառայողը կրկին կարող է հատուկ ուսուցում անցնել առնվազն 20 ամիս հետո:

Քրեակատարողական ծառայողների ատեստավորման առաջին փուլը մեկնարկել է 2024 թվականի սեպտեմբերի 10-ին, որին մասնակցել է 36 ծառայող, ատեստավորման փուլերը հաղթահարել է 31 ծառայող, որոնց աշխատավարձերն ավելացել են 10-ից 70%-ով:

Հաստատվել են քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց տրվող սննդի հատկացման ճաշացուցակի, մատակարար կազմակերպության կողմից հատկացվող պատրաստի սննդի ստացման, սննդի քանակի և որակի հսկողության կարգն ու ձևերը:

Քրեակատարողական հիմնարկներում բարելավվել են դատապարտյալներին պահելու պայմանները:

«Արմավիր» քրեակատարողական հիմնարկում ապահովվել է 24-ժամյա ջրամատակարարում, ինչը առկա չի եղել ստեղծման օրվանից: Վերանորոգման աշխատանքներ են իրականացվել նաև «Արթիկ», «Վարդաշեն», «Նուբարաշեն», «Սևան» և «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկներում:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկում կառուցվել է մոր և մանկան բաժանմունք (բաղկացած 3 առանձին խցից): Ներկայումս նախատեսված խցերի և կացարանների սանհանգույցներն ու լոգարանները հարմարեցված են հղի կնոջ

և մինչև երեք տարեկան երեխաների առանձնահատուկ պահանջներին: Բացի դրանից, «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում վերակառուցվել են ամբողջությամբ նոր երկու մասնաշենքեր՝ միջազգային ստանդարտներին համապատասխան: Կատարված աշխատանքների արդյունքում ամբողջությամբ վերանորոգվել է կանանց տեղամասը, ինչպես նաև ուսումնական կենտրոնը: Ավարտին են մոտենում նաև մեկուսարանի և վարչական մասնաշենքերի կապիտալ վերանորոգման աշխատանքները:

2024 թվականի դեկտեմբերին կնքվել է «Սևան» քրեակատարողական հիմնարկի տարածքում նոր մասնաշենքի կառուցման շինարարական աշխատանքների կատարման վերաբերյալ պայմանագիր:

2024 թվականի 4-րդ եռամսյակում ներդրվել է Քրեակատարողական հիմնարկների կարիքների գնահատման և կառավարման էլեկտրոնային ծրագիր, որն իրենից ներկայացնում է քրեակատարողական հիմնարկներում կենցաղապահովման և նյութատեխնիկական խնդիրների, այդ թվում՝ շենքային, կոմունալ, էներգետիկ, տրանսպորտային և այլ պայմանների խնդիրների հաշվառում, գնահատում, առաջնահերթությունների որոշում և լուծումների կառավարում:

2024 թվականին ձեռք է բերվել տնային կալանքի և վարչական հսկողության 914 սարք, որոնք կիրառվել են 2 168 շահառուի նկատմամբ:

Ազատազրկման ձևով պատիժ կրող և կալանավորված անձանց համար իրականացվել են կրթական ծրագրեր: Սովորելու իրավունքից օգտվել է մինչև 19 տարեկան 11 անձ, իսկ 19 տարեկանից բարձր՝ 94 անձ: Իրականացվել են նաև մի շարք դասընթացներ՝ լեզուներ, համակարգչային հմտություններ, արհեստագործություն և այլ թեմաներով, որոնց մասնակցել է 205 անձ:

Հաստատվել է վերասոցիալականացման գնահատման հանձնաժողովի ձևավորման, գործունեության կարգը, անհատական կազմերը, վերասոցիալականացման աշխատանքների գնահատման մեթոդները և չափանիշները:

«Սևան» քրեակատարողական հիմնարկում առկա կահույքի արտադրամասի, արտադրության ծավալներն ընդլայնվել են, բարեկարգվել է տարածքը, ձեռք են բերվել նոր սարքավորումներ, ինչի շնորհիվ ավելի մեծ թվով դատապարտյալներ հնարավորություն են ստացել ընդգրկվել կահույքի արտադրության աշխատանքներում: «Սևան» քրեակատարողական հիմնարկում նաև կառուցվել և անհրաժեշտ գույքով և ժամանակակից սարքավորումներով հագեցվել է ուսումնաարտադրական տարածք, որը ծառայելու է ոչ միայն ուսումնական, այլև դատապարտյալների աշխատանքային հնարավորությունների ընդլայնման նպատակով:

Ազատազրկված անձանց հեռախոսակապի իրավունքը կայուն ապահովելու նպատակով բոլոր 10 քրեակատարողական հիմնարկներում իրականացվել է կարիքների գնահատում, ինչի հիման վրա կազմակերպված մրցույթի արդյունքում հիմնարկների համար ձեռք է բերվել բոլորովին նոր, հակավանդալային, անհատական քարտային համակարգով աշխատող 170 հեռախոս, որոնք կփոխարինեն ներկայում առկա 113 հեռախոսներին: Հեռախոսակապի նոր համակարգի ներդրումն առանձնահատուկ է նրանով, որ բացի անվճար զանգերից դեպի հատուկ կարևորության հեռախոսահամարներ (ՄԻՊ, արդարադատության և առողջապահության նախարարությունների, ծառայության, տարբեր այլ կառույցների թեժ գծեր և այլն)՝ ազատազրկված անձինք հնարավորություն են ստանալու նաև ամսական 20 րոպե զանգեր իրականացնելու ՀՀ բոլոր ֆիքսված և բջջային ցանցեր անվճար՝ պետական միջոցների հաշվին: Տրամադրվող անվճար րոպեների սպառումից հետո ազատազրկված անձը կարող է կանխավճարային եղանակով ստանալ խոսելաժամանակ՝ 1 րոպեն 8,91 ՀՀ դրամ սակագնով՝ նախկին 19 ՀՀ դրամ սակագնի փոխարեն:

Հայտարարված մրցույթի արդյունքում ձեռք են բերվել պլանշետներ, որոնք բաշխվել են ըստ քրեակատարողական հիմնարկների պահանջների՝ քրեակատարողական հիմնարկներում տեսազանգի տրամադրման հնարավորությունն ապահովելու նպատակով:

Ծառայության հատուկ նշանակության և գործառնական մեքենաների վրա տեղադրվել են տեղորոշման և վերահսկողության GPS համակարգեր:

Դատապարտյալների և կալանավորված անձանց ուղեկցումների կազմակերպման նպատակով ձեռք է բերվել հատուկ նշանակության 2 ավտոմեքենա: Սահմանվել են դատապարտյալների նոր նմուշի հանդերձանքի չափաքանակները, այդ թվում նաև՝ հիգիենայի պարագաները, որոնք կտրամադրվեն արդեն իսկ շաբաթական կտրվածքով՝ անհատական փաթեթավորված: Կալանավորված անձանց և դատապարտյալների համար սահմանվել է լոգասենյակից օգտվելու շաբաթական առնվազն 2 անգամ հաճախականություն:

2024 թվականի հունվարի 1-ին ուժի մեջ է մտել «Պրոբացիայի ծառայության մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվել է Պրոբացիայի ծառայությունը՝ որպես առանձին պետական ծառայության տեսակ:

Հաստատվել են պրոբացիայի ծառայողների վերապատրաստման, գնահատման և ատեստավորման կարգերը:

Սահմանվել է պրոբացիայի ծառայողների կողմից գործադրվող հատուկ միջոցների ցանկը:

Պրոբացիայի ծառայությանը հատկացվել է վարչական շենք, որտեղ իրենց գործունեությունն են իրականացնում Պրոբացիայի ծառայության կենտրոնական և Երևանի քաղաքային մարմինները, ինչպես նաև հատկացվել է տարածք՝ ուսումնական կենտրոնի գործառույթների իրականացման նպատակով:

Պրոբացիայի ծառայության շարժական գրասենյակները պարբերաբար տեղակայվում են Գեղարքունիքի և Արարատի մարզերում, որտեղ մոտ 100 շահառուների նկատմամբ իրականացվել են օրենքով տարածքային մարմիններին վերապահված գործառույթները:

2024 թվականից պրոբացիայի ծառայությունը անդամակցում է Եվրոպական պրոբացիայի կոնֆեդերացիային (Confederation of European Probation – CEP):

Պրոբացիայի ծառայության միջնորդությամբ և իրականացված վերասոցիալակա-նացման միջոցառումների արդյունքում աշխատանքի է տեղավորվել 10 շահառու, որոնցից 2-ը կին է:

Պրոբացիայի ծառայությունում ներդրվել են շահառուների թիրախային կարիքներից բխող երկու վերականգնողական ծրագրեր՝ բռնի վարքի նվազեցման և կախվածությունների հաղթահարման ուղղությամբ, որոնք նպաստելու են շահառուների առավել արդյունավետ վերասոցիալականացմանը և վերաինտեգրմանը հասարակություն:

Վերանայվել և մշակվել է ռիսկերի և քրեածին կարիքների գնահատման գործիքը, գնահատվել են կրկնահանցագործություն կատարած (200 անձ) և առաջին անգամ դատապարտված (500 անձ) շահառուների ռիսկերը և կարիքները, որի արդյուն-քում փորձագետների կողմից մշակվել է վերոնշյալ գործիքը, այնուհետև իրա-կանացվել է վերանայված գործիքի պիլոտավորումը:

Պրոբացիայի ծառայությունում հաշվառված շահառուների համար իրականացվել են հետևյալ կրթական և արհեստագործական դասընթացները՝ կահույքաշինության հիմունքներ, անգլերեն, համակարգչային հմտություններ (մասնակցել է 45 անձ):

Պրոբացիայի ծառայությունում իրականացվել են 150 տարաբնույթ մշակութային և կրոնական միջոցառումներ, որոնց շրջանակներում պրոբացիայի շահառուները այցելել են տարբեր մշակութային կենտրոններ, պատկերասրահներ և թանգարաններ, եկեղեցիներ: Վերոնշյալ միջոցառումներին մասնակցել է 1 250 շահառու: Հոգեբանական անհատական խորհրդատվություն է տրամադրվել 38 շահառուի, որոնցից 2-ը անչափահաս է: Իրականացվել են 16 հոգեբանական խմբային թրեյնինգներ՝ ուղղված շահառուների ինքնակարգավորման մեխանիզմների

զարգացմանը, հոյզերի կառավարմանը, ծնողավարման հմտությունների զարգացմանը և այլ խնդիրներին, որոնց մասնակցել են 96 շահառու:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ռազմավարական պլանավորում և քաղաքականությունների մշակում

2024 թվականի ընթացքում հաստատվել է 3 ռազմավարություն, որոնք վերաբերում են ժողովրդագրության, զբաղվածության և ոստիկանության ոլորտներին:

2024 թվականին շարունակվել են ռազմավարական կառավարման, ինչպես նաև ռազմավարությունների մշտադիտարկման ու գնահատման նոր համակարգերի ներդրման աշխատանքները:

Տարեվերջի դրությամբ ՀՀ-ի 57 համայնքի 76 բնակավայրի վարչական գրասենյակներում գործում են քաղաքացիների սպասարկման գրասենյակներ (ՔՍԳ), որոնցում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից «մեկ պատուհան» սկզբունքով տրամադրվում է համայնքային շուրջ 30 ծառայություն: Արդիականացվել են Գորիս, Եղեգնաձոր, Չարենցավան և Սիսիան համայնքների վարչական շենքերում գործող քաղաքացիների սպասարկման գրասենյակները:

Թվայնացում, պետության կողմից հանրությանը մատուցվող ծառայություններ, ազգային տարածական տվյալների ենթակառուցվածք

2024 թվականին թվայնացման ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Կայացել է Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի 22 նիստ, որոնց շրջանակներում կայացվել են որոշումներ ավելի քան 84 հարցի ու ծրագրի վերաբերյալ:

2024 թվականին «Ես եմ» թվային նույնականացման ազգային հարթակ մուտքերի քանակը կազմել է 2 357 416, որից eID՝ 1 024 041, mID՝ 732 929 և էլ.փոստ՝ 600 446:

Բջջային Էլեկտրոնային նույնականացման և ստորագրության mID համակարգի ներդրմամբ՝ առանց էլեկտրոնային կրիչի թողարկված նույնականացման քարտերից օգտվող և նույնականացման քարտ ունեցող բոլոր քաղաքացիները հնարավորություն են ստացել իրականացնել էլեկտրոնային նույնականացում և ստորագրել:

Ընդունվել է «Ամպայինն առաջինը» քաղաքականության մշակման և ներդրման մասին» Կառավարության որոշումը:

Հաստատվել են ամպային տիրույթում տեղակայվող կայքերի անվտանգության պահանջները և մի շարք պետական մարմինների կայքերը և համակարգերը տեղափոխվել են ամպային տիրույթ:

Շարունակվել են Հանրային ծառայությունների թվայնացման սկզբունքների ներդրման աշխատանքները (http://standards.hightech.gov.am):

Հանրային ծառայությունների թվայնացման սկզբունքները արդեն կիրառվել են «Էլեկտրոնային նոտարական համակարգ», «Եկամուտների ինքնահայտարա-րագրման համակարգ», «Էլեկտրոնային վարչական դատարան», «Կյանքի իրադարձություններ» թվայնացման նախագծերում:

Հանրային ծառայությունների թվայնացման, դրանց առցանց միասնական մուտքից հասանելիության ապահովման նպատակով գործարկվել է ծառայությունների ազգային հարթակը (https://hartak.am):

Շարունակվել են կյանքի 12 իրադարձության (life events) թվայնացման նախագծի աշխատանքները:

Մշակվել են «Հանրային տեղեկությունների մասին», «Բնակչության պետական ռեգիստրի մասին», «Կիբեռանվտանգության մասին» և «Թվային հավաստագրման, նույնականացման և ստորագրության մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնցով կսահմանվեն Թվային ճարտարապետության իրավական հիմքերը:

Հայաստանի համակարգչային միջադեպերի արձագանքման ազգային թիմը (AM-CERT) հավատարմագրվել է TF-CSIRT-ի և FIRST-ի կողմից: Տարվա ընթացքում Հայաստանի համակարգչային միջադեպերի արձագանքման ազգային թիմը համակարգել է 9 միջադեպ, որից 6-ը կարգավորվել է թիմի կողմից: AM-CERT-ին զեկուցվել է 28 ահազանգ, որոնցից 12-ը կապված են հավատարմագրերի արտահոսքի (credential leaks) հետ, որոնց մասին տեղեկացվել են գործընկեր կառույցները:

Անցկացվել են «Միջադեպերի արձագանքման պատրաստվածություն» թեմայով աշխատաժողովը, ինչպես նաև կիբեռվարժանքներ՝ ՀՀ ԿԲ և ֆինանսական համակարգի համար: Հեռահաղորդակցության միջազգային միության (ITU) հետ համատեղ կազմակերպվել է կիբեռանվտանգության աշխատաժողով՝ «Ազգային կիբեռվարժանք», որին մասնակցել է շուրջ 170 մասնագետ՝ մասնավոր և պետական կառույցներից:

Ամփոփվել են անվտանգության գործառնությունների կենտրոնի 2 պիլոտային նախագծերի արդյունքները, և իրականացվել անվտանգության մակարդակի 8 գնահատում:

«Թումո» ստեղծարար կենտրոնի հետ մեկնարկվել է «Համագործակցություն հանուն կիբեռանվտանգության ամրապնդման» ծրագիրը, որի շրջանակներում ավելի քան 100 երիտասարդ կմասնակցի «Թումո» սպրինտերի, ինքնուսուցման և ծրագրահեն ուսուցման նախագծերի: «Թումո»-ի հետ աշխատանքային պորտֆելի լայնացմանը զուգահեռ, առաջիկա 5 տարվա ընթացքում, պլանավորվում է շահառու աշակերտների թիվը հասցնել 80 000-ի՝ կիբեռ կրթությունը հասանելի դարձնելով Հայաստանում տեղակայված բոլոր «Թումո» կենտրոններում:

Հաստատվել են Էլեկտրոնային փաստաթղթերին ներկայացվող պահանջները, սահմանափակում կիրառելու կամ սահմանափակումը վերացնելու վերաբերյալ որոշումներն անշարժ գույքի պետական ռեգիստր ներկայացման կարգը, որի հիմքով ներդրվել և ներկայումս գործում է docs.e-cadastre.am էլեկտրոնային համակարգը: Արդյունքում սահմանափակում կիրառելու իրավասություն ունեցող պետական մարմինները սահմանափակումների որոշումները, իսկ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները և նոտարները իրավահաստատող փաստաթղթերը Կադաստրի կոմիտե են ներկայացնում բացառապես էլեկտրոնային եղանակով:

2024 թվականի ընթացքում Կադաստրի կոմիտե էլեկտրոնային եղանակով ներկայացվել են 674 911 սահմանափակում կիրառելու և սահմանափակումը վերացնելու մասին որոշում, 18 549 հարցում, ինչպես նաև 120 752 իրավահաստատող փաստաթուղթ, որոնցից 86 236-ը՝ նոտարների կողմից:

e-cadastre.am հարթակում ներդրվել է անձնական գրասենյակը, որի միջոցով հարթակում գրանցված օգտատերերը անձի խիստ նույնականացման համակարգերի միջոցով կարող են դիտել իրենց անվամբ գրանցված անշարժ գույքերը և պարզեցված եղանակով կատարել դիմումների մուտքագրումները, ինչպես նաև տեսնել այդ միավորների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը:

2024 թվականի հունվար ամսից Արդարադատության նախարարության e-services.moj.am՝ հանրային ծառայությունների մատուցման միասնական հարթակը համալրվել է նոր, մասնավորապես՝ մահվան պետական գրանցման, ամուսնության մեջ չգտնվող կնոջից ծնված երեխայի ծննդի պետական գրանցման դիմումներն առցանց եղանակով ուղարկելու և ակտային գրանցման արդյունքում ձևավորված վկայականն էլեկտրոնային հասցեին ստանալու հնարավորությամբ:

«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ը 2024 թվականի ընթացքում իրականացրել է շուրջ 4 350 000 արխիվային հավաքածուի պահպանության ապահովում, շուրջ 25 000 փաստաթղթի գիտատեխնիկական մշակում, շուրջ 500 000 էջ փաստաթղթի թվայնացում:

2024 թվականի հունվար ամսից ՀՀ բոլոր բնակավայրերի, այդ թվում՝ Երևան քաղաքի վարչական շրջանների կադաստրային քարտեզները մուտքագրվել են առցանց քարտեզագրական միջավայր: Կադաստրային քարտեզում նշելով համապատասխան տարածքը՝ հնարավոր է ստանալ ամբողջական տեղեկատվություն գույքերի վերաբերյալ:

Գործընթացին զուգահեռ կամերալ պայմաններում իրականացվել են նաև կադաստրային քարտեզներին չկապակցված գույքային միավորների նույնականացման աշխատանքներ, որոնց շրջանակներում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում շուրջ 20 000 միավոր գույք նույնականացվել և անհրաժեշտության դեպքում արտացոլվել է կադաստրային քարտեզներում:

Շարունակվում են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման ժամանակ առանց գույքի սեփականատիրոջ ամբողջական նույնականացմամբ իրականացված գրանցումների արդյունքում չնույնականացված սուբյեկտների նույնականացման աշխատանքները:

Կադաստրի կոմիտեի կողմից մատուցվող ծառայությունները քաղաքացիների համար առավել դյուրին դարձնելու նկատառումներով՝ ստեղծվել են 3 խորհրդատվական կենտրոններ՝ Շիրակի, Լոռու և Սյունիքի մարզերում, որոնք կապահովեն խորհրդատվությունների և պարզաբանումների տրամադրումը, ի թիվս այլնի, նաև կադաստրային քարտեզներում սխալների ուղղում կատարելու, իրավունքի պետական գրանցման մերժումների, կասեցումների վերաբերյալ:

Հաշվետու տարում կատարված աշխատանքի արդյունքում ներկայումս ազգային գեոպորտալում արտացոլվում են Շրջակա միջավայրի նախարարության, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՆԳՆ-ի, ԲՏԱՆ-ի ավելի քան 20 թեմատիկ քարտեզագրական շերտերը:

2024 թվականի ընթացքում Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից գրանցվել է 8381 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, իրավաբանական անձում բաժնեմասեր փակ բաժնետիրական ընկերություն, 10 բաց բաժնետիրական ընկերություն, 3 արտադրական կոոպերատիվ, թվով 37 համայնքային ոչ առևտրային կազմակերպություն, 22 գյուղատնտեսական կոոպերատիվ, 445

հասարակական կազմակերպություն, 8 կուսակցություն, 104 հիմնադրամ, 10 արհեստակցական կազմակերպություն, 4 հիմնարկ, 3 սպառողական կոոպերատիվ, 37 համատիրություն, 36 կուսակցության տարածքային ստորաբաժանում, 8 պետական ոչ առևտրային կազմակերպություն: Նույն ժամանակահատվածում հաշվառվել է թվով 41 առանձնացված ստորաբաժանում, 25 842 անհատ ձեռնարկատեր, որից 2 240 վերահաշվառվել է:

Իրականացվել է իրավաբանական անձանց 21 620 փոփոխության գրանցում, անհատ ձեռնարկատերերի փոփոխությունների 6 419 հաշվառում, անհատ ձեռնարկատերերի հաշվառումից հանում 5 624 և իրավաբանական անձանց լուծարման 525 գրանցում:

Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում

Համայնքների բյուջեներին հատկացվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների չափը 2025 թվականի համար նախատեսվել է 98,2 մլրդ ՀՀ դրամ, որը 12,9 մլրդ ՀՀ դրամով կամ 15,1%-ով ավելի է 2024 թվականին հատկացված 85,3 մլրդ ՀՀ դրամից և 50 մլրդ ՀՀ դրամով կամ 104%-ով ավելի է 2018 թվականին հատկացված 48,2 մլրդ ՀՀ դրամից:

2024 թվականին համայնքների բյուջեների փաստացի եկամուտները կազմել են շուրջ 273 մլրդ ՀՀ դրամ՝ գերազանցելով 2023 թվականի նույն ցուցանիշը 10%-ով կամ շուրջ 25 մլրդ ՀՀ դրամով, իսկ 2018 թվականինը՝ 2,1 անգամ կամ շուրջ 145 մլրդ ՀՀ դրամով:

2024 թվականին համայնքների բյուջեների փաստացի եկամուտների շուրջ 54%-ը ձևավորվել է սեփական եկամուտների հաշվին՝ կազմելով շուրջ 147,6 մլրդ ՀՀ դրամ, ինչը գերազանցել է 2023 թվականի նույն ցուցանիշը 7,3%-ով կամ շուրջ 10 մլրդ ՀՀ դրամով, իսկ 2018 թվականինը՝ 2,2 անգամ կամ շուրջ 80 մլրդ ՀՀ դրամով:

Համայնքներում մասնակցային բյուջետավորման ընթացակարգերի ներդրման կենսագործունեության նպատակով՝ 2024 թվականի պետական բյուջեում նախատեսվել է 500 մլն ՀՀ դրամ, որը պիլոտավորվել է Աբովյան, Արմավիր, Աշտարակ և Ջերմուկ համայնքներում: 2025 թվականին ևս կշարունակվի պետական բյուջեից համայնքներին մասնակցային բյուջետավորման հիմունքներով սուբվենցիաների տրամադրման գործընթացը, որում կներգրավեն նոր համայնքներ: Այդ նպատակով 2025 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 1 մլրդ ՀՀ դրամ հատկացումներ, որը նախորդ տարվա կրկնապատիկն է:

Մասնակցային բյուջետավորում իրականացնող պիլոտային 4 համայնքների փորձի հիման վրա՝ ՏԿԵՆ-ի նախաձեռնությամբ, 2024 թվականին կամավոր հիմունքներով մասնակցային բյուջետավորման գործընթաց է նախաձեռնվել և իրականացվել ևս 17 համայնքներում (Գյումրի, Ախուրյան, Վանաձոր, Ստեփանավան, Փամբակ, Թալին, Ծաղկահովիտ, Արաքս, Խոյ, Բյուրեղավան, Հրազդան, Չարենցավան, Մասիս, Գավառ, Դիլիջան, Արենի, Եղեգիս): Ծրագրերն իրականացվում են բացառապես համայնքային բյուջեից հատկացված միջոցներով՝ 2 մլն-ից մինչև 20 մլն ՀՀ դրամի սահմաններում:

Տեղական հարկերի հավաքագրման էլեկտրոնային համակարգի ներդրման և ավտոմատացման արդյունքում՝ 2024 թվականին կատարվել են 46,5 մլրդ ՀՀ դրամի էլեկտրոնային վճարումներ (վճարումների քանակը՝ ավելի քան 2,7 մլն հատ), որը 2023 թվականի 39,1 մլրդ ՀՀ դրամից ավելի է 7,4 մլրդ ՀՀ դրամով կամ 18,9%-ով: 2023 թվականից վճարումները բացառապես կատարվել են անկանխիկ եղանակով:

ՀՀ պետական բյուջեի միջոցներով 2024 թվականի ընթացքում վերապատրաստվել է 694 համայնքային ծառայող, 227 համայնքի ղեկավարներ, համայնքի ղեկավարների տեղակալներ ու ավագանու անդամներ, և մարզպետների աշխատակազմերի 47 աշխատակիցներ:

2024 թվականի ընթացքում՝ գործընկեր դոնոր կազմակերպությունների հետ համագործակցությամբ, առաջին անգամ իրականացվել են համայնքների ավագանու անդամների կարողությունների զարգացմանը միտված վերապատրաստումներ: Արդյունքում՝ 877 ավագանու անդամ վերապատրաստվել է ԳՄՀԸ-ի և ՀՀ ՊԿԱ-ի և ևս 639-ը՝ ՄԱԶԾ-ի կողմից, ինչպես նաև վերապատրաստումներին ներգրավված է եղել 869 համայնքային ծառայող:

elearning.mta.gov.am հեռավար ուսուցման կառավարման հարթակում՝ 2024 թվականի դրությամբ, գրանցված է ավելի քան 5 008 համայնքային ծառայող, 2 184-ից ավելի համայնքային ծառայող մասնակցել է առնվազն մեկ դասընթացի: Գործում է 14 առցանց դասընթաց, ընթացիկ տարում տեղադրվել են ևս 6 նոր դասընթաց:

Պետական բյուջեով սահմանամերձ համայնքների ընտանիքների բնական գազի, էլեկտրաէներգիայի, ոռոգման ջրի սակագնի մասնակի փոխհատուցման ու գույքահարկի և հողի հարկի փոխհատուցման նպատակով 2024 թվականին հատկացվել է շուրջ 1 մլրդ ՀՀ դրամ:

Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագրի շրջանակներում առաջին սանիտարական աղբավայրի և Ակունք ու Մարտունի

բնակավայրերում աղբի փոխաբեռնման կայանների լիարժեք գործարկման նպատակով՝ ձեռք է բերվել 28 աղբատար մեքենա, 7 000 աղբաման, աղբավայրի շահագործման համար տոփանիչ մեքենա, բուլդոզեր, ամբարձիչ, ինքնաթափ բեռնատար, կեղտաջրերի հավաքման բեռնատար:

Գույքագրվել է հանրապետությունում առկա 120 աղբանոց, որից շուրջ 20 փակվել է:

Հանրապետության բնակավայրերում իրականացվել է 420 սուբվենցիոն ծրագիր և ենթածրագիր՝ շուրջ 58,7 մլրդ ՀՀ դրամ: Կառավարության համապատասխան որոշումներով պետական բյուջեից հատկացվել է շուրջ 31,8 մլրդ ՀՀ դրամ:

Սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում աշխատանքները կատարվել են հիմնականում հետևյալ ուղղություններով՝

- փողոցների կառուցում և վերանորոգում ասֆալտապատմամբ՝ շուրջ 23,7 մլրդ ՀՀ դրամ, որից պետական բյուջեի համաֆինանսավորումը շուրջ 10,5 մլրդ ՀՀ դրամ,
- նախադպրոցական հաստատությունների կառուցում և նորոգում՝ շուրջ 7,2 մլրդ ՀՀ դրամ, որից պետական բյուջեի համաֆինանսավորումը շուրջ 5,2 մլրդ ՀՀ դրամ,
- ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցում և նորոգում՝ շուրջ 6,4 մլրդ ՀՀ դրամ, որից պետական բյուջեի համաֆինանսավորումը շուրջ 4,2 մլրդ ՀՀ դրամ,
-ոռոգման համակարգերի կառուցում և նորոգում՝ շուրջ 5,1 մլրդ ՀՀ դրամ, որից պետական բյուջեի համաֆինանսավորումը շուրջ 3,4 մլրդ ՀՀ դրամ,
- բնակավայրերի գազիֆիկացում՝ շուրջ 3,6 մլրդ ՀՀ դրամ, որից պետական բյուջեի համաֆինանսավորումը շուրջ 2 մլրդ ՀՀ դրամ,
- բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում, այդ թվում՝ էներգախնայող միջոցառումների կիրառում՝ շուրջ 3,5 մլրդ ՀՀ դրամ, որից պետական բյուջեի համաֆինանսավորումը շուրջ 1,6 մլրդ ՀՀ դրամ,
- հասարակական շենքերի կառուցում և նորոգում (մշակույթի տներ, վարչական շենքեր և այլն) շուրջ 3,2 մլրդ ՀՀ դրամ, որից պետական բյուջեի համաֆինանսավորումը շուրջ 1,5 մլրդ ՀՀ դրամ,
- փողոցների կառուցում և վերանորոգում սալարկմամբ՝ շուրջ 2,4 մլրդ ՀՀ դրամ, որից պետական բյուջեի համաֆինանսավորումը շուրջ 997 մլն ՀՀ դրամ,
- փողոցային լուսավորության համակարգի կառուցում և նորոգում՝ շուրջ 1,9 մլրդ ՀՀ դրամ, որից պետական բյուջեի համաֆինանսավորումը 1,1 մլրդ ՀՀ դրամ,
- այգիների ու պուրակների կառուցում՝ շուրջ 738 մլն ՀՀ դրամ, որից պետական բյուջեի համաֆինանսավորումը շուրջ 274 մլն ՀՀ դրամ,

- մեքենասարքավորումների, տեխնիկայի և գույքի ձեռքբերում՝ շուրջ 637 մլն ՀՀ դրամ, որից պետական բյուջեի համաֆինանսավորումը 282 մլն ՀՀ դրամ:

2018-2024թթ.համայնքներում իրականացվել է շուրջ 222,5 մլրդ ՀՀ դրամի սուբվենցիոն ծրագրեր, որոնց շրջանակներում ՀՀ պետական բյուջեի համա-ֆինանսավորումը կազմել է 114,9 մլրդ ՀՀ դրամ:

Մարզերում իրականացվել է նաև 35 կապիտալ բնույթի հրատապ, անհետաձգելի ծրագիր՝ ավելի քան 1,63 մլրդ ՀՀ դրամ արժեքով:

2024 թվականին 34 համայնքի մատակարարվել է 116 միավոր տեխնիկա և 750 աղբարկղ (Ամասիա, Արտաշատ և Մասիս)՝ շուրջ 4 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

Շիրակի մարզի Ամասիա խոշորացված համայնքի Ամասիա Արեգնադեմ, Բանդիվան, Բյուրակն, Գտաշեն, Մեղրաշատ, Ողջի, Ջրաձոր բնակավայրերի համար կառուցվել է 6,7 կմ երկարությամբ ոռոգման ջրագիծ: Շինարարական աշխատանքների արժեքը կազմել է շուրջ 280 մլն ՀՀ դրամ:

Թալին համայնքի Արագածավան բնակավայրում մեկնարկել և ներկայումս ընթանում են բնակավայրի ջրամատակարարումն ապահովող 2 խորքային պոմպերի համար 250 կՎտ ընդհանուր դրվածքային հզորության (100 կՎտ և 150 կՎտ հզորության) արևային ֆոտովոլտային կայանների տեղադրման աշխատանքները: 250 կՎտ ընդհանուր հզորության արևային կայանների տեղադրման արդյունքում կկրճատվեն էլ. էներգիայի ծախսերը, իսկ խնայողությունները կուղղվեն 451 խոցելի խմբերի բնակիչների ջրամատակարարման ծախսերի փոխհատուցմանը:

Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրերի շրջանակներում համայնքներին աջակցելու նպատակով ընթացքի մեջ է եղել 9 ծրագիր, որոնցից 6 շինարարական աշխատանքներն ավարտվել են (Ալագյազ համայնքում հանդիսությունների սրահի կառուցում, Եղեգնաձորի Նոր ավան թաղամասի կոյուղու ցանցի և բիոմաքրման կայանի կառուցում, Լոռի Բերդի համայնքի կենտրոնի վերակառուցում՝ 2-րդ հարկի կառուցմամբ, Գյումրու թիվ 1 ավագ դպրոցի փայտե պատշգամբների և մարզադահլիճի հատակների փոխարինում, Ակունք համայնքի ըմբշամարտի դահլիճի վերանորոգում, Գյումրու «Զանգակ» մանկապարտեզի վերակառուցում, Հոռոմի մանկապարտեզի կառուցում, Մյասնիկյան գյուղի դպրոցի մարզահրապարակի կառուցում):

Պետական գույքի կառավարում

Պետական գույքի կառավարման ոլորտում 2024 թվականի ընթացքում արձանագրվել են հետևյալ արդյունքները.

Պետական գույքի կառավարումից ստացված ընդհանուր մուտքերը կազմել են շուրջ 18,6 մլրդ ՀՀ դրամ, ինչը շուրջ 3,2 մլրդ ՀՀ դրամով կամ շուրջ 21%-ով ավելի է նախորդ տարվա համադրելի ցուցանիշից: Պետական բյուջեի մուտքերն աճել են շուրջ 31%-ով՝ կազմելով շուրջ 16,9 մլրդ ՀՀ դրամ, իսկ համայնքային բյուջեներ փոխանցվել է շուրջ 1,5 մլրդ ՀՀ դրամ՝ 2023 թվականի նույն ցուցանիշը նվազել է շուրջ 33%-ով:

Պետական գույքի վարձակալության գործարքներից ստացված միջոցները նախորդ տարվա համեմատ աճել են 18,5%-ով՝ կազմելով 798 մլն ՀՀ դրամ:

2024 թվականին պետական գույքի՝ այդ թվում նաև հողի օտարումից ստացված մուտքերը կազմել են շուրջ 17,2 մլրդ ՀՀ դրամ (նախորդ տարվա շուրջ 10,6 մլրդ ՀՀ դրամի համեմատ):

Ավարտին է հասցվել մասնավորեցման ծրագրում ընդգրկված 1 կազմակերպության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի մասնավորեցման գործընթացը, ինչի արդյունքում պետական և համայնքային բյուջե փոխանցված դրամական միջոցները կազմել են շուրջ 322 մլն ՀՀ դրամ:

Պետական կառավարման համակարգում տրանսպորտային միջոցների օպտիմալացման արդյունքում՝ 2024 թվականին օտարվել է 206 միավոր տրանսպորտային միջոց (ընդհանուր 150 մլն ՀՀ դրամի):

ՀՀ պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման պայմանագրերից փաստացի հավաքագրվել է շուրջ 313 մլն ՀՀ դրամ, որից՝ շուրջ 70 մլն ՀՀ դրամը մուտքագրվել է պետական բյուջե, համապատասխան ՊՈԱԿ-ների բյուջեներ՝ շուրջ 240 մլն ՀՀ դրամ:

Բաժնետիրական ընկերությունների, ՊՈԱԿ-ների և հիմնադրամների լուծարման գործընթացից ընդհանուր առմամբ ՀՀ պետական բյուջե է փոխանցվել շուրջ 1,6 մլրդ ՀՀ դրամ, որից՝ շուրջ 335 մլն ՀՀ դրամը հարկերի և տուրքերի տեսքով, շուրջ 300 մլն ՀՀ դրամը լուծարումից հետո փոխանցվել է պետական բյուջե:

Պատվիրատուներից (այդ թվում՝ արտասահմանյան) փորձագիտության նպատակով ստացված շուրջ 959 մլն ՀՀ դրամ կանխավճարը «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի

անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ևս փոխանցվել է ՀՀ պետական բյուջե:

2024 թվականին կնքված 15 օտարման պայմանագրերից 6 օտարման պայմանագրերով գնորդները ստանձնել են ավելի քան 32,3 մլրդ ՀՀ դրամի ներդրում իրականացնելու պարտավորություն:

Բարելավման կարիք ունեցող մինչև տասը միավոր պետական անշարժ գույքերի՝ ներդրումների իրականացման դիմաց երկարատև վարձակալության տրամադրման արդյունքում՝ օգտագործողների կողմից նախատեսվում է կատարել ընդհանուր առմամբ շուրջ 1,3 մլրդ ՀՀ դրամի ներդրում:

Բարեփոխվել է հանրային իշխանության մարմինների պաշտոնատար անձանց ծառայողական և այդ մարմիններին սպասարկող ավտոմեքենաների հատկացման ու շահագործման, պետական պաշտոն կամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց տրանսպորտային ծախսերի փոխհատուցման գործընթացը:

Հաստատվել է Պետական գույքի կառավարման 2024-2026 թվականների ծրագիրը:

Գործարկվել է պետական գույքի էլեկտրոնային աճուրդների համակարգը՝ E-auctions.am:

Հարկաբյուջետային քաղաքականություն

2024 թվականի ընթացքում հարկաբյուջետային քաղաքականության բարեփոխումների ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Կատարելագործվել է մակրոտնտեսական կանխատեսումների համակարգը՝ համալրելով դրանք ժամանակակից և առաջատար գործիքակազմերով, ինչը հնարավորություն է տվել պետական բյուջեի կանխատեսումներում բարձրացնել սցենարային վերլուծության դերակատարումը: Մասնավորապես, առկա մարտահրավերների պայմաններում մշակվել են այլընտրանքային սցենարներ՝ գնահատելով մակրոտնտեսական ռիսկերի ազդեցությունները: Վերջիններիս հիման վրա քանակապես գնահատվել և ձևավորվել են ֆինանսական պահուստներ (պետական բյուջեի ծախսերի կազմում ներառվող պահուստային ֆոնդի և կայունացման հաշվի միջոցների տեսքով), ինչն առանցքային նշանակություն ունի ՀՀ կառավարության ծրագրի անցնցում իրականացման գործում: Շարունակվել է հարկային եկամուտների կանխատեսումների գործիքակազմի կատարելագործման գործընթացը, ինչպես նաև առաջին անգամ ՄԺԾԾ-ում և բյուջեի ուղերձում

հրապարակվել են հարկային եկամուտների՝ ըստ հարկատեսակների միջնաժամկետ կանխատեսումները՝ մեծացնելով բյուջետային գործընթացի թափանցիկությունը: Միաժամանակ, 2025 թվականի պետական բյուջեի կանխատեսումների գործընթացում առաջին անգամ հրապարակվել են միջնաժամկետ մակրոտնտեսական և հարկաբյուջետային կանխատեսումներ՝ հիմքեր ստեղծելով եռամյա բյուջեի տրամաբանությանն անցնելու համար:

Կառավարության կողմից իրականացվող մի շարք բարեփոխումների համար ապահովվել են փաստերի և վերլուծությունների վրա հիմնված (Evidence-based) որոշումների կայացման հիմքեր: Իրականացվել են մի շարք առանցքային վերլուծություններ՝ առողջության համապարփակ ապահովագրության ներդրման մակրո-ֆիսկալ ազդեցությունների, տարածաշրջանային տնտեսական և աշխարհաքաղաքական պայմաններից բխող մակրո-ֆիսկալ հետևանքների, ներուժային տնտեսական աճի և արտաքին տնտեսական կայունության÷

Գնահատվել են հարկման միջնաժամկետ հնարավորությունները՝ ապահովելով վերլուծական հիմքեր հարկային վարչարարության բարելավման և ստվերի կրճատման աշխատանքների արդյունավետ իրականացման համար: Գնահատումն իրականացվել է խոշոր հարկատեսակների՝ ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ), եկամտային հարկի, շահութահարկի գծով հարկային ներուժի և վարչարարության ճեղքի գնահատման՝ 2023 թվականին հաստատված մեթոդաբանության հիման վրա: Գնահատումները ցույց են տվել, որ վերջին տարիներին վարչարարության ճեղք/ՀՆԱ հարաբերակցությունը դրսևորել է շարունակական նվազման միտում՝ 2020 թվականի 6,5%-ի համեմատ, 2021 թվականին կազմել է 5,6%, 2022 թվականին՝ 4,8%, իսկ 2023 թվականին՝ 3,9%: Միաժամանակ, ուսումնասիրվել է հարկային ճեղքի նվազման գործում տնտեսական պարբերաշրջանների դերակատարումը:

2024 թվականի տարեվերջին պետական պարտքը կազմել է շուրջ 5 տրլն ՀՀ դրամ կամ շուրջ 12,8 մլրդ ԱՄՆ դոլար: Նախորդ տարեվերջի նկատմամբ պետական պարտքն ավելացել է 6,2%-ով:

Կառավարության պարտքի բեռը շարունակվել է պահպանվել ՀՀ հարկաբյուջետային կանոններով թիրախավորվող՝ 50 տոկոսից ցածր մակարդակում՝ արտացոլելով հարկաբյուջետային քաղաքականության կայունությունը և պահպանվող դրական մակրոտնտեսական միջավայրը: 2024 թվականին կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 48,3%, նախորդ տարվա համեմատ նվազելով 0,1 տոկոսային կետով:

Պարտքի կայունությունն ամրապնդելու համար շարունակվել է պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման կառուցվածքում ՀՀ դրամով փոխառությունների

դերի մեծացման գործընթացը: 2024 թվականի ընթացքում ներքին փոխառու միջոցների հաշվին պետական բյուջեի պակասուրդի զուտ ֆինանսավորումը կազմել է շուրջ 369 մլրդ ՀՀ դրամ կամ փոխառու միջոցներով ֆինանսավորման 92,3%-ը, իսկ արտաքին փոխառու միջոցների հաշվին պակասուրդի զուտ ֆինանսավորումը՝ շուրջ 31 մլրդ ՀՀ դրամ կամ փոխառու միջոցներով ֆինանսավորման շուրջ 7,7%-ը: 2024 թվականի վերջի դրությամբ ՀՀ դրամով արտահայտված պարտքի կշիռը կազմել է 50,8%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճելով 4,8 տոկոսային կետով և գերազանցելով ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2025-2027 թվականների ռազմավարությամբ սահմանված ՀՀ դրամային պարտքի 40% ուղենշային նվազագույն շեմը 10,8 տոկոսային կետով: Այս պայմաններում էականորեն մեղմվել է պարտքի զգայունությունը փոխարժեքի տատանումների նկատմամբ:

2024 թվականին հարկեր/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 23,6%՝ նախորդ տարվա համեմատությամբ նվազելով 0,45 տոկոսային կետով: Վերջին 7 տարիներին հարկեր/ՀՆԱ ցուցանիշը բարելավվել է 2,8% տոկոսային կետով (2017 թվականին այն կազմել էր 20,8%):

Հարկման համակարգում հարկային բեռի արդարացի և հավասար բաշխումն ապահովելու նպատակով իրականացվել են օրենսդրական փոփոխություններ, որոնցով՝

- վերանայվել են գործունեության հիմնական տեսակների (առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն, արտադրական գործունեություն, հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեություն, այլ գործունեություն) համար սահմանված շրջանառության հարկի դրույքաչափերը՝ միաժամանակ ընձեռելով փաստաթղթերով հիմնավորված ծախսերի միջոցով վճարման ենթակա հարկի նվազեցման հնարավորություն, ընդ որում, սահմանվել են ներկայումս գործող նվազագույն կամ հաստատուն դրույքաչափերից ցածր դրույքաչափեր, որոնց պարագայում փաստաթղթավորման պատշաճ մակարդակ ունեցող տնտեսավարող սուբյեկտների համար հարկային բեռը կարող է նվազել,

- ընդլայնվել է միկրոձեռնարկատիրության և շրջանառության հարկով հարկման համակարգերում հարկվելու առումով արգելված գործունեության տեսակների շրջանակը, մասնավորապես, սահմանափակվել է՝

ա) շրջանառության հարկի համակարգում նոտարական, փաստաբանական և վիճակախաղերի կազմակերպման գործունեությամբ զբաղվելու հնարավորությունը,

բ) միկրոձեռնարկատիրության հարկման համակարգում անշարժ գույքի առքուվաճառքի և (կամ) վարձակալությամբ տրամադրման միջնորդական, վարսավիրական, մարմնի խնամքի, ավտոտեխսպասարկման ծառայությունների մատուցման, ծրագրային ապահովման մշակման և շինարարական աշխատանքների կատարման, անշարժ գույքի գնահատման և չափագրման, սաունաների, բաղնիքների և շոգեբաղնիքների կազմակերպման գործունեության տեսակներով զբաղվող հարկ վճարողների գործունեությունը:

Մասնագիտական աշխատանքների կատարումը և ծառայությունների մատուցումը հարկման հատուկ համակարգերից հարկման ընդհանուր համակարգ տեղափոխելու նպատակով մշակվել և ՀՀ ԱԺ կողմից առաջին ընթերցմամբ ընդունվել է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը:

Կրիպտոակտիվների ոլորտի համապարփակ կարգավորման նպատակով մշակվել է «Կրիպտոակտիվների մասին» ՀՀ օրենքի նախագիծը և հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծերը:

Կրկնակի հարկումը բացառելու վերաբերյալ համաձայնագրերի աշխարհագրության ընդլայնման նպատակով կատարված աշխատանքների արդյունքում ստորագրվել են եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին համաձայնագրեր Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի հետ և Ճապոնիայի հետ:

Համագործակցություն միջազգային ֆինանսական կառույցների հետ

Այս համագործակցության շրջանակում, մասնավորապես, ձեռք են բերվել հետևյալ պայմանավորվածությունները՝

- բյուջետային աջակցության վարկերի ներգրավում 4 միջազգային պայմանագրերի շրջանակներում՝ ընդհանուր շուրջ 322,5 մլն ԱՄՆ դոլարի չափով, ինչպես նաև ԱՄՀ պահուստային ծրագրի երկու վերանայումներ,
- շուրջ 850 մլն ԱՄՆ դոլար ծավալով 6 նպատակային վարկային ու շուրջ 40 մլն ԱՄՆ դոլար ծավալով 6 դրամաշնորհային համաձայնագրերի կնքում,

- արտոնյալ ֆինանսավորման գլոբալ հիմնադրամից (GCFF) 16 մլն ԱՄՆ դոլարի չափով դրամաշնորհի ստացում և ֆինանսավորման ենթակա երեք ծրագրի հաստատում առաջիկա տարվա համար՝ ընդհանուր շուրջ 107 մլն ԱՄՆ դոլար ծավալով:

Հարկային և մաքսային վարչարարություն

2024 թվականի արդյունքներով պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են 2 տրլն 390,9 մլրդ ՀՀ դրամ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից ավելի է շուրջ 117 մլրդ ՀՀ դրամով կամ 5,1%-ով, 2022 թվականից ավելի է շուրջ 428,4 մլրդ ՀՀ դրամով կամ 21,8%-ով, 2021 թվականից ավելի է շուրջ 781,3 մլրդ ՀՀ դրամով կամ 48,5%-ով, 2020 թվականից ավելի է շուրջ 992,3 մլրդ ՀՀ դրամով կամ 71%-ով, 2019 թվականից ավելի է շուրջ 918,7 մլրդ ՀՀ դրամով կամ 62,4%-ով, 2018 թվականից ավելի է շուրջ 1 տրլն 128,1 մլրդ ՀՀ դրամով կամ 89,3%-ով և 2017 թվականից ավելի է շուրջ 1 տրլն 230,5 մլրդ ՀՀ դրամով կամ 106%-ով:

Ընդ որում, նախորդ տարվա նկատմամբ էական աճ է արձանագրվել հետևյալ հարկատեսակներով, մասնավորապես՝

- շահութահարկի աճը՝ շուրջ 14,2 մլրդ ՀՀ դրամ կամ 4,4%,
- շրջանառության հարկի աճը՝ շուրջ 8,7 մլրդ ՀՀ դրամ կամ 16,7%,
- բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի աճ՝ շուրջ 39,8 մլրդ ՀՀ դրամ կամ 65,7%, որից ռոյալթի՝ շուրջ 36,4 մլրդ ՀՀ դրամ կամ 87,2%,
- եկամտային հարկի աճը՝ (ներառյալ հիփոթեկի տոկոսագումարների դիմաց եկամտային հարկի վերադարձը) շուրջ 43,6 մլրդ ՀՀ դրամ կամ 7,2%,

Բացառություն են կազմում միայն ԱԱՀ-ն և ակցիզային հարկը, որոնց գծով արձանագրվել է նվազում համապատասխանաբար՝ 11,3 մլրդ ՀՀ դրամով կամ 1,5% և 2,9 մլրդ ՀՀ դրամ կամ 1,9%: Ընդ որում, նշված հարկատեսակների գծով նվազումը պայմանավորված է ՀՀ ներմուծվող որոշ ապրանքատեսակների ներմուծման ծավալների նվազմամբ:

Հայաստանում մշտական հաստատություն չունեցող, էլեկտրոնային հարթակի միջոցով ապրանքների իրացման ծառայություն մատուցող կազմակերպությունների կողմից «eVAT» էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկների արդյունքում 2024 թվականի ընթացքում հավաքագրվել է շուրջ 4,6 մլրդ ՀՀ դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ ավելի է շուրջ 70%-ով:

2014-2018 թվականների ժամանակահատվածի հարկային եկամուտների հնգամյա աճի հանրագումարը կազմել է շուրջ 261,9 մլրդ ՀՀ դրամ, իսկ 2020-2024 թվականների ժամանակահատվածի եկամուտների հնգամյա աճի հանրագումարը կազմել է շուրջ 918,7 մլրդ ՀՀ դրամ: Նշված հնգամյա ժամանակահատվածների աճերի տար-բերությունը կազմում է շուրջ 656,8 մլրդ ՀՀ դրամ կամ 250,8%:

2024 թվականի ընթացքում հարկ վճարողներին է վերադարձվել շուրջ 392,2 մլրդ ՀՀ դրամ (ներառյալ հիփոթեքի տոկոսագումարների դիմաց եկամտային հարկի վերադարձը), ինչը նախորդ տարվա ցուցանիշից ավելի է շուրջ 29,3 մլրդ ՀՀ դրամով կամ 8,1%-ով, որից մասնավորապես՝

- հիփոթեքի տոկոսագումարների դիմաց եկամտային հարկի գումար ավելի է վերադարձվել 16,6 մլրդ ՀՀ դրամ կամ 32%,
- շահաբաժիններից վճարված եկամտային հարկից ավելի է վերադարձվել 3,9 մլրդ ՀՀ դրամ կամ 24,7%,
- ակցիզային հարկից ավելի է վերադարձվել 6 մլրդ ՀՀ դրամ կամ 113,4%:

Հարկ վճարողների կողմից հարկային պարտավորությունների՝ ամբողջ ծավալով և ժամանակին հայտարարագրման շրջանակներում իրականացված աշխատանք-ների արդյունքում՝ հաշվարկային փաստաթղթերով (այդ թվում՝ ՀԴՄ կտրոններով) հարկ վճարողների կողմից հայտարարագրվել է ավելի քան 13,9 տրլն ՀՀ դրամ շրջանառություն՝ 2023 թվականի 12,2 տրլն ՀՀ դրամի համեմատ (հարկ վճարողները 2023 թվականի համեմատ հայտարարագրել են շուրջ 1,7 տրլն ՀՀ դրամով կամ 14,1%-ով ավելի իրացում):

Եկամուտ ապահոված աշխատատեղերի միջին ամսական եկամտային հարկի ընդհանուր գումարը կազմել է շուրջ 45,7 մլրդ ՀՀ դրամ, ինչն ավելի է 2023 թվականի նույն ցուցանիշից շուրջ 5,1 մլրդ ՀՀ դրամով, 2022 թվականի ցուցանիշից՝ շուրջ 10,8 մլրդ ՀՀ դրամով, իսկ 2018 թվականի նույն ցուցանիշից՝ շուրջ 20,4 մլրդ ՀՀ դրամով կամ շուրջ 80,5 %-ով:

Հարկային մարմնի կողմից հսկողական աշխատանքների շրջանակներում իրա-կանացված 1 104 համալիր հարկային ստուգման արդյունքում արձանագրվել է շուրջ 62 մլրդ ՀՀ դրամ (այդ թվում՝ ներկայացված ճշտված հաշվարկներով առաջացած լրացուցիչ հարկային պարտավորություն)՝ նախորդ տարվա ընթացքում իրականացված 1 189 ստուգմամբ արձանագրված 38,5 մլրդ ՀՀ դրամի (այդ թվում՝ ներկայացված ճշտված հաշվարկներով առաջացած լրացուցիչ հարկային պարտավորություն) համեմատ:

Վերլուծությունների, կամերալ և թեմատիկ ուսումնասիրությունների արդյունքում 2024 թվականի ընթացքում պետական բյուջե հաշվեգրվել է 67,4 մլրդ ՀՀ դրամ լրացուցիչ հարկ՝ նախորդ տարվա 55,1 մլրդ ՀՀ դրամի համեմատ: Լրացուցիչ հաշվեգրված հարկի ցուցանիշը գերազանցում է նախորդ տարվա նույն ցուցանիշը շուրջ 12,4 մլրդ ՀՀ դրամով կամ 22,4%-ով: Այդ թվում, թեմատիկ ուսումնասիրություն վարչարարության տեսակի արդյունքում 2024 թվականի ընթացքում առաջացել է շուրջ 16,4 մլրդ ՀՀ դրամի լրացուցիչ պարտավորություն, իսկ 2023 թվականի նույն ժամանակաշրջանում՝ 9,4 մլրդ ՀՀ դրամ (այդ թվում՝ ներկայացված ճշտված հաշվարկներով առաջացած լրացուցիչ հարկային պարտավորություն): Վարչարարական այս գործիքի մասով արձանագրված գումարը նախորդ տարվա համեմատ ավելի է 7 մլրդ ՀՀ դրամով, կամ 74,4%-ով:

2024 թվականի ընթացքում հարկային մարմնում իրականացված թվային ինֆլյուենսերների (բլոգեր) կամավոր հարկային կարգապահության խթանման գործընթացի արդյունքում՝ պետական հաշվառում են ստացել 20 բլոգերներ, իսկ ոլորտում հայտարարագրված իրացման շրջանառության ցուցանիշը 2024 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 39%-ով: Նշված ծրագրի առաջնահերթ նպատակը հասարակության լայն շերտերում անձանց հարկային կարգապահության խթանումն է և կամավոր հարկ վճարելու մտածողության ձևավորումը:

Թեմատիկ հարկային ստուգման շրջանակներում արձանագրված խախտման փաստը հաստատող հանգամանքները հիմնավորելու նպատակով ներդրվել է հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից ծառայողական տեսաձայնագրող տեխնիկական միջոցների օգտագործման հնարավորությունը, ընդ որում՝ տեխնիկական միջոցներն օգտագործվում են բացառապես ոչ գաղտնի եղանակով: Տեսաձայնագրող սարքերի օգտագործման հնարավորությունների ապահովման և կիրառման գործընթացում կոմիտեի ընթացիկ հարկային հսկողություն իրականացնող ստորաբաժանումներին տրամադրվել է 185 տեսախցիկ, որոնցից օգտվելու հնարավորություն է տրվել 199 հարկային ծառայողի:

Թեմատիկ հարկային ստուգումների իրականացման համար ներդրվել է ռիսկային չափանիշների վրա հիմնված համակարգ: Համակարգը հիմնված է հարկ վճարողների կողմից հարկային մարմին ներկայացված հաշվարկների, հայտարարագրերի, հաշվարկային փաստաթղթերի տվյալների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում հավաքագրվող տեղեկությունների, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստացված կամ ձեռք բերված այլ տեղեկությունների հիման վրա հարկ վճարողի գործունեության ռիսկայնության գնահատման վրա:

Օրինապահ հարկ վճարողի հավաստագիր է տրամադրվել 83 տնտեսավարող սուբյեկտի:

Ապրիլի 1-ից մայիսի 1-ն ընկած ժամանակահատվածում իրականացվել է ՊԵԿ-ի գործունեության վերաբերյալ գոհունակության գնահատման հարցում, որին մասնակցել է 839 կազմակերպություն (այդ թվում՝ ԱՁ) և ինքնուրույն հարկ վճարող (ֆիզիկական անձ): Հարցման արդյունքների համաձայն Պետական եկամուտների կոմիտեի գործունեությունն այս տարի դրական են գնահատել հարկային մարմնի մասով հարցման մասնակիցների 82,6%-ը, մաքսային մարմնի մասով՝ 79,4%-ը, իսկ ընդհանուր հարցման մասնակիցների՝ 82,1%-ը:

Ներդրվել է ֆիզիկական անձանց եկամուտների համընդհանուր հայտարարագրման համակարգը, որի միջոցով ՀՀ ռեզիդենտ ՀՀ քաղաքացիները հնարավորություն ունեն պարզեցված կարգով հաշվառվել հարկային մարմնում և ստանալ ՀՎՀՀ, տեսնել իրենց եկամուտները և կատարած սոցիալական ծախսերը, ներկայացնել «Եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվարկ (հայտարարագիրը)», կատարել վճարումներ և ստանալ ծախսերի փոխհատուցում: 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հայտարարագիր ներկայացրել է շուրջ 59 000 ֆիզիկական անձ, վճարման ենթակա հարկի գումարը կազմել է 4,9 մլրդ ՀՀ դրամ: Սոցիալական ծախսերի մասով փոխհատուցվել է շուրջ 340 մլն ՀՀ դրամ:

Ներդրվել է տաքսի ծառայության ոլորտը կարգավորող համակարգը, որը գործում է վեբ և բջջային հավելվածի տարբերակներով: Տաքսի ծառայություն մատուցող անհատ վարորդների համար ներդրվել է My tax բջջային հավելվածը, որը հնարավորություն է տալիս պատվեր կատարելուց հետո գեներացնել էլեկտրոնային ՀԴՄ կտրոնն ու այն տրամադրել հաճախորդին՝ իր նախընտրած առցանց տարբերակներից որևէ մեկով: 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ համակարգում հաշվառված է շուրջ 60 000 ֆիզիկական անձ, վարորդների կողմից գեներացվել է շուրջ 25 մլն էլեկտրոնային ՀԴՄ կտրոն՝ մոտ 30 մլրդ ՀՀ դրամի չափով, որից վճարման ենթակա պետական տուրքի գումարը կազմել է շուրջ 488 մլն ՀՀ դրամ:

Ներդրվել է արհեստական բանականության և մեքենայական ուսուցման մեթոդների կիրառմամբ մշակված համակարգ, որը հնարավորություն է ընձեռում մեծ ծավալի տվյալներ մշակելով և վերլուծելով գտնել հարկ վճարողների գործունեության հետ կապված անհամապատասխանություններ՝ ըստ տրված չափանիշների:

Գործարկվել է մի քանի աղբյուրից ստացման ենթակա (ստացված) եկամտից հաշվարկված և փոխանցված (գանձված) սոցիալական վճարների առավելագույն

չափը գերազանցող գումարները մասնակիցներին վերադարձնելու գործընթացի ավտոմատ համակարգը:

Ներդրվել է վիրտուալ պահեստ՝ կեղծ և փորձաքննություն չանցած դեղերի նկատմամբ հսկողության ավտոմատացված տեղեկատվական համակարգը:

Ստեղծվել է POS տերմինալների միջոցով մաքսային մարմինների կողմից հավաքագրման ենթակա հարկեր/տուրքերի վճարումը տեղում իրականացնելու հնարավորություն:

«ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» համակարգի «Սահմանահատումների ինտեգրված համակարգում» ներդրվել է նոր գործիքակազմ, որն ապահովում է մաքսային հսկողության ենթակա ֆիզիկական անձանց անձնագրի և սահմանահատման պահին արված լուսանկարների ստացումը համակարգում և իրավասու պաշտոնատար անձանց ուղարկվող էլեկտրոնային հաղորդագրություններում դրանց ներառումը:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումի համապատասխան ստանդարտների ներդրման ուղղությամբ՝

- ՊԵԿ Տեղեկությունների անվտանգության կառավարման համակարգի պաշտոնական գնահատման արդյունքներով ՏՀԶԿ գնահատման թիմին տրվել է դրական գնահատական:

- ամփոփվել է ՏՀԶԿ Հարցումների հիման վրա տեղեկությունների փոխանակման ստանդարտի ներդրման երկրորդ փուլի միջազգային փորձագիտական գնահատման աշխատանքները, ՏՀԶԿ կողմից Հայաստանին նախնական տվել է «Մեծամասամբ համապատասխան» գնահատական:

Հարկ վճարողների իրազեկվածության բարձրացման նպատակով հարկ վճարողների տարբեր խմբերի համար անցկացվել է 93 ուսումնական միջոցառում, որոնց մասնակցել է 2 006 հարկ վճարող:

Բողոքարկման հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է հարկ վճարողների կողմից ներկայացված 2 325 բողոք, որից 40,5%-ը կամ 941 բողոք ամբողջությամբ կամ մասնակի բավարարվել է, իսկ 296-ը կարճվել է:

Ոչ ԵԱՏՄ անդամ պետություններից ֆիզիկական անձանց կողմից ներմուծված և մաքսային մարմնի կողմից անձնական օգտագործման չդիտարկված ապրանքները՝ ֆիզիկական անձի կողմից պատշաճ լրացված դիմումի և փաստաթղթերի հիման

վրա՝ անվճար հայտարարագրվում են մաքսային մարմնի կողմից՝ հնարավորություն ընձեռելով ֆիզիկական անձանց խուսափել մաքսային միջնորդական ծառայություն-ների վճարներից: Ծառայությունը մատուցվում է առցանց՝ էլեկտրոնային եղանակով:

Ներդրվել է «Մայլինգ» համակարգը, ինչը թույլ է տալիս ՀՀ-ից արտահանվող (այդ թվում ԵԱՏՄ անդամ երկրներ) ապրանքների համար ներկայացված հայտարա-րագրերը գրանցվելուց հետո, երբ ռիսկի պրոֆիլների հիման վրա հսկողության ակտում ձևավորվում են փաստաթղթային հսկողության կամ ապրանքների կամ տրանսպորտային միջոցների մաքսային զննման, կամ մաքսային հսկողության այլ միջոցների կիրառման միջոցով ռիսկերի նվազեցման միջոցառումների իրակա-նացման ցուցումներ, մաքսային գործառնություններն իրականացնել առանց ԱՏԳ մասնակիցների ֆիզիկական ներկայության:

Մաքսային համակարգում ներդրվել են համակարգչային պլանշետներ և մաքսային ծառայողի համազգեստին ամրացվող տեսախցիկներ:

2024 թվականին լիազորված տնտեսական օպերատորների (ԼՏՕ) վկայականներ է ստացել երկու ընկերություն:

Շարունակվել են ներդրված նախնական մաքսային հայտարարագրման համակարգի կատարելագործման և արդիականացման աշխատանքները: Մասնավորապես նախնական մաքսային հայտարարագրման գործընթացի շնորհիվ մաքսային ձևակերպումների ժամանակահատվածը երկիր մուտք գործելուց մինչև ապրանքի բացթողումը 2-3 օրվա փոխարեն 2022-2023 թվականներին կազմել է 1,5-2 ժամ, իսկ 2024 թվականին այդ ցուցանիշը բարելավել է՝ դառնալով 1 ժամ: 2024 թվականի ընթացքում նախնական հայտարարագրման դեպքերը 2022 թվականի տարվա համեմատ 2 296-ից հասել են 17 751-ի՝ աճելով ավելի քան 7 անգամ, տվյալ հայտարարագրերով հայտարարագրված ապրանքները ՀՀ են ներմուծվել 37 133 բեռնատար տրանսպորտային միջոցներով, որն ավելի քան 9 անգամ գերազանցում է 2022 թվականի ցուցանիշը, իսկ նախնական հայտարարագրում իրականացնող տնտեսավարողների քանակը 51-ից դարձել է 248 ավելանալով շուրջ 5 անգամ:

Ներդրվել է պարբերական մաքսային հայտարարագրման ինստիտուտը, որն իր բնույթով նման է նախնական մաքսային հայտարարագրմանը, սակայն՝ ի տարբերություն նախնական հայտարարագրմանը, որի դեպքում հայտարարագրված ապրանքների ամբողջ խմբաքանակը պետք է հատի ՀՀ սահմանը, հայտա-րարատուի կողմից ճշգրտվի հայտարարագիրը, որից հետո միայն տվյալ հայտարարագրով ներմուծվող ապրանքները կարող են բաց թողնվել, պարբերա-կան մաքսային հայտարարագրման դեպքում հայտարարագրված ապրանքների բացթողումն իրականացվում է մինչև ապրանքների սահմանը հատելը, ինչը

նշանակում է, որ կազմակերպությունը մեկից ավելի տրանսպորտային միջոցներով ներմուծվող մեկ խմբաքանակ բեռը կարող է տնօրինել տրանսպորտային միջոցի սահմանահատման պահից:

«Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ում կազմակերպվել է 113 ուսումնական դասընթաց, որոնց մասնակցել է 2 808 աշխատակից:

Շարունակվել են կադրային քաղաքականության բարեփոխումները, այդ թվում՝ բարեվարքության ստուգման համակարգի գործարկումը: Բարեվարքության ստուգման շրջանակներում պաշտոնից ազատվել է 47 մաքսային և 33 հարկային ծառայող: Հարկային և մաքսային ծառայության պատրաստման դասընթացը հաջողությամբ հաղթահարած և համապատասխան հավաստագիր ստացած 1 012 դիմորդ ընդգրկվել է Հարկային և մաքսային ծառայողների թեկնածուների ցուցակում, որոնցից 824-ը նշանակվել է աշխատանքի (նշանակվածներից 145-ը (40% կին) նախկինում մաքսային ծառայողներ չեն հանդիսացել):

Նոյեմբերին մեկնարկել է հարկային ծառայողի պատրաստման դասընթացի ընդունելության գործընթացը, որի արդյունքում ստացվել է 382 դիմում-հայտ (85 դիմորդ նախկինում հարկային ծառայող չեն հանդիսացել), որոնց ուսումնասիրության և ընդունելության քննությունների արդյունքում դասընթացին մասնակցության իրավունք է ստացել շուրջ 348 դիմորդ, (որոնցից 54 դիմորդ նախկինում հարկային ծառայող չեն հանդիսացել):

Մայիսին մեկնարկել է մաքսային ծառայողի պատրաստման դասընթացի ընդունելության գործընթացը, որի արդյունքում ստացվել է 1 136 դիմում-հայտ (914 դիմորդ նախկինում մաքսային ծառայող չեն հանդիսացել), որոնց ուսումնասիրության և ընդունելության քննությունների արդյունքում դասընթացին մասնակցության իրավունք է ստացել շուրջ 426 դիմորդ, (որոնցից 351 դիմորդ նախկինում մաքսային ծառայող չեն հանդիսացել):

Մաքսային համագործակցության շրջանակներում բանակցվել է թվով 17 միջազգային համաձայնագիր, ստորագրվել է 5-ը, հարկային համագործակցության շրջանակներում բանակցվել է թվով 1 միջազգային համաձայնագիր, ստորագրվել է 2-ը:

Միջազգային մաքսային համագործակցության շրջանակներում կազմակերպվել է 12 միջազգային և տարածաշրջանային աշխատաժողով, իսկ հարկային համագործակցության մասով՝ 11 աշխատաժողով:

ԱՄՆ կառավարության Արտահանման վերահսկման ու սահմանների անվտանգության ծրագրի (EXBS) շրջանակում ՊԵԿ-ին անհատույց տրամադրվել են 4

շարժական սկաներ, նույն ծրագրի շրջանակներում բանակցվել և հաստատվել է ՀՀ ՊԵԿ մոնիտորինգային կենտրոնի (սկանավորման նկարների վերլուծության միասնական կենտրոն) ծրագրային ապահովման ֆինանսավորումը:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ հաստատվել է Հայաստան-Վրաստան համատեղ հսկողության անցման կետի հայեցակարգի ներդրման տեխնիկական օժանդակության ծրագիրը:

Շարունակվում է Մեղրիի մաքսային սահմանային անցակետի շինարարությունը:

Հարկային համագործակցության ոլորտում ՀՀ ՊԵԿ և ՄԱԶԳ միջև «Հարկը՝ հանուն կայուն զարգացման նպատակների» նախաձեռնության շրջանակներում հաստատված համագործակցությամբ, ինչպես նաև Նորվեգիայի և Ֆինլանդիայի կառավարությունների ֆինանսական աջակցությամբ ՊԵԿ-ում հիմնադրվել է Թվային հետախուզության լաբորատորիա:

Պետական ծախսեր

Կառավարության ծրագրային նպատակներն իրագործելու կարևոր գրավականներից մեկը շարունակել է մնալ կապիտալ ծախսերի զգալի աճը: Կապիտալ ծախսերը 2023 թվականի համեմատ 2024 թվականին ավելացել են 63,4 մլրդ ՀՀ դրամով կամ 12,8%-ով՝ կազմելով շուրջ 557,8 մլրդ ՀՀ դրամ:

Հաշվետու տարում շարունակել են աճել տնտեսական և սոցիալական ոլորտներում կատարված կապիտալ ծախսերը՝ կազմելով շուրջ 188,8 մլրդ ՀՀ դրամ՝ 2023 թվականի նկատմամբ արձանագրելով 8,2% աճ, իսկ համայնքային ներդրումային ծրագրերի համաֆինանսավորման նպատակով հատկացված սուբվենցիաների ներառմամբ՝ շուրջ 222,6 մլրդ ՀՀ դրամ՝ 2023 թվականի նկատմամբ արձանագրելով 7,9 % աճ: Վերջին տարիներին արձանագրված բարձր աճի արդյունքում տնտեսական և սոցիալական ոլորտներում 2024 թվականի ընթացքում կապիտալ ծախսերի մակարդակը (ներառյալ սուբվենցիաների մասը) 2018 թվականի համեմատ ավելի քան կրկնապատկվել է (ավելացել է 2,7 անգամ):

2024 թվականի ընթացքում պետական ծախսերի արդյունավետության բարձրացման ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Պետական բյուջեի ծախսերի կառուցվածքում մարդկային կապիտալին և ենթակառուցվածքներին ուղղվող ծախսերի տեսակարար կշիռը շարունակել է ավելանալ:

Միջնաժամկետ հատվածում պետական բյուջեի ծախսերում գերակայելու են սոցիալական ոլորտի ծախսերը՝ կազմելով ընդհանուր ծախսերի շուրջ 42%-ը:

Հանրային միջոցների ծախսման արդյունավետության բարձրացման ուղղությամբ իրականացվել է սպեցիֆիկ ֆիսկալ ռիսկերի գնահատման մեթոդաբանության, տվյալների որակի և հավաքագրման մեխանիզմների, ինչպես նաև ֆիսկալ ռիսկերի հաշվետվողականության բարելավում՝ պետական մասնակցությամբ ընկերություն-ներից (ՊՄԸ), ՊՄԳ պայմանագրերից, բյուջետային վարկերից և երաշխիքներից, ինչպես նաև բնական աղետներից բխող ֆիսկալ ռիսկերի ուղղություններով:

Մշակվել է «ՊՄԸ սեփականության քաղաքականության հայեցակարգային մոտեցումները», ՊՄԸ-ների և ՊՈԱԿ-ների վերաբերյալ տվյալների հավաքագրման մեխանիզմների լավարկման նպատակով մեկնարկել է ֆինանսական հաշվետվությունների և վերլուծությունների իրականացման թվային հարթակի (FERST համակարգը) մշակումը, իսկ թափանցիկության և հաշվետվողականության բարելավման նպատակով հրապարակվել են նոր վիճակագրական և վերլուծական տվյալներ:

Մշակվել է բյուջետային վարկերի տրամադրման դեպքում իրականացվող վերլուծությունների, այդ թվում՝ վարկունակության գնահատման մեթոդաբանություն:

Բյուջետային վերլուծական գործիքակազմի բարելավման շրջանակում բյուջետային ծախսերի առաջնահերթությունների սահմանման նպատակով մշակվել են համապատասխան չափորոշիչներ և ձևաչափեր, առաջնահերթություններ են սահմանվել ըստ ընտրված վարկանիշների, մասնավորապես՝ ըստ ռազմավարության, ճկունության, հասունության և կատարողականի, ըստ ֆինանսավորման աղբյուրի և ըստ ընթացիկ և կապիտալ ծախսերի բնույթի:

Վերանայվել են ծախսերի վերաբաշխման կանոնները՝ արդյունքային ցուցանիշները սահմանվել են կիսամյակային կտրվածքով՝ նվազեցնելով դրանց վերանայման արդյունքում վերաբաշխումների կարիքները:

Բյուջետային ծրագրերի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ներդրվել է ծրագրերի գնահատման գործընթաց, որի իրականացման համար ստեղծվել են օրենսդրական հիմքեր, ձևավորվել է մեթոդաբանական բազա և իրականացվել են աշխատանքներ անձնակազմի կարողությունների զարգացման ուղղությամբ:

2024 թվականի ընթացքում իրականացվել են մի շարք միջոցառումներ, որոնց արդյունքում 2025 թվականի պետական բյուջեում առաջին անգամ ներառվել են՝

- կապիտալ ծախսերի գծով չիրացված պայմանագրային պարտավորություն-ների՝ հաջորդ բյուջետային տարի տեղափոխման մեխանիզմ,
- ավարտի ժամկետ ունեցող միջոցառումների (բազմամյա պարտավորու-թյունների) ներկայացում բյուջետային փաստաթղթերում,
- միջնաժամկետ մակրոտնտեսական և հարկաբյուջետային շրջանակների վերանայում բյուջետային փաստաթղթերում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

28.02.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ